

ԷԶՄԻԱԾԻՆ



Ա.
2024




ՉԼ. ՏԼԻԻ

ԲԱՊՐԻԼ

ՊԼՇՏՕՆԵԱՆ ԼՐԱՆԻՐ
ԼՐԵՆԵՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ՄԼՅՐ ԼԹՈՒՄՅՈՒՆ ՄԻԲՅՈՒՆ ԷԶՐԻԼԵՐՆԻ

ՅՈՒՆԻՍԿՈՍ

2024
Վ. ԷԶՐԻԼԵՐՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազեր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**


Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ.
ՋԵՂ ԵՒ ՄԵՂ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ



**Ն. Ա. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏՊԱՍԸ ՍԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆԱԳՅԱՆ
ԵՒ ԱՍՏՎԱԾԱՅՏՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

(Երեւան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 6 հունվարի, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Արդ լոյս է՛ ի Տե՛ր, իբրեւ զօրդիս լուսոյ գնացէ՛ք. զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է եւ արդարութեամբ եւ նշմարտութեամբ»

Սիրելի՛ հավատաւոր ժողովուրդ,

Այսօր՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին, ազգս հայոց, թեեւ վշտակիր եւ հոգեխուով, սակայն հավատքով աներեր, կամքով անկոտրում եւ հույսով առլեցուն, խոնարհվում է մանկացյալ Փրկչի առջեւ, որ բեթղեհմյան այրից որպես լույս ու փրկություն ճառագեց ողջ աշխարհին: Գեղեցիկ օրհներգությամբ է հոգեպարար շարականը մեզ փոխանցում Սուրբ Ծննդյան հիասքանչ իրողությունը. «Աստվածածին, լույսի խորան, արդարության Արեգակի արեւելք եղար եւ խավարի մեջ նստածներիս լույս ծագեցրիր»: Փրկչի Ծնունդը հրավեր է խավարից դեպի լույս, դեպի Աստված ընթանալու եւ միշտ Տիրոջ հետ լինելով՝ արժանի դառնալու երկնատուր բարիքների ու հավիտենության: Մարդեղացյալ Աստվածորդուն մերժելը, սակայն, արհավիրքներ է բերում, չարիք ու ավեր սփռում: Սուրբ Ծնունդն այսօր քրիստոնյա ողջ աշխարհը տոնում է աղոթքով ու հայցով, որ մարդկության կյանքը լցվի Քրիստոսով նորոգությամբ, եւ ազգեր ու պետություններ կարողանան գտնել խաղաղության

ու համերաշխ համակեցության ուղիները տազնապներով ու հակամարտություններով լեցուն ներկա աշխարհում:

Մեր ժողովուրդը 21-րդ դարում վերստին կրեց կորուստներ, ենթարկվեց նոր փորձությունների, որոնք, ցավոք, անկարող եղանք հաղթահարելու աշխարհաքաղաքական բարդ իրադարձությունների, ինչպես նաև առաքելապատվեր բարության, արդարության ու ճշմարտության ճանապարհից խոտորվելու պատճառով: Բարությունը մեզանում աղճատվեց չարության ու նենգության որոմներով, արդարությունն այլափոխվեց կողմնակալության ու հաշվեհարդարի դրսևորումներով, ճշմարտությունը խեղվեց ու խաթարվեց ստով ու չարահնար գործողություններով: Նման արատները նաև պատճառ դարձան մեր ազգի մասնատման, ուժերի ջլատման ու պարտությունների, նաև կորուստների մեր սրբությունների եւ արժանապատվության: Այսպես Արցախը միայնակ մնաց իրեն պատած արհավիրքների օրերին: Արցախցի հայորդիք եղան հալածական հայրենի բնօրրանից, աստանդական եւ անօթեւան: Բայց Տերը, Ով Իր Ծննդյամբ փրկություն ու լույս բերեց խավարի մեջ, ցույց է տալիս, որ Աստծու հետ՝ ամեն նեղություն վերափոխվում է հաղթության, ամեն տառապանք՝ աստվածային հատուցման, ամեն դժվարություն՝ ուժի եւ զորության, եւ անգամ մահը՝ հավիտենության: Այս գիտակցությամբ ու հանձնառությամբ մեկտեղենք մեր ջանքերը փորձությունները հաղթահարելու համար եւ ավետարանչի խոսքերի ճշմարտությունը ցուցանենք մեր կյանքում. «Եւ լույսը խավարի մեջ լուսավորում է, եւ խավարը նրան չնվաճեց» (Հովհ. Ա. 5):

Սիրելի բարեպաշտ զավակներ ի հայրենիս եւ ի սփյուռս, Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին Հայրապետիս պատգամն է, որ մեր սրտերը չդարձնենք հուսահատության, տրտմության մոլթ ու ցուրտ անձալներ, այլ Քրիստոսի ներկայությամբ լուսավորված մտուրներ, որտեղ մանուկ Հիսուսին աստվածահաճո գործեր ընծայելու մղումն ու ձգտումն են թագավորում: Արդ, ապավինենք մարդեղացյալ Տիրոջը, ամուր մնանք հավատքի մեջ, ամենուր լինենք բարու, սիրո եւ ճշմարտի առաջամարտիկներ՝ հանուն արդար ու լուսավոր մեր կյանքի: Նախանձախնդիր լինենք հայրենի պետության հզորացմանը եւ համախմբվենք միասին՝ մեր ողջ ներուժով կասեցնելու համար Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներն ու ոտնձգությունները: Վերացնենք արհեստակա-նորեն մեր մեջ ստեղծված անջրպետները, ապրենք միմյանց հանդեպ

սիրով, որ երկնային օրհնությունը պայծառաճանճան հայրենական ու ազգային մեր անդամատանները, ինչպես Ավետարանում է ասվում, «խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. եւ լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի եւ ստվերների մեջ» (Մատթ. Դ. 16):

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հուսաբեր խորհրդով քաջալեր՝ Հայրապետական Մեր հորդորն ենք բերում Արցախից տեղահանված Մեր զավակներին: Սիրելիներ, դուք անօրինակ հերոսական եւ անընկճելի ոգով ամենայն արժանապատվությամբ եւ անտրտունջ հաղթահարել եւ հաղթահարում եք ձեզ պատուհասած նեղությունները: Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը, որը մենք շարունակելու ենք փայփայել մեր սրտում ու հոգում՝ ամենայն ջանք ի գործ դնելով արցախահայտնության իրավունքների պաշտպանության համար: Մնացեք լի հույսով՝ Աստված ձեզ բարիքներ եւ օրհնություններ պիտի պարգևի ձեր կրած զրկանքների փոխարեն: Ձեր դժվարություններում դուք միայնակ չեք: Ձեզ հետ են ի հայրենիս եւ ի սփյուռս հավատավոր ձեր եղբայրներն ու քույրերը, ովքեր պիտի շարունակեն բոլոր հնարավոր միջոցներով սատար ու օգնական լինել ձեզ: Միասին մենք դուրս պիտի գանք առկա ծանր իրավիճակից եւ կառուցենք խաղաղ, բարօր ու ապահով ապագան մեր ժողովրդի ու հայրենիքի: Հավատում ենք մեր նոր կյանքի արշալույսին, քանզի խավարը չի կարող արգելք լինել արեւածագին: Առավոտվա լույսի հետ, Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի հայցի համաձայն, մեր հոգիներում պիտի պայծառանա Աստծո իմանալի լույսը, եւ ինչպես Տերն է ասում մարգարեի շուրթերով՝ «Արագ պիտի մոտենա Իմ արդարությունը, եւ Իմ փրկությունը պիտի ելնի ինչպես լույս» (Ես. ԾԱ. 5):


Այս հուսառատությամբ ու հավատով, Սուրբ Ծննդյան ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Փրկչի օրհնությունն ու զորակցությունը եւ գահակալության արեւշատ ու արդյունալի տարիներ: Հայրապետական Մեր սերն ու բարյաց մաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին եւ համայն հավատավոր Մեր ժողովրդին:



Սուրբ Ծննդյան շնորհաբեր այս օրը Մեր աղոթքն ենք վերառաքում առ Փրկիչ մեր Տերը: Ով մանկացյալ Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, մեր փրկության համար մարմնացար եւ աշխարհ եկար ու մարդկության հանդեպ անսահման սիրովդ երկնառաք շնորհների լույսը ծագեցրիր բոլոր Քեզ հավատացողների հոգիներում: Խաղաղություն ու բարօրություն պարգեւիր աշխարհին ու մեր հայրենիքին: Ազատիր մեզ ամենայն չարից ու չարիքից, մխիթարություն շնորհիր պատերազմի արհավիրքներից ու ծանր կորուստներից խռովահոյզ ու վշտակիր մեր սրտերին: Ներիր եւ թողություն շնորհիր մեզ, որպեսզի մեղքերն ու անկումները չփակեն մեր առջեւ ճանապարհը մեր տեսիլքների իրագործման եւ ակունքները Քո անբավ բարիքների եւ անսպառ ողորմության: Սուրբ Աջիդ խնամքի ներքո պահպանիր հայրենիքի սահմանները հսկող մեր քաջարի զինվորներին: Շուտափույթ վերադարձ պարգեւիր պատանդ պահվող գերյալ հայորդիներին, այլեւ անհայտ կորած մեր զավակներին: Երկնային երանական հանգստության եւ լուսեղեն օթեւանների արժանացրու պատերազմում զոհված մեր հերոս նահատակներին: Թող համայն հայության մեջ, ինչպես Սուրբ Ծննդյան մսուրում, շողարձակի Քո լուսավոր ներկայությունը, որպեսզի Քեզանով զորացյալ դիմակայենք բոլոր փորձություններին եւ ընթանանք դեպի հաղթական գալիքը մեր ժողովրդի՝ փառավորելով Քեզ Հոր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,

Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՓԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Բանակի նվիրական օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայոց բանակի հրամանատարներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին:


Արցախյան շարժման օրերից կամավորական ջոկատների եւ զինապարտների միավորումով կազմավորվեց հայոց կանոնավոր բանակը, որն ավելի քան երեք տասնամյակ՝ Արցախյան պատերազմների եւ Հայաստանի սահմաններին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների ընթացքում, մարտնչեց անօրինակ սխրանքներով: Բազում քաջորդիներ անմահացան՝ ընդունելով հանուն հայրենիքի նահատակության պսակը:


Սիրելիներ, մեր տարածաշրջանում տիրող բարդ իրադրության մեջ առաջնային է Հայոց բանակի համակողմանի հզորացումը: Մեզ պատած աղետալի ողբերգությունների, Արցախի բռնազավթման հանդիման՝ բոլորիս ջանքերով ըստ ամենայնի պիտի սատարենք մեր բանակին, քանզի Հայոց բանակը երաշխավորն է մեր ժողովրդի խաղաղ ու արժանապատիվ կյանքի, ապահով գալիքի ու հայոց անկախ պետականության: Գոհությամբ ենք հաստատում, որ մեր հոգեւոր սպասավորները հովվական խնամքի համար եղել են եւ լինելու են Հայոց բանակի սպաների ու զինվորների կողքին, որպեսզի զորացնեն ոգին մեր քաջարի մարտիկների եւ ամուր պահեն նրանց հավատքն ու հույսն առ Աստված:

Այսօր մենք մտահոգ ենք աշխարհում առկա լարված ու պատերազմական իրավիճակի, մասնավորապես մեր հայրենիքի շուրջ ծավալվող իրադարձությունների, մեր պետության նկատմամբ դրսևորվող նվաճողական նկրտումների պատճառով: Հավատն ունենք, որ Աստծու օգնությամբ, ուժեղ բանակով եւ համազգային միաբանությամբ կարող կլինենք դիմակայել մարտահրավերներին եւ հաստատել մեր պետության եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի լուսավոր գալիքը:

Եռաբլուրում, հայրենիքի սրբազան հողում ամփոփված մեր նահատակների քաջարի սխրանքը եւ լույս հիշատակը թող մեզ համար դառնան սրբազան ավանդ՝ աննվազ պահելու հայրենյաց սերը եւ նվիրումը, մեր ցավն ու վիշտը դարձնելու ուժ ու վճռականություն հանուն մեր հայրենյաց շենացման ու բարգավաճման:

Բանակի այս նվիրական օրը աղոթում ենք հանուն հայրենիքի զոհված հերոս հայորդիների հոգիների հանգստության համար եւ հայցում շուտափույթ վերադարձ գերյալ հայորդիներին ու անհայտ կորածներին: Թող Տերը խաղաղ ու անվտանգ ծառայություն շնորհի մեր զինվորներին ու սպաներին եւ Իր խնամքի ներքո օրհնի ու պահպանի հայրենի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին այսօր եւ միշտ, ամեն:





Տ. ՇԱՅԵ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հունվարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ հավատաւոր քույրեր եւ եղբայրներ,

Կեսգիշերին՝ մի քանի ժամ առաջ, մենք ամենքս ճանապարհեցինք 2023 թվականը՝ հին տարին, եւ աղոթքով դիմավորեցինք նոր՝ 2024 թվականը: Եւ ահա Սուրբ Գայանե եկեղեցում հավաքված ենք՝ աղոթքով եւ Տիրոջ մարմնի ու արյան հաղորդությամբ դիմավորելու 2024 թվականի առաջին օրը: Շնորհավոր 2024 նոր թվական: Թույլ տվեք, սիրելիներ, այստեղ ներկա բոլորիդ, ի գլուխ ունենալով ազգիս Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբան գերաշնորհ, հոգեշնորհ հայրերին, արժանապատիվ հայրերին, մեր սարկավագ եղբայրներին եւ բոլոր բոլորիդ մաղթել բարի եւ օրհնյալ տարի: Շնորհավոր 2024 նոր տարի:

Ժամանակը երեւույթ է, որ մեզանից, մեր կամքից, մտքից եւ կարողություններից անկախ անողոքաբար տիրում է մեզ: Նրա հետեւից չես կարող հասնել. անապատի ավազի պես այն հոսում է մեր մատների արանքով: Չես կարող բռնել, չես կարող գոնե մի պահ կանգնեցնել: Պատահական չէ, որ գրողներից մեկն ասում էր. «Կանգ առ ակնթարթ, որքան չքնաղ ես դու»: Մարդ միշտ ժամանակի հանդեպ ունեցել է այս յուրահատուկ եւ ինչ-որ իմաստով հակասական՝ եւ տխուր, եւ ուրախ մոտեցումը: Տխուր, որովհետեւ վայրկյաններն անցնում են անդարձ, ուրախ, քանի որ ամեն նոր վայրկյանը նոր հույս ու տեսլական է բերում մեր կյանք: Ժամանակի այսպիսի ընկալմամբ՝ հնի եւ նորի բաժանմամբ ենք նշում մեր օրացույցում նոր տարին՝ իբրեւ Ամանոր, Կաղանդ ու Տարեմուտ: Կաղանդը դեռ դարեր առաջ սահմանել ենք որպես օրացույցի առաջին օր՝ այդպիսով արտահայտելով նաեւ ժամանակի հանդեպ մեր

քրիստոնեական ազդեցական մոտեցումը: Ահա թե ինչու դեկտեմբերի 31-ի կեսգիշերին կատարում ենք յուրահատուկ օրհնության կարգ՝ Նոնօրհնեք՝ իբրեւ աշխարհի եւ ժամանակի օրհնություն, իսկ հունվարի 1-ը միասին դիմավորում ենք՝ որպես Նոր տարվա առաջին օրը՝ Քրիստոսի մարմնի եւ արյան հաղորդությամբ սկսելու պատրաստակամության խորհրդանիշ:

Բայց, ինչպես ասացի, հինը եւ նորը այս առումով մշտապես առկա են մեր մտքում: Ժամանակը միշտ երկու երես ունի. երբ դառնում ենք դեպի հետ, անցյալն է՝ իր թողած տխուր կամ ուրախ հուշերով, երբ նայում ենք առաջ, ապագան է՝ հուսառատ, բայց եւ անորոշ: Ահա այսպիսին է ժամանակը, եւ մենք բոլորս էլ, կանգնած այսօր 2024 թվականի առաջին օրվա առաջին ժամերին, հասկանում ենք, որ հետեւում ենք թողել անցյալի հուշեր՝ դառն կամ քաղցր, եւ դեռ առջեւում են այնպիսի վայրկյաններ, այնպիսի պահեր, որոնք մեզ համար անորոշ են: Ահա թե ինչու, չնայած մեր սիրտն ուրախ է, բայց եւ թաքուն տխրությամբ ճմլվում է, որովհետեւ չգիտենք՝ 2024-ին ինչ ձեռքբերումներ կամ ինչ կորուստներ ենք ունենալու: Եւ ուրեմն, դառնանք անցած 2023 թվականին:

Նայենք մի պահ այդ թվականին. ո՛ր մնացին տարիներ շարունակ մեր հյուսած քաղցր երազները, ո՛ր մնացին մեր գեղեցիկ ծրագրերը, ո՛ր մնացին հավիտենության եւ հավերժության մասին մեր պատկերացումները: Մի քանի տարվա մեջ մենք դրանք բոլորը կորցրինք: Շատերը կասեն՝ անվերադարձ, շատերը կասեն՝ կարճ ժամանակով, բայց կորցրինք, որովհետեւ ժամանակն անողոք է, եւ շատ հաճախ մեր գեղեցիկ ծրագրերը, երազները, ինչքան էլ որ դրանք իրականությանը մոտ լինեն, չեն կարող դիմանալ ժամանակին: Եւ դեռ այսօր էլ անցյալն իր ձեռքերով մեզ տանում է դեպի պատմության հուշերի անիրական, անդեմ աշխարհ: Մենք չգիտենք, որ այն, ինչ թողել ենք անցյալում, մեր ունեցած կորուստները, դեռ մեզ հետապնդում են: Այն դեռեւս մեզ համար ոչ թե հաճելի հուշ է կամ պատմություն, այլ իրականություն: Անցյալը մեր ստվերն է եւ շարունակում է հետապնդել մեզ:

Սիրելիներ, ո՞րն է լինելու Նոր տարվա մեր նշանաբանը, ո՞րն է լինելու մեր տեսլականը: Չէ՞ որ ամենքս Նոր տարվա սեղանին, երբ բարի կենացներ ենք մաղթում միմյանց, ինչ որ նշանաբան կամ ցանկություն ենք ասում եւ կամենում, որ նոր տարին այդ ցանկության ներքո անցնի: Մենք միշտ կորուստներ ենք ունենալու տարվա մեջ, եթե մտածենք, որ


մենք ենք ժամանակի տերը, եթե մտածենք, որ մենք ենք ամեն բան հին կամ նոր դարձնում: Դժբախտաբար մեր հասարակության մեջ կան այդպիսի մարդիկ, ցավոք սրտի մեր հասարակության մեջ կան բացարձակության եւ անսխալականության բարդույթով տառապող մարդիկ, բայց նրանք չգիտեն, որ միայն երկնքի գահի վրա նստողն է ասում. «Ահավասիկ, ես ամեն բան նոր եմ դարձնում» (Հայտն. ԻԱ. 5): Եթե չըմբռնենք այն պարզ ճշմարտությունը, որ մեր կյանքը, ժամանակը, տարին, մեր գեղեցիկ ծրագրերն ու հույսերը միայն Տեր Հիսուս Քրիստոսի սիրո հայացքի ներքո են անցնում, Եսայի մարգարեի խոսքերով՝ միշտ քնած ենք մնալու ճանապարհների խաչմերուկում (հմմտ. ԾԱ. 20): Եւ ուրեմն, ո՞րն է մեր նշանաբանը այս՝ 2024 նոր տարում:

Մեր նշանաբանը մաքառող եւ պայքարող Հիսուսն է: Հիսուս, որ աշխարհ եկավ, մաքառեց եւ պայքարեց ոչ թե ճակատամարտի, ռազմի դաշտում, այլ մարդկանց սրտերում ու հոգիներում: Հաղթանակներ տոնեց ոչ թե զորավար կամ հանճարեղ սպարապետ հռչակվելու, այլ մարդկանց հոգիները փրկելու եւ դրանք Աստծուն դարձնելու համար: Այն է մաքառող եւ պայքարող Հիսուսի կերպարը, որը մեր նշանաբանն է 2024 թվականին: Եթե այս՝ եկող տարում մեզ մատուցեն աշխարհի դառնության ու վշտերի բաժակը, մենք մինչեւ վերջ համբերելու ենք եւ խմենք, որովհետեւ մեր Տերն Ինքը մինչեւ վերջ համբերեց եւ խմեց: Եթե աշխարհում իբրեւ քրիստոնյաներ ծաղրուծանակի արժանանանք, հիշենք, որ այդպես էլ պետք է լիներ, որովհետեւ անտրամաբանական է վարդ որոնել այնտեղ, որտեղ փշե պսակ ստացավ մեր Տերը:

Գալիք 2024 թվականն անծանոթ մի աշխարհ է, 365 կամ 366 օրերի վրա տարածվող անծանոթ մի աշխարհ: Մենք տեսնում ենք հիմա միայն այդ աշխարհի, անծանոթ երկրի լեռնագագաթները: Մեզ համար պարզ չէ՝ ի՞նչ կան խորքերում: Այդ անծանոթ աշխարհը չհերկված անդաստան է: Նոր տարվա շեմին ես մաղթում եմ, որ մենք բոլորս բոլորիս մի բուռ հավատք, մի բուռ հույս եւ մի բուռ սեր բեղմնավորենք այդ անհերկ անդաստանում: 2024 թվականը մենք պետք է դիմավորենք եւ ճանապարհենք՝ մաքառող ու պայքարող մեր Տիրոջ օրինակին հետեւելով: Եթե չկան մաքառում եւ պայքար, եթե չկա պայքար հանուն մեր արժեքների, մեր ինքնության, մեր հավատքի, մեզ համար 2024-ը եւ մնացած բոլոր տարիները, թե՛ անցյալ, թե՛ ներկա եւ թե՛ ապագա, կլինեն միայն օրացուցային թվեր: Այս է մեր նշանաբանը, որովհետեւ եթե մեր հույսը Տիրոջ

վրա չենք դրել, եթե չենք ընդօրինակում մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, եթե այդ անծանոթ՝ մեր ժամանակի անդաստանում չենք խառնում մեր ճիգը, մեր ողջ էությունը, մեր քրտինքը, ուրեմն չենք գնահատում մեր ժամանակը, ուրեմն նոր արարած չենք, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Ով Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է» (Բ. Կորնթ. Ե. 17): Չմոռանանք, որ գալիք այս տարում մենք նոր արարած, նոր մարդ, նոր էակ պիտի լինենք՝ մաքառող եւ պայքարող Հիսուսի աշակերտները: Ավելորդ մաղթանքներ կամ բարեմաղթանքներ չեմ ուզում անել, բայց հիշենք, որ գալիք տարին մեզ համար կարող է բերել եւ բացթողումներ, եւ կորուստներ, եւ ուրախություններ, եւ մեծ-մեծ հույսեր: Մեր միակ ու կարեւորագույն ձեռքբերումը պետք է լինի, ի գին ամեն ինչի, հետեւել մաքառող եւ պայքարող Հիսուս Քրիստոսի կերպարին: Եթե այս տարի գոնե մի փոքր մոտենանք Նրան, կունենանք մեր մեծագույն ձեռքբերումը...

Այս դժվարին ճանապարհին Հայր Աստծու ողորմությունը, Որդու սերն ու Սուրբ Հոգու զորությունը թող ուղեկից լինեն ամենքիս. ամեն:



Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՔՐԱՅԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ
Ս. ՄԵՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի Իմ՝ ընդ
խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց»
(Յովհ. Ը. 12):

Սուրբ ծննդյան նախատոնական այս երեկոյին, երբ մեր ազգային կյանքում եւ մեր հոգիներում դեռեւս թեւածում են հոգեւոր խավարի ու անորոշութեան որոշ նշույլներ, փրկչական այս խոսքերն են գալիս՝ փարատելու մռայլն ու աղջամուղջը մեր սրտերի. «Ես եմ աշխարհի լոյսը...»:

Ծննդոց գրքում Աստծու արարչութիւնն սկսվում է «Եղիցի Լոյս...» հրամանի արձակումով, որով հալածվում են տիեզերական խավարն ու անորոշութիւնը՝ քառսը, եւ սկզբնավորվում են տեսանելի ու անտեսանելի բոլոր արարածները: Բայց այսքանով չի ավարտվում Աստծու խոսքից ծագող Լոյսի առաքելութիւնը, որովհետեւ, լինելով աստվածային անսահման սիրո զեղում, այն բնականորեն պետք է լինի հարատեւ եւ շարունակական, ինչպէս եւ հաստատում է ավետարանիչը. «Այդ ճշմարիտ Լոյսն էր, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալու» (Հովհ. Ա. 9):

Հիսուս Քրիստոսի հրաշափառ ծնունդը ոչ այլ ինչ էր, եթե ոչ վերստին հռչակումն աստվածային «Եղիցի Լոյս» հրամանի: Աստված խոնարհվեց մարդկային մակարդակի՝ վերականգնելու արարչութեան խաթարված ներգաշնակութիւնը եւ կանգնեցնելու մարդկութեան՝ նորից դեպի քառս գնացող վայրընթացը: Հայ ժողովուրդն առաջիններից մեկը ընդառաջ գնաց աստվածային ճշմարիտ Լոյսին, որովհետեւ իր ենթա-

գիտակցական ոլորտում դեռևս կրում էր հիշողությունը եւ նշույլները նախաստեղծ լույսի: Ուստի Քրիստոսի բերած հոգեւոր նորոգումը մենք կոչեցինք լուսավորություն, մեր ազգի առաքյալներին եւ պաշտոնական առաջին հայրապետին անվանեցինք լուսավորիչներ, իսկ մեզ էլ սկսեցինք համարել Լուսո որդիներ:

Սուրբ Ծննդյան այս հոգենորոգ տոնին, որ տարեվերջյան ու գալիք տարվա հաշվետու մի հանգրվան է ամեն մի քրիստոնյայի համար, հետադարձ հայացք նետենք մեր անցած տարիներին եւ փորձենք լույս սփռել մեր ներքին մտահոգությունների ու անորոշության խավարի վրա: Այսօր զրկված ենք վերջին տասնամյակներում ազգային մեր կյանքը միավորող, ոգեշնչող եւ ուղղորդող վառ ջահերից մեկից՝ Արցախից, ու մտամոլոր հարցնում ենք. «Որտեղից ստանանք մեզ այդքան անհրաժեշտ ու կենսական լույսը, որով վերստին պիտի վառենք մեր հանգած լապտերը»:

Սակայն Աստծու փրկությունը միակողմանի եւ մեկանգամյա գործողություն չէ եւ ենթադրում է ընդառաջ գնացող մոտեցում: 19-րդ դարի սկզբի անգլիացի նկարիչներից մեկի վրձնին պատկանող հայտնի մի կտավ կա, որ կոչվում է «Աշխարհի Լույսը»: Գիշերվա մթության մեջ պատկերված է Տեր Հիսուս Քրիստոս, որը թափում է փակ եւ մամուռակալած, դրսից բռնակ չունեցող մի դուռ: Ի պատասխան այն հարցին, թե ինչու դուռը բռնակ չունի՝ նկարիչը պատասխանել է, որ բռնակը ներսի կողմից է: Այդ մենք է, որ պիտի բացվենք Լույսին:

Այն պահից, երբ մենք ընդունեցինք Քրիստոսի ժողովուրդը լինելու հրավերը եւ ուխտեցինք լինել Լույսի որդիներ, փոխվեց նաեւ մեր կյանքի ու պարտականությունների ուղին՝ «Ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում»: Ուստի երբ մենք հեռանում ենք այդ լույսից եւ մեր առաքելությունից, անմիջապես կրում ենք դրա կործանարար հետեւանքները: Խոսքիս կենդանի ու դեռևս թարմ վկաները հենց մենք ենք, այստեղ հավաքված յուրաքանչյուր ոք:

Տասնամյակներ շարունակ իր անկախության համար մաքառող Արցախը պատմության մեջ առաջին անգամ ենթարկվեց ամբողջական հայաթափման: Ադրբեջանի կողմից հատուկ նպատակով իրագործված իննամսյա շրջափակման եւ մարդասիրական ճգնաժամի հետեւանքով հյուծված մեր ժողովուրդը հերոսական դիմադրություն ցույց տվեց



նաեւ ռազմի դաշտում. ցավոք ուժերն անհավասար էին, իսկ Արցախը՝ միայնակ:

Ճրագալույցի լուսառատ այս երեկոյան մտովի տեղափոխվում ենք երկու կարեւոր տաճարներ: Առաջինը Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ տաճարն է, որ անգամ շրջափակման պայմաններում Ծննդյան տոներին լցված էր աննկարագրելի սիրով ու ջերմությամբ: Այսօր այստեղ Պատարագի ընթացքում, առաջին շարքերում մեզ հետ աղոթակից ունենալով Արցախի օրենսդիր եւ գործադիր իշխանություններին՝ գլխավորությամբ Արցախի նախագահ տիար Սամվել Շահրամանյանի, թվում է, թե հերթական տոնական Պատարագն է Արցախի առաջնորդանիստ եկեղեցում, որի ընթացքում մեծ ուրախություն ենք ունեցել վայելելու նաեւ հայրական ներկայությունն ու օրհնությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Վեհափառ Տեր, տոնական այս առիթով, հանուն Արցախի մեր հավատավոր ժողովրդի՝ մեր որդիական ջերմ սերն ու անկեղծ երախտիքներն ենք բերում Ձերդ Սրբությանը, որ տակավին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդության տարիներից սկսյալ՝ անմնացորդ նվիրումով աջակից եք եղել Արցախի ազատագրական սրբազան պայքարին: Մենք մշտապես զգում էինք Ձեր հայրական խնամքն ու ներկայությունը հատկապես մեր նեղության օրերին, եւ այսօր էլ ի հեճուկս բազմաթիվ խոչընդոտների, Հայոց Եկեղեցին հաստատակամորեն շարունակում է հավատալ հայկական Արցախի լուսավոր գալիքին:

Սիրելի՛ ներկաներ, մեր մտապատկերում հառնող երկրորդ տաճարը Սուրբ Ծննդյան տաճարն է, այն համեստ մսուրը, որի անշուք ու խոնարհ մեծության առջեւ այսօր ծնկած՝ փորձում ենք հասկանալ, թե ինչու զրկվեցինք առաջին տաճարից:


Այս տարի տասնյակհազարավոր մեր հայրենակիցներ առաջին անգամ Ամանորյա եւ Սուրբ Ծննդյան տոները պիտի դիմավորեն իրենց փայփայած օջախներից հեռու, բայց ո՛չ օտարության մեջ, ուստի այնպիսի սիրով ու ջերմությամբ պետք է պարուրենք Արցախի մեր քույրերին ու եղբայրներին, որ նրանք նորից սկսեն հավատալ իրենց լուսավոր գալիքին: Սիրելի՛ արցախցիներ, լցվեք աստվածային հույսով եւ լավատեսությամբ, ապրեք եւ արարեք Մայր Հայաստանում, որովհետեւ միայն այս կերպ կարող է արթուն մնալ եւ իրագործվել վերագարձի հույսը:

Երբ ծառը խնամքով են հանում հողից եւ չեն վնասում նրա արմատները, ինչ-որ չափով հնարավոր է դառնում նրան այլ տեղում աճեցնելը, իսկ մի ժողովրդի, որի արմատները դարերով են սերտաճել հայրենի հողի մեջ, անհնար է առանց արմատները վնասելու հանել իր հողից: Մեզ բռնի կերպով քաշեցին ու պոկեցին մեր դարավոր այգուց, իսկ մեր արմատները մնացին այնտեղ: Ուստի նորից պիտի ձգտենք միանալ մեր արմատներին, այլապես, որպես պտղատու ծառ, դատապարտված ենք չորանալու:

Սուրբծննդյան լուսաբեր այս երեկոյան աղոթում ենք մեր երկրի եւ պետականության անսասանության համար, մեր նահատակ քաջորդիների հոգիների խաղաղության, անհայտ կորած եւ գերյալ մեր զավակների շուտափույթ վերադարձի համար, ինչպես նաեւ այս պահին սահմանը հսկող մեր զինվորների համար: Աղոթում ենք նաեւ գերության մեջ գտնվող Արցախի ղեկավարության տոկունության եւ վերադարձի համար: Մեր ցանկությունն է, որ Արցախն իր պետական կառույցներով շարունակի գոյատեւել՝ թեկուզ Մայր Հայաստանում, որը հիմք պիտի լինի հայրենի երկիր վերադարձի համար:

Ինչպես հովիվները եւ մոզերը գտան Հիսուս Մանկանը բեթղեհեմյան աստղին հետեւելով, այդպես էլ մենք խոնարհությամբ ու իմաստությամբ կարողանանք վերագտնել ազգային մեր կյանքի զարթոնքի ուղիները եւ մեր կորուսյալ հայրենիքը՝ սուրբծննդյան Լույսին հետեւելով: Արցախը հայոց Դրախտն է, իսկ քրիստոնյաների համար Դրախտ վերադարձը հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսի միջոցով: Ուստի, սիրելի՛ հավատավոր քույրեր եւ եղբայրներ, Մանուկ Հիսուսի խոնարհ մսուրի առջեւ ծնկած, մաղթում ենք բոլորիս Քրիստոսով վերադարձ դրախտ՝ Արցախ:

Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ, ձեզ եւ մեզ մեծ ավետիս...



Տ. ՍԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԼՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 հունվարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Փառք ի բարձրունս Աստուծոյ, եւ յերկիր խա-
ղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»

(Ղուկաս Բ. 14):

Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպէս եղավ. երկնային
զորքերն ու հրեշտակները երգում էին. «Փառք Աստծուն բարձունքնե-
րում, երկրի վրա՝ խաղաղություն, եւ մարդկանց մեջ՝ հաճություն»:

Հիսուսի ծնողները՝ Ս. Կույս Մարիամը եւ նրա նշանած Հովսեփը, որ
Դավիթ թագավորի ազգատոհմից էր, արձակված մարդահամարի հրա-
մանի համաձայն՝ պետք է իրենց ծննդավայր ներկայանային: Այդ վայրը
Բեթղեհեմն էր՝ Դավթի քաղաքը: Ս. Կույս Մարիամն ու Հովսեփը մոտք են
գործում Բեթղեհեմ: Այստեղ աշխարհի Փրկչի ծննդյան հանգամանքներն
ուղեկցվում են հրաշալի ու գեղեցիկ դրվագներով եւ հայտնութուններով:

Այս զարմանահրաշ իրողությանն ականատես եւ ականջալուր են լի-
նում Բեթղեհեմի դաշտերում իրենց հոտերն արածեցնող հովիվները:

Բեթղեհեմի իջեւանատներում տեղ չգտնելով՝ Հիսուսի ծնողները գիշե-
րելու համար տեղավորվում են մի քարանձավում, որտեղ հովիվները պա-
հում էին իրենց հոտերը: Ահա այս քարայրում է ծնվում Հիսուս Մանուկը:
Աստվածամայրը խանձարուրով պատում է Մանկանը եւ դնում է մսուրի
մեջ՝ փափուկ խոտերի վրա: Հրեշտակը երեւում է հովիվներին եւ հայտնում
Փրկչի հրաշափառ ծննդյան լուրը. ծնվել է Մեսիան՝ Փրկիչն աշխարհի:

Կատարվել է խոստացվածը: Փրկչի ծննդյան օրը դառնում է մարդ-
կության պատմության շրջադարձային փուլը, քանի որ բացվել էին երկն-
քի դռները մարդկային ցեղի առջեւ, երկնքից լսվում էին «Փառք ի բար-
ձունս» երգի հնչունները: Արարիչ եւ Աստված կատարյալ ու անապա-

կան մարդկային բնությամբ եկել էր աշխարհ ու բնակվել մեր մեջ: Փրկչի ծննդյամբ վերանում է Աստծու եւ մարդկության միջեւ գոյություն ունեցող մեծ անջրպետը, եւ հաստատվում է ներդաշնակություն:

Հովիվները շտապում են դեպի Փրկչի մսուրը՝ երկրպագելու Հիսուսին: Երկնքում պայծառ շողարձակող Բեթղեհեմի աստղի լույսն առաջնորդում է մոզերին դեպի նորածին Մանկան քարայրը: Նրանք գիտեին, որ հրեա ժողովուրդն սպասում է Մեսիայի՝ Փրկչի գալստյանը: Բայց երբ հասնում են Երուսաղեմ, նրանց դիմավորում է Հրեաստանի Հերովդես թագավորը եւ հանձնարարում, որ ստույգ ճշտեն Մանկան գտնվելու վայրը եւ տեղեկացնեն այդ մասին, որպեսզի ինքն էլ գնա երկրպագության (Մատթ. Բ. 8):

Ավետարանն ասում է, որ մոզերը, գալով Փրկչի քարայրը, խոնարհվում եւ երկրպագում են Հիսուս Մանկանը եւ տալիս են իրենց հետ բերած ընծաները՝ Աստծուց հրաման ստանալով հետ չգնալ Երուսաղեմ եւ այլ ճանապարհով մեկնել իրենց երկրները: Ահա այդ ժամանակ զայրացած Հերովդեսը հրամայում է սրի քաշել մինչեւ երկու տարեկան բոլոր տղա երեխաներին, քանզի վախենում էր, որ Հիսուս կմեծանա եւ կխլի իր թագավորությունը: Աստված Հովսեփին հայտնում է, որ վերջինս Աստվածամոր ու Մանկան հետ հեռանա Եգիպտոս: Նրանք Եգիպտոսում մնում են մինչեւ Հերովդեսի մահը: Այնուհետեւ սուրբ ընտանիքն ի վերուստ ստացված հրամանով գալիս են Գալիլեա եւ բնակվում Նազարեթ քաղաքում, որովհետեւ Հրեաստանում Հերովդեսին փոխարինել էր որդին՝ Արքեղայոսը:

Ահա, սիրելիներ, Հիսուս Փրկիչն աշխարհ եկավ իր աստվածային ճշմարիտ պատվիրաններով, լուսավորեց աշխարհը եւ մարդկությանն առաջնորդեց դեպի փրկություն: Ով հավատա Հիսուսին՝ մեր Տիրոջը եւ Փրկչին, եւ առաջնորդվի աստվածային պատգամներով, չի կորչի, նաեւ կժառանգի հավիտենական կյանքը:

Տիրոջ Ծննդյան հետ միաժամանակ մենք տոնախմբում ենք Աստվածհայտնությունը: Նախկինում բոլոր Եկեղեցիները Սուրբ Ծնունդը եւ Աստվածհայտնությունը տոնել են հունվարի 6-ին: Հետագայում բաժանումներ ու փոփոխություններ են առաջացել, իսկ Հայ Առաքելական Մայր Եկեղեցին այսօր էլ տոնում է նույն օրը՝ հունվարի 6-ին: Փրկչի մկրտության գնալով է, որ Աստված հայտնվեց մարդկությանը, Որդին Աստված մտավ Հորդանան գետը, Հայր Աստված երկնքից ձայնեց, եւ Սուրբ Աստ-

ված Հոգին իջավ աղավնակերպ: Սուրբ Երրորդությունը եւ անբաժանելի Աստվածությունը հայտնվեց մարդկանց:

Հիսուսի մկրտության գնալն է հենց վկայում Նրա աշխարհ գալու փրկչական նպատակի մասին՝ Իր վրա վերցնել աշխարհի մեղքերը եւ դրանք քավելով Իր անմեղ արյամբ՝ փրկել մարդկային ցեղը: Աստված-հայտնությունամբ հաստատվեց Աստծու ներկայությունը մարդկային կյանքում: Ինչպես ասացինք, այն անհաղթահարելի բաժանումը, որ մեղքի պատճառով առաջացել էր Արարչի եւ Իր արարածների միջեւ, վերացավ Սուրբ Ծննդի եւ Աստվածհայտնության շնորհիվ: Աստված, Իր անսպառ սիրով ու գթությամբ դեպի Իր ստեղծած էակը, մարդկությանն արժանացրեց փրկության:

Աղոթենք ու խնդրենք, որ Տերը զորացնի մեր հավատքը, օգնի, որ հեռու մնանք անօրենությունից ու մեղքից, որ չխաթարվենք ու չշեղվենք Տիրոջ ճշմարիտ ճանապարհից:

Հայ ժողովուրդն առաջիններից էր, որ հավատաց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Հազարամյակներ շարունակ մենք, մեր քրիստոնեական սրբազան հավատքը անսասան պահելով, դիմակայեցինք դաժան մարտահրավերներին, հաղթահարեցինք պատմության ընթացքի բոլոր արհավիրքները, դժվարություններն ու ողբերգությունները: Այսօր եւս նույնն է, ոչինչ չի փոխվել, ինչպես միշտ, հիմա էլ աշխարհաքաղաքական կենտրոնները շարունակում են իրենց աշխարհակալական գործողությունները՝ բռնանալով, անտեսելով փոքրերի ու թույլերի դասի իրավունքները: Փառք ու գոհություն ենք հայտնում Ամենաբարձյալն Աստծուն, որ մեր մոլորակը մեկ անգամ եւս արժանացրեց պտտվելու Արեգակի շուրջը՝ եւս մեկ հնարավորություն տալով մեզ այսօր միմյանց ասելու՝ Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ, մեզ եւ ձեզ մեծ ավետիս:

Այսօր, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Սուրբ եւ Անմահ Պատարագի ավարտին կատարում է հոգեհանգստյան կարգ մեր բոլոր ննջեցյալների հիշատակին: Մեր տաղավար տոներին հաջորդում է մեռելոցի պատարագը՝ բոլոր մահացածների հոգիների հանգստության ու խաղաղության համար:

Հայցում ենք Բարեգութ Տիրոջ ողորմածությունը հանգուցյալներին: Բոլոր արդարների հիշատակը թող օրհնությանմբ լինի:

Շնորհք, Սեր եւ Աստվածային սրբարար զորություն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս, ամեն:

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐԱՅՈՒՆՆԵՐԻ
Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ Տ. ԱՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐԱԿԱՆՅԱՆԻ
ՎԵՐՋԻՆ ՕՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(8 հունվարի, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ելի ի Հօրէ՛ եւ եկի յաշխարհ եւ դարձեալ թողումք
զաշխարհ, եւ երբեք առ Հայր»

(Յովհ. Ժ. 28):

Այս խոսքերն է, որ Հովհաննէս ավետարանիչն ավանդում է ընթերցող-
ներին եւ յուրաքանչյուրիս հիշեցնում, թէ որտեղից ենք եւ ուր պիտի
երթանք:

Այսօր, սիրելի՛ հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ հավատացյալներ,
երբ վերջին հրաժեշտի պահն է մեր Եկեղեցու երկարամյա սպասավորի՝
Արիս արք. Շիրվանյանի, ամենքիս հայացքի առջևով ժապավենի պէս
անցնում են սրբազանի հետ կապված հիշողութիւնները: Բարի, նվիրյալ,
հանդարտ, խոհեմ, անխոնջ ու անսակարկ, միշտ պատրաստակամ սպա-
սավորը մեր Եկեղեցու, որն իր ծառայութիւնն է բերել Հայ Եկեղեցուն
տարբեր պաշտօններում եւ հանգամանքներում՝ սկսելով Երուսաղեմի
պատրիարքութիւնից՝ որպէս միաբան, եւ ապա՝ Տիրոջ խոսքի սպասավոր՝
ի սփյուռս աշխարհի:

Խորին ցավակցութիւններս եմ հայտնում ազգիս Վեհափառ Հայ-
րապետին, միաբան եղբայրներին՝ հոգեւոյս սրբազան հոր մահվան
առիթով: Ցավակցութիւններս՝ ննջեցյալի հարազատներին, որոնք
դժվարութիւն ունեցան ներկա գտնվելու սիրելի Արիս սրբազանի
հուղարկավորութեանը:

Կյանքը, որ Աստված պարգևել է մեզ, գերագույն արժեք է, որի ինչ-
պիսին լինելը գուցե միայն հետմահու է հարազատների համար ընկա-
լելի դառնում: Երբ ի դիմաց անշունչ մարմնի արտասովոր ենք եւ փոր-

ձուլման հասկանալ «ինչո՞ւ»-ն, մենք, որ քրիստոնյաներ ենք, թերևս կարողանում ենք մխիթարություն խոսքեր գտնել: Առավել ևս կարող են մխիթարվել նրանք, ովքեր Ավետարանի պատգամներով են ապրում իրենց կյանքն աստվածապարգև և լցնում իրենց օրը մարդկանց հետ շփումներով, որովհետև թողնելով այս կյանքը՝ մենք գնում ենք դեպի վեր՝ դեպի Հայրը, Որից որ եկանք: Իսկ նրանք, ովքեր ապրում են իրենց կյանքը պարզապես ապրելու համար, դժվար թե ի զորու լինեն քրիստոնյա մարդու պատկերացրած վախճանը հարգելու և ընդունելու: Շատերի համար այստեղ է ավարտվում կյանքը, և այդ կյանքի վերաբերյալ իրենց ընկալումն այսպիսին է. ուրախ, զվարթ օրեր ապրել, լավ հիշողություններ ունենալ և այդպես ավարտել կյանքը: Սակայն Աստծու Բանի քարոզիչը՝ Արիս սրբազանը, քրիստոնեավայել կյանքի մեծագույն քարոզախոսներից էր և իր սպասավորության տարբեր տարիներին և տարբեր վայրերում միշտ ունեցել է արձանագրված հաջողություններ և շատ շատերին է Տիրոջ ճանապարհը ցույց տվել:

Կյանքի վերջին օրերին առիթ ունեցել եմ ի մոտո ճանաչելու սրբազան հորը: Մինչ վախճանը գիտակից էր և իր իսկ խնդրանքով վախճանից օրեր առաջ արժանացավ վերջին հաղորդության, նա ոչ թե հաշտվել էր մահվան հետ, այլ պատրաստվել էր առ Հայր երթալու: Եւ այս առիթով կուգեմ մասնավոր շնորհակալություններս հայտնել Մայր Աթոռիս բոլոր այն հոգևոր հայրերին, որոնք սրբազան հոր վերջին օրերին նրա կողքին էին աղոթքով, հոգաժողությամբ և ամենայն ուշադրությամբ:

Սիրելի՛ սրբազան, գնում եք դեպի Հայր, դեպի Արարիչ, և Նա, երկնքից տեսնելով Ձեր շուրջ 90-ամյա կյանքը, իր գոգի մեջ պիտի մխիթարի, որտեղ չկա ցավ, չկա հեծություն, մեզ էլ պիտի առաքի Սուրբ Հոգուն, որպեսզի մենք էլ մխիթարվենք և կարողանանք շարունակել մեր առաքելությունը՝ փորձառություն ձեռք բերելով Ձեր՝ հոգևորականի անխոնջ ծառայությունից:

Տերը պահապան լինի ամենքիս, և Սուրբ Հոգով մխիթարվենք. ամեն:



Տ. ՆԱՅԿԱԶՈՒՆ ՔԱՅԱՆԱ ՍԱՅԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 հունվարի 2024 թ.)

Սիրելի՛ հոգեւոր հայրեր, եղբայրներ, սիրելի՛ հավատացյալ փոքրեր եւ եղբայրներ, նախ ուզում եմ որդիական խորին երախտագիտությունս հայտնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ինձ եւ իմ ֆահանա եղբայրներին վերապատրաստման դասընթացների համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրավիրելու համար: Կամենում եմ նաեւ մասնավոր շնորհակալությունս հայտնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանին, որ առիթ ընձեռեց Սուրբ Գայանեի վանքի՝ ինձ համար շատ հարազատ կամարների ներքո, որտեղ երկար տարիներ ծառայել եմ իբրեւ սարկավագ, մատուցել Սուրբ Պատարագ եւ աղոթակից լինել ձեզ՝ ամենփող:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Իւր ամոյշ հեղեալ է անուն Բ»
(Երգ երգոց Ա. 2):

Մեր քարոզին այս բնաբանն ենք ընտրել, որովհետեւ այսօր սուրբծննդյան ութերորդ օրն է, եւ մենք տոնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Անվանակոչության օրը, երբ մեր Տիրոջը թլփատեցին եւ անուն դրեցին:

Այսօր տարվա մեջ ամենակարճ ավետարանական հատվածի ընթերցումն է՝ Ղուկասի Ավետարանի Բ. գլխի 21-րդ համարը: Այդտեղ պատմվում է այն մասին, որ երբ մեր Տիրոջ ծննդյան ութերորդ օրը լրացավ, Նրան թլփատեցին եւ Նրա անունը դրեցին Հիսուս, այնպես, ինչպես Գաբրիել հրեշտակապետն ավետել էր Սուրբ Տիրամորը՝ նախքան նրա հղանալը, եւ Հովսեփ Աստվածահորը, որ նշանածն էր Սուրբ Կույս Մարիամի:

Ինչո՞ւ էին իսրայելացիներն իրենց զավակների անունները դնում 8-րդ օրը՝ թլփատության ժամանակ, եւ ի՞նչ է նշանակում Հիսուս անունը:

Նախ թլփատության մասին կարդում ենք Մենդոց գրքի Ժէ. գլխում, Աստված այսպես է պատվիրում Աբրահամին.

«Այս է իմ ուխտը... Ձեր արու մանուկները ութօրյա հասակում պետք է թլփատվեն սերնդեսերունդ» (Մենդ. Ժէ. 10–12):

Այսինքն՝ Աբրահամի սերնդի բոլոր արու զավակները պիտի թլփատվեին, որով պիտի ցույց տային, թե իրենք Աստծու ժողովուրդն են: Բայց, ինչպես հաճախ երեւում է Հին Կտակարանում, հրեա ազգը թլփատության միայն արտաքին կողմին էր հետեւում, եւ այդ պատճառով թե՛ Երկրորդումն Օրինաց գրքում եւ թե՛ Երեմիայի մարգարեության մեջ տեսնում ենք, որ Աստված մասնավորեցնում է, որ Իր խոսքը զուտ մարմնավոր թլփատության մասին չէ:

Այսպես՝ Երկրորդումն Օրինաց գրքի եբրայեցերեն բնագրում կարդում ենք. «Թլփատեցե՛ք ձեր սրտի անթլփատությունը, եւ ձեր պարանոցներն այլեւս մի՛ խստացրեք» (Բ. Օր. Ժ. 16):

Իսկ Երեմիա մարգարեն Աստծու անունից այսպես է ասում. «...Ձեր Աստծո՞ւ համար թլփատվեք, ձեր սրտի անթլփատությունը թլփատեք» (Եր. Դ. 4):

Եւ այսպես՝ մենք տեսնում ենք, որ արդեն Հին Կտակարանում խոսվում է այն մասին, որ Աստծուն պետք չեն զոհաբերության արտաքին կողմերը միայն, եւ Աստված մեզնից ուզում է մեր սրտերը, եւ մենք պետք է մեր սրտի անթլփատությունը թլփատենք:

Իսկ ի՞նչ կարիք կար ընդհանրապես ինչ-որ թլփատության, ի՞նչ էր դա նշանակում:

Մենք գիտենք, որ նախահայր Ադամի եւ նախամայր Եվայի մեղանշումից հետո մարդիկ զրկվեցին Աստծու ներկայությունից, բայց Աստված մարդուն մենակ չթողեց, նրան որպես ապաշխարություն տվեց չարչարանքով հացը վաստակելը, կնոջը՝ ցավերով ծննդաբերելը եւ իր ամուսնուն հնազանդվելը, եւ ի վերջո, որպես ապաշխարության վերջնական դրսեւորում, նրանց երկուսին եւ մեզ իբրեւ ադամորդիներ՝ տվեց մահը՝ ըստ Մենդոց գրքում հիշված Աստծու խոսքի, թե՛ «հող էիր եւ հող էլ պիտի դառնաս»:

Աստված չսահմանափակեց միայն դրանով, այլ նաեւ Իր համար ընտրեց ամուլ մի մարդու՝ Աբրահամին, որի սերունդը պիտի կոչվեր Աստծու

ժողովուրդ, եւ այդ սերնդից պիտի ծնվեր Փրկիչը՝ Մեսիան: Այս պատճառով Տերը նրա անունը դրեց Աբրահամ, որ նշանակում է «ժողովուրդների հայր», եւ տվեց նրան թլփատության նշանը, որպեսզի ամեն ոք, որ պետք է Աստծու ժողովրդի մասը դառնար, իրեն առանձնացներ աշխարհից, պատրաստ լիներ իրենից կտրելու այն մեղքը, որի պատճառով բաժանված էր Աստծուց: Նույն նպատակով հատուկ ուխտեր կնքեց իր ժողովրդի հետ, նախ՝ Աբրահամի, ապա նաեւ՝ մյուս նահապետների: Իսկ Եզրայտոսից դուրս գալու ժամանակ Սինա լեռան վրա Տասնաբանյա պատվիրանների տեսքով Հին Ուխտը կնքեց արդեն ամբողջական Իսրայելի ժողովրդի հետ: Բոլոր այս ուխտերի մեջ մշտապես առկա է մարգարեական խոստումն այն մասին, որ ծնվելու է այն մեկը, որ պիտի փրկի մարդկային ազգը մեղքի ու մահվան կապանքներից: Ուրեմն թլփատությունը տրվեց որպես գալիք իրական դեպքերի նախանշան:

Այս է պատճառը, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Սուրբ Հոգու ներգործությամբ հրաշալի կերպով ծնվելով Սուրբ Կույս Աստվածածին Մարիամից, Իր ծննդյան ութերորդ օրը թլփատվեց՝ առաջին անգամ հեղելով Իր սուրբ արյունը: Նա կարիք չունեւ թլփատությամբ Աստծու ժողովրդի մաս դառնալու, քանի որ Աստծու Որդին էր ծնունդով, ինչպես նաեւ կարիք չունեւ մեղքից Իրեն կտրելու, քանի որ նախքան ճանաչելը հրաժարվել էր մեղքից: Հիսուս թլփատվեց, որպեսզի Աստծու ամեն արդարություն կատարվի: Այդ քայլով Տերը մեզ նաեւ շատ կարեւոր եւ մեծ հիմնավորում տվեց. Իր մարդեղացումն իրական էր եւ ոչ երեւութապես, քանի որ թլփատության ժամանակ արյունը հեղվեց:

Քրիստոնյաներիս կյանքում թլփատության խորհուրդն ընկալելու համար պիտի անդրադառնանք Պողոս առաքյալի՝ կողոսացիներին ուղղված նամակին, որն այսօր ընթերցեցինք: Այստեղ նա խոսում է այն մասին, թե ինչպիսին պիտի լինի թլփատությունը մեր կյանքում: Պողոս առաքյալը գրում է, որ մենք եւս թլփատված ենք, բայց թլփատված ենք ոչ թե մեր արյան հեղումով, այլ ջրի մեջ մկրտությամբ՝ Սուրբ Հոգու մեջ մկրտությամբ:

Տերը՝ Հիսուս Քրիստոս, լինելով Աստծու Որդին եւ միեւնույն ժամանակ Իր մարմնի մեջ միավորելով Աստծու ժողովրդին, հնարավորություն է տալիս մեզ մասնակից դառնալու Իր թլփատության շնորհի խորհրդին Իր մարմնին միավորվելու միջոցով: Այսինքն՝ մենք ֆիզիկական թլփատություն չենք կատարում, քանի որ մեր Տեր Հիսուս Քրիստոս

արդեն մեկ անգամ եւ ընդմիշտ թլփատվեց՝ Իր աստվածամարդկային մարմնի մեջ միավորելով իրական Եկեղեցին՝ Աստծու ժողովրդին։ Իսկ մենք այդ թլփատությանը մասնակից ենք դառնում ապաշխարության միջոցով եւ Սուրբ Հոգու ներգործությամբ՝ մկրտության սուրբ խորհրդով Աստծու Որդու մարմնին եւ Աստծու ժողովրդին միավորվելու շնորհիվ։ Այդ պատճառով Պողոս առաքյալն ասում է, որ մենք Քրիստոսով թլփատվեցինք հավատով՝ անձեռագործ թլփատությանմբ, Քրիստոսի թլփատությանմբ՝ մերկանալով մեղանշական մարմնից (Կող. Բ. 11), ուրեմն մենք մասնակից ենք դառնում մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի թլփատությանը մկրտության շնորհով եւ մեր մեղանշական մարմնից մերկանում ենք՝ միավորվելով Տիրոջ անմեղ եւ սուրբ մարմնին։

Բայց արդյո՞ք այդպես է իրականում։

Իրականում մենք պիտի ունենանք սրտի թլփատությունը եւ ապա գանք մկրտության, որով մեր ընտրությունը՝ սրտի մեջ մեղքից եւ աշխարհից հրաժարումը պիտի արձանագրվի Սուրբ Հոգու կնիքով։ Փոխարենը, ցավոք, շատ հաճախ հակառակն է լինում։ Նմանվելով հրեաներին՝ մենք շարունակ կատարում ենք ծիսական արարողության արտաքին կողմը միայն՝ չրի մեջ ընկղմում, մյուսուսում օծում, բայց մեր սիրտը մնում է անթլփատ՝ մեղքից անբաժան։

Նորից կուզեմ հիշել Աստծու խոսքը՝ ասված Երեմիա մարգարեի շուրթերով.

«Ձեր Աստծո՛ւ համար թլփատվեք, ձեր սրտի անթլփատությունը թլփատեք, որովհետեւ գուցե ձեր չար գործերի պատճառով իմ բարկությունն իբրեւ հուր ելնի ու բորբոքվի, եւ մեկը չգտնվի, որ հանգցնի այն» (Եր. Դ. 4)։

Այն միակը, որ մարում է Աստծու բարկության հուրը, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսն է եւ դրա համար էլ կոչվեց Հիսուս, որ նշանակում է Փրկիչ։ Նա Իր վրա վերցրեց Աստծու բարկությունը եւ շիջում է այդ բարկության կրակը նրանց համար, ովքեր իրենց սրտի թլփատությամբ եւ մկրտությամբ միանում են Իր մարմնին։ Իսկ եթե մենք միայն արտաքին ձեւը պահենք, բայց մեր սիրտը մնա անթլփատ, այդ կրակը մեզ համար եւ մեզ վրա է արծարծվելու։

Ուրեմն մասնակիցը դառնալու համար մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկությանը, որը որպես տնօրինություն կատարվում է նրա ութօրյա թլփատությամբ, մենք պարտավոր ենք մեր սրտերը մաքրել, մեր սրտե-

րը թլփատել, վանել մեզանից մեղքը՝ ամեն կերպ ձգտելով ապրել սրբության մեջ:

«Քրիստոսի մեջ է մարմնապես բնակվում Աստվածությունը ամբողջ լիությունը,— ասում է Պողոս առաքյալը,— դուք էլ նրանով լցվեցիք (Կող. Բ. 9—10): Եւ «քանի որ մեր Աստվածը ոչնչացնող կրակ է», ուրեմն զգուշ լինենք, քանի որ եթե մենք մկրտվեցինք Քրիստոսով, եւ Քրիստոս բնակվում է մեր մեջ, ինչպես Պողոս առաքյալն է ասում, ուրեմն աստվածային կրակը մեր մեջ է, ոմանց համար այրող եւ ոչնչացնող, մյուսների համար՝ մաքրագործող եւ սրբացնող կրակ:

Մենք հիմա ազգովի ապրում ենք չափազանց ծանր եւ դառն օրեր, բայց ես կամենում եմ, որ մենք Անվանակոչության այս տոնի օրը մեր աչքերը վերստին ուղղենք այն Միակին, Որի անունով կարող ենք փրկություն գտնել, ինչպես որ Պետրոս առաքյալն է ասում. «Եւ ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա, որովհետեւ երկնքի տակ չկա մարդկանց տրված մեկ այլ անուն, որով մենք կարողանանք փրկվել» (Գործք Դ. 12):

Հիսուս նշանակում է Փրկիչ, եւ Ինքն է, որ մեզ փրկում է մեր մեղքերից, որի մասին Գաբրիել հրեշտակապետն ազդարարեց: Իսկ մնացած ամեն պատուհաս մեզ բաժին է ընկնում, որովհետեւ Աստծուն մեր մեջ մենք ընդունում ենք մեղքերով լցված վիճակում: Եւ քանի որ Աստծու ամբողջ լիությունը, որ Քրիստոսի միջոցով հայտնվեց մեզ, մկրտության խորհրդի շնորհով բնակվում է մեր մեջ, ուրեմն եթե մենք շարունակենք մեղքերի մեջ մնալ, Աստծու հետ մերձեցումը մեզ համար շարունակ կործանման եւ ոչնչացման նման մի բան պիտի լինի: Իսկ եթե մենք մեղքերից հրաժարումով մոտենանք Նրան, գոնե ցանկությամբ՝ մեր կամքով, այսինքն՝ մեր սրտի հրաժարումով թլփատենք մեղքը մեզանից, գուցե թե գործերով վերջնականապես չկարողանանք հրաժարվել, գուցե թե սովորության համաձայն՝ շարունակենք որոշ մեղքեր գործել, բայց սրտով չցանկանանք ու չսիրենք մեղքը: Եւ այդ ժամանակ Աստծու կրակը մեզ համար կդառնա մաքրագործող կրակ, եւ Իր փրկությանն արժանի կլինենք նաեւ այս ծանր ժամանակներում:

Ուրեմն մեր աչքի առաջ չունենանք ուրիշ մի փրկիչ՝ ո՛չ պետության, ո՛չ մարդու, ո՛չ որեւէ սրբի, ո՛չ որեւէ արդարի, ո՛չ որեւէ նախագահի կամ զորավոր մեկի: Մեր փրկությունը, միակ փրկությունը կարող է լինել Տեր Հիսուսի միջոցով, որովհետեւ ուրիշ անուն չկա, որով կարող ենք մենք փրկվել:

Աղոթենք, աղաչենք Հայր Աստծուն, որ Սուրբ Հոգու ներգործությամբ այսօրվա տոնի միջոցով արժանի դարձնի մեզ մերձենալու եւ ճաշակելու Իր Որդու եւ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Կենարար Մարմինն ու Արյունը, եւս մեկ անգամ ընդունելու Նրա բնակությունը մեր մեջ՝ Իր իսկ խոսքի համաձայն, թե՛ «ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արյունը, կբնակվի իմ մեջ, եւ ես էլ՝ նրա մեջ» (Հովհ. Զ. 56):


Մեր սրտերը փորձենք կտրել մեղքից եւ թլփատված սրտերով մոտենանք Փրկիչ Հիսուսին, Որին ամենակալ Հոր եւ կենդանարար Սուրբ Հոգու հետ փառք հավիտյանս, ամեն:

Աստծու շնորհը, սերը եւ խաղաղությունը թող լինեն մեզ՝ ամենքիս հետ, այսօր եւ հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ:

Օրհնյալ է հայտնությունը Քրիստոսի:

Մեզ եւ ձեզ մեծ ավետիս:



Տ. ԽՈՐԵՆ ԱՎԱԳ ՔԱՅԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱՐԱՆԻ

(14 հունվարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդուոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա
գալիլեացոց, եւ յայտնեաց զփառս Իւր. եւ հա-
ւատացին ի Նա աշակերտքն Նորա»

(Յովհ. Բ. 11):

Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցվեց Հովհաննեսի Ավետարանի երկրորդ գլխից մի դրվագ, որն առավել հայտնի է Կանայի հարսանիք անունով: Գալիլիացիների Կանա քաղաքում տեղի ունեցած այս հարսանեկան խնջույքի ընթացքում էր, որ Քրիստոս, ինչպես ասում է Ավետարանիչը, կատարեց առաջին հրաշքը եւ հայտնեց Իր փառքը՝ ջուրը վերածելով գինու:

Իսկ պատումը հետեւյալն է: Հիսուս, Իր աշակերտները եւ Իր մայրը հրավիրված էին հարսանյաց հանդիսություն: Պատահում է, որ խնջույքի ընթացքում գինին վերջանում է: Աստվածամայրը մոտենում է Հիսուսին եւ Նրան ասում այդ մասին: Հիսուս պատասխանում է. «Իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. Բ. 4): Սակայն մայրը դիմում է սպասավորներին. «Ինչ ձեզ ասի, կանեք»: Եւ իսկապես, քիչ անց Հիսուս դիմում է նրանց՝ ասելով, որ ջրով լցնեն այնտեղ գտնվող վեց տակառները, ապա կարգադրում այն մատուցել խնջույքի մասնակիցներին: Ու պարզվում է, որ ջուրը հրաշքով դարձել է գինի, որի անուշուրյունը հիացնում է սեղանապետին եւ բոլոր հյուրերին:

Տեր Հիսուս Քրիստոսի կատարած առաջին այս հրաշքին վերաբերող հատվածի ընթերցումն այսօր առիթ է տալիս մեզ մտորելու Փրկչի հրաշքների մասին: Ավետարանի մեջ բազմաթիվ դրվագներ կան, որոնք ան-

վանվել են հրաշքներ, որովհետեւ դրանք չեն տեղավորվել մարդու պատկերացրած բնության օրենքների ու կարգավորումների մեջ:

Բոլոր հրաշքներն ունեն մեկ ընդհանրություն: Թե՛ հիվանդների բժշկությունները, թե՛ ալեկոծ ծովի հանդարտացումը, թե՛ հացի բազմացումը կամ ննջեցյալ Ղազարոսի հարությունը ծառայում են մեկ նպատակի: Դա մեղքերից ազատագրումն է ու մարդկային հոգու փրկությունը, ինչի համար եւ Նա մարմին առավ ու բնակվեց մեր մեջ: Բոլոր այսպիսի հրաշքների առանցքում մարդն է՝ իր խնդիրներով ու դժվարություններով, եւ Տեր Հիսուս Քրիստոս՝ Իր աստվածային սիրով եւ կարողությամբ: Հիսուս երբեմն հրաշքներ էր գործում՝ ցույց տալու համար հավատի ուժը, բայց ոչ երբեք Իր զորությունն ի ցույց դնելու կամ մարդկանցից փառքի արժանանալու նպատակով: Եթե հիշում եք, Ավետարանի մեջ կա մի դրվագ. Տերը մերժում է որեւէ նշան ցույց տալ, երբ Իրենից նշան էին պահանջում՝ Իր մեսիայությունն ընդունելու համար: Նա հաճախ նույնիսկ պատվիրում էր Իր հրաշագործությունների մասին չխոսել՝ մինչեւ հասնի ժամանակը:

Այո՛, Իր խոսքերում ու գործերում Տերը հետապնդում է մեկ նպատակ՝ մեղավոր մարդուն դարձնել աստվածճանաչ եւ առաջնորդել նրան դեպի փրկություն: Մենք՝ իբրեւ քրիստոնյաներ, որ շուրջ մեկ շաբաթ առաջ տոնում էինք Սուրբ Ծնունդը Տեր Հիսուս Քրիստոսի, կոչված ենք այս աշխարհում հետեւելու Քրիստոսին եւ ապրելու Նրա բերած փրկության հույսով ու նպատակով: Ավետարանը մեզ ուսուցանում է, որ լինել երջանիկ եւ ապրել խաղաղ հոգով՝ հանուն Քրիստոսի պարզեւած փրկության շնորհի, չի նշանակում, որ մեր կյանքի ճանապարհները պիտի լինեն միայն հարթ ու լուսավոր, ու մենք՝ շրջապատված միայն բարին կամեցող ու գործող մարդկանցով: Դա կլինի նույնը, ինչ ակնկալես, որ ծովը կարող է լինել առանց ալիքների, լեռներն ու ձորերը՝ առանց քամիների, իսկ երկինքը՝ առանց ամպրոպի: Միշտ էլ աշխարհում եղել են ու կլինեն անհաջողություններ, չարի խարդավանքներ, նախանձ, չարագործություններ, անհասկացողություններ եւ այլն: Հիսուս Ինքը այսպիսի միջավայրում ապրեց ու արարեց, համբերությամբ անցավ բոլոր փորձությունների միջով ու մինչեւ վերջ իրականացրեց Իր առաքելությունը:

Որպես Քրիստոսի հավատացյալներ՝ մենք պիտի դադարենք մեզ համարել զոհ հանգամանքների, մարտահրավերների, փորձությունների: Արդյո՞ք մենք լիասիրտ փառք ենք մատուցում Աստծուն այն բանի

համար, ինչ որ ունենք, թե՛ ավելի հաճախ տրտնջում ենք՝ ասելով, որ մեր կարծիքով՝ աշխարհի եւ այլոց անարդարությունների պատճառով զրկված ենք այն ամենից, ինչի կարիքն ունենք: Արդյո՞ք մեր սխալ ընթացքները մենք կարող ենք կամ ցանկանում ենք սրբագրել, թո՞թափել դրանց ծանր բեռը, բարին արարել, ինքնակատարելագործվել: Թե՛ ավելի դյուրին է տարատեսակ արդարացումներ գտնել մեղքերին, նոր մեղքերով թաքցնել հները: Իսկ արդյո՞ք կարող ենք կանգ առնել եւ որեւէ մեկին, լինի ընտանիքում, աշխատավայրում կամ այլուր, Ավետարանի անառակ որդու նմանություն մտնել. «Ների՛ր, որովհետեւ մեղք գործեցի երկնքի եւ քո առջեւ»:

Իհարկե, որեւէ ձեւով չենք կարող ապրել առանց մեղքերի, սայթաքումների, հաճախ չենք կարող դիմակայել մեզ շրջապատող տարբեր մոլորություններին ու գայթակղություններին: Ձախողումները, սխալները, թերացումները կյանքի անբաժան ուղեկիցներ են, որոնք մինչեւ անգամ կարող են մարդուն հասցնել կործանման ինչպես մարմնապես, այնպես հոգեպես: Քանի-քանի անգամներ ականատես եք եղել ինքնասպանությունների, խեղված, վատնված կյանքերի, խորտակված ընտանիքների եւ այլն: Ինչ են սրանք, եթե ոչ դժվարին իրավիճակներում ճիշտ հետեւություններ չանելու, առ Աստված հույսը կորցնելու հետեւանքներ:

Բայց դրանք կարող են նաեւ դուռ բացել նոր հնարավորությունների եւ վերանորոգության: Այդ ճանապարհն սկսվում է գիտակցության ու սրտի մեջ իրական Քրիստոսին ընդունելով: Նրան տեսնելով ու Նրա խոսքի համաձայն ապրելով: Սա կլինի մարդկային կյանքի սխրանք կամ, եթե կուզեք, մարդկային հրաշք: Չէ՞ որ Քրիստոս էլ հրաշքներ էր գործում, ինչպես վերը նշեցինք, միայն մարդու համար, նրա փրկության համար: Հազար անգամ կարող ես սխալվել, բայց մեկ անգամ հաղթահարելով սխալը՝ ձեռք բերել ավելին, քան կորցրածը:


Կանայի հարսանիքում գինին վերջացավ, բայց նրանք օրհնված էին՝ իրենց մեջ ունենալու Քրիստոսի ներկայությունը: Մեր կյանքում էլ շատ նյութական բաներ կարող են պակասել կամ բացակայել, բայց դրանք առ ոչինչ կլինեն, եթե Քրիստոսին ընդունենք մեր սրտում ու հոգում: Չէ՞ որ ասել է՝ «Դուք խնդրեք Աստծու կամքը, իսկ Հայրը Ձեզ կտա ավելին, քան դուք կարող եք խնդրել եւ իմանալ»:

Հաճախ ընթերցեք Սուրբ Գիրքը: Հավատացեք ձեր հավատի զորությունը, հավատացեք հրաշքին: Դուք էլ հրաշքներ գործեք՝ ձեր կյանքի

ընթացքը հավատքով նորոգելով եւ Քրիստոսի անվամբ սերը եւ բարին արարելով:

Սուրբ Պատարագի այս նվիրական պահին աղոթենք ու հայցենք, որ աստվածային հրաշքը հասու լինի ամենքիս, եւ Բարձրյալի պարգեւած փրկության շնորհը ջերմացնի մեր սրտերն ու հոգիները, որպեսզի վայելենք Նրա օրհնաբեր ներկայությունը այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Թող Աստծու սերն ու շնորհը եւ առատ ողորմությունը ամենքիս հետ լինեն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:



Տ. ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 հունվարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք
Աստուծոյ կոչեցցին»

(Մատթ. Ե. 9):

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր եկեղեցական օրացույցում Սուրբ Ծննդյան երրորդ կիրակին է, շատ օրեր չեն անցել Սուրբ Ծննդյան ու Աստվածհայտնութեան տոնից. տաղավար տոն, որի խորհուրդը խաղաղութեան առաքումն է ողջ մարդկութեանը:

Դեռեւս Հին Կտակարանի մարգարէները հայտարարում էին, որ գալիք Մեսիան կոչվելու է խաղաղութեան Իշխան (Ես. Թ. 6), որ մարդիկ ապրելու են Աստծու պատվիրանների համաձայն՝ միմյանց հետ խաղաղութեան մեջ (Ես. ԾԴ. 13):

Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ավետող հրեշտակները հայտարարում են, որ երկրի վրա այս խաղաղութիւնը պետք է հաստատվի (Ղուկ. Բ. 14): Խաղաղութիւնն էր հայտարարված համայն մարդկութեանը, նույնիսկ Ավետարանը կոչվում էր «Խաղաղութեան Ավետարան» (Հմմտ. Հռոմ. Ժ. 15): Հիսուս Քրիստոսով Աստված հայտնվում է որպէս խաղաղութիւն կամեցող Աստված:

Սակայն պատմութիւնը ցույց է տալիս, որ հնագույն ժամանակներից սկսած՝ աշխարհը հազվադեպ է տեսել երկարատեւ եւ անխախտ խաղաղութեան շրջան:

Ուստի Տեր Հիսուս Քրիստոսի հետեւորդներն առաքելութիւն ունեն՝ ամեն ջանք գործադրել, որ կարողանան հասնել Նրա պատգամած խաղաղութեանը եւ հաստատել ցանկալի խաղաղութիւնը, որովհետեւ Աստ-

ված ասում է. «Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ կկոչվեն» (Մատթ. Ե. 9): Եւ քանի որ միայն խոսքով խաղաղություն չի հաստատվում, ուստի խաղաղարարը պետք է լինի նաեւ խիզախ մարտիկ, որպեսզի հաջողի իր առաքելության մեջ:

Այո՛, սուրբգրային շատ հատվածներում է շեշտվում խաղաղությունը, սակայն այն բացատրությամբ, որ աշխարհում խաղաղությունը նախեւառաջ տիրելու է Աստծուն հավատարիմ լինելու արդյունքում: Սուրբ Գիրքը փաստում է, որ Աստված կարող էր իսպառ վերացնել պատերազմները, սակայն չարեց դա, որպեսզի դրանից ազգերը խրատվեն (Ես. Բ. 4): Իսկ քանի դեռ մարդիկ չեն խրատվել, եւ համընդհանուր բարին չի տիրել աշխարհում, ու մարդկանց մեջ հաճություն չի հաստատվել, պատերազմները միշտ լինելու են: Իսկ երբ Աստծու կամքը զորանում է, հակամարտությունները վերանում են՝ համաձայն Իր խոսքի. «Խաղաղություն եմ թողնում ձեզ» (Հովհ. ԺԴ. 27):

Միով բանիվ՝ Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է, որ Աստված խաղաղություն է կամենում, սակայն Աստծուն հավատացող մարդիկ են, որ պիտի խաղաղություն հաստատեն՝ անհրաժեշտության դեպքում նաեւ ուժի կիրառմամբ: Իսկ խաղաղություն հաստատելու այս ճանապարհին, հաղթանակ ունենալու համար, անհրաժեշտ է հավատարմություն Տիրոջ սահմանած օրենքներին, որովհետեւ հաղթանակը ձեռք է բերվում ոչ թե շատ զորքով, այլ այն զորությամբ, որ երկնքից է գալիս (Ա. Մակ. Գ. 19), որպեսզի կատարվի ապագա պատերազմների հաղթահարման մասին Օսեեի մարգարեությունը. «Այն օրը ուխտ կկնքեմ նրանց հետ... եւ աղեղը, սուրն ու ճակատամարտը կվերացնեմ երկրից եւ կբնակեցնեմ քեզ հույսով» (Օսեե. Բ. 18):


Սուրբ Եկեղեցին փաստել է, որ հանուն խաղաղության՝ միշտ պետք է պատրաստ լինել պատերազմի, եւ պատերազմ պետք է մղել հենց խաղաղությունը վերահաստատելու եւ արդարությունը վերականգնելու համար: Քանի որ Աստծու եւ բարեկամի նկատմամբ սերն ստիպում է քրիստոնյաներին՝ արդարացի խաղաղություն փնտրել, իսկ այդ խաղաղությանը հասնելու համար ամենապատշաճ միջոցը բանակն է:


Ահա այս լույսի ներքո են երեւում ՀՀ ԶՈՒ-ի հիմնական առաքելությունն ու նշանակությունը: Սիրելիներ, հանուն խաղաղության ու անվտանգության բազմաթիվ պատերազմներ մղած ու այսօր էլ պատերազմի սպառնալիքներին դիմակայելու պատրաստ Հայոց բանակը տոնում է

կազմավորման 32-րդ տարեդարձը, որի առիթով շնորհավորում եմ ամենքիս: Հայոց բանակի համար, հավարտ Ս. Պատարագի, կկատարվի Հանրապետական մաղթանք: Բանակն է շարունակում մնալ այն միակ ուժը, որը կարող է խաղաղություն հաստատել ու ապահովել պետության անդորրը:

Մեր երկրի համար Աստծու պատգամած խաղաղությունը հաստատողն ու պարտադրողը ՀՀ զինված ուժերն են, իսկ երանելի խաղաղարարները՝ այդ նույն Զինված ուժերի հավատացյալ սպաներն ու զինվորները: Տեր Հիսուս Իր կյանքը տվեց որպես խաղաղարար, եւ սա այն գինն է, որ շատերը վճարեցին՝ մեր երկրում խաղաղություն հաստատելու համար: Թող Աստված լույս դարձնի նրանց հոգիները, սփռի եւ մխիթարի նրանց հարազատներին:

Թող Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհներն ու զորակցությունը միշտ լինեն Հայոց բանակի հետ եւ նրա յուրաքանչյուր զինծառայողի պարգեւեն ամեն վայրկյան խաղաղությունը պարտադրելու կամք ու վճռականություն, ամեն:





Doi: 10.56737/2953-7843-2024.01-37

Տ. ՇԱՀԵ ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆ
Միաբան Մայր Աթոռիս, ԳՀՃ

HEBRAICA VERITAS VS. GRAECA VERITAS ԱՍՏՎԱԾԱՆՉԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԸՍՏ Ա.–Գ. ՂԱՐԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒ ՀԱՅՐԵՐԻ՝

Վաղբրիստոնեական մեկնողական արվեստի ծագման ակունքներում, ի շարս պատմական ու կրոնական այլ երեւոյթների, կարելի է դիտարկել մի իրողութիւն, որը սովորաբար քրիստոնեական մեկնարկեւտի պատմութեան մասնագետները բնութագրում են «աստվածաշնչականութիւն» եւ «(աստվածաշնչյան) կանոն» եզրերով: Մի բառով այն կարելի է պարզապէս բնորոշել իբրեւ «կանոնականացում»՝ հաշվի առնելով, իհարկե, որ այստեղ խոսքը Սուրբ Գրքի՝ իբրեւ քրիստոնեական կրոնափիլիսոփայութեան, մեկնողական արվեստի ու աստվածաբանութեան ընկալալ, գրավոր միակ սկզբնաղբյուրի մասին է: Այս երեւոյթի քննարկումը կարելի է հատկապէս այն իմաստով, որ առանց կանոնականացման՝ պարզապէս հնարավոր չէ պատկերացնել քրիստոնեական ինքնուրույն մեկնարկեւտի գոյութիւնը: Ուսումնասիրողներից մեկի դիպուկ դիտարկման համաձայն՝ «աստվածաշնչականութեան եւ կանոնականացման միջեւ առկա փոխհարաբերութիւնն այլ բան չէ, քան Եկեղեցու եւ Աստվածաշնչի միջեւ գոյութիւն ունեցող հիմնարար առնչակցութեան հետեւանք»²:

^{1*} Ստացվել է՝ 10.01.2024, գրախոսվել է՝ 18.01.2024: էլ. հասցե՝ shaheananyan@gmail.com:

² Տէս Բ. ՏԵՏԲՕՒԷ, «La canonisation des écritures et la reconnaissance de leur inspiration. Une approche historico-théologique», Recherches de Science Religieuse 2004/1 (Tome 92), էջ 14:

Սակայն զուտ աստվածաբանական իրենց տարողությունները այս եզրերը չեն պատասխանում եւ ըստ էության՝ նպատակ էլ չեն ունեցել անդրադառնալու կարեւոր մի հարցի, որն անմիջականորեն առնչվում է Աստվածաշնչի բնագրային առանձնահատկությանը: Այսինքն՝ որ բնագրին՝ եբրայեցերենին, թե՛ դրա հունարեն թարգմանությունն Յոթանասնիցին է անհրաժեշտ հետեւել՝ աստվածաշնչականության ու կանոնականացման փոխհարաբերությունը բացատրելիս: Այսօր արդեն կարելի է նշել, որ բնագրային ներշնչականության խնդիրն ընդհանուր առմամբ բնորոշվում է «Hebraica veritas versus Graeca veritas» (բոց.՝ «եբրայեցերենի ճշմարտությունն ընդդեմ հունարենի ճշմարտության») արտահայտություններով: Եւ չնայած «hebraica veritas» եզրի հեղինակը վաղ Եկեղեցում Հերոնիմոս Երանելին էր (342/47–420)³, այնուամենայնիվ, բովանդակային իմաստով այն արդեն նկատելիորեն անհանգստացնում էր Ա.–Գ. դարերի եկեղեցական ուսուցիչներին ու հայրերին: Պատահական չէ, որ այդ ժամանակաշրջանի գրեթե բոլոր նշանավոր հեղինակներն անդրադարձել են խնդրին՝ երբեմն ջատագովական, երբեմն էլ՝ զուտ մասնագիտական մոտեցմամբ:

Հետեւաբար, Աստվածաշնչի բնագրային ներշնչականության հարցին անդրադառնալն անհրաժեշտորեն ենթադրում է ծանոթություն վաղ Եկեղեցու ուսուցիչների ու հայրերի տեսակետներին: Մեր հոգևածում ներկայացնելու ենք Ա.–Գ. դարերի կարեւոր ուսուցիչների եւ հայրերի մոտեցումները՝ ժամանակագրական ու հարցին տրված պատասխանների կարեւորության տեսանկյունից դրանք բաժանելով երկու մասի՝ մինչորոգինեսյան տեսակետներ եւ Որոգինեսի առաջադրած տեսություն: Այս բաժանումը կարեւոր է հատկապես այն առումով, որ որոգինեսյան ընկալումն էականորեն տարբեր է նախորդ մոտեցումներից եւ այդ առումով կարող է դիտարկվել որպես «նորարարական»:

1. Քրիստոնեության ծագման առաջին իսկ տարիներին Հին Կտակարանի գրքերն ընկալվում էին իբրեւ սուրբ ու ներշնչված, աստվա-

³ «Hebraica veritas»-ը Հերոնիմոսի երկում ունի շուրջ 89, մեկ այլ մոտեցման համաձայն՝ 30 կիրառություն: Ընդ որում՝ Հերոնիմոսն այն ընկալում էր ոչ միայն բնագրային, այլ նաեւ մեկնողական եւ մեկնարկեստային գործածության առումով: Տե՛ս EUSEBIO GONZÁLEZ MARTÍNEZ, «Jerónimo, traductor de la Biblia: hebraica veritas vs. graeca veritas», *Mirabilia* 31 (2020/2), էջ 253:

ծաշունչ: Այսպես՝ Պողոս առաքյալն իր թղթերում խոսում է «գրովք սրբովք» (հուն.՝ ἐν γραφαῖς ἀγίοις, Հռոմ. Ա. 2), «զգիրս սուրբս» (հուն. τὰ ἱερὰ γράμματα, Բ. Տիմ. Գ. 15) եզրերով՝ ականարկելով հինկտակարանյան գրականությունը: Համատես Ավետարաններում մարգարեական խոսքերը ներկայացվում են որպես սուրբ եւ աստվածաշունչ (հմմտ. Մատթ. ԻԲ. 29–32, Մարկ. է. 10–13), իսկ Ա. Պետրոս Ա. 10–12 հատվածում տրվում է նորկտակարանյան այդ ընկալման բացատրությունը. «Այդ փրկության համար է, որ փնտրտուքներ կատարեցին եւ քննեցին մարգարեները, որոնք մարգարեանում էին այն շնորհի մասին, որ վիճակված էր ձեզ: Քննում էին, թե ո՞ր եւ ինչպիսի՞ ժամանակների մասին էր ծանուցում իրենց մեջ եղող Քրիստոսի Հոգին (հուն.՝ πνεῦμα Χριστοῦ), որ նախ վկայում էր Քրիստոսի չարչարանքների մասին եւ դրանից հետո՝ նրա փառքի մասին»⁴: Հետեւաբար, մարգարեներն ունեին Աստծու Հոգին եւ հանդես էին գալիս իբրեւ աստվածամեղշնչալ անձինք: Մարգարեների նման Նոր Կտակարանի քարոզիչները նույնպես Աստծու Հոգու կրողներն էին, որով եւ յուրահատուկ կապ էր ստեղծվում Հին ու Նոր Կտակարանների ներշնչալ անձանց միջեւ: Եւ երկու դեպքում էլ Նորի մեջ Հնի լրումը փոխանցվում էր Սուրբ Հոգու միջոցով: Այս իմաստով արժե կրկին մեջբերել այս անգամ արդեն Բ. Պետրոս թղթից մի հատված. «Բայց նախ այս բանն իմացեք, որ Գրքերի ամեն մի մարգարեություն (հուն. πᾶσα προφετία γραφῆς) իր հատուկ մեկնությունը չունի, քանի որ մարգարեությունը ոչ թե ըստ մարդկանց կամքի տրվեց երբեւէ, այլ Սուրբ Հոգուց (հուն. ὑπὸ πνεύματος ἀγίου) մղված է, որ խոսեցին Աստծու մարդիկ» (Բ. Պետ. Ա. 20–21)⁵: Պետք է նշել, որ նորկտակարանյան հեղինակներն իբրեւ ներշնչալ բնագիրը ավելի շատ հղում էին եբրայական Սուրբ Գրքի հունարեն թարգմանությունը՝ Յոթանասնիցը կամ Սեպտուագինտան (Septuaginta, LXX), ինչը ենթադրել է տալիս, որ հենց այդ հրեական Ալեքսանդրյան կանոնն էլ առաջին քրիստոնյաների համար մեծավ մասամբ ընդունելի էր՝ իբրեւ աստվածաշունչ գրքերի վավերական մատյան⁶:

⁴ Նորկտակարանյան տեղիի թարգմանությունը մերն է (Շ. Ա.):

⁵ Նորկտակարանյան տեղիի թարգմանությունը մերն է (Շ. Ա.):

Ս. Իրինեոս Լիոնացին, հղելով Կեղծ-Արիսթեասի թուղթը, հետևյալ տեղեկությունն է հաղորդում Յոթանասնից թարգմանության ներշնչականության վերաբերյալ. «Արդ, նույն եւ միակ Աստծու Հոգին էր, որ մարգարեների միջոցով հայտնեց Տիրոջ մոտալուտ գալուստը, ինչը նախնյաց կողմից (ընդգծումը մերն է.— Շ. Ա.) թարգմանվել է այնպես, ինչպես մար-

Յոթանասնից թարգմանության եւ Ալեքսանդրյան կանոնի աստիճանական պաշտոնականացումն իր հետ բերում էր նաեւ որոշակի թարգմանական-մեկնողական սկզբունքներ, որոնք անհրաժեշտ էին ներշնչականության ու կանոնականության հասկացությունները ճիշտ ըմբռնելու համար:

Նախեւառաջ, կարեւորվում էր բնագրային հարազատությունը, այսինքն՝ ներշնչալ մատյանի յուրաքանչյուր բառ պետք է հարազատությամբ արտագրվեր եւ ներկայացներ համապատասխան իմաստը: Երկրորդ, բնագրային համանմանության կամ փոխառնակցության մեթոդով՝ յուրաքանչյուր բառ բնագրի տվյալ հատվածում պետք է համեմատվեր ներշնչալ ու կանոնական համարվող մատյանի մնացած հատվածներում տվյալ բառի արտահայտած այլ իմաստների հետ՝ դրանով իսկ խուսափելով իմաստային-բովանդակային հակասություններից: Եւ վերջապես, փոխաբերության մեթոդը կիրառելի պետք է դառնար որոշ մասնավոր դրվագների համար, ինչպես, օրինակ, Ես. Թ. 14, 15 հատվածի կամ Երգերգոց գրքի պարագայում⁷: Սակայն չի կարելի պնդել, թե Ա.-Գ. դարերի քրիստոնեական մտածողության մեջ աստվածաշնչյան բնագրի ընկալման առումով նախապատվությունը տրվում էր միայն Յոթանասնիցին: Արդեն իսկ Քրիստոնեական եկեղեցու առաջին բնագրագետ Որոգինեսն իր «Stromata» կորսված երկում եւ «Առ Աֆրիկանոս» թղթում բացահայտորեն արտահայտվում էր եբրայական բնագրի օգտին՝ որպես հինկտակարանյան բնագիրն ու կանոնը ճշգրտությամբ վերականգնելու գործընթացի համար հույժ անհրաժեշտ գործոն⁸: Ավելի ուշ՝ Դ. դարի կեսերին Հերոնիմոսը հետեւելու էր Որոգինեսի օրինակին՝ հատկապես աստվածաշնչյան տեղիների բնագրային ճշգրտումների հարցերում⁹...

Այնուամենայնիվ, հինկտակարանյան կանոնին եւ բնագրին վերաբերող խնդիրների քննարկման հարցում աստվածաշնչականությունը տարուբերվում էր Յոթանասնից թարգմանության եւ եբրայական բնագրի միջեւ: Որոգինեսին նախորդած քրիստոնյա բոլոր աստվածա-

գարեացի է...»: *Steu* IRENÉE DE LYON, Contre les hérésies, III, 21,4, Sources Chrétiennes 211, éd. critique A. Rousseau et L. Doutreleau, t. II, texte et traduction, Paris 1974, էջ 408–409 :

⁷ *Steu* CHARLES KANNENGISSER (ed.), Handbook of Patristic Exegesis. The Bible in Ancient Christianity, Brill: Leiden, 2006, էջ 396:

⁸ *Steu* EDMON L. GALLAGHER, Hebrew Scripture in Patristic Biblical Theory: Canon, Language, Text, coll. Supplements to Vigiliae Christianae. Texts and Studies of Early Christian Life and Language, vol. 114, Brill: Leiden & Boston, 2012, էջ 69–84:

⁹ *Steu* անդ, էջ 50–53:

բաններն ու հեղինակներն աստիճանաբար, բացի Հնգամատյանի հունարեն թարգմանության գրքերից, սկսում են կանոնական ու աստվածաշնչալ համարել նաեւ հինկտակարանյան մնացած գրքերը: Այսպես՝ Հուստինոս Վկան արդեն նախապատվություն էր տալիս Յոթանասնից թարգմանությանը՝ չնայած նրա երկում դեռ բացակայում է հունարեն այդ թարգմանության ստեղծման մասին հրաշապատումը: Հուստինոսի կարեւորագույն փաստարկներից է Ես. է. 14 համարում $\nu\epsilon\acute{\alpha}\nu\iota\varsigma$ բառի փոխարեն («պարմանուհի, երիտասարդ աղջիկ», ինչին կողմնակից էին Հուստինոսի ժամանակակից հրեա վարդապետներն ու թարգմանիչները) $\pi\alpha\rho\theta\acute{\epsilon}\nu\omicron\varsigma$ -ի («կույս»)՝ Յոթանասնից թարգմանության կիրառությունը¹⁰: Իր փաստարկները Հուստինոսը հիմնավորում է նրանով, որ նախ՝ Յոթանասնից թարգմանիչներն ունեին աստվածային ներշնչում, երկրորդ՝ այդ թարգմանությունը կատարել են հրեաները՝ նշանավոր թագավորի խնդրանքով¹¹: Հետաքրքիր է, որ Հուստինոսը, ընդդեմ հրեա օրենսուսույց Տրիփոնի, իր ջատագովության մեջ ակնարկում է մի շատ կարեւոր իրողության մասին. նա հստակորեն մատնանշում է իր ժամանակի եբրայական բնագրից տարբեր՝ ավելի հին մի բնագրի գոյությունը, որից թարգմանվել է Յոթանասնիցը, բայց որն արդեն Հուստինոսի ժամանակ աղավաղվել էր հրեա թարգմանիչների ու վարդապետների ձեռքով¹²: Կարելի է թերեւս ընդունել, որ տեսականորեն Հուստինոսը չի մերժում եբրայական բնագիրը, ավելին, նա նույնիսկ պնդում է, որ Յոթանասնից բնագիրը հավատարմորեն վերարտադրում է իր ժամանակի եբրայական բնագիրը: Հուստինոսը պարզապես վերապահ է իրեն ժամանակակից եբրայական բնագրային նոր տարբերակների նկատմամբ՝ դրանք համարելով հակաքրիստոնեական ու դիտումնավոր խեղաթյուրված¹³:

¹⁰ Հուստինոսի կիրառած մեկնողական-թարգմանական եզրերի մասին տե՛ս MOGENS MÜLLER, The First Bible of the Church: A Plea for the Septuagint, coll. Journal for the Study of the Old Testament Supplement Series 206, Sheffield Academic Press, 1996, էջ 71:

¹¹ Տե՛ս Dialogue avec Tryphon 68.7 (ըստ հետեւյալ հրատարակության՝ JUSTIN MARTYR, Dialogue avec Tryphone, édition critique, traduction, commentaire par Philippe Bobichon, coll. Paradosis 47/1, Academic Press Fribourg, 2003):

¹² Տե՛ս Dialogue avec Tryphon 68.8, 71.1–2: Մեկ այլ հատվածում (84.4) Հուստինոսն օգտագործում է $\pi\alpha\rho\alpha\rho\rho\acute{\alpha}\phi\omega$ (զեղչել, ջնջել) եւ $\pi\alpha\rho\epsilon\xi\eta\gamma\acute{\epsilon}\omicron\mu\alpha\iota$ (խեղաթյուրել, սխալ մեկնաբանություն տալ) բառերը՝ ցույց տալով հրեաների կողմից մարգարեությունների թյուր ընկալումը:

¹³ Որոգիենան «Առ Աֆրիկանոս» թղթում Դանիելի մարգարեության Յոթանասնից թարգմանության Շուշանիկի պատմության հատվածը բացատրելիս նույնպես խոսում է հրեաների

Հստ էություն՝ արդեն Հուստինոսից սկսած՝ վաղքրիստոնեական մեկնարկեցողի մեջ ներշնչականությունն ու աստվածաշնչականությունն առգրվում են երկու հասկացությունների հետ, այլ խոսքով՝ առաջ է գալիս հետեւյալ հարցադրումը՝ ո՞րն է աստվածաշնչալ՝ եբրայական բնագիրը, թե՞ դրա Յոթանասնից թարգմանությունը¹⁴:

Այս հարցին պատասխանած հաջորդ նշանավոր քրիստոնյա մեկնիչը Ս. Իրինեոս Լիոնացին է, որն իր դիրքորոշումների մեջ ավելի կտրուկ է ու սկզբունքային: Իրինեոսն ընդունում է Յոթանասնից թարգմանության աստվածային ներշնչականությամբ ստեղծված լինելու մասին զրույցը՝ պատճառաբանելով, որ Պտղոմեոս թագավորի պալատում այդ ժամանակ ներկա բոլոր հեթանոսներն էլ ականատես են եղել հրաշքին, քանի որ իրարից առանձին-առանձին աշխատասիրած բոլոր թարգմանիչներն էլ նույն կերպ են թարգմանել Աստծու խոսքը¹⁵: Իրինեոսը ծանոթ է հրեական ծագմամբ եւս երկու հունարեն՝ Թեոդոտոսի եւ Ակյուղասի թարգմանություններին, սակայն նրա պնդմամբ միակ արժանահավատն ու աստվածաշնչալը Յոթանասնիցն է: Հստ այսամ՝ Իրինեոսը ներկայացնում է իր հիմնարար փաստարկները.

«Արդ՝

Ա. քանի որ այսպիսի ճշմարտությամբ եւ աստվածային շնորհով են թարգմանվել այս Գրվածքները, որոնցով Աստված նախապատրաստել եւ ձեւավորել է դեպի Իր Որդին ունեցած մեր հավատը,

Բ. քանի որ Աստված այս Գրվածքները մեզ համար սուրբ պահեց Եգիպտոսում, որտեղ Հակոբի տունը քաղցի պատճառով էր գաղթել Քանանից, եւ որտեղ թաքնվեց նաեւ մեր Տերը՝ Հերովդեսի կողմից հալածվելիս,

Գ. քանի որ Գրվածքների այս թարգմանությունը (Scripturarum interpretatio) իրականացվել է մեր Տիրոջ երկիր իջնելուց առաջ, հետեւաբար եւ՝ քրիստոնյաների հայտնվելուց առաջ (մեր Տերը ծնվեց Օգոստոս կայսեր զահակալության 42-րդ տարում, իսկ պտղոմեյան թարգմանական

կողմից եբրայական բնագրում այս դրվագը ջնջելու պատմության մասին: Հստ այսամ՝ հրեաները, հաշվի առնելով այդ պատմության մեջ Իսրայելի ժողովրդի ծերերին ու առաջնորդներին վիրավորող արտահայտությունները, եբրայական բնագրից հանել են Շուշանի մասին պատմությունը: Տե՛ս Philocalie, 1–20: Sur les Ecritures et la lettre à Africanus sur l’histoire de Suzanne, intr., texte, trad. et notes par Marguerite Harl & Nicholas de Lange, Sources Chrétiennes 302, Paris, 1983, էջ 541–543:

¹⁴ Տե՛ս MOGENS MÜLLER, նշ. աշխ., էջ 69–94:

¹⁵ Տե՛ս IRENÉE DE LYON, Contre les hérésies, III, 21,2:

այս տարբերակը շատ ավելի հին է),— ուրեմն պետք է ընդունել, որ անգամ ու հանգուզն են իրենց պահում նոր թարգմանություն կատարողները: Երբ մենք նրանց դեմ այս Գրվածքների թարգմանությունից ենք փաստարկներ բերում, նրանք, միեւնույն է, չեն կամենում հավատալ Աստծու Որդու գալուստին»¹⁶:

Մեջբերված հատվածից կարելի է որոշ եզրահանգումներ կատարել¹⁷: Իրինեոսի համոզմամբ՝ յոթանասուն թարգմանիչները չէին կարող փոխել հրեական հնագույն մարգարեությունները: Ավելին, հրեաների կատարած նորագույն հունարեն թարգմանություններն են «աղավաղում Աստծու տված մարգարեական վկայությունները»¹⁸: Ընդ որում՝ այդ մարգարեությունները թվագրվում են բաբելոնյան գերությունից առաջ: Հետեւաբար, Թեոդոտոսի եւ Ակյուղասի թարգմանությունները, իրենց նորաձեւություններով, աղավաղում են այս հնագույն մարգարեական բնագրերը՝ դրանով իսկ հակասություն ստեղծելով ոչ թե եբրայական բնագրի եւ Յոթանասնիցի, այլ «եբրայական հնագույն բնագիր — Յոթանասնից թարգմանություն» գույզի եւ հրեական նոր թարգմանությունների միջեւ:

Արեւմուտքում Տերտուղիանոսն ու Ալեքսանդրիայում Կղեմես Ալեքսանդրացին նույնպես պաշտպանում էին իրինեոսյան տեսությունը՝ գործնականում ոչ մի հակասություն չգտնելով եբրայական բնագրի եւ Յոթանասնից թարգմանության միջեւ եւ դրանով իսկ հիմնավորելով Յոթանասնիցի աստվածաներշնչյալ բնույթը: Իր «Apologeticus» երկում Տերտուղիանոսն ուղղակի վերաշարադրում է Յոթանասնից թարգմանության հրաշապատումը՝ հավելելով, որ Պաղոմեոսի արքունիքում գտնվող Մենեղեմոս անունով փիլիսոփան, որ առավել հայտնի էր աստվածային նախախնամության մասին իր տեսակետներով, զարմացել էր յոթանասուն թարգմանիչների՝ առանձին-առանձին կատարած, գուցե՝ թարգմանած հատվածների համահնչունությամբ¹⁹: Կղեմեսը նույնպես, որոշ տարբերություններով, կրկնում է Յոթանասնից թարգմանության

¹⁶ Տէս անդ, III, 21,3:

¹⁷ Այս առումով արտահայտված տեսակետների վերլուծության մասին տե՛ս EDMON L. GALLAGHER, նշ. աշխ., էջ 177:

¹⁸ Տէս IRENÉE DE LYON, Contre les hérésies, III, 21,1:

¹⁹ Տէս Apologeticus, XVIII 8 (ըստ հետեւյալ հրատարակության՝ Apology of Tertullian, with English notes and preface, by H. A. Woodham, Cambridge, 1862, էջ 61–62):

պատմությունը՝ հատկապես շեշտելով աստվածային ներշնչման գաղափարը: Այդ առումով ավելորդ չենք համարում ստորեւ թարգմանաբար մեջբերելու Կղեմեսի «Stromateis» երկի Ա. գրքի համապատասխան հատվածը.

«...Այնուհետեւ յուրաքանչյուրն առանձին-առանձին թարգմանեց բոլոր մարգարեությունները, օգտագործված բառերի ու իմաստների առումով (τὰς διανοιὰς καὶ τὰς λέξεις) այս բոլոր մարգարեությունները համեմատվելուց հետո համապատասխանեցին իրար: Քանզի աստվածային կամքի ներքո էին նրանք աշխատել, որպեսզի հասանելի լինեին հոլների ականջներին: Եւ զարմանալի բան էլ չկա, որ աստվածային ներշնչումը (ἐπιπνοία Θεοῦ), որը շնորհել էր այդ մարգարեությունը, առիթ էր տվել նաեւ այդ թարգմանության համար՝ դարձնելով այն մի տեսակ հունական մարգարեություն (Ἑλληνικὴν προφητείαν)²⁰»:

2. Քննարկված եկեղեցական հայրերի եւ ուսուցիչների բոլոր տեսակետներն ինչ-որ իմաստով ունեն ջատագովական բնույթ՝ փորձելով կամ բնավ հակասություն չտեսնել Յոթանասնիցի եւ եբրայական բնագրի միջեւ, կամ այդ հակասությունների ու տարբերությունների պատճառ համարել միայն իրենց ժամանակակից հրեական թարգմանությունները եւ բնագրային նոր տարբերակները: Մի փոքր այլ մոտեցում որդեգրեց, սակայն, Գ. դարի ամենահայտնի մեկնիչը՝ Որոգինեսը: Չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ Որոգինեսով քրիստոնեական մեկնարկատու մկսվում է բոլորովին նոր շրջան: Այս փաստը պայմանավորված էր նախեւառաջ Որոգինեսի գիտական, անաչառ վերաբերմունքով եւ ժամանակի բնագրերի փայլուն իմացությամբ:

Որոգինեսի ձեռնարկած ծավալուն եւ ընդարձակ բնագրագիտական աշխատանքն առիթ դարձավ, որ նա շանտեսի եբրայական բնագրի եւ Յոթանասնից թարգմանության միջեւ առկա էական տարբերությունները: Որոգինեսը հրաշալի հասկանում էր, որ Թեոդոտոսի, Ակյուղասի եւ Սիմմաքոսի թարգմանությունները շատ հաճախ ավելի ճշգրիտ ու օգտակար տարբերակներ կարող են տրամադրել քրիստոնեական եկե-

²⁰ Տե՛ս Stromates I 22. 1492–3 (ըստ հետեւյալ հրատարակության՝ CLÉMENT D'ALEXANDRIE, Les Stromates, intr. de Claude Mondésert, trad. et notes de Marcel Caster, Sources Chrétiennes 30, Paris, 1951, էջ 152):

ղեցու կանոնականացրած Հին Կտակարանի բնագիրը հասկանալու եւ սրբագրելու համար²¹: Արդյունքում Որոգիները, ըստ առկա պատմական տեղեկությունների, ստեղծեց իր հռչակավոր Վեցիչանը՝ վեց սյունակներում տալով ինչպես առկա հունարեն թարգմանությունները, այնպես էլ եբրայական բնագիրը եւ դրա հունատառ տարբերակը²²: Ձեռքի տակ առկա սկզբնաղբյուրներն ու Որոգիների երկերը հնարավորություն են տալիս ընդհանուր գաղափար կազմելու Որոգիների՝ ներշնչականության եւ հինկտակարանյան բնագրի աստվածաշնչականության տեսության վերաբերյալ, չնայած գիտնականների կարծիքներն այս հարցում այնքան էլ միանշանակ չեն²³:

Նախ, որքան էլ զարմանալի թվա, այնուամենայնիվ, Որոգիները, որը, Եւսեբիոս Կեսարացու վկայության համաձայն²⁴, ջանադրաբար ուսանել էր եբրայեցիներն եւ քննել եբրայական Աստվածաշնչի բնագրերը, այդքան էլ լավ չէր տիրապետում եբրայեցիներին: Երկրորդ, գիտական ուսումնասիրությունները լուրջ հակասություններ են վերհանել Վեցիչանի ընդհանուր կառուցվածքում: Եւ վերջապես, արդյո՞ք Որոգիների վերջնական նպատակն էր հունարեն Յոթանասնից թարգմանությունը ջատագովել ընդդեմ եբրայական բնագրի: Յոթանասնից թարգմանության եւ եբրայական բնագրի նկատմամբ Որոգիների մոտեցումները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ համառոտ անդրադառնալ հրեաների եւ հրեական ավանդույթի հանդեպ նրա ունեցած վերաբեր-

²¹ SKE ALISON SALVESEN, «A Convergence of the Ways? The Judaizing of Christian Scripture by Origen and Jerome», Adam H. Becker, Anette Yoshiko Reed (eds.), *The Ways that Never Parted: Jews and Christians in Late Antiquity and the Early Middle Ages*, Mohr Siebeck: Tübingen, 2003, էջ 240:

²² Վեցիչանի՝ Milan Ra. 1098 եւ Cairo Genizah Ra. 2005 ձեռագիր-պատառիկներն ունեն հունատառ եբրայական բնագիրը՝ չնայած որոշ ուսումնասիրողներ հերքել են այդ սյունակի գոյությունն ընդհանրապես՝ հաշվի առնելով, որ այն նկարագրված չէ Եւսեբիոս Կեսարացու երկում: Այս մասին ավելի մանրամասն տես EDMON L. GALLAGHER, նշ. աշխ., էջ 179: Որոգիների Վեցիչանի հրատարակությունը, ըստ պահպանված հայրաբանական վկայությունների, իրականացվել է F. Fields-ի կողմից՝ *Origenis Hexaplorum*, tomus I, 1867, tomus II, Cambridge, 1975: Որոգիների երկը, ըստ տարբեր մատենագիրների տեղեկությունների, կոչվել է նաեւ Քառիջան, Հնգիջան, Ութիջան, Յոթիջան եւ Իննիջան: Այս մասին ավելի մանրամասն տես *Origenis Hexaplorum*, tomus I, էջ IX–XIII: Պետք է նշել, որ «Hexapla–Վեցիչան» անվանումը երկին տրվել է ավելի ուշ՝ Եւսեբիոս Կեսարացու եւ Նաիփանի կողմից:

²³ SKE O. MUNNICH, «Les Hexaples d'Origène à la lumière de la tradition manuscrite de la Bible grecque», Gilles Dorival et Alain Le Boulluec (éds.), *Origeniana Sexta: Origène et la Bible*, Actes du Colloquium Origenianum Sextum, Chantilly, 30 août–3 septembre 1993, Leuven, 1995, էջ 167:

²⁴ SKE EUSÈBE DE CÉSARÉE, *Histoire ecclésiastique*, VI. XVI. 1., texte grec, trad. et notes par Gustave Bardy, Sources Chrétiennes 41, Paris, 1955, էջ 109–110:

մունքին: Հստ էության՝ այս իմաստով Որոգինեսը տարբերվում էր իր՝ գրեթե բոլոր նախորդներից...

Որոգինեսը հինկտակարանյան բնագրագիտական հարցերով սկսեց հետաքրքրվել վաղ տարիքից, իսկ Վեցիչանի ստեղծման համար աշխատեց շուրջ երեսուն տարի: Նախքան 230 թվականը, երբ Ալեքսանդրիայում նա գրում էր իր «Սաղմոսաց մեկնությունը», արդեն ձեռքի տակ ուներ Սաղմոսաց գրքի չորս տարբեր թարգմանություններ՝ Ակյուղաս, Սիմմաքոս, Թեոգիտոն եւ Յոթանասնից: Հնդ որում՝ Որոգինեսն իր ճամփորդություններից մեկի ժամանակ Արաբիայի Նիկոպոլիս քաղաքի մոտակայքում մոտ. 245 թ. ծանոթանում է Աստվածաշնչի մինչ այդ անհայտ մի խմբագրության՝ «quinta»-ի կամ «հնգիչան»-ի հետ: Վերջինիս եւ ավելի ուշ՝ Կարակալա կայսեր ժամանակ (198–217) երիքովի մոտակայքում հայտնաբերված կրկին անհայտ մի աստվածաշնչյան խմբագրության՝ «sexta»-ի կամ «վեցիչան»-ի շնորհիվ Որոգինեսը կարողանում է որոշ գրքերի համար ամբողջացնել իր հայտնի Hexapla-ն²⁵: Որոգինեսը, հետեւաբար, արդեն իսկ ձեռքի տակ ուներ եբրայական բնագրի հունարեն թարգմանություններ եւ նույնիսկ եբրայեցիներեն բնագրի հունատառ որոշ փոխադրություններ²⁶: Սակայն ինքը՝ Որոգինեսը, շատ քիչ կամ գրեթե չգիտեր եբրայեցիներեն: Նրա մեկնություններում առկա՝ եբրայական բնագրի բազմաթիվ սխալ ընթերցումները լավագույնս վկայում են այդ մասին²⁷: Մյուս կողմից, սակայն, պարզապես անհնար է թերագնահատել այն մեծ եռանդն ու մղումը, որով Որոգինեսը, հինկտակարանյան որեւէ խրթին հատվածի վերլուծության կամ բնագրական ճշգրտումների նպատակով, մշտապես խորհրդակցում էր հրեա ուսուցչապետերի եւ գիտունների հետ: Որոգինեսի

²⁵ S^{ts} GILLES DORIVAL, «Origen», James Carleton Paget & Joachim Schaper, The New Cambridge History of the Bible, vol. I (From the Beginnings to 600), Cambridge University Press, 2013, էջ 607–609:

²⁶ Բնագրագիտությունը կամ բնագրաքննությունը (հուն.՝ διορθωτικόν) կարելուր դերակատարություն ուներ ուշ անտիկ շրջանի գիտնականների համար, եւ իբրեւ այդպիսին՝ էական ու առանցքային է Որոգինեսի մեկնողական համակարգն ուսումնասիրելիս: Որոգինեսի բնագրաքննական մոտեցումները մանրամասն տես PETER W. MARTENS, Origen and Scripture. The Contours of the Exegetical Life, Oxford University Press, 2012, էջ 42–54:

²⁷ Այս խնդրի բանասիրական եւ աղբյուրագիտական քննության համար տես EUGENE ULRICH, «Origen's Old Testament Text: The Transmission History of the Septuagint to the Third Century, C.E.», Charles Kannengiesser & William L. Petersen (ed.), Origen of Alexandria. His Word and His Legacy, Notre Dame University Press, 1988, էջ 20–33:

համոզմամբ՝ Աստվածաշնչի որեւիցե դժվար հատված բացատրելիս մեկնիչը նախ եւ առաջ պետք է ուսումնասիրի հրեական ավանդույթները: Այս մոտեցմամբ է բացատրվում Որոգինեսի՝ իր ժամանակի համար հանդուրժողական մոտեցումը հրեաների եւ հրեական սուրբ-րային մեկնողական ավանդույթների նկատմամբ: Հնարավոր է նույնիսկ, որ Որոգինեսն անձամբ ներկա է եղել հրեական սինագոգի մի քանի պաշտամունքների, իր հարուստ մեկենասների կողմից տրամադրված գրադարանում (scriptorium) ունեցել հրեա կամ հուդայաքրիստոնյա օգնականներ²⁸: Հրեական ավանդույթներին Որոգինեսի ծանոթությունը հիմնականում սկսվել է Ալեքսանդրիայում, որտեղ նա ամենայն հավանականությամբ պարբերաբար հանդիպում եւ նույնիսկ բանավիճում էր հրեական համայնքի ժողովրդապետերի հետ²⁹: Այսպես՝ հենց Ալեքսանդրիայում է Որոգինեսը մի հրեայից տեղեկանում երբայական մեկնությունների մասին: Օրինակ՝ այդ նույն հրեան, որին Որոգինեսն անվանում է «հրեա վարդապետ», նրան բացատրել էր, որ Եսայի 2. 3-ում երկու սերովբեները խորհրդանշում են Որդուն եւ Սուրբ Հոգուն³⁰: Իր ճամփորդությունների ընթացքում Որոգինեսը նույնպես գործուն հաղորդակցության եւ երկխոսության մեջ էր հրեա ուսուցչապետերի եւ օրենսգետների հետ³¹: Կեսարիայում (Պաղեստին) Որոգի-

²⁸ Ուսումնասիրողները Փիլոն Ալեքսանդրացու՝ Կեսարիայում արտագրված որոշ երկերի աստվածաշնչական մեջբերումների քննության արդյունքում հանգել են այն եզրակացության, որ Որոգինեսն իբրեւ օգնական ուներ մեկ-երկու հրեա գրիչներ, որով էլ բացատրվում է հունարեն տառերով երբայեցիքեն բնագրի առկայությունը Վեցիշնում:

²⁹ Պահպանվել է նույնիսկ ժողովրդապետերից մեկի անունը՝ Յուլիոս, որին Որոգինեսն անվանում է «էթնարքոս՝ ժողովրդապետ»: Տե՛ս NICHOLAS DE LANGE, Origen and the Jews. Studies in Jewish-Christian relations in third-century Palestine, Cambridge University Press, 1976, էջ 15–17:

³⁰ «Dicebat autem et Hebraeus magister quod duo ilia Seraphin, quae in Esaia senis alis describuntur clamantia adinuicem et dicentia: Sanctus sanctus sanctus dominus Sabaoth, de unigenito filio dei et de spiritu sancto esset intellegendum» («Մի հրեա ուսուցիչ ասում էր, որ Եսայու նկարագրած վեցթեւանի սերվոբեները, որոնք մեկը մյուսին ձայնակցում էին «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տեր Սաբաոթը», պետք է հասկանալ որպես Միածին Որդի եւ Սուրբ Հոգի»): Տե՛ս ORIGÈNE, Traité des principes, tome I, livres I et II, introduction, texte critique de la version de Rufin, traduction par Henri Grouzel et Manlio Simonetti, Sources Chrétiennes 252, Paris, 1978, էջ 148:

³¹ Որոգինեսի հանդուրժողական վերաբերմունքը հրեաների եւ Իսրայելի հանդեպ հատկապես ակնառու է «Ընդդեմ Կելսոսի» ջատագովական երկում: Սա հիմնականում բացատրվում էր Որոգինեսի կողմից քրիստոնեության արմատների անաղարտությունը շեշտելու մտահոգությամբ, ինչն այդքան մոլեռանդորեն քննադատում էր Կելսոսը: Վերջինս, վերարտադրելով եգիպտական հակահրեա հելլենիստների փաստարկները, Մովսեսի «փիլիսոփայությունն» ու հրեական կրոնական գաղափարները համարում էր կեղծ եւ այլ ազգերից պատճենված: Որոգինեսի բերած հակափաստարկների համաձայն՝ հրեաները

նեսը հանդիպում է հրեա բաբբիների, որոնք նրա հետ քննարկում են աստվածաշնչյան մեկնության իրենց գիտելիքները: «Առ Աֆրիկանոս» թղթում (Ժ.—ԺԲ.) Որոգինեսը վկայում է, թե մի հրեա՝ իմաստուն մարդու որդի, ուսուցանում էր, որ Շուշանիկի պատմությունը կանոնական է, իսկ երկու ծերերի անուններն էին Սեդեկիա եւ Աքիաբ՝ ըստ Երեմ. ԼԶ. 22–23-ի (եբր. բնագրում՝ ԻԹ. 22–23): Մեկ այլ հրեա բացատրում էր, որ հրեա ծերերից յուրաքանչյուրը կանանց գայթակղեցնում էր այն հավաստիացումով, թե ըստ Աստծու խոստման՝ ինքն էր դառնալու Մեսիայի նախահայրը³²:

Որոգինեսը քաջածանոթ էր նաեւ հրեական պարականոններին, օրինակ՝ Ենոքի գրքին, «Վերափոխումն Մովսեսի» երկին, «ԺԲ. նահապետների կտակին» եւն: Հովհաննեսի Ավետարանի իր մեկնության Բ. գրքում նա նաեւ մեջբերում է Փիլոն Ալեքսանդրացուն վերագրված մի ցանկ, որտեղ այբբենական կարգով ներկայացված են եբրայական Աստվածաշնչի սուրբգրային անունները՝ իրենց հունարեն համարժեքներով եւ նշանակությամբ³³: Եբրայական բնագրի քննության եւ հրեական ավանդույթներին ծանոթանալու համար Որոգինեսին մեծապես կարող էր օգտակար եղած լինել նաեւ վաղ Եկեղեցու մեկ այլ մեկնիչ՝ Հովրիոս Աֆրիկանոսը, որի հետ Որոգինեսն ուներ նամակագրական կապ³⁴:

Այնուամենայնիվ, եկեղեցական ուսուցիչներից ու հայրերից Որոգինեսն առաջինը չէր, որ գիտակցում էր աստվածաշնչյան բնագրի եւ կանոնի քննության հարցում հրեա գիտնականների հետ խորհրդակցելու կարեւորությունը: Որոգինեսից առաջ Մելիտոս Սարգեցին իր ժամանակի հրեական կանոնի հետ ծանոթանալու նպատակով ճամփորդել էր Պաղեստինով մեկ, իսկ Հովրիոս Աֆրիկանոսը, Որոգինեսին ուղղված իր ծավալուն նամակում առաջ էր քաշում այն սկզբունքը, որի համաձայն՝ Հին Կտակարանում առկա բոլոր գրքերը հունարենի են

կրում էին ապագայի երկնային, բացարձակ ճշմարտության ստվերը երկրի վրա, հետեւաբար նպատակահարմար չէր տարանջատել Իսրայելի ու Նոր Իսրայելի քրիստոնեության պատմությունները: *Տես* ORIGÈNE, Contre Celse, t. I (livres I–II), intr., texte critique, trad. et notes par Marcel Borret, Sources Chrétiennes 132, Paris, 1967, էջ 78–83, 128–131, 132–135, 144–149; Contre Celse, t. II (livres III–IV), Sources Chrétiennes 136, Paris, 1968, էջ 260–263; Contre Celse, t. III (livres V–VI), Sources Chrétiennes 147, Paris, 1969, էջ 120–123:

³² *Տես* Philocalie, 1–20, էջ 537–542:

³³ *Տես* NICHOLAS DE LANGE, նշ. աշխ., էջ 15–17:

³⁴ *Տես* անդ, էջ 20:

Թարգմանվել եբրայեցերենից: Եւ չնայած վաղ Եկեղեցում *Hebraica veritas*-ի առաջին ներմուծողն ու տեսաբանը Հերոնիմոսն էր, այնուամենայնիվ, Աստվածաշնչի կանոնի եւ բնագրի որեւէ խնդիր ու հիմնահարց Որոգիները պարտադիր դիտարկում էր եբրայական բնագրի եւ ավանդության լույսի ներքո՝ սխալ տարընթերցումներն ու բացթողումները բացատրելով գրիչների կողմից եբրայական բնագրի չիմացությունը:

Եբրայական բնագրի հանդեպ ունեցած իր այս յուրահատուկ վերաբերմունքով հանդերձ³⁵ Որոգիները երբեւէ չէր ստորադասում Յոթանասնից Թարգմանությունը եբրայական բնագրին: Եբրայական կանոնում առկա 39 գրքերին Որոգիները հավելում էր եւս 11-ը (Թուղթ Երեմիայի, Բարուք, Տոբիթ, Հուդիթ, Ա.—Բ. Մակաբայեցիներ, Սիրաք, Իմաստություն Սողոմոնի եւ Դանիելի մարգարեության Յոթանասնից Թարգմանության մեջ առկա ու եբրայական բնագրում բացակայող երեք համապատասխան հատվածները)³⁶:

Որոգիների համոզմամբ՝ Յոթանասնից Թարգմանությունն ունի բացառիկ հեղինակություն, որովհետեւ օգտագործվել է առաքյալների կողմից: Դրանով իսկ Որոգիները սահմանում է իր մեկնակետը. որեւիցե հավելում Յոթանասնիցի բնագրին անընդունելի է, քանի որ այդ Թարգմանությունն արտահայտում է առաքյալներից սկիզբ առնող եկեղեցական մտածողությունն ու գիտակցությունը³⁷: Հռոմեացիս Թղթի իր մեկնության մեջ Որոգիները նկատում է Յոթանասնից Թարգմանության եւ եբրայական բնագրի միջեւ մի տարբերություն, վերլուծում այն եւ վավերական համարում Յոթանասնիցի ընթերցումը, քանի որ առաքյալն ինքը մեջբերում է Յոթանասնից Թարգմանությունը՝ դրանով

³⁵ Իր երկերում Որոգիները հաճախ է ակնարկում կամ վկայում հրեա օրենսդատների եւ ուսուցչապետների հետ ունեցած բանավեճերի մասին, չնայած դրանցից ոչ մեկն էլ չի պահպանվել գրավոր տեսքով: Ընդ որում՝ Որոգիները շատ հաճախ խոսում է «հրեական առասպելաբանության» մասին՝ ամենայն հավանականությամբ ակնարկելով Տիտոս Ա. 14-ում առաքյալի տված բնորոշումը: Կարելի է ենթադրել, որ դրանով Որոգիները նկատի ունեն հրեական մեկնարկատի տառացի ուղղվածությունը՝ այն համարելով որպես իր կողմից այդքան նախասիրած այլաբանության հակիմաստ: Տե՛ս NICHOLAS DE LANGE, նշ. աշխ., էջ 89:

³⁶ Այս գրքերից Որոգիների երկերում արված մեջբերումների ամբողջական ցանկը տե՛ս *Biblia Patristica 3, index des citations et allusions bibliques dans la littérature patristique* (Origène), Paris, 1991, էջ 216–218, 220–224:

³⁷ Տե՛ս ORIGÈNE, *Homélies sur Josué*, XII 1–3, texte latin, intr., trad. et notes par Annie Jaubert, Sources Chrétiennes 71, Paris, 1960, էջ 295–303:

իսկ հաստատելով այդ թարգմանության հեղինակությունը³⁸: Ալեքսանդրացի ուսուցիչը նույնիսկ ջանում է Յոթանասնիցում առկա եւ եբրայական բնագրում պակասող տեղիների փաստի «արդարացման» համար համեմատել եբրայական բնագրի՝ իր ժամանակվա հայտնի հունարեն գրեթե բոլոր թարգմանությունները³⁹: Կարելի է թերեւս նշել, որ Որոգինեսը նախապատվությունը տալիս է Յոթանասնից բնագրին՝ միաժամանակ շեշտելով եբրայական բնագրի կարեւորությունը Եկեղեցու որդեգրած Յոթանասնից թարգմանությունը ճիշտ հասկանալու եւ մեկնելու համար: Այս առումով կարեւոր մի աղբյուր է Որոգինեսի եւ Հուլիոս Աֆրիկանոսի նամակագրությունը⁴⁰: Որոգինեսն իր թղթում պատասխանում է Աֆրիկանոսի հարցերին ու առարկություններին,

³⁸ Տե՛ս ComRom 8,6, 7 (ORIGEN, Commentary on the Epistle to the Romans: Books 6–10, tr. by Thomas P. Scheck, coll. The Fathers of the Church, vol. 104, The Catholic University of America Press, Washington, D. C., 2002, էջ 152): Հմմտ. նաեւ RONALD E. HEINE, Origen. Scholarship in the Service of the Church, Oxford University Press, 2010, էջ 73: Ուսումնասիրողի կարծիքով՝ Որոգինեսի նմանատիպ մոտեցումը պայմանավորված էր ալեքսանդրյան դպրոցում Ս. Իրինեոսի՝ երկու Կտակարանների մասին վարդապետության ազդեցության առկայութամբ: Մեր կարծիքով՝ այս տեսակետը չափազանցված է, քանի որ Ս. Իրինեոսի վարդապետությունն ինքնին արտահայտում էր վաղ Եկեղեցում արդեն առկա աստվածաշնչականության եւ կանոնի մասին պատկերացումները:

³⁹ Որոգինեսի դիտարկմամբ՝ այս իմաստով ամենահարմար թարգմանությունն Ակյուղասինն է, որը մեծ համարում ուներ նաեւ հրեական շրջանակներում՝ իբրեւ առավել ճշգրիտ ու հստակ կատարված աշխատանք: Եւ իրոք, Ակյուղասի թարգմանությունից ընթերցումներ էին կատարվում հունախոս որոշ հրեական սինագոգներում, ինչպես վկայում են Կահիրեի Geniza ձեռագրում պահպանված պատառիկները: Որոգինեսն իր երկերում բազմիցս անդրադառնում է երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին հրեական ժողովարաններում կատարվող սուրբգրային ընթերցումներին՝ իբրեւ հրեական պաշտամունքի առանցքային ծիսական մաս այդպես էլ, սակայն, չհստակեցնելով ընթերցման լեզուն՝ հունարենով, թե՛ եբրայեցերենով: Հրեա ուսուցչապետերն իրենք քաջածանոթ էին տարբեր լեզուներով գրված թարգմաններին, ավելին՝ ռաբբունական մի հաստատման համաձայն՝ «միակ լեզուն, որով կարելի է ճշգրտորեն թարգմանել Թորան, հունարենն է»: Պետք է հաշվի առնել նաեւ այն փաստը, որ հրեական ավանդության համաձայն՝ Ակյուղասը հրեությունը ընդունած հեթանոս նորադարձ էր եւ իր թարգմանությունը կատարել էր հրեա ուսուցչապետերի պատվերով՝ արժանանալով վերջիններիս հավանությանը եւ գովասանքին: Այս երևույթը հուշում է, որ ամենայն հավանականությամբ հրեական հունախոս շրջանակներում արդեն զգալի էր Յոթանասնից թարգմանության արդիականացումը, ինչն ըստ երևույթին տեղի ունեցավ Ակյուղասի ձեռնարկած աշխատանքի շնորհիվ: Տե՛ս NICHOLAS DE LANGE, նշ. աշխ., էջ 56:

⁴⁰ Տե՛ս Philocalie, 1–20, էջ 469–573: Աֆրիկանոսը կրթվել է Ալեքսանդրիայում, հետագա գործունեությունը ծավալել Պաղեստինում: Նրա գրչին են պատկանում աշխարհի արարումից մինչեւ Ք. հ. 221 թ. ընդգրկող ծավալուն «Ժամակագրությունը», Քրիստոսի ազգաբանության վերաբերյալ «Առ Արիստիդես» թուղթը, ինչպես նաեւ Որոգինեսին ուղղված վերոնշյալ նամակը: Տե՛ս Hadbook of Patristic Exegesis, էջ 527:

որոնք ուղղակիորեն առնչվում են Յոթանասնից թարգմանության եւ եբրայական բնագրի վավերականության ու աստվածաշնչականության հարցերին⁴¹: Ընդհանուր առմամբ Աֆրիկանոսի փաստարկները կարելի է ներկայացնել ըստ այսմ⁴².

1. Դանիելի մարգարեության գրքի՝ Շուշանի մասին պատմող գրվագը (գրք. բնագրում՝ ԺԳ. 1–64) կեղծ է եւ չնայած գրական արժանիքին՝ ստեղծվել է հետագայում (հուն.՝ νεωτερικὸν καὶ πεπλασμένον):

2. Այս գրվագը բնավ չի պատշաճում Դանիելի մարգարեական ոճին, քանի որ մարգարեն սովորաբար հայտնությունն ստանում է հրեշտակի ձեռամբ տրված տեսլիքում եւ ոչ թե մարգարեական ներշնչմամբ⁴³:

3. Շուշանի մասին պատմող գրվագում առկա են որոշ հունարեն բառակապակցություններ, որոնք չեն կարող հրեական լեզվամտածողության արդյունք լինել:

4. Շուշանի, ինչպես նաեւ Բելի ու Վիշապի մասին (գրք. բնագրում՝ ԺԳ.) պատումներն առկա չեն եբրայական կանոնում:

Որոգիներն առիթը բաց չի թողնում եւ Աֆրիկանոսին ուղղված պատասխան նամակում շարադրում է Յոթանասնից թարգմանության եւ եբրայական բնագրի միջեւ առկա տարբերությունների մասին իր պատկերացումները, այլ խոսքով՝ տեսություն *Veritas Graeca* եւ *Veritas*

⁴¹ Եւսեբիոս Կեսարացու «Պատմութիւն եկեղեցական» երկում հիշատակվում է վաղ Եկեղեցու կյանքում աստվածաշնչականության եւ ներշնչականության մասին թերեւ առաջին աշխատությունը՝ վերագրված ոմն Միլտիադես հռետորի: Վերջինս ամենայն հավանականությամբ իր այս երկն ստեղծել էր ընդդեմ մոնտանական աղանդի հարուցած մարգարեական նոր շարժման՝ շնայած Վ. 3. 4.-ում եւ Վ. 16. 3.-ում Միլտիադեսը ներկայացված է իբրեւ մոնտանական շարժման պարագլուխներից մեկը (այս հարցի մասին տես PIERRE DE LABRIOLLE, *La crise montaniste*, Paris, 1913, էջ 31–33): Եւսեբիոսի օգտագործած սկզբնաղբյուրն Ապոլինար անունով մի հեղինակ է, որի համաձայն՝ «մեր եղբայր Միլտիադեսի գրքում նշվում էր, որ մարգարեն չի կարող խոսել կատարյալ [անշարժացման] ու սքանչացման (ἐν ἐκστάσει λαλεῖν) մեջ»: Տես EUSEBE DE CÉSARÉE, *Histoire ecclésiastique*, V. XVII. 1–5, texte grec, traduction et notes par Gustav Bardy, Sources Chrétiennes 41, Paris, 1955, էջ 53, հմմտ. նաեւ Եւսեբիոսի Կեսարացու Պատմութիւն եկեղեցւոյ, յեղեալ յասորւոյն ի հայ ի հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն, ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1877, էջ 381:

⁴² Բնագրի համար տես Philocalie, 1–20, էջ 514–521:

⁴³ Այս մոտեցումը մասամբ պայմանավորված էր հրեական այն ավանդությամբ, որի համաձայն՝ վերջին մարգարեների մահվանից հետո Սուրբ Հոգին այլեւ չէր խոսում Իսրայելում: Հետեւաբար, ի տարբերություն հուդայահելլենիստական մտածողության եւ Յոթանասնից բնագրի, Դանիելի մարգարեությունը, որպես հետսամուտ, եբրայական կանոնում գրված է «սրբագիրք-ketoubim» խմբում: Հմմտ. Philocalie, 1–20, էջ 516:

Hebraica խնդրահարույց իրողության վերաբերյալ: Որոգիներսի թուղթն այս տեսանկյունից բացառիկ է, քանի որ բազմաթիվ մանրամասներ է հաղորդում նրա բնագրագիտական աշխատանքի մասին, ինչպես նաև ուրվագծում վաղ Եկեղեցում երբայական բնագրի ու Յոթանասնիցի միջեւ առկա բարդ ու արդեն հիմնախնդրային դարձած հարցի հնարավոր լուծումները:

Ալեքսանդրացին նախ անդրադառնում է այն խնդրին, որ նույնիսկ Ակյուղասի՝ հաշս հրեից ստույգ ու խիստ արժանահավատ համարվող թարգմանության մեջ կան տեղիներ, որոնք բացակայում են երբայական բնագրում⁴⁴: Բացի այդ՝ Յոթանասնից թարգմանության տարբերակն է վերարտադրում նաև Թեոդոտոսի թարգմանությունը՝ իբրեւ վավերական ներկայացնելով Շուշանի եւ Բելի ու Վիշապի պատումները⁴⁵: Այնուհետեւ Որոգիներսը, որը նամակի սկզբում իր ներողամտությունն էր հայտնել Աֆրիկանոսին՝ առանց անհրաժեշտ պատրաստության պատասխանելու համար, նմանատիպ օրինակներ է բերում Եսթերի, Հոբի, Երեմիայի, Ծննդոց⁴⁶ եւ Ելից գրքերից: Եւ ապա եզրակացնում է. «Առանց այս ամենը նկատի առնելու պէտք է արդյոք անտեսել ու վերացնել Եկեղեցիներում գործածվող օրինակները, հրամայել համայնքներին վերացնել իրենց կիրառած սուրբ գրքերը եւ դրանով իսկ գոհացնել հրեաներին ու համոզել, որ մեզ փոխարենը տան մաքուր բնագրեր՝ առանց որեւէ հետսամուտ «հավելումների»: Միթե Նախախնամությունը, Աստվածաշնչի միջոցով Քրիստոսի Եկեղեցիները հաստատելիս ու խրատելիս, հաշվի չէր առել այս ամենը նրանց համար, ովքեր մեծ գնով գնվեցին (հմմտ. Ա. Կորնթ. Զ. 20), որոնց համար մեռավ Քրիստոս (հմմտ. Հռոմ. 14–15), նույն ինքը՝ Աստված, որ սեր է (հմմտ. Ա. Հովհ. Դ. 9) եւ որ չխնայեց իր Որդուն, այլ տվեց մեզ համար, որպեսզի մենք ամեն բան ստանանք Նրա հետ միասին (հմմտ. Հռոմ. Ը. 32): Այս իմաստով տեղին է հիշել աստվածաշնչյան խոս-

⁴⁴ «Ահա այսպես է թարգմանել Ակյուղասը՝ երբայական տառացիության ստրուկը (δουλεύων τῇ ἐβραϊκῇ λέξει), որին հրեաները համարում են Սուրբ Գրքի նախանձախնդիր թարգմանիչ», Philocalie, 1–20, էջ 527:

⁴⁵ Տես նույն տեղում:

⁴⁶ «...Ծննդոց գրքում կարելի է բազմաթիվ այլ օրինակներ գտնել: Այդ բառերը ես առաձնացրել եմ. նրանք, որոնք ավելացված են հունարենում (իմա՝ Յոթանասնիցում. – Շ. Ա.), նշել եմ խաչանիշով (ὁβελός), որպեսզի մեր ուշադրությունից չվրիպեն, իսկ նրանք, որոնք չկան մեր օրինակներում, բայց առկա են երբայական բնագրում, նշել եմ աստղանիշով (ἀστερίσκους)», Philocalie, 1–20, էջ 532:

քը, «Մի՛ խախտիր այն հավերժական սահմանները, որ հաստատել են քո հայրերը» (հմմտ. Երկր. Օր. ԺԹ. 14, Առակ. ԻԲ. 28, ԻԳ. 10)⁴⁷:

Եւ այնուամենայնիվ, Որոգինեսի այս նախանձախնդրությունը կույր համոզումի ծնունդ չէ. հաշորդիվ նա բացատրում է, որ Յոթանասնիցի բնագրային անխախտությունը բնավ չի նշանակում չհիմնավորված արհամարհանք եբրայական բնագրերի նկատմամբ: Այստեղ արդեն Որոգինեսը հստակորեն մատնանշում է բնագրագիտական իր աշխատանքի նպատակը: Ըստ այսմ՝ Յոթանասնից պաշտոնական բնագիրն անհրաժեշտ է համեմատել եբրայականի հետ՝ յուրաքանչյուր բառի ճշգրիտ իմաստն ու նշանակությունը հասկանալու համար: Դրանով կարելի է խոստափել այն ավելորդ բամբասանքներից ու թյուրըմբռնումներից, որոնք հաճախ ծնունդ են առնում Աստվածաշնչի հունարեն բնագիրը կարդալիս: Մյուս կողմից՝ եբրայական բնագրին ծանոթությունը կարեւորագույն նախապայման է՝ հրեաների հետ երկխոսելու եւ բանավիճելու համար, որպեսզի մեջբերվող սուրբգրային տեղիները համապատասխանեն միմյանց⁴⁸: Պետք է նկատի ունենալ, որ գիտականորեն հիմնավորված չէ Որոգինեսի այս բնագրագիտական ծավալուն աշխատանքը դիտարկել միայն ջատագովական լուսի ներքո: Իհարկե, ինչպես արդեն նշեցինք, ժամանակագրական առումով ճիշտ չէ Որոգինեսին վերագրել Հերոնիմոսի կողմից շրջանառության մեջ դրված *Hebraica veritas* հասկացությունը⁴⁹: Այնուամենայնիվ, Որոգինեսն այս մոտեցումը կիրառում է նաեւ զուտ մեկնողական նպատակով: Ասվածի վառ օրինակ է Մատթեոսի Ավետարանի համապատասխան տեղիի (Մատթ. ԺԹ. 16–22; հմմտ. նաեւ Մարկ. Ժ. 17–22 եւ Դուկ. ԺԸ. 18–23) որոգինեսյան մեկնությունը, որտեղ Մատթեոսի Ավետարանի այդ հատվածը, համատեսների հետ ունեցած տարբերությունները բացատրելու համար, մեկնվում է հինկտակարանյան մնացած խմբագրությունների «չափանիշի» (հուն.՝ κριτήριον)⁵⁰ համաձայն: Հասկանալի է, որ Որոգինեսը «մնացած խմբագրությունների չափանիշ» արտահայտությամբ նկատի ունի իր իսկ կազմած Hexapla-ն⁵¹...

⁴⁷ Philocalie, 1–20, էջ 532:

⁴⁸ Տե՛ս անդ, էջ 534–536:

⁴⁹ Այս մասին տե՛ս նաեւ JOHN WRIGHT, «Origen in the Scholar's Den: A Rationale for the Hexapla», Charles Kannengiesser & William L. Petersen (ed.), նշ. աշխ., էջ 62:

⁵⁰ Origenes Matthäuserklärung XV 14, (Origenes Werke, zehnter Band), von Erich Klostermann, Leipzig, 1935, էջ 388:

⁵¹ Տե՛ս JOHN WRIGHT, նշ. աշխ., էջ 55–57:

* * *

Ընդհանուր առմամբ՝ եբրայական բնագիր-Յոթանասնից թարգմանությունն փոխհարաբերության իմաստով Ա.—Գ. դարերի եկեղեցական մատենագիրների հայացքները դեռեւս կանոնակարգված ու որոշակիացած որեւէ տեսություն չեն առաջադրում: Հստակ է, որ եկեղեցական ավանդության տեսանկյունից նրանք վճռորոշ դեր են վերագրում Յոթանասնիցին՝ իբրեւ առաքյալների կողմից օգտագործված սուրբգրային բնագիր՝ շեշտելով, սակայն, այդ թարգմանության եբրայական ծագումը եւ դրանով իսկ ապահովելով մարգարեական կապը Հին Կտակարանի հետ: Միայն Որոգիներսով է բացվում այս հիմնահարցի լուծման նոր ճանապարհը, որով փաստորեն եբրայական բնագիրը եւ դրա՝ հրեաների կողմից իրականացրած հունարեն թարգմանությունները դիտարկվում են իբրեւ Յոթանասնիցի մեջ «սողոսկած» գրչագրական սխալների ու տարընթերցումների սրբագրման լավագույն միջոց: Ըստ էության՝ Որոգիներսը նաեւ դուռ է բացում հետազայում եբրայական բնագրի ու դրա թարգմանությունների միջոցով քրիստոնեական մեկնարկեստի գիտական, առավել ճշգրիտ զարգացման համար: Այս իմաստով, Աստվածաշնչի բնագրային ներշնչականության հարցը Որոգիներսի ջանքերով բարձրացվում է բոլորովին նոր՝ առավել հիմնարար ու գիտական մակարդակի: Ա.—Գ. դարերի եկեղեցական ուսուցիչների եւ հայրերի զուտ ջատագովական մոտեցումը, ապահովելով հանդերձ Աստվածաշնչի ընկալչալ ու կանոնական բնագրի տեղը Եկեղեցու կյանքում, աստիճանաբար հղկվում է բնագրագիտական սկզբունքների կիրառությամբ: Վաղ Եկեղեցու առաջին երեք դարերի մտածողների երկերի քննությունն այս առումով անհրաժեշտ է՝ արդի աստվածաշնչագիտության եւ ընդհանրապես աստվածաբանության մեջ սողոսկած որոշ «սկզբունքներ» հասկանալու ու բացատրելու համար: Դեռ այսօր էլ, դժբախտաբար, քրիստոնեական որոշ Եկեղեցիների կյանքում արդիական է «hebraica veritas» եւ «graeca veritas» հասկացությունների ճիշտ համադրման հիմնահարցը...

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աստվածաշունչ, բնագրային ներշնչականություն, hebraica veritas, graeca veritas, ներշնչում, Յոթանասնից թարգմանություն:

РЕЗЮМЕ

Научно доказано, что противоречие «Hebraica veritas vs. Graeca veritas» возникло в начале средневековья и главным образом касается вопроса богодухновенности самого библейского текста. Несмотря на то, что автором «Hebraica veritas» является Иероним Блаженный (342/47–420), переводчик латинской Вульгаты непосредственно с древнееврейского, его труд также может быть применен для лучшего понимания некоторых важных вопросов, связанных с концепцией богодухновенности библейского текста в рамках богословских дискуссий первых трех веков христианской церкви. Автор настоящей статьи указывает на некоторые основные идеи отцов и учителей ранней Церкви (I–III вв.) относительно текстологических и богословских авторитетов еврейских и греческих (LXX) ветхозаветных текстов. Цель статьи состоит в том, чтобы сопоставить два основных святоотеческих взгляда, доминирующих в ранней Церкви, а именно: абсолютный авторитет греческого текста, с одной стороны, и более умеренную и научно обоснованную позицию Оригена, с другой стороны. Именно последнее стало *novum instrumentum* для дальнейших изданий и исправлений официального греческого текста Септуагинты в традиции ранней Церкви.

SUMMARY

It is well known that the contradiction “hebraica veritas vs. graeca veritas” was born in the early Middle Ages and refers mainly to the issue of divine inspiration of the biblical text itself. Although the author of “Hebraica veritas” was Saint Jerome, who had translated the Latin Vulgate directly from the Hebrew, it could also be applied to better understand some important issues related to the concept of divine inspiration of the biblical text within the framework of theological discussions of the first three centuries of the Christian Church. The present article aims to point out some principal ideas of the fathers and teachers of the early Church (I–III cc.), concerning the textual and theological authority of Hebrew and Greek (LXX) Old Testament texts. The purpose of the article is to juxtapose two main patristic views, which were dominant in the early Church, namely the absolute authority of LXX vs. Hebrew text and Origen’s moderated and scientifically based attitude. In fact, it was the latter that became a *novum instrumentum* for further editions and corrections of LXX’s *textus receptus* in the early Church.

Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ (ՆԱԶԻԱՆԶԱՅԻ)

Սկիզբը՝ 2023 թ. թիվ ԺԱ.:

ՃԱՌ ԻԸ.¹

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԿՐՈՐԴ

1. Նախորդ խոսքում մենք հստակեցրինք աստվածաբանության մասին հասկացությունը՝ բացատրելով, թե ինչպիսին պիտի լինի, ում առաջ, երբ եւ ինչքան իմաստասիրվի: Այն է՝ նա պիտի ըստ կարելվույն մաքուր լինի, որպեսզի լույսը լույսի կողմից ընկալվի. պիտի իմաստասիրվի շանասեր մարդկանց առաջ, որպեսզի խոսքը, ընկնելով անբերրի հողի վրա, անպտուղ չմնա, իմաստասիրվի, երբ մեր հոգում խաղաղություն է հանգրվանած, եւ մենք չենք պտտվում արտաքին առարկաների շուրջ, որպեսզի շնչառությունը կանգ չառնի, ինչպես հեծկլտացողի դեպքում. ընդ որում՝ հարկ է իմաստասիրել որքան որ ինքներս ենք ըմբռնում եւ, թերեւս, որքան որ ըմբռնելի է: Սուչնի այսպիսի բացատրություններից հետո, «երբ մենք մեզ համար Աստծու դաշտերը հերկեցինք, որպեսզի փշերի մեջ չսերմանենք» (Երեմ. Դ. 3), եւ հարթեցինք հողի երեսը՝ ինքներս բարեփոխվելով եւ այլոց ըստ Սուրբ Գրքի բարեփոխելով, արդեն ձեռնամուխ լինենք աստվածաբանության շարադրանքին: Իսկ խոսքի առաջնորդությունը թողնենք Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, Որոնց մասին է մեր խոսքը՝ Հորը, որպեսզի բարեհաճ գտնվի նրա նկատմամբ, Որդուն, որպեսզի աջակցի նրան, Հոգուն, որպեսզի ոգեղենացնի այն. իսկ ավելի լավ է ասել՝ թող նրա վրա իջնի լույսը Մի Աստվածության՝ միավորվելով զատվող եւ անբաժանաբար բաժանվող, ինչը եւ գերիվեր է ըմբռնելիությունից:

2. Իսկ հիմա, երբ սիրահոժար բարձրանում եմ լեռնի վեր, կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ցանկանում եմ եւ միաժամանակ վախենում (ցանկանում եմ հույսի, վախենում տկարության պատճառով) ամպի մեջ մտնել եւ Աստծու հետ խոսել (քանզի դա Աստծու հրամանն է): Հիմա, ով է ձեզանից Ահարոնը, թող ինձ հետ բարձրանա եւ մոտ կանգնի, բայց եւ բավարարվի

^{1*} Թարգմանվել է հետեւյալ հրատարակությունից. Св. Григорий Богослов, Творения, т. 1, Москва, 2007, էջ 333–350: Թարգմանչի ծանոթագրությունները հետադարձ կտրվեն կարգային համարի հետ դրված աստղանիշով:

ներանով, որ պիտի ամպից դուրս կանգնի. իսկ ով նաբադն է կամ Աբիուդը² կամ էլ ծերերից մեկը, թող այդպիսի մեկն էլ բարձրանա, բայց հեռվում կանգնած մնա ըստ իր մաքրության արժանիքի: Իսկ ով ժողովրդից է եւ այդ բարձրությանն ու հայեցողությանը ոչ արժանիներից մեկը, այդպիսին, եթե մաքուր չէ, թող բնավ չբարձրանա (քանզի դա անվտանգ չէ), իսկ եթե առժամանակ է մաքուր, թող ներքեւում էլ մնա եւ ականջ դնի շեփորի ձայնին, այսինքն՝ բարեպաշտության մաքրամաքուր խոսքերին. իսկ ծխացող եւ որոտացող լեռանը նայիր իբրեւ սպառնալիքի եւ ընդամին հրաշքի՝ բարձրանալ չկարողացողների համար: Իսկ ով չար է եւ անսաստ գազան՝ բնավ ընդունակ չէ մտահայեցողաբար ընկալելու աստվածաբանությունը, թող այդպիսի մեկը չարամտորեն չդարանակալի անտառում՝ անսպասելիորեն հարձակվելով ինչ-որ մի աներկբա ճշմարտության կամ ինչ-որ մի խոսքի վրա եւ իր հայհոյանքներով հոշոտի առողջ վարդապետությունը, այլ թող էլ ավելի հեռու գնա, լեռից հեռանա, այլապես «կքարկոծվի» (Եբր. ԺԲ. 20) եւ կկործանվի. «Ձարերը չարաչար կկործանվեն» (տե՛ս Մարկ. ԻԱ. 41), քանզի ճշմարիտ եւ ամրակուռ վարդապետությունները գազանաբարոների համար քարեր են: Այդպիսին, չնայած որ ընձառյուծ է, իր խայտուցներով հանդերձ, կսատակի (Եբեմ. ԺԳ. 23), կամ էլ նման է առյուծի՝ «մոնչացող ու հափշտակող» (Սաղմ. ԻԱ. 14), որը մեզ կամ մեր արտահայտություններն է փնտրում, որ իր կերակուրը դարձնի, կամ էլ «խոզի», որը «ոտքի կոխան» է անում գեղեցիկ եւ փայլուն «մարգարիտները» (Մատթ. Է. 6), կամ արաբական կամ այլ տեսակի գալլի, նույնիսկ գալլերի՝ ավելի արագավազ իրենց սուտ իմաստակության մեջ (Ամբ. Ա.8), կամ էլ աղվեսի՝ խորամանկ եւ նենգ հոգու, որը, կախված ժամանակից եւ անհրաժեշտությունից, կերպարանափոխվում է՝ կերակրվելով սատկած եւ գարշահոտ լեշերով, ինչպես նաեւ մանր խաղողով (քանզի խոշոր խաղողին չի կարող հասնել), կամ էլ այլ հումակեր կենդանու՝ Օրենքով արգելված ու անմաքուր սննդի եւ օգտագործման համար: Արդ, այդպիսիներից հեռանալով՝ խոսքը կամենում է գրի առնվել ամրակուռ քարե տախտակների վրա, ընդ որում՝ քարե տախտակների երկու երեսին էլ՝ Օրենքի բացահայտ եւ նվիրական իմաստի պատճառով՝ բացահայտ, որն անհրաժեշտ է հեռվում կանգնածների եւ շատերի համար, եւ նվիրական, որը քչերին եւ լեռան ստորոտում կանգնածներին է հասկանալի:

² Տե՛ս Դեւտ. Ժ. 1–2, Ելք ԺԺ. 16:

3. Բայց ինձ հետ ի՞նչ պատահեց, բարեկամներ, նվիրյալներ եւ ինձ պես ճշմարտասերներ: Ես գնացի այն նպատակով, որ ճանաչեմ Աստծուն. այդ խորհրդով հրաժարվելով նյութից ու նյութականից՝ սիրտ առնելով, ինչքան որ կարող եմ, լեռը բարձրացա: Բայց երբ հայացք գցեցի, հագիվ Աստծու թիկունքը (Ելք ԼԳ. 22–23) տեսա, այն էլ՝ Վեմով ծածկված (Ա. Կորնթ. Ժ. 4), այսինքն՝ հանուն մեզ մարմնացած Բանին: Եւ դուզն-ինչ ընկճվելով՝ հայում եմ ոչ թե առաջին եւ մաքրամաքուր բնությունն իր իսկ, այսինքն՝ Սուրբ Երրորդությունը ճանաչելին. հայում եմ ոչ թե առաջին վարագույրի հետեւի եւ Քերովբեների ծածկածը, այլ միայն եզրայինը՝ մեզ ամենամոտը: Իսկ դա, ինչքան գիտեմ, այն վեհությունն է կամ, ինչպես ասում է աստվածաշնորհ Դավիթը, հրաշալիությունը (Սաղմ. Լ. 2), որը տեսանելի է Աստծու ձեռամբ ստեղծված եւ առաջնորդվող արարածների մեջ: Հենց դա էլ «Աստծու թիկունքն» է, որն Աստծուց հետո մեզ գիտություն է շնորհում Նրա մասին, ինչպես որ արեգակի արտացոլանքն ու պատկերը ջրերում ցույց են տալիս տկար տեսողություն ունեցողներին, որոնք ի վիճակի չեն նայելու նրան, քանզի լույսի պայծառությունը շլացնում է զգայարանը: Արդ, դու էլ աստվածաբանի՞ր, թեկուզ Մովսեսն ու փարավոնի աստվածը լինես, թեկուզ Պողոսի հետ մինչեւ երրորդ երկինք (իմա՛ դրախտ) հափշտակված եւ «անպատում խոսքեր» (Բ. Կորնթ. ԺԲ. 4) լսած լինես, թեկուզ դրանից էլ վեր բարձրացած լինես՝ հրեշտակների կամ հրեշտակապետերի տեսությանն ու (մինչեւ իսկ) դասին էլ արժանացած: Բանն այն է, որ բոլոր երկնային, իսկ երբեմն էլ վերերկրային [էակները], թեեւ մեր համեմատ գերիվեր են բնությամբ եւ մոտ Աստծուն, այդուհանդերձ, հեռու են Աստծուց եւ Նրան անըստզյուտ ճանաչելուց՝ թեեւ առավել բարձր են մեր բարդ, ստոր եւ վար ձգող կազմությունից:

4. Արդ, կրկին պիտի գանք սկզբին: «Աստծուն ճանաչելը դժվարին է, իսկ Նրանից ճառելը՝ անհնար», – այսպես էր իմաստասիրում հելլեն աստվածաբաններից մեկը³, ինչը, ինչպես ես եմ կարծում, «դժվարին» ասաց ոչ առանց խորամանկության, որպեսզի իրեն պատվեն որպես հասու եղածի, իսկ «անճառելի» անվանեց, որպեսզի խուսափի մերկացնող քննադատությունից: Իսկ ինչպես որ ես եմ այդ մասին խորհում՝ ճառելն անհնար է, իսկ հասկանալը՝ առավել եւս անհնար: Արդ, այն, ինչ ըմբռնված է բանականությամբ, ապա բնավ չիսթարված լսողություն եւ բուր

³ Պլատոնն իր «Տիմեոսում»:

միտք ունեցողն էլ, թերեւս, բացատրի նաեւ խոսքի [իմաստը], եթե ոչ լիովին բավարար, ապա գոնե մակերեսային կերպով: Սակայն սույն վսեմ առարկան մտքով ընկալելու բացարձակապէս ուժ ու միջոց չունեն ոչ միայն ընդարմացած եւ զառամյալ, այլեւ նույնիսկ բավական վեհանձն եւ աստվածասեր մարդիկ, ինչպէս նաեւ ամենայն ծնված բնություն, որի համար այս խավարը՝ այս կոպիտ մարմինը, խոչընդոտում է ճշմարտությանը հասու լինելուն: Չգիտեմ՝ արդյոք կարող են այս բարձր ու հոգեւոր բնություն ունեցող էակները, որոնք, մոտ լինելով Աստծուն եւ կատարյալ լույսով լուսավորված լինելով, տեսնեն Նրան եթե ոչ ամբողջովին, ապա մեզանից առավել անըստգլուտ եւ որոշակի՝ ընդ որում՝ ըստ իրենց դասի պատկանելության՝ մեկը մյուսից առավել կամ պակաս:

5. Իսկ ինչ վերաբերում է մեզ, ապա ոչ միայն «Աստծու խաղաղությունը, որ վեր է քան ամենայն միտք եւ հասկացողություն» (Փիլ. Դ. 7), չեն կարող ըստ խոստման (Ա. Կորնթ. Բ. 9, Եսայի ԿԴ. 4) արդարների ո՛չ աչքերը տեսնել, ո՛չ ականջները լսել, ո՛չ միտքը պատկերացնել, այլեւ նույնիսկ մեզ համար հազիվ հնարավոր լինի ստույգ ճանաչել արարածներին: Աստ էլ ես միայն ստվերներ տեսնում, ինչը հավաստիացնում է Սաղմ. Ը. 4-ի խոսքերն ասողը. «Տեսնում եմ երկինքը՝ Քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք Դու հաստատեցիր», եւ դրանց մեջ հարատեւ գործող օրենքները, քանզի խոսում է որպէս ոչ ներկայումս տեսնող, այլ երբեւէ տեսնելու հույս տաժող: Բայց արարվածների համեմատությամբ՝ մտքի համար առավել անընդգրկելի եւ անհասանելի է այն բնությունը, որը գերիվեր է նրանցից, եւ որից որ նրանք առաջացան:

6. Իսկ անհասանելի եմ անվանում ոչ թե այն, որ Աստված գոյություն ունի, այլ այն, թե ինչ է Նա: Արդ, զուր չէ մեր քարոզությունը, ունայն չէ մեր հավատը, եւ այդ չէ ուսուցանում մեր վարդապետությունը: Մեր շիտակությունից անաստվածության եւ զրպարտության առիթ մի՛ ստեղծիր, մի՛ բարձրամտիր մեզ վրա, որ խոստովանում ենք մեր անգիտությունը: Բավական մեծ տարբերություն կա ինչ-որ բանի կեցության մեջ համոզված լինելու եւ դրա որպիսությունն իմանալու միջեւ: Աստված է ամենայնի ստեղծագործական եւ բովանդակալից պատճառը. եւ այս են վկայում մեր ուսուցիչներն ու տեսողությունը⁴ եւ բնական օրենքը, տեսանելիին ուղղված տեսողությունը, որը գեղեցիկ հաստատված է եւ ի կատար է ածում

⁴ Արտաքին փորձը:

յուր ընթացքը կամ, այսպես կասեմ, անշարժ շարժվում է եւ ընթանում. [այդ է] բնական օրենքը, որի տեսանելի եւ վայելուչ լինելուց մտահանգում ենք դրա նախապատճառին: Ուրեմն, ինչպե՞ս կարող էր տիեզերքը գոյանալ եւ կանգուն մնալ, եթե Աստված ամեն ինչ ի կատար չածեր եւ չպահպաներ: Ով տեսնում է գեղեցիկ վերջնամշակված տավիղը, նրա գերազանց կառուցվածքն ու դասավորությունը, որեւէ այլ բան չի պատկերացնում, քան տավիղը պատրաստողին եւ տավիղ նվագողին, եւ մտքով հարում է նրան, թեպետ, թերեւս, անձամբ նրան չի էլ ճանաչում: Այդպես եւ մեզ համար պարզորոշ է ստեղծագործական զորությունը՝ արարչությունը շարժման մեջ դնող եւ պահպանող, թեեւ մտքով մտահասանելի չէ: Ծայրահեղորեն անմիտ է նա, որ հետեւելով բնական նշաններին, ինքնին չի բարձրանում մինչեւ այս ճանաչողությունը:

Ասենք, որ Աստված տակավին այն չէ, ինչ մենք պատկերացնում ենք «Աստված» հասկացության ներքո, կամ ինչով մենք Նրան պատկերել ենք, կամ ինչպես որ նկարագրել է Նրա խոսքը: Իսկ եթե ոմն մեկը երբեւէ եւ որքան եւ իցե ընդգրկել է Նրան մտքով, ապա ինչպես այդ բանը կապացուցի: Ո՞վ է հասել իմաստության վերին սահմանին: Ո՞վ է երբեւէ արժանացել այդպիսի շնորհի: «Ո՞վ է «բացել» հասկացողության «բերանն» ու «Հոգին» ընդունել (Սաղմ. ՃԺԸ. 131), եւ այս Հոգու օգնականությամբ՝ ամեն ինչ «քննող» եւ իմացող «անգամ Աստծու խորունկ ծրագրերը» (Ա. Կորնթ. Բ. 10), ճանաչել Աստծուն, եւ այլեւս հարկ չկա, որ նա շարունակաբար ծավալվի, քանզի հասու են եղել ցանկալիներից վերջինին, առ որը միտում են եւ բովանդակ կյանքը, եւ մեծ խելքի բոլոր մտքերը:

7. Իսկ դու ի՞նչ պատկերացումներ կկազմես Աստծու մասին՝ դու, որ քեզ բոլոր փիլիսոփաներից ու աստվածաբաններից վեր ես դասում եւ անչափ պարծենում՝ մտահայեցության ամենայն եղանակի վստահելով: Ո՞ր կհասցնի քեզ քո հարցախույզ միտքը:

Աստվածությունը մարմին կանվանե՞ս: Այդ դեպքում ինչպե՞ս կանվանես [Նրան] անսահման՝ սահմաններ եւ ուրվագծեր չունեցող, անշոշափելի, անտեսանելի: Մի՞թե մարմիններն այդպիսին են: Ի՞նչ կամայականություն: Մարմինների բնությունն այդպիսին չէ: Թե՛ Աստվածությունը մարմին է, բայց ոչ անսահման, անչափ եւ այլն, այնպես որ Նա ոչ մի բանով չի գերազանցում մեզ: Ի՞նչ կոպիտ հասկացողություն: Եթե Աստվածությունն ուրվագծեր ունի, ինչպե՞ս մեծահարգ կլինի: Կամ ինչպե՞ս Նա զերծ կմնա նրանից, որ կազմված չլինի տարերքից՝ վերստին

դրանց չքայքայվելով եւ բնավ չկազմալուծվելով: Քանզի բարդությունը պայքարի սկիզբն է, պայքարը՝ բաժանման, բաժանումը՝ ավերման, իսկ ավերումը բոլորովին բնորոշ է Աստծուն եւ առաջին բնությանը: Այսպես ուրեմն, Նրանում բաժանում չկա, այլապես ավերում կլիներ. պայքար չկա, այլապես բաժանում կլիներ. բարդություն չկա, այլապես պայքար կլիներ: Ըստ այդմ՝ Աստվածությունը մարմին չէ, այլապես Նրանում բարդություն կլիներ: Աստ էլ կանգ է առնում խոսքը՝ վերջինից առաջինին դառնալով:

8. Ընդ որում՝ Աստծու հատկությունն է՝ ամեն ինչի մեջ թափանցել ու ամեն ինչ լցնել ըստ ասվածի. «Միթե երկինքն ու երկիրը Ես չեմ լցնում,— ասում է Տերը» (Երեմ. ԻԳ. 24), դարձյալ. «Տիրոջ Հոգին լցնում է Տիեզերքը» (Իմաստ. Ա. 7), հետեւաբար, ինչպես կպահպանվի տիեզերքը, եթե Աստված մի այլ բան սահմանափակում է Իրենով, իսկ Ինքը սահմանափակվում մի այլ բանով: Թե՛ կթափանցի ոչնչով չլցված աշխարհ, եւ մեզանում ամեն ինչ կոչնչանա ի անարգումն Աստծու, Որը մարմին կդառնա եւ կկորցնի Յուր ձեռամբ արարված ամեն ինչ. թե՛ մարմին կլինի ի թիվս այլ մարմինների, ինչն անհնար է. թե՛ կկցվի կամ կհակադրվի մարմիններին, թե՛ կխառնվի դրանց հետ, ինչպես հեղուկը, եւ մի այլ բան կբաժանի ու մի այլ բանով կբաժանվի, ինչն առավել անհեթեթ ու անիմաստ է, քան էպիկուրյան հյուլենները (ատոմները). այսպիսով՝ Աստծու նյութեղենության մասին ուսմունքն ի չիք է դառնում մեզանում՝ Ով ո՛չ թանձրությամբ է օժտված, ո՛չ էլ կապակցվածություն ունի: Իսկ եթե ասենք, թե Աստված աննյութական մարմին է, եւ ընդ որում, ինչպես կարծում են ոմանք, հինգերորդն ու շրջապատույտ գործողը (ենթադրենք ե՛ւ աննյութական, ե՛ւ հինգերորդ, իսկ եթե հաճո է, նույնիսկ անմարմին մարմին, քանզի նրանց խոսքերը ազատ են եւ կամայականորեն են կազմվում, իսկ իմ բանավեճը հիմա այդ մասին չէ), ապա շարժվողների եւ տեղափոխվողների ո՞ր տեսակին կպատկանի այս մարմինը: Չեմ էլ ասում, թե ինչ անարգություն է պնդելը, որ իբր թե Արարողն արարվածի հետ եւ Տանողը տարվողի հետ միանման են շարժվում, եթե նրանք այս բանն էլ նկատի ունենան: Դարձյալ. ի՞նչն է Նրան շարժման մեջ դնում: Ինչո՞վ է շարժվում ամենայնը: Ինչո՞վ է շարժման մեջ դրվում նաեւ այն, ինչ ամեն ինչ է շարժում: Ապա ի՞նչն է շարժում հենց այդ շարժողին, եւ այսպես՝ անվերջանալի կերպով: Ընդ որում՝ ինչպե՞ս Նա չպարփակվի անհրաժեշտաբար մի տեղում, եթե սոսկ ինչ-որ տեղափոխվող բան է:

9. Իսկ եթե ասեն, թե Աստված ինչ-որ մի այլ մարմին է, հինգերորդից զատ, թեկուզ, զորօրինակ հրեշտակային, ապա որտեղից է հայտնի, որ հրեշտակները մարմնավոր են, ինչպիսի՞ն են նրանց մարմինները, եւ ինչո՞վ է հրեշտակներից գերիվեր Աստված, Որին ծառայում են նրանք: Իսկ եթե գերիվեր է հրեշտակայինից, դարձյալ կբարձրացվի մարմինների անթիվ-անհամար շարանների հարցն ու դատարկաբանությունն այնպիսի անդունդ կառաջացնի, որի մեջ ոչ մի տեղ հնարավոր չի լինի կանգ առնել: Սրանից երեւում է, որ Աստված մարմին չէ: Այս բանը երբեք չի պնդել եւ հնարավոր համարել աստվածաշնորհ հայրերից եւ ոչ մեկը. այսօրինակ ուսմունքը մեր տանից չէ:

Իսկ եթե մարմնավոր չէ, ապա սա ո՞չ պատկերում է, ո՞չ ընդգրկում է ությունը, ինչպես նաեւ չի ընդգրկում խոսքի էությունը. անեղ է, անսկիզբ, անայլալելի, անապական եւ այն ամենը, ինչ ասվում է Աստծու եւ այն ամենի մասին, ինչ պատկանում է Նրան: Արդյոք էի բնությունն ու ինքնակայությունն արտահայտում է այն, որ Նա սկիզբ չունի, չի այլայվում, չի սահմանափակվում: Ընդհակառակը, նա, որ աստվածային մտքով է օժտված եւ կատարելագործվել է մտահայեցողության մեջ, պիտի տակավին շարունակի յուր մտածումներն ու քննությունները եւ ճանաչի բովանդակ կեցությունը: Քո խորհրդածության այս կամ այն առարկան նկարագրելու եւ բացատրելու համար բավական չէ ասել, որ դա մարմին է, կամ դա ծնված է, ընդհակառակը, եթե կամենում ես մտածած բաներն անըստգլուտ եւ պատշաճ կերպով սահմանել, ապա պիտի այս ստորոգյալների ենթականերին անուն դնես (քանզի սա մարմնավոր է՝ եւ ծնված է, եւ ապականացու. դա կամ մարդ է, կամ եզ, կամ ձի): Այսպես էլ աստ. էի բնությունը ճաշակողը կանգ չի առնի՝ ասելով, թե Նա ինչ չէ, այլ, ընդհակառակը, Նա ինչ չէին կհավելի նաեւ այն, թե ի՞նչ է Նա (մանավանդ որ մտքով ավելի դյուրին է ընդգրկել ինչ-որ մի բան, քան մերժել մեկ առ մեկ ամեն ինչ). կհավելի, որպեսզի բացառելով այն՝ ինչ չէ եւ թե ինչ է դրույթով մտածածը դառնա դյուրըմբռնելի: Իսկ եթե ինչ չէ ասողը լռություն պահպանի այն մասին, թե ի՞նչ է, այդպիսին վարված կլինի գրեթե այնպես, ինչպես, ասենք, այն հարցին, թե ինչքան կլինի երկու անգամ հինգը, պատասխանի՝ չի լինի ո՞չ երկու, ո՞չ երեք, ո՞չ չորս, ո՞չ հինգ, ո՞չ քսան, ո՞չ երեսուն, կարճ ասած, ոչ մի թիվ՝ տասը կամ տասնյակ պարունակող: Այնինչ չասել, որ հավասար է տասի, նշանակում է՝ չկանգնեցնել հարցնողի միտքը որոնելի վրա: Արդ, ինչպես որ ամեն ոք պարզ տեսնում է,

որ անհամեմատ դյուրին է եւ արագ ինչ էի միջոցով բացատրել խնդրո առարկան եւ այն, ինչ նա չէ, քան բացառելով այն, ինչ նա չէ՝ ցույց տալ, թե ինչ է նա:

10. Իսկ քանի որ Աստվածությունը, ըստ մեզ, մարմնավոր չէ, ապա դուզն-ինչ շարունակենք մեր ուսումնասիրությունը: Ոչ մի տեղ, թե ինչ-որ մի տեղ է գտնվում Աստված: Եթե ոչ մի տեղ, ապա ոմն հարցախույզ հարց կտա՝ իսկ ինչպե՞ս, ուրեմն, կարող է նախ գտնվել: Քանզի այն, ինչ գոյություն չունի, ոչ մի տեղ չի գտնվում, այդպես էլ, թերեւս, նաեւ այն, ինչը ոչ մի տեղ չկա, բնավ գոյություն էլ չունի: Իսկ եթե ինչ-որ տեղ է, ապա այն բանի համար, որ գոյություն ունի, անկասկած, Նա կամ աշխարհում է, կամ աշխարհից վեր: Եթե աշխարհում, ապա կամ ինչ-որ բանում, կամ ամենուր: Եթե ինչ-որ բանում, ապա սահմանափակված կլինի փոքր-ինչով: Իսկ եթե ամենուր, ապա ավելին, քան ինչ-որ բանով, այլեւ շատուշատ այլ բաներով, այսինքն՝ ինչպես որ բովանդակելին բովանդակողով, այնպես որ բովանդակ Աստված բովանդակ աշխարհով պիտի սահմանափակվի, եւ ոչ մի տեղ Նրանում սահմանափակումից թափուր չի մնա: Այսպիսի դժվարություններ են առաջանում, երբ պնդում ենք, որ Աստված աշխարհում է: Եւ մեկ հարց. որտե՞ղ էր Նա նախքան աշխարհի ստեղծումը: Սա եւս ոչ պակաս դժվարություններ կառաջացնի: Իսկ եթե Աստված գերիվեր է աշխարհից, ապա մի՞թե մի այնպիսի բան չկա, որ զատի Նրան աշխարհից: Ո՛ր է այդ՝ աշխարհից վեր ինչ-որ բանը: Ինչպե՞ս կարելի է պատկերացնել գերազանցողն ու գերազանցելին, եթե սահման չկա՝ այս ու այն բաժանող ու սահմանագծող: Թե՛ անհրաժեշտաբար պիտի միջավայր լինի, որով կսահմանափակվեն աշխարհն ու այն, ինչ գերիվեր է աշխարհից: Իսկ դա ոչ այլ ինչ չէ՞, քան այն տեղը, որից մենք խուսափում էինք: Դեռ չեմ խոսում այն մասին, որ Աստվածությունն անհրաժեշտաբար սահմանափակված կլինի, եթե մտքով ճանաչվի: Քանզի հասկացությունը եւս սահմանափակման տեսակ է:

11. Իսկ թե ինչու էի ես, հավանաբար, ավելիով խորհրդածում այս մասին, քան որքան հարկ է ժողովրդին լսելու, եւ հիմա էլ հետեւում եմ հաստատված խոսելաոճին, որում ոչ միայն դեն են նետված ազնիվն ու պարզը, այլեւ ներմուծված են խճճվածն ու առեղծվածայինը, որպեսզի ծառը պտուղներով կարելի լիներ ճանաչել, այսինքն՝ ըստ խոսքերի մթություն, մթովություն, որն այսօրինակ ուսմունքներ է կյանքի կոչում: Ոչ թե մտադրվել եմ ինքս իմ մասին մտքեր հայտնել, որ իբր թե արտասովոր բա-

ներից եմ բարբառում եւ լի եմ իմաստութեամբ՝ «բացահայտելով առեղծվածները եւ լուծելով խրթին բաները» (տե՛ս Դան. Ե. 12), ինչը Դանիելի մեծագույն հրաշքի բուն պատճառն է, այլ կամենալով բացատրել հենց այն, ինչը ենթադրվում էր շարադրել իմ խոսքով ամենասկզբում: Իսկ ի՞նչը հատկապէս: Այն, որ Աստվածութունն անհասանելի է մարդկային մտքին, եւ մենք ի վիճակի չենք ներկայացնել Նրան ամբողջովին եւ անըստզուտ:

Եւ Նա այդպէս անհաս է մնում ոչ նախանձի պատճառով: Արդ, նախանձը խորթ է Աստվածային բնութեանը՝ անկիրք, միակ բարի ու թագավորական, հատկապէս նախանձից արարածի նկատմամբ, որը հաշտ Աստծու ամեն բանից թանկարժեք է, որովհետեւ Բանի համար ի՞նչը կարող է առավել գերադասելի լինել բանական արարածներից: Ընդ որում՝ մեր արարումը բարութեան գազաթնակետն է: Սրա պատճառը նաեւ սեփական պատիւն ու փառքը չէ Նրա, որ լեցուն է (Եսայի Ա. 11), կարծես թե անհասութիւնը կարող է Նրան մեծահարգութիւն եւ վեհութիւն հաղորդել: Այնպէս որ հանուն գերադասութեան սեփական ճանապարհ գցելը՝ այլոց դրան հասնելը խոչընդոտելու համար, բնորոշ է միմիայն սոփեստին, բայց խորթ ոչ միայն Աստծուն, այլեւ փոքրիշատե բարբարո մարդուն:

12. Իսկ թե սրա համար այլ պատճառներ էլ կան, ապա կարող է պատահել, դրանց քաջատեղյակ են Աստծուն առավել մոտ կանգնածները՝ Նրա անքնին էութեան մեջ մտքով թափանցածներն ու խորամուխ եղածները, եթե, իհարկե, գտնվեն մարդիկ՝ այդ աստիճանի հաջողութեան հասած առաքինութիւնների անդաստանում, որոնք, ըստ Հոբի գրքի, «շրջել են խորքերն անդունդների» (տե՛ս Հոբ. ԼԸ. 16): Իսկ ինչքան կարող ենք մենք ճանաչել, մենք, որ դժվարամատչելին փոքր չափով ենք չափում, ինչը, գուցե, նրա համար է հարկավոր, որ ձեռքբերման դյուրութիւնը դյուրին չդարձնել նաեւ ձեռք բերվածի կորուստը: Արդ, սովորաբար, ինչպէս որ դժվարութեամբ ձեռք բերվածը դյուրութեամբ ենք պահպանում, այնպէս էլ դյուրութեամբ ձեռք բերվածը շատ շուտ արհամարհում ենք՝ կրկին այն ձեռք բերելու հնարավորութեան պատճառով: Այդ է պատճառը, որ խելացիները բարի են համարում բարի ստանալու դժվարութիւնը:

Գուցե այս բանի կարիքը կա նաեւ այն պատճառով, որ արուսյակի (իմա՛ անկյալ հրեշտակի) հետ նույն բախտին չենթարկվենք, բովանդակ լուսը ընդունելով՝ «չընդվզենք Ամենակալ Տիրոջ դեմ» (Հոբ. ԺԵ. 25) եւ գոռոզութիւնից թշվառագույն անկումով չընկնենք: Իսկ գուցե այն բանի համար էլ է պետք, որ աստ մաքրագործվելով ու համբերութեամբ

բաղձալիի իրականացմանը սպասելով՝ անդ կրած շարժարանքների ու լուսավոր կյանքի համար ինչ-ինչ պարզեւների արժանանանք: Այս պատճառով էլ մեր ու Աստծու միջեւ նյութական խավար կա, ինչպես հին ժամանակներում՝ եգիպտացիների եւ հրեաների միջեւ: Հենց սա էլ, թերեւս, նշանակում է. «Խավարը Իր համար ծածկույթ դարձրեց» (Սաղմ. Ժէ. 12), այսինքն՝ մեր պարարտամարմնությունը, որի միջից քչերի աչքերն են սկսում բացվել, այն էլ՝ քիչ:

Իսկ ով մտահոգված է այսու, թող իմաստասիրի՝ խորհրդածության վերին սահմանին միտելով: Իսկ մեզ՝ «երկրի կալանավորներին», ինչպես ասում է աստվածաշնորհ Նրեմիան (Ողբ Գ. 34), մեզ, որ ծածկված ենք կուպիտ մարմնով, հայտնի է, թե ինչպես որ անհնար է սեփական ստվերից առաջ անցնել, որքան էլ որ աճապարենք, որովհետեւ որքան որ առաջ ենք ընկնում, նույնքան էլ հետ ենք մնում, կամ ինչպես որ տեսողությունը չի կարող ընդգրկել տեսանելի առարկան առանց լույսի եւ օդի միջնորդության, կամ ինչպես ջրային կենդանիները ջրից արտաքո ապրել չեն կարող, այնպես էլ մարմնում գտնվողի համար որեւիցե հնարավորություն չկա հաղորդակցվելու մտահայելիի հետ առանց որեւիցե մարմնական բանի միջնորդության: Արդ, միշտ էլ ինչ-որ բան կգերազանցի մեզ (իմա՛ մեր ճանաչողական կարողությունները), որքան էլ որ մեր միտքը զորանա հարելու նմանին կամ անտեսանելիին՝ հնարավորինս շատ հեռանալով տեսանելիից եւ ինքն իր մեջ ներամփոփվելով: Եւ այս բանը կտեսնենք հետեւյալում:

13. Արդյոք հոգին, հուրը, լույսը, սերը, իմաստությունը, միտքը, խոսքը եւ սրանց նմաններն առաջին բնության անվանումներն են: Եւ ինչ: Կարո՞ղ ես պատկերացնել հոգին առանց շարժման ու ծավալման, կամ կրակը՝ աննյութական եւ առանց վեր խոյացման, առանց իրեն բնորոշ գույն ու ուրվագծի, կամ լույսն առանց օդի հետ խառնման՝ առանձին այն բանից, ինչն ասես կյանքի է կոչում նրան, այսինքն՝ ինչը որ լույս է տալիս: Իսկ ինչպիսի՞ն ես պատկերացնում խելքը: Արդյոք մեկ այլ բանում (իմա՛ անդաստանում) չէ՞, որ դրսևորվում է: Եւ մտքերը՝ դադար առնող կամ ի հայտ եկող, ըստ քեզ, մի՞թե շարժում չեն: Կպատկերացնե՞ս ինչ-որ մի խոսք՝ բացի մեզանում լռություն պահպանողից կամ զեղվողից (չեմ շտապում ասել՝ անհետացողից): Իսկ քո ըմբռնմամբ՝ ի՞նչ է իմաստությունը, եթե ոչ աստվածային եւ մարդկային առարկաների շուրջ դատողություններ անելու հմտություն: Մի՞թե այդպես էլ ճշմարտությունն ու սերը գովա-

կան տրամադրվածություններ չեն, որոնք ընդգրկմանում են՝ մեկը ստին, մյուսը ատելությունը, եւ ինչպիսին որ իրենք են լինում լարված ու թուլացած, առաջանում ու կանգ առնում, այդպես էլ իրենց նման են դարձնում մեզ ու փոխում՝ մեր մեջ առաջացնելով այն, ինչ ներկերը մարմինների վրա: Եւ կամ հարկ կա՞ քննելու Աստվածությունը, ըստ կարելվույն, Ինքն Յուր մեջ՝ հրաժարվելով այս պատկերացումներից եւ դրանցից ինչ-որ մի միասնական գաղափար կազմելով: Բայց սա մտքի ինչ կառուցվածք է՝ ի մի բերված այս պատկերացումներից, որոնք, սակայն, այն չեն, ինչ [իրականում] կան: Կամ ինչպե՞ս այս միասնականը, որն իր բնությամբ ո՛չ բարդ է, ո՛չ էլ նկարագրելի, յուր մեջ կներառի կատարելապես բոլոր այս պատկերացումներն ու դրանցից յուրաքանչյուրը: Ինչքան դժվար կլինի մեր մտքին մարմնականության շրջանից դուրս գալը, քանի դեռ իր տկարության պայմաններում քննում է այն, ինչ իր ուժերից վեր է:

Քանի որ ամենայն բանական բնություն թեեւ ձգտում է առ Աստված եւ առ նախապատճառ, բայց, ըստ իմ բացատրությունների, չի կարողանում հասու լինել դրան, ապա հալումաշ լինելով իր ցանկությունից, ասես մահառաջի տվայտանքների մեջ գտնվելով եւ չկարողանալով տանել այդ տվայտանքները՝ մի նոր նավարկության է ձեռնամուխ լինում, որպեսզի կա՞մ իր հայացքը տեսանելիի վրա ուղղի եւ դրանից ինչ-որ մի բան իր համար աստված դարձնի (ընդ որում՝ սխալ հաշվարկով, քանզի տեսանելին ավելի բարձր ու ավելի աստվածանման է, քան տեսնողը, այն էլ՝ այն չափով, որ տեսնողը պաշտի, իսկ տեսանելին ընդունի այդ պաշտամունքը) կա՞մ տեսանելիի գեղեցկությունից եւ վայելչությունից ճանաչի Աստծուն, տեսողությունը որպես առաջնորդ օգտագործի առ անտեսանելի, բայց եւ տեսանելիի մեծավայելչության մեջ աչքաթող չանի Աստծուն:

14. Հենց այս պատճառով էլ սկսեցին պաշտել՝ մեկը՝ արեգակին, մյուսը՝ լուսնին, մեկ ուրիշը՝ աստղերի բազմությանը, ոմն մեկն էլ՝ երկնքին՝ լուսատուներով հանդերձ, որոնց շնորհեցին աշխարհում շարժումների քանակի ու որակի վրա իշխելու զորությամբ: Այլք պաշտեցին հողը, ջուրը, օդը ու հուրը, քանզի դրանք անհրաժեշտ են ամեն ինչի համար, եւ առանց դրանց մարդկային կյանքը կանգ կառնի. ոմանք էլ՝ ինչ պատահեց տեսանելի առարկաների շարքում՝ աստված համարելով այն ամենը, ինչ հաշս նրանց գեղեցիկ էր թվում: Նրանցից ոմանք սկսեցին պաշտել նույնիսկ գեղատեսիլ պատկերներ ու քանդակներ՝ նախ՝ իրենց հարազատների, — սրանք մարդիկ էին՝ անչափ անձնատուր եղած սգին եւ զգայա-

կանությունը եւ մեռյալներին հուշարձաններով պատվելու ցանկությամբ բռնված, ապա եւ՝ օտարների – եւ դա արեցին առաջինների սերունդները՝ իրենցից հեռավոր ժամանակներով բաժանված, իսկ արեցին այն պատճառով, որ չգիտեին երեւոյթի բուն էությունը, եւ ավանդությամբ իրենց հասած մեծարանքն ասես օրինական դարձավ եւ անհրաժեշտություն, երբ ժամանակով հաստատված սովորությունն օրենքի ուժ ստացավ: Բայց կարծում եմ, որ ոմանք էլ, ցանկանալով հաճոյանալ իշխանավորներին, փառաբանել ուժը, իրենց զարմանքն արտահայտել նրանց մեծարած գեղեցկության հանդեպ, դրանց հընթացս ժամանակի աստված դարձրին, իսկ այս գայթակղությանն իր նպաստը բերեց ինչ-որ մի առասպել:

15. Իսկ նրանց մեջ կային այնպիսիք, որոնք առավել էին անձնատուր եղել կրքերին, աստվածներ էին ճանաչում կրքերը եւ իբրեւ աստվածների սկսեցին մեծարել ցասումը, սպանությունը, տուփանքը, հարբեցողությունը, չգիտեմ, գուցե, դրանց նման ուրիշ այլ բաներ էլ, քանզի դրանց մեջ էին գտնում սեփական մեղքերի արդարացումը (անշուշտ, ոչ բարի եւ ոչ արդար): Սրանցից մի քանիսին թողեցին երկրի վրա, մյուսներին (ինչը միակ ողջամիտ բանն է) թաքցրին հողի տակ, իսկ ուրիշներին էլ (ինչը զավեշտական է) երկինք բարձրացրին: Հետագայում ենթարկվելով թափառական երեւակայության կամայականությանն ու քմահաճույքներին՝ մոգոնվածներից յուրաքանչյուրին ինչ-որ մի աստծու կամ այսի անուն տվեցին եւ կուռքեր կանգնեցնելով, որոնք գրավում էին իրենց մեծագնությամբ՝ օրինականացրին նրանց արյունով եւ ճարպով մեծարանքը, իսկ այլք նույնիսկ ամենազազրելի գործերով՝ եւ խեղադրության հասնող բաներով, եւ մարդասպանությամբ [իմա՝ մարդկային զոհաբերություններով]: Արդ, այսպիսի աստվածներին հենց այսպիսի պատիվներ էին վայել: Մինչեւ իսկ խայտառակվում էին այնու, որ Աստծու փառքը մատուցում էին ծովային հրեշներին, չորքոտանիներին, զեռուններին, այն ամենին, ինչն իր տեսակի մեջ զազրելի ու զավեշտական է, այնպես որ դժվար է որոշել, թե պաշտողներն են արժանի առավել մեծ արգահատանքի, թե՞ պաշտվողները: Բայց առավել հավանականն այն է, որ առավել արհամարհելի են այսպիսի շաստվածների սպասավորները, մանավանդ հենց այնու, որ ի բնե բանական եւ Աստծուց շնորհներ ստացած լինելով՝ լավագույնից գերադասում էին վատագույնը: Եւ դա չարի խորամանկություններից մեկն է, որը բարին չարի է վերածել, էլ չխոսենք նրա շարագործության բազմաթիվ այլ օրինակներից: Յուր իշխանության

ներքո մարդկանց գրավելու համար՝ նա օգտվեց նրանց՝ Աստված գտնելու թյուր ըմբռնված ձգտումից եւ, խաբելով բաղձալիի մեջ, ցրեց նրանց զանազան հորձանուտներով մեկ եւ զահավեժ արեց մահվան ու կործանման միեւնույն անդունդի մեջ:

16. Այդպես պատահեց նրանց հետ, սակայն մեր առաջնորդը բանականությունն է: Իսկ քանի որ մենք էլ ենք Աստծուն փնտրում, բայց հնարավոր չենք համարում, որ ինչ-որ մի բան կարող է առանց առաջնորդի եւ կառավարչի լինել, ուստի բանականությունը, զննելով տեսանելին, քննելով այն ամենը, ինչ ի սկզբանե է, աստ կանգ չի առնում: Բանն այն է, որ հիմքեր չկան [աստվածային] գերիշխանություն վերագրելու նրան, ինչը զգայարանների վկայությամբ շարքային բան է: Ուստի, նա տեսանելիի միջոցով տանում է առ այն, ինչը վեր է տեսանելիից, եւ տեսանելիին կեցությամբ օժտում: Ինչո՞վ են կարգի բերված երկնայինն ու երկրայինը, օդում եւ ջրի տակ ամփոփվածը, այս հարցին ավելի լավ է պատասխանել այնու, ինչը սրանցից էլ նախասկզբնական է, այն է՝ երկինքը, երկիրը, օդն ու ջուրը: Ո՞վ է խառնել եւ բաժանել դա: Ո՞վ է պահպանում դրանք իրենց փոխադարձ կապի, հարամերձության եւ ներդաշնակության մեջ (գտնում եմ այս բանն ասողին, թեկուզեւ յուրային չլինի): Ո՞վ է սրանց շարժման մեջ դրել եւ ապահովում անդադրում եւ անարգել ընթացքը: Ո՞չ արդյոք այս ամենի արվեստագետը, ո՞չ նա, որ այս ամենի մեջ օրենք է հաստատել՝ ըստ որի էլ ամենայն ինչ շարժվում ու կառավարվում է: Ո՞վ է այս ամենի վարպետը: Արդյոք ո՞չ նա, որ արարել է եւ կեցությամբ օժտել այս ամենը: Արդ, այս ուժը հարկ չկա պատահականությունը վերագրել: Ենթադրենք, որ կեցությունը պատահականությամբ է պայմանավորված, այդ դեպքում ումի՞ց է կարգված կարգունկանոնը: Եթե կուզեք, այդ էլ կզիջենք պատահականությանը. այդ դեպքում ո՞վ է պահում-պահպանում այն օրենքները, ըստ որոնց ամեն ինչ նախասկզբնապես կյանքի կոչվեց: Ուրիշ մեկը, թե՞ պատահականությունը: Իհարկե, ուրիշ մեկը, այլ ոչ թե պատահականությունը: Ո՞վ է, ուրեմն, այդ ուրիշը, եթե ոչ Աստված: Այսպես տեսանելիից մեզ առ Աստված բարձրացրեց աստվածաշնորհ եւ բոլորին ի ծնե հատուկ բանականությունը՝ մեր միջի նախասկզբնական եւ բոլորին շնորհված օրենքը:

17. Ասվածը կրկենք սկզբից: Աստծուն Յուր բնությամբ եւ էության մարդկանցից եւ ոչ մեկը երբեք չի տեսել եւ , իհարկե, չի տեսնի: Իսկ թե երբեւիցե գտնի էլ, թող այս մասին ցանկացողներն իրենց պրպտումներն

անեն ու իմաստասիրեն: Իսկ կգտնի, ինչպես ես եմ խորհրդածում, երբ այս աստվածանմանն ու աստվածայինը, այսինքն՝ մեր միտքն ու մեր խոսքը, կմիավորվեն իրենց համանմանի հետ, երբ պատկերը կբարձրանա առ Սկզբնապատկեր, առ Որին նա ներկայումս ձգտում է: Եւ սա, ինչպես կարծում եմ, արտահայտվում է այն չափազանց իմաստուն ուսմունքում, ըստ որի՝ այնժամ կճանաչենք, որքան որ ինքներս ճանաչված կլինենք (Ա. Կորնթ. ԺԳ. 12): Իսկ այն, ինչ ներկա կյանքում հասնում է մեզ, բարակ շիթ է եւ ասես մեծ լույսի դույզն-ինչ արտացոլանք:

Ուստի, եթե մեկը ճանաչել է Աստծուն, եւ վկայվել է, որ հասու է եղել այդ ճանաչողությանը, ապա այդ ճանաչողությունը վերագրվում է նրան այն առումով, որ ընդամենը համեմատելի է մեկ ուրիշի՝ ոչ այնքան լուսավորյալի հետ, ինչից էլ պարզվում է, որ նա հաղորդակից է դարձել մեծ լույսին: Եւ այսպիսի գերազանցությունը ճանաչված է որպես կատարյալ, որն իրականում կատարյալ էլ չէ, այլ պարզապես համեմատելի է մերձավորի ձեռքբերումների հետ:

Շարունակությունը՝ հաջորդիվ



ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

ՊԱՐՏԱՎԱՐ

Սկիզբը՝ 2023 թ. թիվ Դ., է., Թ., ԺԱ.:

ԳԼՈՒԽ Է. (Բ. ՄԱՍ)

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿԱՔՆԱԿՆԵՐԻՆ՝
ՔՐԻՍՏՈՍԻ ՄԻՈՒԹՅԱՆ (ՄԵԿ ԲՆՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկաբնականներին ասա՛նաեւ, որ մենք՝ հայերս, որ ամեն օր երգում ենք «Սուրբ Աստված»-ը՝ ասելով, թե՛ «Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ», այդպիսով կամենում ենք ասել, թե՛ «ով Քրիստոս Աստված մեր, Դու, որ ըստ ամենայնի սուրբ եւ անմեղ ես, հանուն մեզ «մեղավոր» եւ «հանցավոր» կոչվեցիր: Դու, որ Քո կատարյալ սրբությամբ հանդերձ նաեւ հզոր ու ամենակարող ես, հանուն մեզ կամավորաբար տկարացար եւ չարչարվեցիր Քո արարածների ձեռքով ու մինչեւ իսկ խաչվեցիր: Դու, որ Քո այդ կատարյալ հզորությամբ հանդերձ նաեւ մշտապես կենդանի եւ անմահ ես, հանուն մեզ մահացար ու մեռար: Արդ, քանի որ այս ամենը կամավորաբար եւ հոգաբարձությամբ հանձն առար հանուն մեզ, հիշիր Քո այդքան չարչարանքներդ եւ խաչվելդ ու ողորմիր մեզ: Որովհետեւ մենք հավատում ենք խաչալիդ որպէս սուրբ Աստված, հզոր Աստված եւ անմահ Աստված», որ թեպետ հանուն մեզ խոնարհվեցիր, տկարացար, ինչպէս մեղավոր ու հանցավոր մեկը՝ խաչվեցիր եւ մեռար, սակայն Դու միեւնույն սուրբ, հզոր ու անմահ Աստվածն ես եւ ողորմիր մեզ՝ Քեզ հավատացողներին»:

Այժմ ասա, ո՛վ երկաբնակ, դու, որ հրաժարվում ես այս ամենից ու այդպէս չես խոստովանում եւ դեռ մեզ էլ ծաղրում ես այդպէս խոստովանելու համար, վերոնշյալ խոսքերիցս ո՞ր մեկն ես դու ուրանում եւ «խլում» Քրիստոսից, սուրբ, հզոր եւ անմահ Աստված լինելը, թե՛ խաչվելը, պատասխան տուր ինձ: Սուրբ, հզոր եւ անմահ Աստված լինելն է սուտ, թե՛ խաչվելը: Պապանձվիր, ուրեմն, որովհետեւ պատասխանելու ոչինչ չունես: Քանի որ ուղղափառ քրիստոնյայի հավատը սրա վրա իսկ է հիմնված ու հաստատված, թե՛ Քրիստոս Աստված է, եւ որ սուրբ, հզոր ու անմահ Աստված է,

եւ նույն ինքը՝ Քրիստոսն խաչվեց: Իսկ դու, եթե այսպես չես հավատում, ուրեմն դուրս ես այս հավատից:

Եւ այն, որ ասում եմ, թե դու այս հավատից դուրս ես գտնվում, մի՛ կարծիր, թե իզուր եմ ասում, քանի որ Քաղկեդոնի ժողովով դուք արտաքսվեցիք այս հավատից՝ խոտորվելով առաջին սուրբ հայրերի շավիղներից: Քանի որ առաջին երեք սուրբ ժողովները Հավատո հանգանակի մեջ այսպես են դավանում, թե. «Հավատում ենք մեկ Տեր Հիսուս Քրիստոսին, Աստծու Որդուն՝ ծնված Հայր Աստծուց, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, էակից Հորը եւ Հոգուն: Որ հանուն մեր փրկության մարմնով ծնվեց Սուրբ Կույսից, չարչարվեց ու խաչվեց, մեռավ եւ թաղվեց, Հարուժյուն առավ ու Համբարձվեց երկինք եւ բազմեց Հոր աջ կողմում»: Ահա՛ նրանք էլ նույնն են ասում՝ ճշմարիտ Աստված էր եւ խաչվեց, ու ոչ թե ուրիշ այլեւայլություն: Մինչդեռ դու ասում ես՝ «միայն մարդը խաչվեց»:

Եւ սուրբ Իգնատիոս Աստվածազգյացը՝ Անտիոքի հայրապետը, որն ականատես էր եղել Քրիստոսին ու Նրա առաքյալներին, տեսնում էր հրեշտակների զորքերը, որոնք եռյակ սրբասացությանմբ օրհնաբանում էին Ամենասուրբ Երրորդությանը՝ մեկ Տերությանը վերաբերելով, եւ նույնը դարձյալ՝ Որդու վերաբերությանմբ էին եռյակ սրբասացությանմբ օրհնաբանություն մատուցում: Սա սուրբ Իգնատիոս Աստվածազգյացի մտքում տպավորեց, որ այդտեղ խորհրդածությունը հենց Քրիստոսի մասին էր: Այդ իսկ պատճառով էլ Անտիոքի բոլոր եկեղեցիներին էլ ավանդեց, որ այդ նույն սրբասացությունը երեկոյան եւ առավոտյան Քրիստոսի վերաբերությանմբ երգեն՝ «որ խաչվեցիր»-ի հետ, ու դրա համար էլ բոլոր ասորիները նույնպես մինչեւ այսօր պահում են այդ նույն ավանդությունը: Այդպես նաեւ բոլոր Ուղղափառ Եկեղեցիներին նրա կողմից ավանդվեց այդ նույնը երգել: Նրանից վերցրեց նաեւ Սուրբ Հովհան Ոսկեբերանը եւ սահմանեց, որ այդ նույն սրբասացությունը գիշերապաշտոնի ժամանակ երգեն ի դեմս Երրորդության՝ ընդդեմ արիոսականների, իսկ առավոտյան երգեն ի դեմս Որդու. «Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ» (ամբողջությամբ տե՛ս Սոկրատ պատմագրի երկում):

Դարձյալ, Կ. Պոլսի Պյուռհոս պատրիարքը (որը քաղկեդոնական էր) մեր սուրբ Կոմիտաս հայրապետին հարցրեց «Սուրբ Աստված»-ը «որ խաչվեցար»-ով հանդերձ ասելու պատճառը: Մեր Սուրբ Կոմիտաս հայրապետը նրան պատասխանեց զորավոր խոսքերով՝ ըստ իր աստվածատուր

շնորհների, եւ նրան գրեց, թե՝ «Մենք այս ավանդույթունն ընդունել ենք նախեւառաջ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչից, որն ինքն այդպես էր ասում, ու մեզ էլ այդպես ավանդեց: Նաեւ վկայութիւն ունենք ձեր երանելի նախնիների գրութիւններից ու մանավանդ Կ. Պոլսի պատրիարք Հովհան Ոսկեբերանից եւ Հռոմի Նեկտարիոս հայրապետից, որոնք այդ նույնն ասացին ու ավանդեցին ապագային: Նրանք էլ դա ուսանել էին սուրբ առաքյալներից, որոնք իրենց ժամանակին կանոնակարգել էին շորեքշաբթի եւ ուրբաթ օրերին երգել սուչնը: Քանի որ Նեկտարիոսը գրում է, թե «չէին կարողանում աստվածային մարմինը խաչից իջեցնել, որովհետեւ հրացայտ փայլատակումներ էին ճառագայթում գամերի ու գեղարդի խոցած մասերից: Այդ ժամանակ Հովսեփը, ծնկի գալով, տարածեց իր ձեռքերն ու աղոթեց այսպես. «Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ», եւ այդպես երեք անգամ կրկնելով՝ Քրիստոսի մարմինն իջեցրեց խաչից: Դրա համար էլ սուրբ առաքյալները կանոնակարգեցին այդպես երգել»:

Իսկ Սուրբ Աստվածածնի վերափոխման ժամանակ, երբ սուրբ առաքյալները երեք օր հետո սուրբ Բարդուղիմէոսի խնդրանքով բացեցին գերեզմանը, այնտեղ չգտան մարմինը, եւ Սուրբ Հոգու ներգործութեամբ հասկացան, որ երկինք է վերափոխվել: Ապա սուրբ Թովմաս առաքյալն այսպես աղոթեց. «Փառավորյալ եւ օրհնյալ միշտ սուրբ Կույս Աստվածածին Մարիամ, Մայր Քրիստոսի, մատուցիր մեր աղաչանքները քո Որդուն եւ մեր Աստծուն»: Այս խոսքերն առաքյալները վերցրին ու որպէս կցորդ հավելարդեցին Հովսեփի աղոթքին՝ այդ խնդրանքն էլ ուղղելով Սուրբ Աստվածածնին: Այս բոլորն ամբողջովին գրի են առնված Հռոմի Հովիոս հայրապետի գրքում, որ կոչվում է «Կանոնների լրումը»: Եւ Եփեսոսի սուրբ Ժողովն էլ այս նույնը հաստատեց ընդդէմ Նեստորի՝ դավանելով նույն Քրիստոսին՝ որպէս Երրորդութիւնից մեկը, Որ եւ խաչվեց: Ըստ այդմ՝ նաեւ սուրբ Կյուրեղն ասաց ժամամուտի մեջ. «Միածին Որդի եւ Բանդ Աստված»՝ կոչելով Նրան որպէս «Սուրբ Երրորդութիւնից Մեկը՝ ծնված Կույսից եւ խաչված», ինչպէս որ դուք էլ Պատարագի ժամանակ ասում եք, սակայն չեք հավատում:

Այդպէս էր սուրբ նախնիների սովորութիւնը մինչեւ Քաղկեդոնի ժողովը: Եւ դա ապականիչ ժողով էր, քանի որ մեկ Քրիստոսին երկուսի բաժանեցիք ու խաչվածին որպէս լոկ մարդ դավանեցիք, ինչի պատճառով էլ «որ խաչվեցիր»-ը ջնջեցիք «Սուրբ Աստված»-ի միջից, դրա հետ մեկտեղ

էլ՝ սուրբ Աստվածածնին ուղղված «Փառավորյալ...» գովեստն ի չիք դարձրիք՝ կարծես կամենալով ասել, թե «ո՛չ ծնողին ենք որպես Աստվածածին խոստովանում եւ ո՛չ էլ նրանից Ծնվածին՝ որպես Աստված»:

Այդ մասին է վկայում նաեւ այն, որ Քաղկեդոնի ժողովից հետո քաղկեդոնական շատ ու շատ գիտուն վարդապետներ՝ թե՛ հույն եւ թե՛ լատին, որոնք գրքեր կամ որեւէ հոգեւոր երգ են շարադրել ու երգել, դրանցում Սուրբ Կույսի վերաբերյալ «Աստվածածին» անունը բացարձակապես չի գործածվում, այլ միայն ասվում է՝ «Իսկուհի», «Երանելի», «Սրբուհի» եւ այդպես շարունակ, ինչպես որ կարող են գիտենալ նրբանկատները: Այս իսկ պատճառով էլ մեր նախնի երանելիները (թեպետ ի սկզբանե Սուրբ Գրիգոր Լուսավորչից հաստատապես ընդունել էին ճշմարիտ ավանդույթյունը) նեստորական այդ աղանդը հեռու վանելու համար Դվինում, Մանազկերտում եւ Հայոց տան այլ վայրերում ընդգեմ Քաղկեդոնի ժողովի քանիցս ժողովներ գումարելով՝ պնդեցին անշարժ պահել մեր երանելի նախնիների կողմից կանոնակարգվածը՝ գրելով այսպես, թե՛ «Եթե որեւէ մեկը չասի «որ խաչվեցիր»-ը եւ բոլոր սուրբ նախնիների կողմից ընդունվածն ու կանոնակարգվածը, թող որ նզովյալ լինի»:

Այդպես նաեւ մենք՝ մեր նախնի սուրբ հայրերի հետեւորդներս, նույնն ենք ասում: Եթե որեւէ մեկը չասի «Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր, սուրբ եւ անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ», դրա հետ մեկտեղ նաեւ «Փառավորյալ»-ը՝ ուղղված Նրա մայր Սուրբ Աստվածածնին, թող որ նզովյալ լինի: Չէ՞ որ Պողոսը որեւէ այլ բանով չէր պարծենում, այլ միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով: Հրեշտակները, երբ Քրիստոսի Հարույթյունն էին ավետում կանանց, Նրա վերաբերյալ որեւէ այլ փառաբանություն չեն հիշատակում, այլ միայն ասում են «Խաչալը...»: Եւ Քրիստոս Ինքն էլ Իր խաչվելն Իր փառքը համարեց՝ ասելով. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին» (Հովհ. ԺԲ. 23): Դրա համար էլ մենք՝ հայերս, ասել ենք ու ասում ենք՝ «Սուրբ Աստված, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ», քանի որ հիշում ենք Նրա երախտիքները եւ դրանց հղում անելով՝ հորդորում ու աղաչում ենք, որ առավելաբար ողորմի: Մինչդեռ դուք, որ չեք ասում՝ «Սուրբ Աստված, որ խաչվեցիր մեզ համար», ուրեմն նաեւ չեք հավատում, որ Աստված խաչվեց ձեր փրկության համար եւ չեք դավանում նույն խաչալ Աստծուն: Սա իսկ է ձեր անխոհեմ տեսությունը, եւ ոչ այլ ինչ:

Եւ գիտեմ, որ որոշ դատարկախոսներ ասելու են, թե «Երեքսրբյան» երգն ի դեմս Երրորդության ասելով եւ «որ խաչվեցիր»-ը դրան կցե-

լով՝ դուք Երրորդության մասին եք ասում, թե խաչվեց»։ Դու, ո՛վ ազգ Հայոց, պատասխանիր այդպիսի դատարկախոսին՝ ասելով, որ մենք նզովում ենք բոլոր նրանց, ովքեր ո՛չ միայն խոսքով են ասում, այլ նաեւ իրենց մտքով են անցկացնում, թե Հայրը եւ Սուրբ Հոգին խաչվել են կամ որեւէ բան են կրել Որդու կրածից ու շարժարանքներից։ Այլ մենք միայն Որդո՛ւն ենք վերագրում [շարժարանքները], միայն Որը եւ մարմնացավ ու խաչվեց մեզ համար։ Ինչպես որ միայն Որդի՛ն ծնվեց Սուրբ Կույսից եւ մկրտվեց Հովհաննեսի ձեռքով ու կատարեց մյուս բոլոր տնօրինական գործերը, այդպես էլ այդ նույն Որդին միայն խաչվեց եւ թաղվեց ու հարություն առավ։ Դրա համար էլ մենք միեւնույն «Երեքսրբյան»-ը հավուր պատշաճի երգում ենք նույն մարմնացած Որդու վերաբերյալ՝ ասելով, որ «ծնվեցիր եւ հայտնվեցիր մեզ համար», ու թե՛ «խաչվեցիր, թաղվեցիր, հարություն առար եւ համբարձվեցիր»։ Այս բոլորը Որդու վերաբերությանմբ ենք ասում։

Բայց Սուրբ Հոգու Գալստյան օրն այդ նույն երգը երգում ենք Սուրբ Հոգու վերաբերությանմբ՝ ասելով «Որ եկար եւ հանգչեցիր առաքյալների վրա, ողորմիր մեզ»։ Քանի որ այդ երգը, որը Սերովբեներն են երգում, թեպետ ըստ իր նկարագրի, հիրավի, Սուրբ Երրորդությանն է վերաբերում՝ ըստ այն խորհրդի, որ երեք Սուրբ [Անձինք], ի վերջո, զորությունների մեկ Տիրոջ մեջ են պարփակված, սակայն այն նաեւ ի դեմս մարմնացած Բանն Աստծու էին երգում՝ տեսնելով Նրան խաչի փայտակերտ աթոռին բազմած՝ ըստ Եսայի մարգարեի եւ Իգնատիոս հայրապետի տեսիլքների (Իգնատիոս հայրապետի տեսիլքը վերելում հիշատակեցինք)։

Եւ Սուրբ Հովհան Օձնեցին էլ Բանի մարդեղության մասին իր ճառում ասում է, թե համարձակախոս Եսային տեսնում է բարձունքի գահի եւ համբարձված Որդուն՝ բազմած այդ գահին, եւ Նրան ուղղված սերովբեագոյ երեքսրբյան ձայնը, որը սրբասացություն էր բարբառում՝ ըստ Ավետարանի վկայության, որը վերելում հիշատակեցինք։ Ըստ այդմ՝ նաեւ Իգնատիոսը՝ առաքյալների հետնորդն է ասում. «Տեսավ երկնային զորքերին, որոնք փառաբանություն էին մատուցում Որդուն, այսինքն՝ փառքի Տիրոջը, Որը խաչ էր բարձրացել»։

Ու մեր սուրբ հայր եւ ծնող Գրիգորը, ըստ Ավետարանի, այսպես է ասում. «Այս եռանձնյա անվանակոչությունը մեկ Քրիստոսին է վերաբերում։ Տեսնում ես, որ երբ ասում է՝ «Աստված, հզոր եւ անմահ, հանդերձյալ աշխարհի Հայր», դա այս նորածին Մանկանն է այդպես անվանում»։

Եւ այս եռյակ սրբասացութիւնը, որի մասին խոսում ենք, երկնային զորքերն ի դեմս Որդու էին երգում: Ու դա վկայվում է նրանով, որ գիրքն ասում է, թէ Սերովբեներից մեկը Գահից եւ Սեղանից ունելիով վերցնում է նյութեղեն կայծն ու մոտեցնում է մարգարեի շուրթերին՝ նրան մաքրելու համար: Դա նշանակում է, որ աստվածացած Մարմինն էր բազմած այդ Սեղանին, Նա՛, Ում Սերովբեները չէին համարձակվում իրենց ձեռքերով դիպչել, այդ իսկ պատճառով էլ ունելիով էին վերցնում [կայծը], ինչպես որ Սուրբ Կյուրեղն է գեղեցկապես մեկնաբանում «Պարապմանց» գրքում:

Եւ Սուրբ Հովհաննեսն էլ Ավետարանում հայտնապես վկայում է, որ Եսային դա ասաց, երբ տեսավ Նրա փառքն ու խոսեց Նրա մասին, այսինքն՝ Եսային Քրիստոսի մասին ասաց, երբ մարգարեական հոգով տեսավ Նրան՝ բազմած փառքի Աթոռին, այսինքն՝ Խաչին:

Դարձյալ, Սուրբ Երրորդության երեք Անձինք, թեպետ անձերով ու դեմքերով բաժանված ու հատկորոշված են, սակայն էությունմբ, Բնությունմբ եւ Աստվածությունմբ մեկ ու անբաժան են: Այս իսկ պատճառով էլ ուր որ մեկ Անձն է հիշատակվում եւ փառավորվում, աներկբայապես այնտեղ են նաեւ մյուս Երկուսը, ինչպես որ ասում էր Քրիստոս. «Ես եւ Իմ Հայրը մի ենք» (Հովհ. Ժ. 30), եւ թե՛ «Ով տեսավ Ինձ, տեսավ նաեւ Իմ Հորը, որովհետեւ Հայրը Իմ մեջ է, եւ Ես՝ Հոր մեջ» (հմմտ. Հովհ. ԺԴ. 9): Այդպես նաեւ Սուրբ Հոգին էլ անբաժան է, որովհետեւ նրանք էությունմբ մեկ են, ինչպես որ ասացինք: Ուրեմն երբ մենք երգում ենք այս ամենագովելի երգն ի դեմս միայն մարդացած Որդու, միայն Ո՛րդ եւ մարդ դարձավ ու խաչվեց հանուն մեզ, որեւէ կերպ չենք սխալվում: Քանի որ Որդու հետ նաեւ Հայրը եւ Հոգին են փառավորվում, որովհետեւ Նրա հետ Բնությունմբ մեկ են, ու Նրանց կամքով եւ հաճությունմբ էին Նրա մարդանալն ու խաչվելը: Այլ մանավանդ դո՛ւք եք մեծապես սխալվում, քանի որ Խաչալից իսպառ վերացրել ու չքացրել եք «Աստված» անունը, իսկ Նրա ծնողից՝ «Աստվածածին» անունը:

Դարձյալ, հարցրո՛ւ երկաբնակին, թե «Սուրբ Կուչս Մարիամին որպես Աստվածածին էս խոստովանում, թե՞ որպես մարդածին»: Եւ եթե ասի, թե «որպես մարդածին էս խոստովանում», հեռո՛ւ մնա նրանից, քանի որ նա հրեա է ու ոչ թե քրիստոնյա: Եւ եթե ասի՝ «որպես Աստվածածին եմ խոստովանում», դու ասա՛ նրան, որ նրանից ծնվածին էլ պարտավոր է որպես Աստված խոստովանել, որովհետեւ Աստվածածինն Աստված է ծնում եւ ոչ

Թե մարդ: Եւ եթե ասի՝ «այո՛, նրանից Ծնվածին էլ որպէս Աստված եմ խոստովանում», ապա հարցրո՛ւ, թե «Նա, որ Գողգոթայում հրեաների ձեռքով խաչվեց, Սուրբ Կույս Մարիամից Ծնվածն էր, թե՞ մեկ ուրիշը»: Ու եթե ասի, թե «ուրիշն էր», դարձյալ հեռացիր նրանից, քանի որ չգիտի, թե ինչ է խոստում: Իսկ եթե ասի՝ «այո՛, Կույսից Ծնվածն էր, որ Գողգոթայում խաչվեց», այդժամ դու էլ ասա՛, թե «ուրեմն ինչո՞ւ չես ասում «Սուրբ Աստված, որ խաչվեցիր մեզ համար»։ մի՞թե քիչ առաջ չխոստովանեցիր, թե «Սուրբ Կույսին «Աստվածածին» եմ կոչում, իսկ նրանից Ծնվածին՝ Աստված»։ Ուրեմն ո՛չ Սուրբ Կույսին ես որպէս «Աստվածածին» խոստովանում եւ ո՛չ էլ նրանից Ծնվածին՝ որպէս «Աստված»։ Քանի որ Նա, որ Սուրբ Կույսից ծնվեց, նույն Ինքն էր, որ խաչվեց, ասել է թե՛ Նա, որ Աստված էր, ծնվեց մարմնով, որպէսզի այդ նույն մարմնով խաչվի մեր փրկութեան համար։ Արդ, եթե Նրա խաչվելն ուրանում ես, ուրացիր նաեւ Ծնունդը եւ դասվիր հրեաների շարքին»։ Ու նա պատասխան չի ունենա։

Դարձյալ, հարցրո՛ւ երկաբնակին, թե Հայր Աստված մե՞կ Որդի ունի, թե՞ երկու։ Իհարկե ասելու է, որ մեկ Որդի ունի։ Դարձյալ հարցրո՛ւ, թե այդ Որդին Աստված է, թե՞ ոչ։ Իհարկե ասելու է, որ Աստված է։ Այդժամ դու ասա՛ նրան, որ, «ահա վասիկ, Հայր Աստված, երկնքից գոչելով, վկայեց Նրա՛ մասին, որ խաչվել էր Գողգոթայում. «Դա է Իմ սիրելի Որդին» (Մատթ. Գ. 17)։ Եւ Սուրբ Հովհաննէս Մկրտիչն էլ աղաղակեց, թե՛ «Նա, որ առաքեց ինձ՝ մկրտելու ջրով, Նա Ինքն ինձ ասաց՝ «ու՛մ վրա տեսնես Հոգին, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով», եւ ես տեսա ու վկայեցի, որ Նա՛ է Աստծու Որդին» (Հովհ. Ա. 33–34)։ Սուրբ Հովհաննէս Ավետարանիչն էլ ասում է, թե «Հայր Աստված այնքան սիրեց մեզ, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն մահվան մատնեց մեզ համար» (Հովհ. Գ. 16)։ Իսկ սուրբ Պողոսն ասում է, որ «Նա, որ Իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահվան մատնեց Նրան» (Հռոմ. Ը. 32)։

Մի կո՛ղմ թողնենք մյուս բոլոր վկայութեանները։ Ահա վասիկ, Հայրը, Մկրտիչը, Ավետարանիչը եւ առաքյալը վկայում են, որ Նա, որ Գողգոթայում խաչվեց եւ մահվան մատնվեց, Նա՛ է Հայր Աստծու Միածին Որդին։ Այս վկայութեան մեջ նրանք բացարձակապէս որեւէ տեսակի այլալուծութուն կամ երկվութուն չեն ցուցաբերում ու չեն ասում, թե «Ով Նրա մեջ է», այլ՝ «Նա՛ է», եւ այդ բոլոր տնօրինութեանները մեկ եւ նույն Քրիստոսին են վերագրում, ուրեմն դու ինչպէ՞ս ես հայտնապէս մաքառում ընդդէմ Հայր Աստծու, Մկրտչի ու սուրբ առաքյալների՝ ասելով, թե

«Աստվածորդին չէր խաչի վրա, այլ միայն մարդը եւ մարդկային բնությունը»: Ու նա պատասխան չի ունենա:

Դարձյալ հարցրո՛ւ, թե երբ Սուրբ Պողոսն ասում է, որ «Նա՛ է մեր խաղաղությունը, Նա՛, որ երկուսը մեկ դարձրեց», այս դեպքում ովքե՛ր էին այդ երկուսը, որ խռոված էին, ու Քրիստոս հաշտեցնելով՝ երկուսը մեկ դարձրեց: Իհարկե, նա ասելու է՝ «Աստված եւ մարդը»: Այդժամ դու ասա՛ նրան, որ «եթե Քրիստոս այդ երկուսին մեկ դարձրեց, դու ինչո՞ւ ես վերստին բաժանում եւ երկու դարձնում՝ ընդդեմ Քրիստոսի, եւ կրկին վրդովում ես Նրա խաղաղությունը. մի՞թե դու աստվածամարտ ես, որ Նրա մեկ դարձրածը վերստին բաժանում ես: Ահավասիկ, Բանն Աստված մեր հեռացած ու օտարացած բնությունը միացրեց Իրեն եւ նրա հետ մեկ եղավ, քանի որ Ինքը, կատարյալ Աստված լինելով հանդերձ, դարձավ նաեւ կատարյալ մարդ, ու մարդուն աստվածացնելով՝ Իր հետ կատարյալ Աստված դարձրեց ու եղավ նույն, մեկ Քրիստոս՝ կատարյալ Աստված եւ կատարյալ մարդ, ինչի շնորհիվ էլ խաղաղությունն ու միությունն հաստատվեց Աստծու եւ մարդու միջեւ: Արդ, դու, որ չես ընդունում աստվածային եւ մարդկային բնությունների միավորությունը, ուրեմն, համաձայն քո հավատի, ո՛չ Աստված է մարդացել, եւ ո՛չ էլ մարդը՝ աստվածացել, ու ո՛չ էլ հաշտություն է եղել այդ երկուսի միջեւ, եւ ըստ այդմ՝ դու դեռեւս գտնվում ես Աստծու բարկության ներքո: 2⁵ որ իրը կենդանացնողը բնությունն է, եւ ինչպես որ Աստված Իր բնությամբ կատարյալ Աստված է, այդպես էլ մարդն իր բնությամբ կատարյալ մարդ է: Արդ, եթե այս կատարյալ բնությունները Քրիստոսի մեջ չմիավորվեցին, ուրեմն Քրիստոս ո՛չ «կատարյալ Աստված» կարող է կոչվել, ո՛չ էլ «կատարյալ մարդ», այդպես նաեւ՝ անհնար կլինի ասել «մարդացած Աստված» կամ «աստվածացած մարդ»: Ապա ուրեմն ի՞նչ իմաստ ունենին Պողոսի «երկուսը մեկ դարձրեց» խոսքերը:

Այդպես նաեւ սուրբ Պետրոսն է ասում. «Որով,— այսինքն՝ Քրիստոսով,— մեծամեծ եւ թանկագին խոստումներ պարգեւեցին մեզ» (Բ. Պետ. Ա. 4), այն է՝ հնարավորություն ընձեռվեց հաղորդակից լինելու աստվածային Բնությանը: Ինչպես օրինակ, երբ Թագավորի որդին փեսայանում է որեւէ մեկի դստերը, այդ դստեր ազգատոհմին ու ընտանիքին մեծ ավետիս է տրվում, քանի որ նրանք դառնում են Թագավորի ազգակիցներն ու ընտանիքի մի մասը: Այդպես նաեւ Հայր Աստծու Միածին Որդին, մեր բնությունից ու զարմից մարմին եւ անհատական բնություն առնելով, միավորեց Իր աստվածային Բնությանն ու մեզ մերձավոր եւ եղբայր դար-

ձավ ու «ազգակից» կոչվեց եւ դրա շնորհիվ էլ այդ նույն անհատական բնության միջնորդութեամբ մեր ամբողջ բնությանը հաղորդակից դարձրեց իր աստվածեղեն Բնության հետ: Ինչպես որ Սուրբ Պողոսն էլ ասում է. «Որով եւ մեզ, որ մի ժամանակ մեռած էինք, կենդանացրեց Քրիստոսով, որովհետեւ շնորհով փրկվեցինք: Նրա հետ հարություն տվեց մեզ եւ Նրա հետ նստեցրեց երկնավորների մեջ Քրիստոս Հիսուսով» (հմմտ. Եփես. Բ. 5–6): Եւ դարձյալ թե՛ «որովհետեւ զավակները հաղորդակից եղան արյան եւ մարմնին, Ինքն էլ (այսինքն՝ Բանն Աստված) մերձավորութեամբ կցորդ եղավ այդ զավակներին» (Եբր. Բ. 14): Արդ, եթե, ինչպես որ դուք եք ասում, այն անհատական բնությունը, որը Նա մեզնից վերցրել եւ Իրենն էր դարձրել, չմիավորեց ու հաղորդակից չդարձրեց իր աստվածային Բնությանը, ուրեմն ինչպե՞ս հաղորդակից եղավ մեր հասարակ բնությանը կամ այդ ինչպե՞ս մեզ եղբայր ու մերձավոր դարձավ: Ահավասիկ, այդպիսով դուք մերժեցիք նաեւ Պետրոսին եւ Պողոսին, որոնցով պարծենում եք: Եւ մանավանդ, քանի որ մեկ Քրիստոսին երկուսի բաժանելով՝ մարդկային բնությունը հեռացնում ու օտարացնում եք աստվածային Բնությունից, ուստի չեք կարող ականակիք ունենալ՝ Աստծուն մերձավոր լինելու եւ Նրա աստվածային Բնությանը հաղորդակից դառնալու համար՝ համաձայն հենց Սուրբ Պետրոսի եւ Սուրբ Պողոսի վկայությունների»:

Եւ գիտեմ, որ պիտի ասեն, թե «չնայած աստվածային Բնությունը չմիավորվեց մարդկային բնությանը, սակայն Անձը միավորվեց», ինչպես որ նրանք սովոր են ասելու: Այդժամ դու էլ հարցրո՛ւ, թե «այն Անձը, Որը, ինչպես ասում ես, միավորվել է մարդկային բնության հետ, աստվածային Բնության կրող էր, թե՛ ոչ»: Եթե ասի, թե «այո՛, Նա աստվածային Բնություն ուներ, սակայն միայն Անձով միավորվեց ու ոչ թե բնութեամբ», այդ ժամանակ էլ դու նրան ասա՛, թե, «ուրեմն, աստվածային Անձն ու Բնությունը միմյանցից բաժանվեցին, քանի որ Անձը միավորվեց մարդկային բնութեանը, իսկ բնությունն այդպես բաժանված մնաց: Այդպիսով, ահա, դու բաժան-բաժան արեցիր Բանն Աստծու Աստվածությունը, որովհետեւ, ինչպես ավելի վերելում ասացինք, եթե Անձն ու Բնությունը իրարից բաժանվեն, ապա այդ երկուսից ոչ մեկը չի կարող կայանալ եւ գոյություն ունենալ, ու մանավանդ՝ Անձը չի կարող գոյություն ունենալ առանց Բնության, ո՛չ էլ կարող է Աստված լինել ու աստվածացնել մարդուն: Ահա այդ իսկ պատճառով էլ միեւնույն Քրիստոսին միաժամանակ կոչում ենք «Աստված եւ մարդ», քանի որ աստվածային ու մարդկային բնությունները Նրա մեջ

միավորվեցին ու մեկ բնություն դարձան՝ մեկ Քրիստոսի համար: Իսկ եթե, համաձայն քո հավատի, բնությունները չմիավորվեցին, ապա այդ դեպքում Քրիստոս չի կարող կոչվել «Աստված եւ Մարդ», այլ՝ կամ միայն «Աստված», կամ լուկ «մարդ», որի մեջ բնակվում էր Աստված՝ ըստ Նեստորի: Եւ այդուհետեւ էլ չի ասվի «մեկ», այլ՝ «երկու», ու Նրա մեջ ստիպված պիտի լինենք ընդունել նաեւ երկու անձ, ինչպես որ ասում էր Նեստորը»:

Դարձյալ հարցրո՛ւ քաղկեդոնականներին, թե մարդը մի՞ բնություն ունի, թե՞ երկու: Եթե ասի՝ «մեկ բնություն ունի», ասա՛, թե «սուտ ես խոսում, քանի որ մարդն անմարմին հոգուց եւ հողային մարմնից է բաղկացած, ուստի այդպիսի ներհակ ու իրար ոչ նման բնություններից բաղկացածն ինչպե՞ս կարող է մեկ բնություն ունենալ: Չէ՞ որ այլ է հոգու բնությունը, եւ այլ՝ մարմնի բնությունը, որոնցից բաղկացած է մարդը»: Իսկ եթե ասի, թե «մարդը երկու բնություն ունի», այդժամ դու հարցրո՛ւ նրան, թե Բանն Աստված մարդու ամբողջական բնությունը վերցրեց, թե՞ կեսը: Իհարկե, նա պիտի ասի, թե՝ «ամբողջական բնությունը վերցրեց»: Այդ ժամանակ էլ դու ասա՛ նրան, թե «այդ դեպքում ինչպե՞ս ես Քրիստոսի մասին ասում՝ երկու բնություն եւ ոչ թե՞ երեք բնություն, չէ՞ որ, ահավասիկ, երկու բնությունը մարդունն էին, իսկ մեկն էլ աստվածային բնությունն էր, ու այդ դեպքում միասին ստացվում է երեք եւ ոչ թե՞ երկու: Ասա՛ ինձ, ո՞վ բաժանող, չէ՞ որ եթե դու հավատում ես, որ Բանն Աստված մարդու ամբողջական բնությունը (այսինքն՝ մարդու ունեցած երկու բնությունները.— Գ. Կ.) վերցրեց, ուստի պարտավոր ես ասել «երեք բնություն», ինչպես որ վերը նշեցինք: Ուրեմն, դու ընդունում ես, որ մարդու կես բնությունն է միայն վերցրել եւ ոչ թե ամբողջականը, այսինքն՝ վերցրել է կամ միայն հոգին, կամ միայն մարմինը:

Եւ եթե այդպես է, այժմ ասա՛ ինձ, թե այս երկու բնություններից ո՞րն ես ուրանում: Եթե հոգին ես ուրանում եւ ասում ես, որ միայն մարմինն է վերցրել, ապա, ահա, նմանվում ես Ապողինարին, քանի որ նա էր ասում, որ Բանն Աստված միայն մարդկային մարմինը վերցրեց, իսկ բանական հոգու տեղը, ըստ նրա, զբաղեցրեց Աստվածությունը: Իր այդ ասածների պատճառով էլ սուրբ հայրերը դատապարտեցին Ապողինարին: Իսկ եթե մարմինը մերժում ես եւ ընդունում ես, որ միայն հոգին է վերցրել, բողոքովին սուտ ես խոսում, քանի որ Քրիստոս մարմնով հայտնվեց աշխարհում, եւ հետեւաբար դու, Եւտիքեսի նման, Քրիստոսի մարդանալը համարում ես միայն թվացյալ կերպով տեղի ունեցած իրադարձություն ու ոչ թե ճշմարիտ իրողություն:

Կամ եթե ասես, թե Բանն Աստված մարդու ամբողջական բնությունը չի վերցրել, ապա դրանից էլ կհետեւի, որ ամբողջական բնությունը չի փրկել: Ահավասիկ, ցույց տվեցինք, որ ո՛չ մարդկային հոգին կարող էս ուրանալ եւ ո՛չ էլ՝ մարմինը: Այլապես դու Քրիստոսի մեջ ուրանում ես աստվածային Բնությունն ու Նրա մեջ ընդունում ես միայն մարդու երկու բնությունների առկայությունը, իսկ եթե այդպես անես, ապա կնմանվես հրեայի ու այլազգիի՝ Քրիստոսին լոկ որպես մարդ խոստովանելով»: Երկաբնակը որեւէ մի պատասխան չի ունենա, որովհետեւ ո՛չ կարող է աստվածայինն ուրանալ, ո՛չ մարդկային հոգին ու ո՛չ էլ մարմինը: Այնպես է թվում, որ ճարահատյալ պիտի ասի, թե «չնայած մարդու բնությունը երկու տարրից է կազմված, սակայն միավորության շնորհիվ «մեկ բնություն» է ասվում եւ ոչ թե՝ «երկու»: Եւ եթե երկաբնակն այդպես ասի, այդժամ դու ասա՛ նրան, թե «այդ ինչպե՞ս է, ուրեմն, որ արարածների՝ միմյանցից տարբեր բնությունները կարող են միավորվել եւ մեկ բնություն լինել՝ անշփոթ մնալով, իսկ Արարչի Ամենաբնության պարագայում անկարելի է, որ Նա միանա Իր արարածին եւ նրա հետ մեկ բնություն կազմի՝ մնալով անշփոթ ու անփոփոխելի: Ահավասիկ, մենք նույնպես այդ մտքով ենք ասում, որ ինչպես տարբեր բնությունների, այսինքն՝ հոգու եւ մարմնի միավորությամբ մեկ անհատ մարդ է ձեւավորվում ու «մեկ անձ» եւ «մեկ բնություն» է ասվում ու ոչ թե՝ «երկու», այդպես էլ Քրիստոս է աստվածային եւ մարդկային բնությունների միավորմամբ դարձել մեկ անհատ Քրիստոս, ուստի այդ միավորությունից հետո այլեւս «մեկ Անձ» եւ «մեկ Բնություն» է ասվում ու ոչ թե՝ «երկու», քանի որ միավորությունը վերացնում է երկվությունը՝ անշփոթությունը պահպանելով հանդերձ: Ուրեմն եթե մարդուն (որ բաղկացած է երկու բնությունից) բնությունների միավորության շնորհիվ «մեկ բնություն» ես կոչում, ապա պարտավոր ես նաեւ Քրիստոսին (որ բաղկացած է երկու բնությունից) միավորության շնորհիվ «մեկ բնություն» խոստովանել եւ ոչ թե «երկու»: Իսկ եթե մարդու վերաբերությամբ «երկու բնություն» ասես՝ միավորությունը չընդունելով, ապա պարտավոր կլինես Քրիստոսի մասին էլ «երեք բնություն» ասել»:

Այդժամ զազրախոս Դամասկացին պիտի պապանձվի: Որովհետեւ քանի դեռ մենք, օրինակ բերելով, ասում ենք, որ ինչպես մարդը, երկու տարրից կազմված լինելով, միավորության շնորհիվ «մեկ բնություն» է կոչվում, ուստի նաեւ Քրիստոսն է «մեկ բնությամբ» խոստովանվում, նա ունայնախոսելով ասում է, թե՝ «մարդը երկու բնություն ունի ու ոչ թե

մեկ»։ Ո՛վ դատարկախոս, եթե մարդու վերաբերությանը «երկու բնություն» ես խոստովանում, ուրեմն Քրիստոսի վերաբերությանը էլ «երեք բնություն» ասա եւ ոչ թե «երկու»։ Չէ՞ որ Բանն Աստված մարդու ամբողջական էությունը վերցրեց ու ոչ թե կեսը, ինչպես որ նշեցինք ավելի վերելում։ Այդպես եւ Սուրբ Ներսես Շնորհալին է «աչքդ հանում»՝ ասելով. «Եւ ովքեր «երկու բնություն» են ասում եւ երկուսի են բաժանում, հարկ է, որ նրանք երեքի բաժանեն կամ էլ մեկի մեջ միավորեն։ Այդ երեքն են՝ հոգին, մարմինը եւ աստվածային Բնությունը։ Կամ էլ պետք է մարդկային խառնումը (մարդու մեջ հոգու եւ մարմնի միավորումը, — Գ. Կ.) ավելի զորավոր համարել աստվածային խառնումից (Քրիստոսի մեջ մարդկային բնության եւ Բանն Աստծու էության միավորումից, — Գ. Կ.)։ Ուստի այսպիսով՝ «մեկ բնություն» ենք ասում՝ ըստ անճառելի խառնումի, ինչպես որ մեր հոգին ու մարմինն են մեկ բնության մեջ միավորվում։ Քանի որ եթե սրանք արարած են ու անալալաբար միանում են իրար՝ անգիտաբար անմարմնի ու մարմնեղենի միություն կազմելով, ուրեմն ի՞նչ կարիք կա հիացումով զարմանալու ա՛յն բանի համար, որ Արարիչ Բնությունն ու Բանն անշփոթաբար խառնվում է մեզ հետ եւ անճառաբար միանում է մեզ։ Դրա համար որպես բնորոշիչ օրինակ է ծառայում մեր բնությունը՝ գաղափար տալով այդ մասին»։

Ահավասիկ, առանց որեւէ մի հակառակության կարող ենք ասել, որ ուր մեկ անձ ու մեկ դեմք է, այնտեղ պարտավոր ենք նաեւ «մեկ բնություն» ասել, քանի որ անհնար է, ու որեւէ տեղում էլ գրված չէ, որ մեկ անձին եւ մեկ դեմքին պետք է «երկու բնություն» կոչել՝ իրարից բաժանված ու չմիավորված։ Որովհետեւ երկու ստորադաս եւ բաժանված բնություններին «երկու անձ» եւ «երկու դեմք» է վերագրելի։

Վերջապես, եթե միավորությունն ընդունում ես, ուրեմն պարտավոր ես Քրիստոսի վերաբերությանը «մեկ Անձ», «մեկ Դեմք» եւ «մեկ Բնություն» ասել, իսկ եթե միավորությունը չես ընդունում, ապա պետք է «երեք անձ», «երեք դեմք» եւ «երեք բնություն» ասել, ինչպես որ ցույց տվեցինք վերելում։ Բայց եթե ո՛չ «մեկ Բնություն» ես ասում, ո՛չ էլ «երեք», ուզես թե չուզես՝ Նեստորի դավանանքն ես խոստովանում, չնայած որ հայտնապես «երկու անձ» չես ասում.... Ու նա բնավ պատասխան չի ունենա։

Դարձյալ, ասա՛ երկաբնականներին, որ մենք հավատում ենք մեկ ու նույն Քրիստոսին՝ որպես Բանն Աստծուն, Հոր Միածին Որդուն, Հորը եւ Հոգուն էակցին, Սուրբ Երրորդությունից մեկին եւ նույն Նրան՝ մեր փրկության

համար մարդացած ու ճշմարտապես մարդ դարձած, այդ նույն մարդկությունը խաչված, մեռած, հարույթյուն առած եւ երկինք համբարձված: Ու նույն մարդկությունը բազմած Հոր աջ կողմում (ուր առաջ՝ նախքան մարդանալը, մշտապես էլ գտնվում էր՝ միայն Աստվածությունը) եւ նույն մարդկությունը էլ ամենքի կողմից մեկ երկրպագությունը երկրպագված ու փառավորված Հոր եւ Սուրբ Հոգու հետ՝ ըստ Սուրբ Պողոսի խոսքի, թե «Հիսուս Քրիստոսի անունով պիտի խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների» (Փլպ. Բ. 10): Ահավասիկ, Սուրբ Պողոսը եւ մենք խոստովանում ենք, որ բոլոր արարածները երկրպագում են Հիսուս Քրիստոսին՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ: Այստեղ «Հիսուս Քրիստոս» ասելով՝ նկատի է առնվում Ինքը՝ Մարդացյալը, եւ ոչ թե զուտ Բանի Աստվածությունը: Արդ, դուք, որ մեկ ու նույն Քրիստոսին երկուսի եք բաժանում եւ մարդկային բնությունն ու մարմինը չեք միավորում աստվածային Բնությանը, այլ այն հեռու եւ բաժանված եք պահում ու միայն մարդկային բնության եւ մարմնի վերաբերյալ եք ասում, թե խաչվեց, ու համբարձումից հետո այդ նույն մարդկային բնությունը եւ մարմինը, ինչպես որ դուք եք ասում, դրվեցին հրեղեն երկրի մի անկյունում (ինչպես որ ասում է ձեր Ալբերտ Մեծը), իսկ զուտ Աստվածությունն էլ բազմեց Հոր աջ կողմում եւ երկրպագություն ընդունեց, ինչպես ասում եք մեզ: Նախ ասում եք, թե «Հիսուս Քրիստոս»-ը մարդկության անունն է եւ ոչ թե Աստվածության, ինչպես որ հրեշտակն ասաց Սուրբ Կույսին, թե՛ «կծնես մի որդի եւ Նրա անունը Հիսուս կդնես» (Ղուկ. Ա. 31): Սակայն չէ՞ որ Սուրբ Պողոսն էլ Հիսուս Քրիստոսի մասին ասում է՝ «բազմեց Հոր աջ կողմում եւ երկրպագություն ընդունեց»: Դուք ինչպե՞ս եք համարձակվում, ընդդեմ Սուրբ Պողոսի, մարդկությունը բաժանել Աստվածությունից եւ դնել մի անկյունում, իսկ Աստվածությունը՝ առանձնաբար, համաձայն ձեր խոսքերի՝ «բազմեցնել» Հոր աջ կողմում՝ երկրպագություն ընդունելու համար: Չէ՞ որ Բանն Աստված մինչեւ մարդանալն էլ Հոր աջ կողմում էր եւ երկրպագվում էր արարածներից: Ուրեմն դուք չե՞ք հավատում Բանի Աստվածությանը՝ նախքան մարդանալը, այն բանին, որ Բանն Աստված մարդանալուց առաջ Հոր հետ էր եւ Նրա հետ երկրպագվում էր արարածներից... Ու նա պատասխան չունի:

Երկրորդ, սա եւս ասացեք մեզ, թե այն մարդկությունն ու մարմինը, որը, ինչպես ասում եք, դրված են հրեղեն երկնքի մի անկյունում, դուք ո՞ւմ հետ եք դասում. Արարիչ Աստծո՞ւ հետ, որպես մեկը, որ երկրպագու-

Թյոնն է ընդունում արարածներից, թե՛ արարածների հետ՝ որպես Աստծուն երկրպագող մեկը.... Թվում է, թե նրանք բոլորովին պապանձված են մնում, որովհետեւ եթե, Արարչի հետ դասելով, որպես երկրպագություն ընդունող մեկը խոստովանեն Նրան, այդպիսով նմանը չունեցող մի հերձված մոգոնած կլինեն, եւ իրենց ասածը սոսկ մի ամբարշտություն կլինի: Քանի որ այդպիսով կհաստատեն երկու Աստծու գոյությունը, մեկն անսահման, անպարագիծ եւ անեղ, իսկ մյուսը՝ եղական, տեղավոր ու սահմանափակված հրեղեն երկնքում: Իսկ եթե Նրան դասեն արարածների հետ՝ որպես երկրպագող, բացարձակապես կուրանան Բանն Աստծու մարդեղությունն ու Հիսուս Քրիստոսի Աստվածությունը: Որովհետեւ Պողոսը Հիսուս Քրիստոսի մասին ասում է՝ «երկրպագված երկնավորներից եւ երկրավորներից»՝ նկատի ունենալով մարդացած Աստծուն: Եւ մենք՝ ուղղափառ հավատացյալներս, Նրա նույն Մարմինն եւ Արյանն ենք երկրպագում ու ճաշակում՝ հավատալով, որ աստվածային Մարմինն եւ Արյունն են, որ ճաշակելով՝ մենք նույնպես միավորվում ենք Աստծու հետ՝ համաձայն Քրիստոսի խոսքի, թե «Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արյունը, կբնակվի Իմ մեջ, եւ Ես՝ նրա մեջ» (Հովհ. Զ. 57): Ուրեմն՝ երկաթնակները չեն հավատում Քրիստոսի խոսքին եւ Նրա Մարմինն ու Արյունն էլ աստվածային չեն համարում:

Դարձյալ, ասած երկաթնակներին, որ եթե Քրիստոս Իր մարդկությունն ու մարմինը դրեց հրեղեն երկնքում եւ զուտ Իր Աստվածությամբ բարձրացավ Հոր մոտ, վերին զորություններն ինչո՞ւ էին տարակուսանքով զարմանում, եւ ի՞նչ էր նշանակում նրանց հարցումը, թե «ո՞վ է սա, որ մեծ զորությամբ գալիս է երկրից», կամ ի՞նչ էր խորհրդանշում Նրա կարմիր ձորձը, որը երկնային զորությունները տեսնում եւ հիանում էին՝ ըստ Եսայու: Արդյոք Նա Իր արյամբ ներկված մարմնով չէ՞ր գնում դեպի Հայրը: Եւ չէ՞ որ այդ մարմինն էր, որ անծանոթ էր վերնայիններին, եւ որին իրազգած էին միայն գաբրիելյան դասերը, որոնք գոչում էին վերիններին՝ ասելով. «Մի՛ տարակուսեք, քանի որ Նա, Ում տեսնում եք արյունաներկ մարմնով, նույն Ինքը՝ փառքի Թագավորն է, որի առաջ թեւասքողված՝ ծածկում եք ձեր դեմքերն ու անդադար փառաբանություն եք մատուցում Նրան. Նա նույն Ինքն է եւ ոչ թե ուրիշ մեկը»:

Խիստ զարմանալի է երկաթնակների համառությունը, քանի որ ամբողջ Աստվածաշունչ Սուրբ Գիրքը եւ Ինքը՝ Քրիստոս, ու Իր սուրբ ավետարանիչները եւ առաքյալներն ամենուր Բանն Աստծուն ներկայացնում են

Իր մարմնի ու վերցրած մարդկային բնության հետ բոլորովին նույնությանմբ եւ խոսում են որպես մեկ դիմավոր Անձի մասին՝ բացարձակապես երկվույթյան նշան անգամ ցույց չտալով ու Բանն Աստծուն իր մարմնից չբաժանելով կամ այլեւայլ խոսքեր չասելով: Մինչդեռ երկաբնականներն այդ նույն Մեկը երկուսի են մասնատում եւ բաժանելով՝ հեռու են պահում իրարից: Մի Աստծուն «հրաշագործ» են կոչում ու միշտ փառքի մեջ են պահում Նրան, իսկ մյուսին, «մարդ» կոչելով, չարչարանքների եւ թշվառության համար են «վերապահում»: Մեկին Հոր աջ կողմում՝ փառքի Աթոռին են բազմեցնում, իսկ մյուսին՝ որպես մի օտարական հյուրի, դնում են երկնքի մի անկյունում: Նրանցից պետք է հարցնել, թե «որտեղից սովորեցիք այդ մոլար վարդապետությանը, ո՛վ բաժանողներ»: Ահա տեսեք, թե նույն մարմնացած Բանն Աստված ինչպիսի՞ միություն է հաստատել իր ու իր մարմնի միջեւ, որ նախքան իր մարմին առնելը, երբ Նա միայնակ երկնքում էր՝ Հոր մոտ, եւ երբ Նա միայնակ իջավ Հոր մոտից, այդ մասին ասվում է, որ Նա մարմնով էր երկնքում ու մարմնով իջավ եւ դարձյալ մարմնով պիտի ելնի այնտեղ՝ անբաժանելի միավորության շնորհիվ: Ինչպես որ ասվում է. «Պիտի տեսնեք մարդու Որդուն, որ բարձրանում է այնտեղ, ուր առաջ էր» (հմմտ. Հովհ. 2. 63): Եւ թե՛ «Ելա Հորից եւ եկա աշխարհ. դարձյալ թողնում եմ աշխարհը եւ գնում Հոր մոտ» (Հովհ. Ժ2. 28): Կամ՝ «Ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ Նա, որ իջավ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքից էր» (Հովհ. Գ. 13): Սուրբ Հովհաննեսն ասում է նաեւ. «Սկզբից էր, Որին ականատես իսկ եղանք, եւ մեր ձեռքերը շոշափեցին Կենաց Բանը» (հմմտ. Ա. Հովհ. Ա. 1): Եւ թե՛ «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել՝ բացի միայն Միածին Որդուց, որ Հոր ծոցում է. Նա՛ պատմեց մեզ» (հմմտ. Հովհ. Ա. 18): Ասա՛ ինձ, ո՛վ բաժանող, մի՞թե Բանն Աստված երկրի վրա մարմնով չհայտնվեց ու մի՞թե մարդու լեզվով չէր խոսում: Ավետարանիչն ասում է, թե «պիտի տեսնեք մարդու Որդուն, որ բարձրանում է այնտեղ, ուր առաջ էր», սակայն մարմինը կամ մարմնավոր մարդն այդ երբ էր երկնքում հայտնվել. չէ՞ որ Նա երկրի վրա Կույսից ծնվեց: Կամ մարդն ինչպե՞ս իջավ երկնքից եւ երբ ելավ Հորից, որ դարձյալ պիտի գնա Հոր մոտ: Կամ առաքյալները երբ տեսան Կենաց Բանը, Որն Սկզբից էր: Եւ կամ՝ Աստծու Միածին Որդին, Որը Հոր ծոցում է ու Նրանից անբաժան, Նա ինչպե՞ս երեւաց մարդկանց աչքերին եւ ինչպե՞ս պատմեց Հայր Աստծու ծածուկ խորհուրդը: Ուրեմն այդ ի՞նչ ես ասում, մի՞թե կարող ես ասել, որ Քրիստոս եւ ավետարանիչները սուտ են վկայում: Քանի որ

առաքյալները մարմին ունեցող Մարդու էին տեսնում եւ մարմինն էին շոշափում, ու նրանց պատմողն էլ այդ նույն մարմնով Մարդն էր եւ նույն ինքն էր պատմողը, Որը եւ ասում էր. «Այն բոլորը, ինչ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (հմմտ. Հովհ. ԺԵ. 15): Ուրեմն դու կամ պիտի ասես, թե նրանք սուտ են խոսում (ինչպես որ հրեաներն էին Քրիստոսի մասին ասում, թե՝ «Դու մարդ ես, բայց ինքդ Քեզ Աստծու տեղ ես դնում»,— Հովհ. Ժ. 33), կամ էլ պարտավոր ես հավատալ, որ առաքյալներն այն մարմինը, որը տեսնում եւ շոշափում էին, դա՛ էին «Բան» եւ «Հոր Միածին» կոչում, Որն ի սկզբանե Հոր հետ էր՝ անբաժանելի միավորության շնորհիվ: Նույնպես եւ Բանն Աստծու հետ անբաժանելի միավորության ու Բանն Աստծուն միավորված լինելու շնորհիվ նույնիսկ ասվում է, որ Բանն Աստված Իր մարմնով ու մարդկությամբ հանդերձ իջավ երկնքից՝ շնայած այն բանին, որ Նա երկնքից էլ առաջ էր: Արդ, այսպես Սուրբ Գրքում ամենուր Բանն Աստված Իր մարմնի հետ մեկ եւ նույնն է ներկայանում, մինչեւ իսկ այն աստիճանի, որ առանց խտրություն դնելու՝ Բանը «մարմին» են կոչում, իսկ մարմինը՝ «Բան»՝ անբաժանելի միության շնորհիվ: Քանի որ նույն ինքն էր թե խաչվածը եւ թե Փրկիչը, թե՛ մեռածը եւ թե՛ Հարության տվողը՝ նույնը ու ոչ թե տարբեր: Եւ եթե խաչվածին ու Փրկչին կամ մեռածին ու Հարության տվողին միմյանցից բաժանես, փրկագործություն չի լինի: Եւ եթե ասես, որ «Թեպետ Աստված չխաչվեց, բայց խաչվածի ձեռքով փրկություն շնորհեց», ապա իմացած եղիր, որ Աստված դա կարող էր անել նաեւ մարգարեների միջոցով կամ մեկ այլ եղանակով, ուրեմն ի՞նչ հարկ կար մարմնանալու եւ մարդ դառնալու: Զե՛ որ քրիստոնեական հավատն էլ այն բանի վրա է հիմնված, որ Բանն Աստծու մարդեղությամբ եւ խաչելությամբ փրկություն եղավ մարդկային համակ բնության համար: Արդ, եթե այն խաչվածը նույն ինքը՝ ճշմարիտ Աստված չէր, ուրեմն նրա խաչելությունը չէր կարող փրկություն շնորհել ամենքին, ինչպես որ վերելում ասվեց: Դարձյալ, փրկագործությունը չէր կարող տեղի ունենալ, եթե Աստված չխաչվեր կամ եթե չմարմնանար, քանի որ Բանն Աստված հենց այն բանի համար մարմնացավ, որ նույն այդ մարմնով էլ խաչվի, որովհետեւ Աստվածության մեջ անկարելի էր շոշափվել կամ խաչվել: Դրա համար ենք ասում՝ ճշմարիտ Աստված, Թեպետեւ մարմնով էր, խաչվեց: Ինչպես օրինակ՝ բանական հոգին, որը Թեպետ ինքն իրենով անհպելի եւ անշոշափելի է, սակայն հպելի եւ շոշափելի մարմնին միավորվելով՝ նրա հետ մեկտեղ շոշափվում, չարչարվում ու վշտանում է: Ճիշտ այդպես

էլ՝ անհպելի եւ անախտակիր Բանն Աստված, միավորվելով ախտակիր մարմնի հետ, նրա հետ մեկտեղ կրեց այդ մարմնի վշտերն ու շարժարանքները: Ինչպես որ Նա՝ Ինքն է Եսայու շուրթերով ասում՝ «Թիկունքս հարվածների տվեցի, ծնոտներս՝ ապտակի» (Ես. Ծ. 6): Ինչպես օրինակ՝ Պետրոսի խաչվելու ժամանակ, թեպետ նա մարմնով էր բռնվել ու խաչվում, սակայն նրա հոգին, որ միավորված էր մարմնին, նրա հետ մեկտեղ վշտեր ու շարժարանքներ էր կրում: Եւ ինչպես որ մարմինը, հոգուց բաժանված լինելով, ոչինչ չի զգում, ո՛չ շարժարվում է ու ո՛չ էլ ցավում, այդպես էլ մարդկային մարմինը եւ բնությունը, աստվածային Բնությունից բաժանված լինելով, թեպետ ցավում ու շարժարվում են, սակայն միայնակ մարդկության համակ բնությանը որեւէ օգուտ չեն բերում եւ փրկություն չեն շնորհում: Ուրեմն եթե Բանն Աստված Իր աստվածային Բնությամբ չմիավորվեց մարմնի ու մարդկային բնության հետ եւ նրանով չխաչվեց, հետեւաբար նաեւ չմարմնացավ: Քանի որ այն բանի համար էր մարմնացել, որ խաչվեր ու փրկություն շնորհեր, ինչպես որ ասաց: Իսկ եթե չմարմնացավ, ապա ուրեմն սուտ վկայեցին Աստվածաշունչ բոլոր գրքերը եւ քրիստոնեական հավատը: Բայց մենք հավատում ենք, որ Բանն Աստված ինչպես որ ճշմարտապես մարմնացավ, այդպես էլ ճշմարտապես խաչվեց միեւնույն մարմնով: Ահա թե ինչու ենք եկեղեցիներում ամեն օր երգում. «Սուրբ Աստված, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ»:

Դարձյալ, նաեւ սա՛ հարցրու երկաբնականերին. «Մենք հավատում ենք, որ Բանն Աստված Սուրբ Երրորդության Անձերից մեկն է, եւ հավատում ենք, որ Սուրբ Երրորդությունը երեք Անձանցից կազմված մեկ Բնություն է: Արդ, դուք ասում եք, որ Բանի Անձը միավորվեց մարդկային բնության հետ, բայց Իր Բնությունը բաժանված պահեց, ինչի համար էլ Քրիստոսի մասին ասում եք, թե երկու բնություն ունի: Այժմ ինձ ասա՛, երբ դուք դավանում եք, որ այն Անձը, Որը Սուրբ Երրորդությունից մեկն է, իրարից բաժանված ու ոչ թե միավորված երկու բնություն ունի, ինչպես որ դուք եք ասում, այդպիսով արդյոք եւս մեկ բնություն չե՞ք ավելացնում Սուրբ Երրորդությանը: Եւ ինչպես որ Նեստորը, Քրիստոսի վերաբերությամբ «երկու անձ» ասելով, Երրորդությունը չորրորդության էր վերածում, այդպես էլ դուք Սուրբ Երրորդության մեկ Բնությունը երկուսի եք վերածում՝ մեկ Անձին երկու բնություն վերագրելով, քանի որ մարդկային բնությունն աստվածային Անձին եք միավորում, բայց Բնությունից բաժանված ու հեռու եք պահում. այդպիսով, ահա, Սուրբ Երրորդությանը եւս

մեկ բնություն եք հավելում: Արդ, եթե աստվածային Բնությունն անարատ ու անփոփոխ պահելու համար մարդկային բնությունը չեք միավորում Աստծու Բնության հետ, ապա ուրեմն պարտավոր եք նաեւ Անձն անխառն պահել: Հակառակ դեպքում, Անձին միավորելով, Սուրբ Երրորդությանը եւս մեկ՝ օտար բնություն եք հավելում»: Նրանք պատասխան չունեն, այլ միայն այն կարող են ասել, թե «մենք չենք ասում, որ Աստծու Անձը կամ էլ Բնությունը միավորվել է մարդկային բնությանը: Այդ միավորության մասին դժժեք եք ասում, թե Անձի եւ Բնության հետ է միավորվել, ու դժժեք եք Սուրբ Երրորդության մեջ մարդկային բնություն ներմուծում եւ երկու բնություն դարձնում: Քանի որ թեպետ ասում եք, որ մարդկային բնությունն աստվածային Բնության հետ միավորվելով՝ մեկ բնություն կազմեց, սակայն այդ երկուսից յուրաքանչյուրի էությունն անշփոթ ու անկորուստ եք պահում»: Եւ եթե երկաբնակն այդպես ասի, դու պատասխանիր ըստ Սուրբ Կյուրեղի, թե «քավ լիցի, որ մենք ասենք, թե մարմինը փոխարկվեց Աստվածության բնությանը, եւ կամ Բանն Աստված փոխարկվեց մարմնի բնությանը, քանի որ այդ երկու տարբերակներն էլ անհնար են, քանի որ աստվածային Բնությունը պարզ եւ անհասանելի է, ուստի արարվածներիցս որեւէ բան չի կարող հասնել Նրան կամ փոխարկվել Նրա Բնությանը»: Նաեւ, ըստ Սուրբ Աթանասի՝ «Նրանք, ովքեր մեր Փրկչի՝ Կույսից մարդկային մարմին վերցնելու վերաբերությամբ ընդունում են, որ Երրորդությունը չորրորդության է վերածվել՝ որպես թե մարմինն իբրեւ հավելում կցվել է Սուրբ Երրորդությանը, նրանք խիստ մոլորված են, որովհետեւ կարծում են, որ կատարյալ Աստվածությունը կարող է որեւէ հավելում ընդունել. այդ հիմարները չեն հասկանում, որ ոչ թե Աստվածությունը հավելում կատարելու համար է, որ Բանը մարմին է դարձել, այլ՝ որպեսզի վեր բարձրացնելով՝ նորոգի այդ մարմինը: Դեռ ընդհակառակը, այդ ամենի շնորհիվ մարդկությունը հավելում ունեցավ, քանի որ Բանի՝ մեզ հաղորդվելու եւ մեզ միանալու շնորհիվ մենք մահկանացու վիճակից դեպի հոգեւորն ու անմահությունը փոխադրվեցինք: Իսկ ահա Բանն Աստծու՝ մեր մարմինը վերցնելու շնորհիվ Սուրբ Երրորդությունը շարունակեց Երրորդություն մնալ՝ ոչ որեւէ հավելում ընդունելով եւ ոչ էլ որեւէ բանից զրկվելով, այլ Սուրբ Երրորդությունը մշտապես կատարյալ է ու ճանաչվում է որպես մեկ Աստվածություն, ինչպես որ երգվում է եկեղեցիներում»: Եւ նույնիսկ երբեմնասխալ Ալբերտ Մեծն է Սուրբ Աթանասի այս խոսքերի համաձայն խոսում՝ ասելով, որ «Այնտեղ փոփոխում տեղի


ունեցավ ոչ թե Վերցնողի, այսինքն՝ Աստծու կողմից, այլ վերցվածի, այսինքն՝ մարդու կողմից, քանի որ մարդն աստվածացավ, եւ մահկանացուն անմահացավ: Իսկ ահա Աստվածությունը մնաց այն նույն պարզության մեջ, որում մշտապես էլ գտնվում էր»: Ահա, ինչպես որ ասացի, մենք նույնպես այդպես ենք խոստովանում, քանի որ փոփոխումն ու այլալուծությունը հատուկ է արարվածներին, որ ենթակա ենք չափի, ձևի, հավելման եւ նվազման ու պարփակվում ենք այս կամ այն վայրում եւ որեւէ մի ազդեցությունից այլալվում ու փոփոխվում ենք: Մինչդեռ աստվածային Բնությունն անչափելի, անձեւ, առանց հավելման եւ նվազման է, անպարագիծ եւ անեզր, այդ իսկ պատճառով էլ որեւէ փոփոխություն կամ այլալուծություն չի կարող հասնել Նրան: Արդ, եթե տարակուսես այն հարցում, թե մարդկային բնությունը, որի մասին ասում ենք, որ այն միավորված է աստվածային Բնությանը, դրանով հանդերձ, ինչպե՞ս է անշփոթ ու անկորուստ մնացել, կամ հարցնես, թե աստվածային Բնությունն ինչպե՞ս է առանց հավելման կամ առանց փոփոխման եւ այլալուծության մնացել, այդ հարցն արդեն պարտավոր ես հանձնել հավատիդ ու հավատալ եւ ոչ թե քննասեր մտքիդ ապավինել: Որովհետեւ Սուրբ Գիրքն Աստծու բոլոր գործերը եւ մանավանդ Բանն Աստծու տնօրինությունը մտքի ու գիտության համար անճառելի եւ անհասանելի է համարում, ուստի եթե այդ հարցադրումները ենթակա լինեին մեր մտքին ու գիտությանը, ինչպե՞ս կարող էին անճառելի եւ անհասանելի լինել: Քանի որ այդ ո՞ր միտքն է, որ ունակ է հասկանալու կամ քննելու, թե այդ ինչպես եղավ, որ Նա, որ անբովանդակելի է, Ում երկինքն ու երկիրն անկարող են կրելու, հանկարծ հայտնվեց Կույսի արգանդում: Կամ այդ ինչպե՞ս եղավ, որ Բանն Աստված, Որը երկնային զորքերի համար այն աստիճանի սարսափազդու է, որ նրանք նույնիսկ չեն համարձակվում նայել Նրան, Նա Ինքը բռնվեց իրենցից ոչինչ չներկայացնող մարդկանց կողմից ու խաչվեց: Այս իսկ պատճառով էլ մենք ասում ենք, որ այդ Խորհուրդն անքննելի եւ անգիտելի է եւ միայն Նրան է հայտնի: Բայց եւ սուրբ վարդապետները, որպես օրինակ, միայն այնքանն են ասում, որ այդ Խորհուրդը համեմատելի է ցերեկվա ճրագի լույսի՝ Արեգակի հանդեպ ունեցած հարաբերակցության հետ: Ահավասիկ, ճրագի լույսն ամբողջական է մնում եւ երեւում է, չի անհետանում ու չի փոխարկվում արեգակի էությանը: Այդպես նաեւ՝ արեգակն էլ, առանց հավելումի եւ նվազման, պահպանում է իր լույսը՝ այլալուծության չենթարկվելով, ու ո՛չ փոխարկվում է ճրագի լույսին, ո՛չ էլ որեւէ կերպ այլալվում է:

Այդպիսով յուրաքանչյուրը մնում է իրեն հատուկ էություն մեջ ու առանց որեւէ կորստի է ներկայանում, սակայն արեգակի լույսը, ավելի զորեղ լինելով, հաղթում է ճրագի լույսին, եւ այն ամբողջովին իր պայծառության մեջ ամփոփելով՝ միացնում է իրեն: Ու այդ ճրագին հատուկ լույսին եւ զորությանն անգործության մատնելով էլ՝ արեգակն իր լույսն ու զորությունն է ցույց տալիս, չնայած որ չի վերացնում ճրագի լույսին բնորոշ հատկություններն ու նրա գոյությունը: Եւ դու չես կարող ասել, թե ճրագի լույսը որեւէ մի հավելում եղավ արեգակի լույսի համար կամ էլ թե՛ որեւէ ձեւով այլալեց այն: Այս օրինակի համեմատ գիտելի է նաեւ մարդկային բնության հարաբերակցությունն աստվածային Բնության հետ: Նույնն է նաեւ Աստվածաբանի ասածը, ըստ որի՝ Բանն Աստված միավորվեց մարմնի հետ ու մարդ դարձավ, եւ մարմինը խառնվեց Աստվածությանն ու մեկ եղավ, սակայն Վեհագույնը, տկարագույնին հաղթելով, չհաղթվեց նրանից եւ որեւէ կերպ չայլալվեց: Այս մասին սրանից առավել խոսելն ու հետաքրքրվելը հանդգնություն է, իսկ հավատով Սուրբ Գրքին հավատալը եւ նախնիների հետքերով ընթանալը՝ բարեպաշտություն, աներկբայորեն ընդունելն էլ՝ հավիտենական կյանք:

Շարունակելի

Գրաբարից փոխադրությունը՝
ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ԵՒ ԳԵՒՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ





Doi: 10.56737/2953-7843-2023.11-98

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ՊԿԱ ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սկիզբը՝ 2023 թ. թիվ ԺԱ., ԺԲ.

ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅՈՒՆ (SECULARIZATION)

ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Հարափոփոխ քաղաքական իրողությունների պայմաններում, մետամոդեռնիզմի¹ ընկալումներով պայմանավորված, մարդկությունը, ըստ ժամանակի հրամայականի, վերանայում է աշխարհիկության մասին իր պատկերացումները: Ավելին. նույնիսկ զարգացած սպառողական հասարա-

¹ Մետամոդեռնիզմ — Արվեստի, գրականության, ժամանակակից մարդու մտահայեցողական գործառույթների տիրույթում գործածվող այս երևույթը դարաշրջանների փոփոխական սահմանների անորոշության թակարդից խուսափելու նպատակով ենթադրում է քաղաքական, հասարակական-մշակութային, արժեքական բնույթի օրինաչափությունների ուսումնասիրություն՝ եռաչափ ժամանակի մեջ: Մետամոդեռնը ոչ թե իրականության միայն ազատական ընկալում է, այլև ներքուստ տարբերակված բազմաբեկո զգայական համակարգ, որտեղ իրար են միանում առաջին հայացքից իրարամերձ հանրայինը, անհատականը, պատմականը եւ իրավիճակայինը: Մետամոդեռնի տեսաբան Ջ. Մթորմը պնդում է. «Մետամոդեռնիզմը դիալեկտիկայի հաջորդ փուլն առաջացնելու կամ մտքի շարժը հեգեղյան սկզբունքներով (terms) առաջ մղելու փորձ է: Սոսկ պոստմոդեռնիզմի պատասխան կամ մոդեռնիստական ու պոստմոդեռնիստական եղանակների միջեւ տատանում լինելու փոխարեն մետամոդեռնիզմը հաղթահարում է դրանք երկուսն էլ իր եռաչափ ժամանակով, աշխարհիկ եւ հոգեւոր արժեքային զուգամիտումներով» (Metamodernism: Historicity, Affect and Depth after Postmodernism, ed. R. V. D. Akker, A. Gibbons and T. Vermeulen, Rowman & Littlefield International Ltd, էջ 34, JOSEPHSON STORM J. A., Metamodernism: The Future of Theory The University of Chicago Press, 2021, էջ 16, 17, 18):

կուրյուններում շարունակում է գերակա մնալ մղումը դեպի հոգեւոր պահանջմունքները: Այսպես՝ ամերիկացի սոցիոլոգ Մարկ Յուրգենսմեյերը ոչ ավանդական մեզաեկեղեցիների տարածումը դիտարկում է որպես ազատության դրսևորում: Իսկ քրիստոնեական քարոզիչներ Ջոել Օսթինը Տեխասում կամ Դեյվիդ Յոնգի Չոն Սեուլում հիմնել են համայնքային մեզաեկեղեցիներ, որոնց անդամների թիվը տատանվում է հիսուն հազար կանոնավոր հաճախողներից մինչեւ մեկ միլիոնի միջև²: Ընդ որում՝ Քրիստոնեական եկեղեցիների տարածվածությանը զուգահեռ, որը փաստորեն հասարակական-մշակութային նոր իրողություն է, եւ անգամ ավանդաբար ոչ քրիստոնեական քաղաքակրթություններում (Հարավային Կորեա) նորահայտ հոգեւոր շարժումները վկայում են հոգեւոր անվտանգության նորովի ընկալման մասին: Այսպես՝ հնդիկ հոգեւոր գուրու Սաթյա Սայ Բաբայի հիմնադրած հոգեւոր շարժումն իրականացնում է համամոլորակային նախագծեր, որոնց նպատակներն են «կրթությունը, առողջապահությունը, ջանքերն ուղղված մաքուր խմելու ջրի ապահովմանը եւ օգնությունը բնական աղետներից տուժածներին»³: Հանրային այսպիսի ծառայություններ մատուցելու համար հնդկական կառավարությունն ապահովում է հարկային արտոնություններ, ինչը ոչ միայն վկայում է հոգեւոր առաջնորդության սոցիալական շարժումների արդյունավետության, այլեւ պետության՝ դրա հանրային բովանդակության ճիշտ ընկալման մասին: Հետևաբար հայ իրականության մեջ աշխարհիկության անհիմն, տարածական, բովանդակային իմաստով ծեծված ընկալումները, մասնավոր (անհատական-խմբային) մեկնաբանությունները, մեր համոզմամբ, հաճախ անհարկի վիճարկում են եկեղեցու դերը հանրային կյանքում: Մինչդեռ քաղաքակրթության փորձը ցույց է տալիս, որ իշխանության թեւերի տարանջատումը, ինչպես նաեւ սահմանադրական այն կանոնը, որ պետությունն ու եկեղեցին գործում են իրարից անկախ, միանշանակ կարեւորում են հասարակական կյանքում եկեղեցու՝ որպես քաղաքացիավարական հաստատության դերը: Ասվածի լավագույն հիմնավորումն է անգլիկան, բողոքական եւ ուղղափառ ուղղվածության 113 եկեղեցիների միությունը՝ Եւրոպական եկեղեցիների համաժողովը: Որպես եւրոպական ապագան կառուցող հասարակական նախաձեռնություն՝ կազմակերպության նպա-

² Տե՛ս M. JUERGENSMEYER, “The Global Rise of Anti-authoritarian religion”, էջ 14 in C. Echle and L. T. Wana (eds.), *Trust in Politics*, Konrad-Adenauer-Stiftung, Singapore, 2020:

³ Անդ, էջ 15:

տակն է երոպական քաղաքական կառույցների եւ հաստատությունների հետ երկխոսության միջոցով քրիստոնյաների ձայնը երոպական քաղաքական ատյաններում (Բրյուսել, Ստրասբուրգ) լսելի դարձնել, քանի որ համաժողովը «հետեւողականորեն ու գիտակցումով հաստատում է, որ հավատը երոպական քաղաքական որոշումների կայացման մեջ կարեւոր բաղադրիչ է»⁴։ Կազմակերպությունն իր անհանգստությունն է հայտնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ զինադադարի խախտման կապակցությամբ, կոչ արել «ներգրավվել կառուցողական երկխոսության մեջ՝ ուղղված մարդկային կյանքերի եւ իրավունքների պաշտպանությանը, քաղաքացիական ենթակառուցվածքների եւ պաշտամունքի վայրերի (places of worship)» դեմ հարձակումների կանխարգելմանը»⁵։ Կազմակերպության հայտարարված նպատակներից է նաեւ ամբոխավարության ու կրթության միջոցով ապատեղեկատվության տարածման դեմ պայքարը⁶։ Այսպիսով՝ կազմակերպության քաղաքական օրակարգը հագեցած ու բազմաբովանդակ է՝ «Հայաստանի հակամարտությունից, «Բրեքզիտից», կրոնական ազատությունից սկսած մինչեւ կլիմայական փոփոխություն»⁷։ Երոպական Եկեղեցիների համաժողովն իր գործունեությամբ ակնհայտորեն բացառում է հավատի, կրոնական աշխարհայացք ունեցող մարդկանց համակարգային թերարժեւորումը։ Այս մոտեցումը կարեւոր գիտական եւ զաղափարական կովան է, հատկապես եթե նկատի ունենանք Հայ Եկեղեցուն ուղղված մեղադրանքները՝ ի մասնավորի Արցախի Հանրապետության հիմնախնդրի, ազգային ինքնությանն առնչվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար։ Այս մոտեցման կարեւորումը հնարավորություն կընձեռի հակաեկեղեցական դիրքորոշում որդեգրած քաղաքական որոշակի կողմնորոշում ունեցող քաղաքացիներին տեսնելու, որ ազատական արժեքներ եւ ժողովրդավարություն դավանող արեւմտյան քաղաքակրթությունը կարեւորում է քրիստոնեական կազմակերպությունների հետ բազմամակարդակ համագործակցությունը։ Ավելին, արեւմտյան քաղաքակրթությունն անուղղակիորեն խրախուսում է քաղաքացու ինքնորոշման, հանրային փոխըմբռնման, քաղաքական

⁴ *Steu* Conference of European Churches, Churches Shaping Europe's Future: CEC's Journey from Novi Sad to Tallinn, "Under God's blessing – shaping the future" 2023 CEC General Assembly, 14 -20 June 2023, Tallinn, Estonia, էջ 19:

⁵ Անդ, էջ 31:

⁶ Անդ, էջ 45:

⁷ Անդ, էջ 52:

հարթակների հասանելիության բարձր աստիճանը՝ որպես մարդակենտրոն, քաղաքացիավար կառավարման գործառնություն: «Ծայրամասային» երկրներում վերջին տարիներին իրականացրած հետազոտությունները վկայում են, որ անգամ նոր ձեւավորվող համայնքներում Եկեղեցու դերը մեծ է հանրային համակեցության եւ համակարգային կամարտահայտության, որոշակի համայնքային խնդիրներ լուծելու առումով: Այսպես՝ Քեմիայի Մայ-մաեիյու բնակավայրում ձեւավորված փոքրաթիվ անգլիկան համայնքի միակ Անգլիկան Եկեղեցին ռազմավարական դիրքորոշում է որդեգրել՝ տեղական մակարդակով (local area) որոշակի համայնքում պայքարել աղքատության դեմ՝ այն կերպափոխելով զարգացման միջոցով⁸: Տեղի քահանան հավաստում է, որ մարդիկ Տանգանիայից եւ Գանայից գալիս են սովորելու, թե համայնքում ինչպես են աշխատում միկրոֆինանսավորվող նախագծերը⁹: Ավելին. համայնքում ստեղծվել է գրադարան, ինչը «ոչ միայն ծառայում է որպես կրթական հաստատություն, այլեւ իբրեւ մի վայր, որտեղ երիտասարդներն ու տարեցները կարող են հավաքվել շփվելու (socialize) նպատակով»¹⁰: Այսպիսով՝ եկեղեցական համայնքը ոչ միայն հոգեւոր-կրթական գործունեություն ծավալող միություն է, այլեւ ներհամայնքային շփումներ զարգացնող՝ միաբնույթ համակեցություն (եզրույթն մերն է.՝ Մ. Մ., Գ. Պ.) կերտող կառույց:

Արեւմտյան Միչիգանի համալսարանի հասարակագետ Վյաչեսլավ Կարպովն այս երեւույթը՝ ապաշխարհիկացումը (desecularization), բնորոշելու համար առանձնացնում է չափորոշիչներ: Դրանք են՝ նախկինում աշխարհիկացած հաստատությունների եւ կրոնական կանոնների մերձեցումը, կրոնական հավատալիքների եւ արարողությունների (practices) վերածնունդը, կրոնի վերագարձը հանրային ոլորտ¹¹: Վ. Կարպովը կրոնի վերածնունդը բացատրում է առարկայական իրողություններով, որոնք են՝ «քրիստոնեության վերելքը «համընդհանուր հարավում», համամոլորակային մահմեդական վերածնունդը, կրոնի վերակենդանացումը Ռուսաստանում եւ Չինաստանում»¹²:

⁸ Անդ, D. M. KARIUKI, “The Church’s Role In Community Development”, Diaconia University of Applied Sciences, (MA thesis), 2018, էջ 27:

⁹ Անդ, էջ 30:

¹⁰ Անդ, էջ 29:

¹¹ Տե՛ս V. KAPOV, “Desecularization: A Conceptual Framework”, Journal of Church and State, vol. 52, no. 2, Advance Access publication, July 21, 2010, էջ 239–240, տե՛ս doi:10.1093/jcs/csq058:

¹² Անդ, էջ 234:

Ասվածի վրա հիմնվելով՝ անընդունելի եւ անհեռանկար ենք համարում ՀՀ-ում որոշակի փաղափական կողմնորոշում ունեցող կուսակցությունների կամ փաղափացիական կառույցների՝ Եկեղեցու եւ պետության տարանջատման սկզբունքի շուրջ ծավալած ձեռնածությունը (manipulation): Հիշյալ մոտեցումը խոչընդոտում է նպատակամետ կերպով օգտագործել Հայոց Եկեղեցու միջոցներն ու հնարավորությունները, որն էլ նպաստում է ինֆորմային ճգնաժամի խորացմանը: *Բացի դրանից՝ կրոնի ու կրոնական կազմակերպությունների քաղաքացիավար բնույթը ներքին ու արտաքին քաղաքական մարտահրավերներին արձագանքելու նպատակով կիրառելը համամարդկային գործընթաց է: Ձանազան քաղաքակրթություններ հնարավոր ապահովարկներից խուսափելու, համամարդկային քաղաքացիավարության սկզբունքներին հարելու, «փափուկ ուժի» գործիքակազմը հզորացնելու նպատակով որդեգրում են կրոնական փիլիսոփայությունը հարող բազմադերային գործընթաց, որը կոչված է ոչ միայն գաղափարական, խորհրդանշական պաշարների զինանոցի մեծացմանը, այլեւ ներքաղաքակրթական մշակութային բնագրի վերաներգրվմանը՝ սեփական տեսակի բնականոն արդիականացման միտումով: Այս առումով ուշագրավ է Ինդոնեզիայի օրինակը, որտեղ «Մահմեդական գիտնականների վերածնունդ» կազմակերպությունը վերջերս նախաձեռնել է «համընդհանուր շարժում հանուն մահմեդական իրավունքի բարեփոխման՝ այնպիսի մեկնաբանություններով, որոնք օգուտ կբերեն ամբողջ մարդկությանը՝ անկախ կրոնական պատկանելությունից»¹³: Ավելին. ավանդական եւ իսլամական մշակութային բնագրերը համադրելու մղումով նույն կազմակերպությունը որդեգրել է «Արշիպելագի մահմեդականություն» ներառական հայեցակարգը, ինչը ենթադրում է «ինդոզեն ինդոնեզական մահմեդականություն, որը ներառում է տեղի նախամահմեդական սովորույթները (practices)»¹⁴: Մշակութային բնագրի այսպիսի վերանայումը, սակայն, զերծ չէ քաղաքական ենթիմաստից. «Մահմեդականության չափավոր մեկնաբանությունն այն հիմնական դիվանագիտական գործիքն է, որը ներկայացնում (promote) է Ինդոնեզիան որպես խաղաղասեր, առաջադեմ...»¹⁵:*

¹³ SĒU A. T. SEETH, Indonesia's Islamic Peace Diplomacy: Crafting a Role Model for Moderate Islam GIGA Focus | Asia | Number 2 | February 2023 | ISSN 1862–359X, էջ 1:

¹⁴ Անդ, էջ 5:

¹⁵ Անդ, էջ 3:

Ինդոնեզական օրինակը վերահաստատում է մեր այն համոզմունքը, որ ազգային-քաղաքակրթական մշակութային բնագիրը կրող եւ դարերի հոլովույթում այն զարգացրած կառույցը, ինչպիսին է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, համընդհանուր ու տեղային քաղաքակրթությունների անջրպետը, քաղաքակրթական խզումներն ու քաղաքական խնդիրները հումանիզացման ճանապարհով հաղթահարելուն միտված հաստատություն է: Այս շարակարգում վստահորեն կարելի է փաստել, որ եկեղեցական բարեգործական կազմակերպությունների՝ իբրեւ բնական աղետների, հակամարտությունների ժամանակ կազմակերպված ու արդյունավետ կերպով մարդասիրական օգնություն տրամադրող հաստատությունների նշանակությունը նույնպես Հայաստանում թերագնահատված է: Ավելին. ակնհայտ է, որ առկա է Հայ Եկեղեցու եւ քաղաքացիական հասարակության մյուս դերակատարների միջեւ համատեղ մարդասիրական գործունեության ծավալելու երկխոսության ու փոխըմբռնման որոշակի պակաս, քանի որ նկատելի չեն մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ջանքերը՝ ուղղված Հայ Առաքելական Եկեղեցու հետ երկխոսության ծավալմանը: Համոզված ենք, որ եթե ՀՀ-ում գործող եւ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններն անկեղծ են իրենց մարդակենտրոն ու մարդասիրական աշխարհայացքով պայմանավորված մղումներում եւ նպատակների մեջ, ապա պետք է, նախաձեռնողականություն դրսեւորելով, ձգտեն ձեւավորել համակարգային փոխհարգանքի պահանջ, ընդունեն Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդությունը ազգային-հոգեւոր կյանքի կազմակերպման, հայկական քաղաքակրթության զարգացման, հայկական մշակութային բնագրի պահպանման ու շարունակական վերաարժեւորման շարակարգում:

Համընդհանուր քաղաքացիական հասարակությունը «Քովիդ-19» համաճարակից դասեր քաղել է: «Civicus» քաղաքացիական կազմակերպության համաձայն՝ «Քովիդ-19» համավարակը ցույց տվեց, թե որքան վատ են պատրաստված հաստատությունները բոլոր մակարդակներում համընդհանուր ճգնաժամի առաջն առնելու գործում (emergency): Պատրաստվածության պակասը միլիոնավոր կյանքեր խլեց: Պետականակենտրոն մոտեցումները գերիշխեցին, նեղ սահմանված ազգային շահերը գերակայեցին, եւ շատ քիչ միջազգային համագործակցություն

կար»¹⁶: Կարելու է ընդգծել, որ թեպետ միտում չունենք թերագնահատելու հայկական համայնքներում կամ ՀՀ-ում գործող զանազան հասարակական կազմակերպությունների դերը, այնուհանդերձ վստահ ենք, որ Հայ Առաքելական Եկեղեցին իր՝ ժամանակների փորձություններով անցած կազմակերպական ներուժով, միջեկեղեցական կապերով եւ հորիզոնական համակարգային երկխոսության պատրաստակամությամբ ՀՀ ապագաբանական գլխավոր հենասյուներից է: Ուստի քաղաքացիական տրոն կառավարման ցանկացած ռազմավարություն պետք է ներառի Հայ Եկեղեցին, մանավանդ որ ներքին ու արտաքին մարտահրավերներից ազգային շահերի պաշտպանությունը չի կարող միարժեքորեն դրվել պետութենական հաստատությունների ուսերին: «Հայ ազգի ռազմավարական շահերը պաշտպանող եւ նպատակների իրագործման հիմնահարցերն ամբողջացնող ռեալարդիտիկական ազգային գաղափարախոսությունը պատմության հոլովույթում չի կարողացել զերծ մնալ ավերչասեր հզորների քաղաքական որոգայթներում հայտնվելու հարկադրանքից: Քանի որ քաղաքակիրթ մարդկության գործած ութ մահաբեր մեղքերից մեկն էլ այն է, որ կառավարման համընդհանուր խնդիրների լուծման համամարդկային մտահոգության անվան տակ աշխարհաքաղաքական գործընթացների խնդրո առարկան եղել եւ մնում է «կախյալ զարգացման» եւ «հասնող արդիականացման» շրջանակներում գտնվող երկրների պաշարների անխնա օգտագործումը»¹⁷: Այսօր ավելի, քան երբեւէ, հայ մարդու քաղաքակրթական եւ պետութենական կենսագործունեությամբ սրբագործված հայրենիքը կանգնած է բնական պաշարների եւ ընդերքի հարստությունների պատասխանատու օգտագործման հիմնախնդրի առաջ: Ակնհայտ է, որ պետական հաստատությունների ներուժը բավարար չէ արտաքին ազդեցություններին դիմագրավելու համար, հետեւաբար Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես գերակա քաղաքացիական հաստատություն, համընդհանուր ընկալման պարագայում կարող է դառնալ համահայկական ներազգային խոսույթի հանրային համակարգայնացված մշտակա հարթակ, որը կենսունակ է իրեն նետված ներքին ու արտաքին մարտահրավերներին արձագանքելու, պատասխան մարտահրավերներ նետելու, ավերչասեր ուժերի ազդեցությունը զսպելու, Հայաստանը հո-

¹⁶ SCU Civicus, State of the Civil Society Report, 2023, էջ 78:

¹⁷ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Քաղաքական արդիականացման եւ զարգացման հիմնահարցեր, Երևան, 2004, էջ 148:

գեւոր հայրենիքի վերածելու հարցում: Մասնավորապես հայ մարդուն՝ իր տեսակի պահպանման գիտակցմամբ ստեղծարար աշխատանքի, ինքնաիրացման, անձնային, մասնագիտական, ցանցային հզորացման ձգտումը պետք է հայրենիքում ստանա ինքնահաստատվելու հնարավորություն, ինչը քիչ հավանական է առանց ազգային ու պետական, քաղաքացիական կառույցների վճռորոշ ներգրավման:

Այսպիսի զարգացման ուղի են բռնել նաեւ աշխարհի հզորները: Հնդկաստանի կառավարությունը հնդկական սփյուռքին հայրենիքի կյանքում ներգրավելու նպատակով իրականացնում է «Ճանաչիր Հնդկաստանը», «Ակադեմիական ցանցի համընդհանուր նախաձեռնություն», «Հնդկական տեխնիկական եւ տնտեսական համագործակցություն», «Նոր սերնդի առաջացման ալյանս»¹⁸ եւ նմանօրինակ ծրագրեր, որոնք կոչված են բազմաոլորտ համագործակցության միջավայրում Հնդկաստան-սփյուռք կապերի զարգացմանը:

Նորագույն հետազոտությունները վկայում են Եկեղեցու ոչ միայն հասարակական, քաղաքակրթական, քաղաքական դերի ու ներգրավվածության, այլեւ հասարակական-մշակութային միջավայրի ու մարդու առողջության վրա նրա ունեցած բարենպաստ ազդեցության մասին: Այսպես՝ ցավի բուժագետ դոկտոր Զուլիանո լո Բլանկոն եւ կլինիկական հոգեբան Մայքլ Շատմանը, անդրադարձ կատարելով իտալացիների կյանքում Կաթոլիկ Եկեղեցու պատմականորեն ձեւավորված դերին, հասարակական արժեքների ու կանոնների վրա վերջինիս ազդեցությանը, փաստում են, որ «եթե անգամ շատ իտալացիներ հետեւողական չեն (aren't observant), ապա Եկեղեցին առանցքային դեր է խաղում իտալական համայնքներում՝ ապահովելով հոգեւոր ուղղորդում, բարոյական կրթություն ու նպատակի զգացողություն»¹⁹: Ներողամտության, կարեկցանքի ու ապրումակցման մասին խոսելով՝ գիտնականները հավաստում են, որ Եկեղեցին կարող է օգնել նվազեցնելու մարդկանց կախվածությունը թմրանյութերից, «առաջարկել աջակցություն ու փրկություն նրանց, ովքեր կախվածության զոհ են դարձել»²⁰: Այսպիսով՝

¹⁸ S. P. B. DIVAS, Indian Ministry of External Affairs, "Diaspora: Reliable Partners for India's Progress" in A. KAAL, Strengthening Overseas Indian Community Engagement, January 12, 2023, էջ 4, տե՛ս <https://static.pib.gov.in/WriteReadData/specificdocs/documents/2023/jan/doc2023112151701.pdf>:

¹⁹ S. J. L. BIANCO AND M. E. SCHATMAN, "The Italian Job": How Social, Family Cohesion, and the Church Have Helped Spare Italy from a Prescription Opioid Crisis", Journal of Pain Research, 2023:16, էջ 2940:

²⁰ Անդ:

գիտնականները նոր լույսի տակ են մեկնաբանում Եկեղեցու դերը՝ շեշտելով քրիստոնեական, ընտանեկան, համամարդկային արժեքները հասարակական կանոնների ու արժեքների հետ զուգորդելու նրա գործառույթը: Այս հիմքի վրա է կառուցվում հասարակության, մարդու հոգեւոր, մտավոր եւ ֆիզիկական անվտանգությունը: Եթե բարեգործության, քաղաքական որոշումների, քաղաքացիավարության, հակամարտություններից տուժածներին մատուցվող օգնության, հայրենիք-սփյուռք ցանցային հաղորդակցության, կրթության առումով Եկեղեցու դերը համարենք մեր կողմից բավարար չափով փաստված, ապա անհրաժեշտ է դրանց շարքին դասել նաեւ մարդու, ընտանիքի, հանրույթի հոգեւոր, բարոյական դաստիարակության ու համընդհանուր ներհամայնքային, համազգային արժեքների միջոցով մտավոր ու ֆիզիկական առողջության ապահովման, հանրույթի հոգեբնախոսական կենսունակության բարձրացման հույժ կարեւոր դերակատարում ունենալու իրողությունը: Արցախի հանրապետության բնակչության դեմ իրականացված ցեղասպան գործողությունները, հետպատերազմական ցնցումը, արտաքին ու ներքին տարաբնույթ մարտահրավերները՝ ընդերքի անխնա շահագործում, տնտեսական անհամաչափ զարգացում, ինքնաիրացման հեռանկարների բացակայություն, հարկադիր աշխատանքային տեղափոխություն եւ այլն, պարտադրում են հայ մարդուն ունենալ առողջ մարմնում առողջ հոգի, ինչը ենթադրում է հոգեւոր անվտանգության բովանդակապես նոր մակարդակ: Անհրաժեշտ է Հայ Առաքելական Եկեղեցին դիտարկել որպես կրթադաստիարակչական, հոգեւոր-բարոյական ինքնակազմակերպման, ցանցային ներուժով ու քաղաքակրթական ինքնությամբ օժտված բացառիկ կառույց: Անհրաժեշտ է, որ այն առավել գործուն ներգրավվի քաղաքացիավարության ու համայնքային վերակերտման գործընթացներում, նաեւ կրթության, մշակույթի հարցերով զբաղվող պետական գերատեսչություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, բանակում՝ խորհրդատվական մարմնի պաշտոնական կարգավիճակով: Պատմականորեն, ինչպես նկատում է Ստեփան Կերտողը, հենց այսպիսին է եղել հայ մարդու ակնկալիքն իր Եկեղեցուց եւ նրա սպասավորից. «Քահանան պիտի լիներ եւ Ավետարանի քարոզիչ, Եկեղեցու պաշտոնյա, եւ ուսուցիչ, եւ գյուղատնտես, եւ բժիշկ, եւ փաստաբան, որ կարողանար համայնքի բոլոր պահանջները բավարարել»²¹:

²¹ Ս. ԿԵՐՏՈՂ, Հայ Եկեղեցու բարեկարգության խնդրի շուրջ, «Էջմիածին», 2010, ժԲ., էջ 14:

Ամփոփենք. Գեւորգ եպս. Սարոյանը փաստում է, որ «մինչեւ հինգերորդ դարը հայը կենտրոնացել էր ընկերային անարդարության ու ընդարձակ բովանդակությամբ (broadly based) քրիստոնեական սոցիալական պատասխանատվության վրա», ինչն այն բանի վկայությունն է, որ հայկական քաղաքակրթական ինքնությունն ու մշակութային բնագիրը, ի դեմս Հայ Առաքելական Եկեղեցու, դարերի մեջ պահպանվել ու արդի ժամանակներ է հասել համամարդկային հիմնախնդիրների խորքային գիտակցման, արժեքների վրա հիմնված հասարակական կյանքի կանոնավորման անհրաժեշտության եւ հանրային շահի ընկալումների շնորհիվ: Ավելին, սոցիալական պատասխանատվության գիտակցումն ունեցել է նաեւ իրավական ու տնտեսական շահումներ, քանի որ «չքավորների ու ճնշվածների համար պատասխանատվությունը ներկայացվում է որպես իրավացիության (righteousness) ու արդարության հարց»²²: Հայաստանում քրիստոնեության տարածումն ու հատկապես նրա՝ որպես պետական կրոն հռչակումն ընթանում էին բարդ աշխարհաքաղաքական պայմաններում: Դեպի պարսկական պետություն կողմնորոշումը, ինչն ուժ էր ստանում Ասորիքից, մի կողմից, իսկ հունական կրթության ազդեցությամբ կողմնորոշումը դեպի Հռոմ (ապա նաեւ՝ Բյուզանդիա), մյուս կողմից, գոյաբանական խնդիր էին ստեղծել Հայաստանում: Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցին» աշխատության մեջ կարդում ենք, որ իրարամբերժ կողմնորոշումների այս հանգամանքներում «մեծագույն կարիքն ստեղծեց հոգեւոր ազատության լավագույն միջոցը՝ սեփական գիրն ու գրականությունը, եւ հայկական քրիստոնեությունն ու նրա հետ միասին հայ ժողովուրդը փրկվեցին անխուսափելի կորստից»²³: Այսպիսով՝ դարերի շրջափուլերն ապացուցել են, որ Հայ Առաքելական Եկեղեցին պահպանել, զարգացրել, արդիականացրել է հայ ինքնության քաղաքակրթական շահումը: Ժամանակակից աշխարհում փափուկ, սուր եւ խելացի ուժի համադրությամբ քաղաքակրթական երկխոսության ու մրցակցության պայմաններում, երբ չինական Կոնֆուցիոսի ուսումնական հաստատության հինգ հարյուր մասնաճյուղերն²⁴ աշխարհում տարածում են չինական քաղաքակրթական

²² Տէս Գ. SAROYAN, The Origins of Armenian Philanthropy: Nerses The Great and the Question of the Greek Influence (Critical Examination, 2022 p. 119, էջ 122:

²³ Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, Հայոց Եկեղեցին, Ս. էջմիածին, 2014, էջ 42:

²⁴ Տէս Շ. WALKER, What is Sharp Power? Journal of Democracy, July 2018, Volume 29, Number 3, էջ 13:

արժեքները մշակույթի, լեզվի, կրթության միջոցով, ազգային մրցունակության ու պետության համակարգային կենսունակության ապահովման տեսակետից կարեւորվում են մշակութային բնագրի վերարժեւորման նախադրյալները: Մարդկության քաղաքակրթական ընթացքի ներկայիս փուլում, երբ ազատական արժեքների, եկեղեցու եւ պետության տարանջատման ջատագով եւրոպական Միությունն ընդունում է իր հոգեւոր առնչակցությունը եւրոպայի «մշակութային, կրոնական եւ մարդասիրական» ժառանգության հետ՝ շեշտելով, որ «կրոնները եւ մասնավորապես քրիստոնեությունը եղել եւ տակավին մնում են եւրոպայի մշակույթները ձեւավորող կարեւոր գործոն»²⁵, առավել, քան երբեւէ, այժմեական է դառնում հայկական քաղաքակրթության հոգեւոր ժառանգության մշակութային բնագրի ներգրավումը հասարակական-քաղաքական կյանքին մերօրյա քաղաքական խառնաշփոթության պայմաններում: Ըստ այդմ՝ ընդգծենք այն ապագաբանական դիտարկումը, որ «...ոգեղենությունը՝ որպես մարդու գործունեության պարուրած եւ արդիականացման գործընթաց, հիմնվում է ոչ միայն մշակույթի, գիտելիքի, գիտության, սոցիալական փորձի, այլեւ մարդու կողմից իրականությունը ստեղծագործաբար իմաստավորելու վրա: Այս դիտանկյունից ոգեղենությունն ինքնակերտման աղբյուր է եւ կոչված է փոխակերպելու արժեշահային կողմնորոշիչները, ինքնությանն ուղղված մարտահրավերները՝ կանխատեսելով այն ամենը, ինչն ուղղված է անվտանգ ապագայի ապահովմանը»²⁶:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ անել հայ մարդու անվտանգ զարգացումն ու փառափառական ինֆնությունը համաշխարհային փառափառական իրողություններին հաւաքեւակցելու համար: Այստեղ հարց է ծագում՝ հայ մարդն արդյո՞ք իրատեսորեն է ընկալում իր քաղաքական ապագան: Որքանով են հեղափոխական եւ բնաշրջական վերափոխումները ՀՀ-ում սնվում հայ մշակութային բնագրի առասպելական եւ ուստոպիական քաղաքական էությունից: Արդյո՞ք իրականում հասարակական-մշակութային բնագրի արժեբանական որակների արմատավորումը հայ հասարակության ինքնագիտակցու-

²⁵ *ՏԷՍ* Commission of the Bishops' Conferences of the European Union, Article 17 of the Treaty of the Functioning of the European Union, 2010, *տե՛ս* <https://www.comece.eu/wp-content/uploads/sites/2/2022/04/20100521-Article-17-of-the-Treaty-on-the-Functioning-of-the-European-Union.pdf>:

²⁶ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ մեր ժամանակը, Երեւան, 2023, էջ 54:

թյան մեջ լուծում են համընդհանուր կառավարման անորոշ ապագայից ծագող մարտահրավերների հիմնախնդիրը: Մեր դիտարկումները որոշակիացնենք առասպել–ուտոպիա երկվության խոհափիլիսոփայական սահմանների հստակեցմամբ: Ըստ ապագաբանության մասնագետ Ֆ. Պոլակի՝ «...միֆն էլ, ուտոպիան էլ ապագայի պատկեր են ստեղծում, սակայն տարբերությունները մեծ են: Ուտոպիան իրականում կարող է համարվել ապառաժասպելականացման ամենահին ու ամենամաքուր օրինակներից»: Փաստորեն՝ միֆի ու ուտոպիայի միջեւ «էական տարբերությունն աշխարհայացքի եւ կյանքի փիլիսոփայության մեջ է, որոնք դրանցից յուրաքանչյուրն արտահայտում է մարդկային ու գերմարդկային ուժի հարաբերությունների գնահատման մեջ: Միֆը բացարձակականացնող ու սրբազան է, ուտոպիան՝ բաց, անորոշ ու հարաբերական»²⁷: Մեր ուսումնասիրության տեսակետից կարելու է ուտոպիայի վերոնշյալ սահմանումն այն հիմնավորումով, որ համընդհանուր կառավարման փոխակերպումները երկդեմ են: Մի կողմից դրանք արտաքին չափման ապագաբանական տիրույթում են, մյուս կողմից առնչվում են աշխարհակարգի ու մարդու միջեւ բազմամակարդակ հաղորդակցությանը, ինչով, կարծում ենք, զուգակցվում են առասպելական մտածողության ու քաղաքական ուտոպիայի անորոշ սահմանները: Այստեղից էլ կարելի է հետեւել, որ ապագան առնչվում է եւ հասարակական-մշակութային, հասարակական-հոգեբանական, եւ աշխարհաքաղաքական ու միջազգայնագիտական ոլորտներին: Այս փոխատեղությունների բարդ համակարգից էլ բխեցնում ենք Հայ Առաքելական Եկեղեցու դերի կարեւորումը: Քաղաքական իրականության մեջ Հայ Առաքելական Եկեղեցու դերի մասին հնչող մերժողական տեսակետները չեն տեղավորվում քաղաքակրթության փորձի տրամախոսության տիրույթում: Այն պայմանավորված է նաեւ քաղաքական գիտության հասկացությունների իմացության թերացումով: Այսպես՝ այն սկզբունքային մոտեցումը, որ «իշխանությունը հնարավորություն է տալիս տնօրինելու մարդկանց վարքը եւ գործունեությունը հեղինակության, իրավունքի, բռնության, հարկադրանքի, մենախոսության, երկխոսության եւ համագործակցության միջոցով»²⁸, բացահայտում է իշխանության համակարգային

²⁷ S. F. POLAK, The Image of the Future, Amsterdam. London. New York, 1973, էջ 171:

²⁸ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Քաղաքական լիդերություն, Երեւան, 2017, էջ 16:

Եւ մարդակենտրոն դերակատարների կողմից իշխանությունը որպես պատասխանատվության վերաբերվելու հրամայականը: Այդ ենթիմաստում համարձակվում ենք առաջարկել, որ Հայ Առաքելական Եկեղեցին ազգային համագործակցության (համակցության) նոր օրակարգի եւ անվտանգ ապագայի տեսլականի ձևավորման նկատառումներով պետք է զարգացնի իր PR տեխնոլոգիաները՝ ցանցավորելով իր կապերը երիտասարդության, պետական, ազգային, հասարակական ամենատարբեր կառույցների հետ: Համոզված ենք, որ միայն այդպես Հայ Առաքելական Եկեղեցին կընդունվի ոչ միայն սոսկ որպես դարերի փորձ կուտակած ազգային-կրոնական կառույց, այլեւ որպես հանրային քաղաքականության հաստատություն՝ ստանձնելով ներհայաստանյան ու սփյուռքյան ինքնության բնականոն արդիականացման, Հայաստանի եւ հայ մարդու անվտանգ զարգացման, ապագաբանական եւ արժեքանական տիրույթը ներդաշնակողի պատասխանատվությունը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, հանրային կապեր, նորագույն միջոցներ, եղանակներ:

РЕЗЮМЕ

Цель статьи – рассмотреть взаимосвязи Армянской Апостольской Церкви и глобального управления. В то же время нами, в рамках рассматриваемой многоуровневой темы, выявлено, возможно впервые, недооценка роли Армянской Апостольской Церкви в футуристических дискуссиях о глобальном управлении.

Мы убедились в том, что принципами отделения Церкви от государства и секуляризации злоупотребляют не только для того, чтобы недооценивать многофункциональную и институциональную роль Армянской Апостольской Церкви, необоснованно ограничивать ее, но и тенденциозно игнорировать общественную роль Армянской Апостольской Церкви, значение Церкви в целом, обосновывая все это на фоне модернизации армянской идентичности с точки зрения императивов трансформации глобального управления.


В результате многогранного исследования нами доказана необходимость пересмотра повестки дня Армянской Апостольской Церкви по связям с общественностью. Нами показано также необходимость расширения масштаба включения Армянской Апостольской Церкви, как стержневого института публичной политики, в публичный дискурс, чтобы выявить ее духовный, институциональный, образовательный, организационный, сетевой, межобщинный потенциал (общины Диаспоры), вплоть до наделения Армянской Апостольской Церкви консультативной функцией в департаментах образования, культуры, органах местного самоуправления и т.д. Также была сформулирована необходимость модернизации общественного сознания, признающего Армянскую Апостольскую Церковь в качестве основного института публичной политики с социально институционализированной постоянной платформой, в качестве всеармянского внутринационального гласа. С этой точки зрения весомая роль Армянской Апостольской Церкви, как всеармянского института публичной политики в межобщинных отношениях (общины Диаспоры), оправдана. Из этого видения были также сделаны выводы относительно многостороннего сетевого сотрудничества личности-общества-государства-диаспоры и внутри-политического диалога.

SUMMARY

The purpose of the article is to examine the interrelations between the Armenian Apostolic Church and global governance. At the same time, the role of the Armenian Apostolic Church, perhaps for the first time, is being re-evaluated in futuristic discussions on global governance within the framework of the multilevel topic under consideration.

As a result of a multifaceted study, the necessity of revising the agenda of public relations (PR) of the Armenian Apostolic Church is proven. It has been shown that it is necessary to expand the horizon of the inclusion of the Armenian Apostolic Church in public discourse as an institution of public policy, in order to identify its spiritual, institutional, educational, organizational, networking, inter-communal (Diaspora communities) potential, up to the endowment of the Armenian Apostolic Church with an advisory function in educational, cultural departments, local self-governing bodies, etc. The necessity to form a public consciousness that recognizes the Armenian

Apostolic Church as a primary public policy institution – a socially institutionalized permanent platform of the Pan-Armenian intranational Logos-has been formulated. From this perspective, the weighty role of the Armenian Apostolic Church as a Pan-Armenian institution of public policy in inter-communal (Diaspora communities) relations has been justified. Conclusions were also drawn from this vision concerning the multilateral network cooperation of the individual-society-state-Diaspora and the internal political dialogue.



ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ԵՊՀ

ԵՐԱՆԵԼԻ ՏԵՐ ԹՈՂԻԿԸ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՒՅՍԻ ԱՅՈՒՆԵՐԸ¹

Վարագա խաչը հայ քրիստոնեության կարեւոր սրբություններից մեկն է, փրկչական խաչի արնաներկ մի բեկոր, որի պահպանությունն ազգային եւ կրոնական բարձր արժեք է: Վարագա Սբ. Խաչի պատմությունը խորհրդանշական է առաջին հերթին իր համազգային բնույթով, որը կրկին անգամ վերահաստատվում է Վայոց ձորի Թանահատի վանքի Վարագա Սբ. Նշան եկեղեցու² եւ Տավուշի Նոր Վարագավանքի հիմնադրումով ու դրանց ուխտի շարունակականության: Բուն հայկական սրբության պաշտամունքը միավորում էր հայ ժողովրդին աշխարհագրական եւ պատմական առումով՝ միաձուլելով պաշտոնական եւ ժողովրդական քրիստոնեությունը: Հրաշալի պատմությունը տեր Թողիկի եւ Հովելի, Սբ. Հռիփսիմյանց՝ Վասպուրականով կատարած ճանապարհորդության, լույսի սյուների իջման եւ ազգային պաշտամունքը Վարագա լեռան հետ կապելու մասին այսօր էլ ունի արդիականության իր մասը, քանի որ առնչվում է կորուսյալ հայրենիքի մշակութային կարեւոր արժեքի գնահատմանը եւ իմաստավորմանը:

Այդ սրբության մասին պատմող գրավոր աղբյուրները՝ մասնավորապես բանահյուսական «Վարագապատում» երկը, մանրամասնորեն դիտարկել է Արծրունի Սահակյանը³: Գիտնականը հրատարակել է նաեւ «Վարագապատումի» բնագրերը, ներկայացրել պատմական փոփոխականության եւ տարածման ուղիները:

Այս հետազոտության նպատակն է դիտարկել Վարագա Սբ. Նշանի կարեւորությունը ժողովրդի մեջ, ինչն արտահայտվել է տոնակատարության եւ ուխտագնացության շրջանում, սրբավայրին նվիրված

¹ Ստացվել է՝ 17.04.2023, գրախոսվել է՝ 30.04.2023, էլ. հասցե՝ simonian_lilit@mail.ru:

² ՔԱՋԲԵՐՈՒՆԻ, Ճանապարհորդական նկատողություններ, Երեւան, 2003, էջ 262:

³ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ, Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում, Երեւան, 2014, էջ 109–114, բնագրերը՝ էջ 293–321:

տեղական հրաշապատում ավանդազրույցներով, երգերով եւ արարողություններով: Այստեղ քննարկվում է նաեւ այն վարկածը, որ լուսի տասներկու սյուները, որոնք ցույց են տվել ապագայում կառուցվելիք վանքերի վայրերը, իրականում մատնանշել են քրիստոնեացման ենթակա նախաքրիստոնեական սրբավայրերի տեղերը:

ՎԱՐԱԳԱ ՍՔ. ՆՇԱՆԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ⁴

Վարագա խաչի ավանդությունն սկսվում է Հռիփսիմյաց կույսերի ճանապարհորդությունից եւ մասունքը Վարագա լեռան ինչ-որ անհայտ վայրում պահելուց եւ ավարտվում է ավելի քան երեք դար անց՝ տեր Թողիկի աղոթքի շնորհիվ լուսի մեջ հայտնվելով եւ այդ իրադարձությանը նվիրված տոնի հաստատումով: Ավանդությունը շարադրված է Հայսմավուրքներում⁵, Ճառընտիրներում եւ առանձին ճառերում⁶, մինչդեռ պատմիչներն անդրադառնում են դրան հպանցիկ՝ միայն պատմական որեւէ հատուկ առիթով⁷: Իբրեւ Հռիփսիմյանց կույսերին վերաբերող պա-

⁴ Վարագա Սք. Նշանի պատմության մեջ դժվար է տարանջատել առասպելականն ու պատմականը, բոլոր աղբյուրներում մասունքին վերաբերող նյութը շարադրված է առասպելական թափառող դիպաշարերի եւ իրական պատմական անձանց ու նրանց շուրջ տեղի ունեցող միջադեպերի միահյուսումով: Ընդ որում՝ ասվածը հավասարապես վերաբերում է Թեոփիլոսի երկերում, Թեոփիլոսի արձանագրություններում եւ Թեոփիլոսի կրոնական գրականության մեջ պահպանված տարբերակներին: Հետեւաբար դատելը, թե պատմության որ մասն է ճշմարտություն եւ որը՝ առասպելական զրույց, առանձին հետազոտության առարկա է: Միակ բանը, որ կարելի է հաստատապես պնդել, Ներսես Գ. Տաչեցի կաթողիկոսի օրոք Վարագա Սք. Նշանի համահայկական պաշտամունքի առաջացումն է՝ ամենայն հավանականությամբ ժողովրդի խնդրանքով: Այս սրբության վերաբերյալ ավանդազրույցները գոյություն են ունեցել ավելի վաղ շրջանում: Մենք գերադասել ենք պահպանված գրավոր եւ բանավոր ամբողջ նյութն անվանել «ավանդություն» եզրույթով:

⁵ Համաբարբառ Յայսմաւուրք, հտ. Բ., փետրուար, Սք. էջմիածին, 2009, էջ 316–323:

⁶ Օր.՝ ՄԻՐԱՅԱՆՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆ ՎԱՆԱՆԴԵՅԻ, Ճառ ներբողական ի Սուրբ խաչն Քրիստոսի եւ պատմագրական առասպելներին ի Սուրբ Նշանն Վարագայ, ի Մոսկուա, 1853, էջ 44, 53–71:

⁷ Այսպես Թովմա Արծրունին հիշատակում է այդ ավանդությունը Գագիկ արքայի մասին գրելիս. «Փռնաճեմ ընթացող արշաւանս ի վերայ ձգեալ, հասանել ի լեառն Տեառն եւ ի տուն Աստուծոյ մերոյ, ըստ յորդորման մարգարէիցն. եւ ճախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարագ. եւ երկրպագեալ աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտի խաչին Քրիստոսի, պատուանդանի ոտիցն Աստուծոյ, որով պարծին եւ պսակին ի Քրիստոս հաւատացելոց թագաւորաց երամբ: Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ, պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, եւ ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից. թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին. յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն գգրոցկանն: Այս այն խաչ է զոր վերագոյնն գրեցաք վասն սորա: ՄԾԹ. ամօք յառաջ զսրայս բացայայտեալ զցոյցս յատնութեանն. յամս Ներսեսի երկրորդի հայոց կաթողիկոսի, եւ Վարդանայ Ռշտունեաց Պատրիկի, եւ յամի ունելութեանն տաճ-

տում՝ ավանդույթյան առաջին մասը հայտնի է Մովսես Խորենացու կամ նրան վերագրվող Հռիփսիմյանց կույսերի պատմությունից⁸։ Սրբակեցությունն ընդունելու առթիվ Գայանեն Հռիփսիմեի վզից է կախում մասունքը՝ «...արկին ի պարանոց նորա զկենսատու խաչն կնիք եւ պահապան ի ներգործութենէ չարին»⁹, եւ երբ կույսերը, ազատվելով Դիոկղետիանոսի հետապնդումից, հասնում են Երուսաղեմ, Հռիփսիմեին տեսիլք է երեւում, որով Սբ. Աստվածածինը հորդորում է նրան մեկնել Հայաստան։ Հայաստանում Հռիփսիմյան կույսերը շրջում են Վասպուրականի այն մասերում, որտեղ կային հեթանոսական սրբավայրեր։ Նրանք տարբեր միջոցներով կրոնափոխ են անում տեղացիներին եւ հեթանոսական մեհյանների փոխարեն հիմնում քրիստոնեական ուխտավայրեր։ Ի վերջո նրանք հանգրվանում են Վարազա լեռան վրա, որտեղ թաքցնում են Սբ. Նշանը, իսկ կույսերը, տեղում թողնելով իրենց կողմնակիցների մի մասին, ուղեւորվում են Վաղարշապատ, որտեղ եւ նահատակվում են¹⁰։

Ըստ Ներսես Սարգիսյանի հաղորդած ավանդույթյան՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչը ժամանում է Վարազա լեռ արդեն Հռիփսիմյանց կույսերի նահատակությունից հետո եւ ճգնում է այն տեղում, ուր հետագայում կառուցվում է Սալնապատ վանքը, որն ըստ Սարգիսյանի՝ նույն Զորովանքն է։ Երբ Լուսավորիչն աղոթում է, որ իրեն հայտնվի Սբ. Նշանի թաքստոցի վայրը, տեսիլք է երեւում, եւ վկայվում է, թե Սբ. Նշանի գլուխը տեղի կունենա պատշաճ ժամանակին¹¹։

կաց զՀայկական աշխարհս» (տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունուոյ», Կ. Պօլիս, 1852, էջ 286։ Հետագայում՝ «Պատմութիւն տանն Արծրունեաց»)։

⁸ «Պատմութիւն Հռիփսիմեանց եւ Ճառք» (տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացուոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 298–303)։

⁹ Համաբարբառ Յայսմաւուրք, հտ. Բ., էջ 318։ Ըստ էության՝ Սբ. Հռիփսիմեն նահատակվում է Վաղարշապատում, այնինչ մասունքը գտնվում էր Վարազա լեռան պահոցում։ Ըստ նույն տարբերակի՝ կույսի նահատակությունից հետո՝ մինչ Սբ. Գրիգորը կամփոփեր սրբուհու մարմինը, Վարազա լեռան վրա մնացած կույսերը հասցնում են վերջնել եւ իրենց հետ տանել Հռիփսիմեի արանների վզնոց (օձիք) - պերողը եւ հողաթափը (տե՛ս անդ, էջ 318)։

¹⁰ Հայսմաւուրքի Անանուն խմբագրության (ՄՄ՝ 2695) տարբերակում նշվում է, որ Հռիփսիմյանց կույսերի մի մասը հանգրվանեցին Բզնունյաց լեռներում, իսկ նրանց մահից հետո Սուրբ խաչը մնաց Վարազա լեռան վրա եւ գտնվեց «յաւուրս Թողկայ», մինչդեռ այլ տարբերակները սահմանափակվում են միայն Վարազա լեռան վրա մնալու մասին հիշատակությամբ։ Հիշատակվում է նաեւ, որ տեղն անբնակ էր մնացել «ի խստութիւնէ օղոյն» (Տէն Համաբարբառ Յայսմաւուրք, հտ. Բ., էջ 316–323)։

¹¹ Ն. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 258։ Տէն նաեւ Համաբարբառ Յայսմաւուրք, հտ. Բ., էջ 318, 321։

Սպասվող իրադարձությունը տեղի է ունենում Ներսես Գ. Տայեցու օրոք: Սբ. Նշանը գիշերվա երրորդ ժամին լույսի ձևով երևում է տեր Թողիկի¹² եւ նրա աշակերտ Հովելի ճգնության եւ աղոթքների ջանքով, իր մասնատուփով համբարձվում է երկինք եւ հայտնվում է եկեղեցու մեջ՝ սեղանի վրա: Ապա այստեղ են գալիս կաթողիկոս Ներսեսը եւ Վարդ պատրիկը եւ կարգում են Վարագայ Սբ. Նշանի տոնը¹³:

«Ամբողջ երեք դար այդպէս ծածկուած կը մնայ Սբ. Խաչը Վարագայ լերան մէջ: Եօթներորդ դարուն, մինչեւ Ներսէս Գ. Շինողն էր Հայոց Կաթողիկոս (639–661), Թողմիկ անուն ճգնաւորին լուսաւոր ճաճանչներով կը յայտնուի: Հրաշալի եղելութիւնը մեծ արձագանգ կուտայ ոչ միայն Վան գաւառին՝ այլ եւ բովանդակ Հայոց մէջ: Կրօնասէր հոգիները ջերմեռանդութեամբ կը լեցունին, ամեն կողմէ երկրպագութեան կը դիմեն յայտնեալ Ս. Խաչին: Անմիջապէս հոյակապ վանք ու եկեղեցի կը շինուին անոր գտնուած տեղը... Այսպէս կը դրուի ահա Վարագայ վանքին հիմը. Ս. Խաչն ալ անոր անունով կը յորջորջուի, յատուկ շարական մը կը յօրինուի եւ Հայրապետական հրամանով կ'որոշուի տօնել Վարագայ Խաչը հայ եկեղեցիներու մէջ... մինչեւ անգամ շաբաթական պահք մըն ալ կը սահմանուի որ կը կոչուի «Պահք Վարագայ Ս. Խաչին»¹⁴:

Հիմնական աղբյուրները հիշատակում են Վարագա Գալիլիա բարձունքի վրա հայտնված լույսի տասներկու սյուները, որոնց տեղերում հետագայում պիտի կառուցվեին եկեղեցիներ: Այդ տասներկու լուսեղեն սյուների վերաբերյալ վկայություն կա նաեւ Ավետարանի հիշատակարանում, որը մեջբերում է Ե. Լալայանը, ապա՝ Հ. Ոսկյանը. «Այսքան եկեղեցիք շինեցան ի տեղի երկոտասան լուսոյ սեանցն, զոր էջ յերկնից ի պատիւ ամենազօր սուրբ Նշանիս, զոր ակներեւ տեսին ամենայն աշխարհացն...»¹⁵:

Հայոց այս սրբության հետագա ճակատագիրը հարուստ է առեւանգումի, բռնագրավման եւ ապա այն վերադարձնելու պատմություննե-

¹² Տեր Թողիկի եւ Սբ. Գրիգոր Լուսավորչի միջեւ եղած հոգեւոր կապը ամրագրվել է ավանդադրույցով, համաձայն որի Թողիկ ճգնավորն է Այրարատ բերել եւ ապագա Զվարթնոց տաճարի տեղում ամփոփել Լուսավորչի մարմինը, իսկ ավելի ուշ, երբ մարմնի գտնվելու տեղը հայտնի է դարձել, այն բաժանվել է մասունքների եւ տարվել այլ վայրեր: Ահա թե ինչու Զվարթնոցը կոչում են Սբ. Գրիգորի վանք (Տէն ԱՐՅԱԽԵՅԻ, Ճամբորդութիւն ի Կովկաս. Ս. Էջմիածնէ մինչեւ Տփղիս, «Բիւզանդիոն», 1899, թ. 685, էջ 1:

¹³ Համաբարբառ Յայսմաւորք, հտ. Բ., էջ 319:

¹⁴ Մ. ՆԱԹԱՆԵԱՆ, Վարագայ Խաչը, «Մասիս», 1903, էջ 609:

¹⁵ Հ. ՈՍԿԵԱՆ, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 279:

րով: Երկար ժամանակ մասունքը պահվել է Ներքին կամ Վարի Վարագա վանքի Սբ. Նշան եկեղեցում: Հստ Առաքել Դավրիժեցուն թուրք բռնակալները Վարագա վանքը թալանելիս իրենց հետ խոշաբ գավառակ են տանում նաեւ Սբ. Նշանը¹⁶, սակայն շուտով թուրք բռնակալն սպանվում է: Սրան հաջորդած նոր բռնակալը՝ սպանվածի որդին, հիվանդանում է, եւ հայերին հաջողվում է փրկանքով գնել Սբ. Նշանը, որ ի պահ են դնում Վանի Սբ. Տիրամայր եկեղեցում¹⁷: Վանահայր Գրիգոր եպս. Ճուճունկանցը 1759-ին Սբ. Տիրամայր եկեղեցուց այն տեղափոխել է նույն քաղաքի Սբ. Էջմիածին եկեղեցի, որից հետո այն կոչվել է Էջմիածին Սբ. Նշան¹⁸: Մ. Նաթանյանի պնդման համաձայն՝ Ի. դարի սկզբին այն արդեն երկու հարյուր տարի է, ինչ գտնվում էր Վանա առաջնորդանիստ Սբ. Նշան եկեղեցում¹⁹, իսկ ժողովուրդը հավատում էր, որ Սբ. Նշանը պարբերաբար այդտեղից երկնային լույսի ձեւով թռչում է Վարագ եւ նորից վերադառնում իր տեղը²⁰: Մեծ եղեռնին, Վանի ինքնապաշտպանությունը, գաղթին հաջորդող շրջանում սրբության ճակատագիրն այլեւս անհայտ է:

Մեկ ուրիշ ավանդույթի համաձայն՝ 1213 թ. վանահայր Դուկասը Վարագա Սբ. Նշանը տեղափոխել է Տավուշ²¹, որտեղ կառուցվել է Նոր Վարագավանքը: Սբ. Նշանը Նոր Վարագավանքում է մնացել մինչեւ 1651 թ., որից հետո տեղափոխվել է Սբ. Էջմիածին²²: Մ. Բարխուդարյանցը նշում է, որ կենաց փայտի մասը վանքում չէ, վանքն էլ իր ժամանակ

¹⁶ «Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժացւոյ», Յամսթէյօգամում, 1669, էջ 480: Հետագայում՝ «Առաքելոյ Դավրէժացւոյ»:

¹⁷ Անդ, էջ 497: Այս մասին հայտնում է նաեւ Թովմա Արծրունին՝ եկեղեցին անվանելով Ռշտունյաց Ոստանի Սբ. Մարիամ Աստվածածին (տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 283): Արծրունու երկում այդ պատմությանը (խաչի՝ եկեղեցում պահելու) նախորդում է խաչի պղծման, ապա վերականգնման եւ արծաթապատման մասին մի վկայություն (տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 274–275):

¹⁸ Ե. ԼԱՆՑԵԱՆ, Վասպուրական. Նշանավոր վանքեր, ԱՀ, XXI, Թիֆլիս, 1911, էջ 73: Լալայանի աղբյուրը Վարագում գտնվող տապանագիրն է:

¹⁹ Մ. ՆԱԹԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 610:

²⁰ ՎԱՐԳ, Մի պտոյտ Վանի շրջակայքում. Վարագ, «Արաքս», 1898, №1, էջ 60:

²¹ Համապատասխան վիմագրությունը տե՛ս Յ. ԵՊՍ. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Սբ. Էջմիածին, 2014, էջ 460–461: Տե՛ս նաեւ Ս. ԶԱՆԱՆԵԱՆՑ, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հտ. 1, Տիֆլիս, 1842, էջ 159–161:

²² Այս վերջին ավանդույթի վերաբերյալ տե՛ս Շողակաթ հեռուստաընկերության 2013 թ. հոկտեմբերի 1-ի «Եկեղեցական կյանք» հաղորդումը, հեղ.՝ Վ. Կարապետյան, Հ. Խլախյան. <https://www.youtube.com/watch?v=tzrtMoa59g>

ավերված էր²³, այսինքն՝ չի վկայում, որ Սբ. Նշանը Սբ. Էջմիածնում է։ Ամենայն հավանականությամբ տեր Դուկասը տեղափոխել է ոչ թե ամբողջ Վարազա Սբ. Նշանը, այլ դրա մի մասնիկը։ Այսպիսով՝ հնարավոր է դառնում մասունքի գոյությունը միաժամանակ Տավուշում եւ Վանում։

Տավուշի մարզի Նոր Վարազավանքում ամեն տարի՝ Վարազա Սբ. Խաչի տոնի օրը, կատարվում է զանգվածային ուխտագնացություն, որի առիթով Սբ. Էջմիածնից այնտեղ է տարվում ճաճանչի մեջ ամփոփված Սբ. Նշանը։

ԼՈՒՅՍԻ ՍՅՈՒՆԵՐԻ ՏԵՂԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՎԱՆՔԵՐԸ

Հստ Ղ. Ինճիճյանի²⁴ երկնային լույսի սյուները երեւացել են հետագայում կառուցված տաճարներու տաճարների տեղերում։ Դրանք են՝ Ստորին կամ Ներքին Վարազա յոթ քարաշեն եկեղեցիները, Վերին Վարազա երեք եկեղեցիները՝ Սբ. Փրկիչ, Սբ. Հռիփսիմյանք եւ Սբ. Աստվածածին (վերջինում տեր Թողիկ ճգնավորի հուղն էր), ինչպես նաեւ՝ 30 աբեղաների եւ Սբ. Պետրոս առաքյալի տաճարները²⁵։ Վարազա երկու վանքերի միջեւ, եւ Սալնապատի վանքի երեք եկեղեցիները՝ Սբ. Աստվածածնի, Սբ. Հովհաննու Մկրտչի եւ Սբ. Լուսավորչի (վերջինում, ըստ ավանդության, ճգնել է Սբ. Գրիգոր Լուսավորիչը)²⁶։ Ինճիճյանի օրոք այս եկեղեցիները դեռ կանգուն էին²⁷։ Ակներեւ է, որ Ինճիճյանի տեղեկությունն

²³ Մ. ԲԱՐԵՆՈՒԴԱՐԵԱՆՅ, Արցախ, Բագու, 1895, էջ 337։

²⁴ Ղ. ԻՆՃԻՃԵԱՆ, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամերիկոյ։ Մասն առաջին. Ասիա, հտ. Ա., Վենետիկ, 1806, էջ 148։

²⁵ Այս երկուսի մասին այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն։

²⁶ Սալնապատի Սբ. Գրիգոր վանքն ավանդաբար կապված է նույն Սբ. Նշանի հետ, եւ թվում է՝ չի եղել լույսի սյուններից մեկի իջման վայրը, քանի որ բոլոր այն դեպքերում, երբ հեղինակները վանքը չեն շփոթում Զորովանքի հետ, այն չի հիշատակվում իբրեւ լույսի սյան իջման վայր։ Վանքը համարվում էր Սբ. Գրիգոր Լուսավորչի 18-ամյա ճգնավայրը, որտեղ Հայրապետը փափագում էր տեսնել Վարազա Սբ. Նշանը։ Նույն վանքում Գրիգոր Լուսավորիչը հրեշտակի հայտնությունից մի աղբյուր է բխեցնում, որ հետո կոչվում է Քրիստոսի աղբյուր։ Սուրբը նաեւ երազում երուսաղեմն է տեսնում եւ արթնանալով Վարազի ստորոտում՝ ձորն անվանում է Երուսաղեմա ձոր։ Սալնապատի վանքի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սեղանի վեմը չորս կողմից պատված էր սեպագրերով։ ԺԹ. դ. Սբ. Լուսավորիչը ոչ թե եկեղեցի էր, այլ ընկուզենիների անտառի մեջ շինված մատուռ (տես «Արծուի Վասպուրական», 1859, թիւ 7, էջ 171–172, 174–175)։

²⁷ Ե. Լալայանը հիշատակում է միայն երկու եկեղեցի՝ խաչածէն առանց խորանների, եւ քառանկյուն խորանով եւ երկու խորշով։ Թողիկ ճգնավորի քարայրը եւ դրա կողքի մատուռի ավերակը, որը բուն եկեղեցիներից փոքր-ինչ հեռու էր, վանքի հետ նա ուղղակիորեն չի

ինչ-որ շփոթմունք է պարունակում, քանի որ նշված է ոչ թե տասներկու, այլ տասնհինգ եկեղեցի:

Ըստ Ն. Սարգիսյանի՝ երկնային տասներկու սյուները երեւացել են Ներքին Վարագավանքի յոթ, Վերին վանքի երեք, ինչպես նաեւ Սբ. Գրիգոր եւ Կարմրավոր եկեղեցիների վրա²⁸: Այստեղ եկեղեցիների թիվն իսկապես տասներկուսն է, սակայն Սբ. Գրիգոր անվան տակ նա հասկանում է մեկ եկեղեցի եւ ոչ՝ Սալնապատի վանքը, իսկ Ինճիճյանի ցուցակին գումարվում է Կարմրավորը: Վարդը նշում է Վերին եւ Վարի Վարագա վանքերի տասը եկեղեցիները, Հայնկույանների Պատիկ տաճար Սբ. Աստվածածինը եւ Կարմրավորը²⁹: Վերջապես, ըստ Գ. Շերենցի, այդ լույսերն իջել են Հայնկույանների Սբ. Աստվածածին, Կարմրավորի Սբ. Աստվածածին, Սալնաձորի անապատ, Վերին Վարագ, Ներքին Վարագ, Կտուցի եւ Լիմի դիմացի ափի Սբ. Էջմիածին եկեղեցիների տեղերում³⁰: Այս դեպքում եւս եկեղեցիների թիվը գերազանցում է տասներկուսը:

Այս շփոթը վկայում է լույսի սյուների թվի պայմանականության մասին՝ եղելուցն ուղղակի հարմարեցված է սրբազան թվին: Հավանաբար որոշ ժամանակաշրջանից սկսած՝ Վարագա Սբ. Նշանի արձակած լույսերից մեկի տեղում կառուցված լինելու ավանդույունն առանձին պատիվ էր հաղորդում Վանտոսպի եկեղեցիներին, եւ դրանց վանահայրերը ժողովրդի մեջ տարածում էին համապատասխան պատկերացումներ:

Թվելով լույսի սյուների իջնելու վայրերը՝ հեղինակներն ուշադրություն չեն դարձնում այն փաստի վրա, որ ըստ ավանդույթյան՝ տեղում արդեն իսկ կար ինչ-որ եկեղեցի, որի սեղանի վրա հայտնվում է մասունքը. «Եւ ապա շարժեցաւ լուսեղէն սբ նշանն ի վիմէն. եւ ի մէջ լուսոյն վէր ամբարձեալ փայտեղէն խաչն պահարանաւն իւրով. եւ ցոլացեալ սքանչելի լուսովն եկեալ եմուտ յեկեղեցին. ուր աղօթէին նոքա»³¹: Ինչ

կայում (տե՛ս Ե. ԼԱՆԱՅԵԱՆ, Վասպուրական. Նշանավոր վանքեր, ԱՀ, XX1, Թիֆլիս, 1911, էջ 58):

²⁸ Ն. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 258: Նույն ցանկը տե՛ս ՎԱՐԴ, նշ. աշխ., էջ 58:

²⁹ ՎԱՐԴ, նշ. աշխ., էջ 58:

³⁰ Գ. ՇԵՐԵՆՑ, Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 38, 49–50, 53, 56, 60, 75:

³¹ Յայսմաւուրք, Կ. Պոլիս, տպ. Գրիգորի Դպրի, 1706 (հետագայում՝ Յայսմաւուրք, տպ. Գրիգորի Դպրի), էջ եճժէ:

տաճարի մասին է խոսքը: Վաստահաբար՝ ոչ Թողիկի խուց-ճգնարանի³², որն այդ պահին սբ. սեղան ունենալ չէր կարող, այլ որեւէ այլ շինության, որ գոյություն է ունեցել նույն տեղում մինչեւ Սբ. Նշանի երեւալը: Այդ դերում կարող էր հանդես գալ Թերեւս միայն Ուրբաթայր մատուռը, որի տեղադրությունը, սակայն, նույնպես մնում է մշուշոտ: Եթե Ե. Լալայանը տեղադրում է այն Վերին Վարագից փոքր-ինչ հարավ՝ Ապարանջանների աղբյուրի ակունքի վրա³³, ապա Ն. Սարգիսյանի համար դա Ներքին Վարագի արտաքին պարսպի հարավակողմի մատուռն է³⁴: Կարող էր արդյոք այդ տաճարը լինել հեթանոսական ինչ-որ հին շինություն, որ նախկինում ունեցել էր նաեւ զոհասեղան, եւ որն առանց շինարարական փոփոխությունների՝ հռչակվել էր եկեղեցի: Սբ. Լուսավորչի ժամանակներում՝ գուցե:

Առաջին եկեղեցին, որ կառուցվել է Սբ. Նշանի երեւման առիթով, հավանաբար եղել է Վերին Վարագա վանքի Սբ. Հռիմփսիմյանց եկեղեցին, եւ առաջին վանահայրը, ըստ Ղեւոնդ Փիրղամալյանի անտիպ աշխատության, Թողիկն էր³⁵:

Մյուս կողմից տարակուսելի է համընդհանուր կարծիքը Վարի Վարագա վանքի յոթ եկեղեցիների վերաբերյալ, որոնց կառուցումը, պատմական ստույգ փաստերի հիմքով, դրվում է ոչ շուտ, քան Ժ. դ.: Որեւէ տրամաբանություն այն բանի մեջ, որ է. դարում տեղի ունեցած իրադարձության կապակցությամբ երեք դար անց շինարարություն սկսվեր, չկա: Դրանց փոխարինում է ավանդազրույցը, համաձայն որի՝ Ներքին Վարագա վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ Վանուց եկեղեցու (Սբ. Նշանի) դռան առջևի երկու սյուները Տրդատը բերել է Վերին Վարագից՝ Թեւերի տակ դրած³⁶: Ըստ էության՝ տեղ Թողիկի աղոթքներով Սբ. Նշանի հայտնությունից անմիջապես հետո կառուցվել է ընդամենը

³² Պատմելով Վասպուրականի հզոր երկրաշարժի մասին՝ Առաքել Դավրիժեցին նշում է, որ փլուզվել էր նաեւ «եկեղեցի սրբոյ հօրն Թողկայ» (տե՛ս «Առաքելոյ Դավրէժացոյ», էջ 468):

³³ Ե. ԼԱԼԱՅԱՆ, նշ. աշխ., էջ 58:

³⁴ Ն. ՍԱՐԳԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 257:

³⁵ Ե. ԼԱԼԱՅԱՆ, նշ. աշխ., էջ 69:

³⁶ Մ. ՄԻՐԱՆՈՐԵԱՆ, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Բ., Թիֆլիս, 1885, էջ 184–185: Այլ տարբերակով՝ «քամակի վրայ», իսկ քարերը շալակած Տրդատի պատկերը ԺԹ.դ. վերջին դեռեւս կար եկեղեցու որմնանկարներում: Այդ ժամանակաշրջանում էր, որ սյուները գողացվել եւ տեղափոխվել են Վան, որտեղ դրվել են մզկիթի առաջ (տե՛ս ՎԱՐԳ., նշ. աշխ., էջ 60):

երկու վանք՝ Վերին Վարազա վանքը եւ Սբ. Գրիգորը կամ Զորովանքը, որը հետագայում սկսել է շփոթվել Սալնապատի վանքի հետ: Ներքին Վարազա վանքի շինարարությունը Սբ. Նշանի լեգենդի հետ է կապվել շատ ավելի ուշ:

Դեռեւս գործող Վերին Վարազա վանքին նվիրվել են երգեր, որոնցում շեշտվում է մեզ հետաքրքրող ավանդությունը, ինչպես Զաքարիա Վարազեցի տաղասացի անվանի «Տաղ Վարազայ խաչին».

Քարինք տեղոյս են պատուական,
Որք ի լուսոյն շափիւղացան,
Ծաղկունքն բիր հազար բուսան,
Յառողջութիւն վիրաց մարդկան:
Անդէն Թօղիկ ճգնատրին,
Ընդ Յովելեայ աշակերտին,
Տասն օր անսուաղ կեցեալ նոցին,
Խաչն յայտնեցաւ փառօք տեսին...
Երկոտասան սիւն լոյսն իջան,
Հոտըն բուրէր անմահութեան,
Արգել ըզլոյս արեգականն,
Եւ կանգնեցաւ մինչեւ ցինն ժամ³⁷:

Պահպանվել է նաեւ աշուղ Մանասերի՝ Վարազա սարին նվիրված երգը՝ որով չափով ներշնչված Զաքարիա Վարազեցու տողերից, բայց ավելի ժողովրդական ոճով եւ զվարթ.

...Սիւն լուսոյ երկոտասան իջեալ
կանգնէր լեառըն Վարազայ,
Համօրէն քարինք լուսով շաղախութե են
հոտն անուշ կուգայ.
Վարազայ սարէն,
Ծաղկավէտ քարէն...
...Յօղանոս ամպերն եկեր բոլոր պատեր
լեառըն Վարազայ.
Լոյս իջէր ի Գալիլեայ կամար կապեր
նէնն³⁸ անուշ կուգայ.

³⁷ «Արծուի Վասպուրական», 1859, թ. 5, էջ 130–131: Ե. ՏԵՐ-ՄԿՐՏԻՉԵԱՆ, Գանձեր Վասպուրականի, հտ. առաջին, Պոստոն, 1966, էջ 94–95:

³⁸ Բնագրում՝ «նէն», ուղղում ենք ըստ երկնային սյուների մասին պատմության, որտեղ տեր Թողիկն ու Հովելը լսում են հրեշտակների զմայլելի երգեցողությունը:

Ոչ գոյ օրինակ Վարագայ սարին
 Ծաղկաւէտ փարին:
 Երանեալ հայրըն թօթիկ յաղօթս
 կանգնէր լեառըն Վարագայ,
 Ըղծալի աշօք տեսեալ ուրախացեր
 քէֆն անուշ կուգայ.
 Ոչ գոյ օրինակ...

Աշակերտըն Հովիւէլ զահի հարեր,
 լեառըն Վարագայ,
 Զուարթնոց եղանակաց թմրեալ զմայլէր,
 փունն անուշ կուգայ:
 Զիք օրինակ Վարագայ սարին
 Ծաղկաւէտ փարին³⁹...

Զի բացառւում, որ այս երգի «Զուարթնոց եղանակաց» (այսինքն՝ հրեշտակների մեղեդիներին) արտահայտութիւնը հետագայում ինչ-որ կերպ կապւել է Զվարթնոց (Առապարի) տաճարի գաղափարի հետ, քանի որ Ներսէս Գ. Շինողն է համարվում ինչպէս Զորովանքի, այնպէս էլ Զվարթնոցի Սբ. Գրիգոր տաճարների կառուցողը⁴⁰:

Գ. Շերենցն իր «Վանայ սազ» ժողովածուի մէջ զետեղել է Վարագա վանքին նվիրված ժողովրդական մեկ ուրիշ երգի մի հատված.

Վարայգ շինած ոսկէ աթոռ,
 Խորան գգյմալէթներն եմ աղտոռ,
 Մեզ պահապան խաչ զօրաւոր:
 Սուրբ Գրիգոր միջանորի,
 Վանայ դիմաց Կարմրավորն ի⁴¹:

³⁹ «Արծուի Վասպուրական», 1864, թիւ 7, էջ 188–189:

⁴⁰ Մի ինչ-որ հին ավանդության արձագանք է նշմարվում այս համադրության մէջ, քանի որ «[Ներսէս] Շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն Երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն»,– գրում է Սեբեոս պատմիչը (տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Յերեւան, 1939, էջ 120), մինչդեռ, ինչպէս արդեն նշվեց, Սալնապատի վանքի զրույցը նույնպէս հիշատակում է Սբ. Գրիգորի՝ երազում տեսած հրեշտակին, իսկ Զվարթնոցի զրույցը վկայում է, որ տեր թողիկն է այնտեղ ամփոփել Սբ. Լուսավորչի մարմինը:

⁴¹ Գ. ՇԵՐԵՆՑ, Վանայ սազ, մաս 1, Թիֆլիս, 1885, էջ 70:

Ուշագրավ է, որ այս երգում Վարագավանքի հետ միասին հիշատակվում են Միջաձորի Սբ. Գրիգորը, որը հավանաբար Ձորովանքն է եւ Կարմրավորը, որի վրա, ըստ Սարգիսյանի, նույնպես իջել էր լույսի սյունը:

ՎԱՐԱԳԱ ՍԲ. ԽԱՉԻ ՏՈՆԸ

Վարագա խաչի տոնը Հայ Առաքելական Եկեղեցու խաչի տոներից մեկն է, որի առկայությունը գրավոր վկայված է ԺԲ. դարից, թեեւ, ինչպես գտնում է Ռ. Վարդանյանը, այն նշվել է է. դարից ի վեր՝ անշարժ ամսաթվով՝ օգոստոսի որեւէ օր⁴²: Հայամավուրքները եւ հին տոնացույցները մատնանշում են բողոքովին այլ ժամկետ՝ փետրվարի 26-ը⁴³: Սիմեոն Երեւանցու օրոք անշարժ ամսաթվերն սկսեցին կատարել երկրորդական դեր, իսկ տոնակատարությունների մեջ սկսեցին առաջնորդվել հնամենի շաբաթական կարգով, եւ ներկայումս Վարագա խաչը նշվում է խաչվերաց տոնից երկու շաբաթ անց⁴⁴:

Եկեղեցական տոնացույցին հակասում են ազգագրական տվյալները, համաձայն որոնց՝ Վերին Վարագա վանքի ուխտագնացությունը սովորաբար տեղի էր ունենում ուշ գարնանը՝ Համբարձման տոնին: Ահա թե ինչպես է այդ տոնակատարությունը նկարագրում Ղ. Ինճիճյանը. «Ի տօնի Համբարձման լինի հանդէս մեծ ուխտաւորաց, որք յամեն կողմանց Վանայ յայս լեառն հաւաքին բազմութեամբ կառաց, թմբկօք եւ փողովք»⁴⁵: Նույնն է ասում Գ. Շերենցը. «Վերին Վարագայ ուխտագնացութեան տօնը լինում է առաւելապէս Համբարձման Հինգշաբթի օրը, ուր գիշերում են բազմաթիւ երիտասարդ ուխտաւորները, տեսնելու ծաղիկների ողջագուրանքն-համբուրվելն... Շատերը տողորուած սիրոյ կրակով չափում են ծաղիկներ. կապում են փունջեր գոյն գոյն ծաղիկներից ի դարձին ընծայելու իրանց սիրելեաց: Հազիւ թէ արշալոյս սկսած եւ Արուսեակն իւր ծէգն երեւցուցած Շաղաթաթախ աղօթարանի հետ, խումբ խումբ, շարան շարան սկսում են իրանց վերելքն դէպի Գալիլեան Վարագայ սարի, ուր ամփոփուած է եղել մասն խաչափայտ Սբ. Նշա-

⁴² Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հայոց տոնացույցը (4–18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 372:

⁴³ Համբարբառ Յայմաւուրք, հտ. Բ., էջ 316–323: Յայմաւուրք, Կ. Պոլիս, տպ. Գրիգորի Դպրի, էջ ԵՃԺԵ: Տօնացոյց, Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1725, էջ 51:

⁴⁴ Տօնացոյց, Կ. Պոլիս, 1799, էջ 256–257:

⁴⁵ Ղ. ԻՆՃԻՃՅԱՆ, նշ. աշխ., էջ 150:

նի. համբուրել, ծնրագրել, երգել խաչին շարական «նշանաւ ամենայաղթն»⁴⁶: Ինչպես տեսնում ենք, եթե ոչ բուն ուխտը, ապա նախորդող երեկոյան տոնակատարութիւնն իր հիմքում ունի սիրային հմայութիւն, որը սովորական է Համբարձման տոնական համալիրի համար:

Նույն Ներսես Գ. Տայեցուն վերագրվող սիրված շարականն ունի հետևյալ տողերը.

«Խաչ քո եղիցի մեզ ապաւնէ բոցանիշ փայլմամբն իւրով.
 Խորտակեաց զթնամիսն եւ ելոյժ գդատակնիք.
 Անուանեալ փայտն կենաց ի փրկութիւն տիեզերաց:
 Վերառեալ ցնծան երկինք, եւ երկիրս ուրախանայ.
 Ընդ յայտնիլ սրբոյ խաչին սեռականաձեւ փառաբանիմ.
 Որ աշխարհս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիմ...
 Որ զլոյս անճառելի աստուածութեանդ քո Քրիստոս.
 Ի վերայ խաչին ծագեցէր այսօր ի լեռոն Վարագայ⁴⁷»:

Խ. Լեւոնյանը չի նկարագրում Համբարձման ուխտը, փոխարենը բերում է Համբարձման վիճակի երգի հետևյալ տողերը.

Դու կայներ ես դեմ Վարագայ սարին,
 Աչքերդ տնկեր ես Աստղկան բերդին,
 Աստղի փոխարէն՝ արեւ քո բաժին,
 Քո աստղն ի կտուր, մօտ ես մուրատին:
 Խաւս, խան վիճակըն բարի⁴⁸:

Այսքանը թույլ է տալիս մտածել, որ տոնացույցներում եւ Հայսմա-վուրքներում տեղ գտած Վարագա Խաչի տոնին իրականում նշվում է լույսի սյուների հայտնութեան իրադարձությունը, իսկ ուխտագնացութիւնը կապված է բոլորովին այլ՝ գուցե նաեւ նախաքրիստոնեական խորհրդի հետ:

Բանն այն է, որ Գալիլիա բարձունքին Վերին Վարագա վանքի կառուցումից շատ առաջ լեռան մյուս գագաթի՝ Աստղաբերդի վրա եղել է Աստղիկ դիցուհու տաճարը, եւ վաղորդայն դիցուհուն ու երիտասարդ աղջիկների եւ սիրո հովանավորուհուն նվիրված գարնանային տոնը ժա-

⁴⁶ Գ. ՇԻՐԵՆՑ, Սրբավայրեր, էջ 57:

⁴⁷ «Երաժշտական երգեցմունք հոգեւորականք», տպ. ՅԱՄԱՏԵԼՕՂԷՄՈՒՄ քաղաքի, 1685, էջ 515:

⁴⁸ Խ. ԼԵՒՈՆԵԱՆ, Վան-Վասպուրական աշխարհ, Պէյրուս, 2013, էջ 150:

մանակի ընթացքում բնական ճանապարհով միակցվել է Սբ. Հռիփսիմյաց կույսերի եւ Սբ. Նշանի պաշտամունքին: Այդ եւն վկայում ոչ միայն ժողովրդական առասպելները⁴⁹, այլեւ նյութական փաստերի հիշատակությունները: Մ. Անանյանն այցելել է Վարագա սարի Աստղան բերդ կոչվող գագաթը ԺԹ. դ. 70-ականներին, որի վրա, չնայած իր անվանը եւ ժողովրդական լեգենդներին, ներքեւից շինության որեւէ հետք չէր նշմարվում: Ահա նրա վկայությունը. «Եւ արդարեւ տեսանք այնտեղ մի կիսափուլ եւ հաստահիմն շէնք, որոյ հիման առջեւ միջի կողմից բաւական խորունկ փորուած մի փոս, որոյ մէջ վեր ընկած մի կաղնեայ նիգ: Այս փոսն ու նիգը ինձ Վանեցոց այն զրոյցը յիշեցուցին, թէ Աստղան բերդի մէջ գանձ է եղել պահուած, ու Երեւանցիք, մի հին յիշատակագրի առաջնորդութեամբ, եկել հանել տարել են...»⁵⁰: Զիթունին նույնպէս մատնանշում է կիկլոպի աչք հիշեցնող «կոշտանկար խոռոչը»⁵¹: Ե. Լալայանը, որը եւս համարում էր, որ Աստղկան բերդը դիցունու մեհենատեղին է եղել, նկարագրում է առնվազն երկու պատ՝ ցից ժայռերի միջեւ. ժայռերից կենտրոնականը նույնպէս կոչվում էր Աստղկան բերդ⁵²:

Այն, որ Աստղկան բերդը եւ Վարագա լեռան Գալիլիա գագաթը կարեւոր էին ոչ միայն Համբարձման տոնին, պարզ է դառնում Գ. Սրվանձտյանցի՝ Վանում օրվա սկիզբը որոշելու նկարագրությամբ⁵³. առավոտը ոչ թե արեւածագն է, այլ այն պահը, երբ Լուսո աւտղը (Արուսյակը) երեւում էր Վարագա Գալիլիա գագաթին, լուսը ձգում էր Շուշանց գյուղի Զիթունուկ սարի գագաթը եւ ցոլում էր Կարմրավորա⁵⁴ վանքի խաչի վրա: Ահա այդ պահին հնչում էին Այգեստանի եկեղեցիների կոշնակները, քանի որ ժամհարներն այդ վայրկյանին էին սպասում տանիքների վրա եւ երեք անգամ խաչակնքելով՝ «արձանագրում էին» այն, եւ երբ նրանք խփում էին «Գողու ժամը», անհետանում էին գո-

⁴⁹ «Ինչպէս Վարագայ սարի մէկ բարձրագոյն կետն ալ ցարդ կը կոչուի Աստղկան կամ Աստղան բերդ, ուր կը գտնուին աւերակներու վերջին հետքեր, վասնզի, այս կէտին վրայէն կը ծագի Լուսաստղ կամ Այգաստղ, որ է Աստղիկ կամ Վենիս» (տէս Խ. ԼԵՒՈՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 155):

⁵⁰ Մ. ԱՆԱՆԵԱՆ, Վանայ շրջակայները, «Փորձ», 1879, № V, էջ 59:

⁵¹ ԶԻԹՈՒՆԻ, Աս ու լիս Հայաստանի, Կ. Պոլիս, 1920, էջ 16:

⁵² Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Վասպուրական. Նշանավոր վանքեր, ԱՀ, XXI, Թիֆլիս, 1911, էջ 57–58:

⁵³ Գ. ՍՐԱՆԶՏՅԱՆ, Երկեր երկու հատորով, հտ. 1, Երեւան, 1978, էջ 126–127:

⁵⁴ Վանքի այս անվանումը կապված է տեսիլքի հետ. Սբ. Աստվածամորն այստեղ տեսել են կարմրագգեստ (տէս «Արծուի Վասպուրական», 1859, թիւ 6, էջ 145):

ղերը, դեւերն ու գիշերային գազանները: Քաղաքն արթնանում էր այդ կոշնակների ձայնից:

Մեկ այլ տեղում⁵⁵ նույն հեղինակը նկարագրում է, թե ինչպես արշալույսից առաջ լեռան տակից ելնում են տասներկու «ղավազները» (պահապանները), որ նման են սեւ արաբների: Նրանք լուսեղեն ճիպոտներով այնպես են մտրակում, որ լեռները խոնարհում են իրենց գազաթնեւորը, եւ երեւում են այդ պահին լվացվող արեւի ճառագայթները: Ինչպես տեսնում ենք, տասներկու պահապանների լույս-ճիպոտները հիշեցնում են տեր Թոդիկի աղոթքով հայտնված լույս-սյուները:

Հ. Աճեմյանն իր հերթին նշում է, որ Աստղիկը, որ միշտ քողով կամ գիշերով է հայտնվում եւ թաքնվում է տաքարյուն երիտասարդների հայացքներից, ձմռան գալուն պես ծածկվում է վարագույրով. Գալիլիայի Աստղիկան բերդը ծածկվում է անբիծ ու սուրբ քողով⁵⁶: Պետք է կարծել, որ այս պատկերացման հետ է կապված ուխտագնացությունը, որ տեղի էր ունենում այն ժամանակ, երբ այդ ձյունը հալում եւ լցվում էր աղբյուրների մեջ: Եւ նորից հիշենք Գարեգին եպս. Սրվանձտյանցի՝ Վարի Վարագավանքի կապակցությամբ գրածը. «Քեզ յուխտ պիտի գայի, ո՛վ Գազկաշէն մեծագործ տաճար, քեզ երկրպագութիւն՝ ո՛վ աստուածակիր Սուրբ Նշան, քեզ ի զմայլումն՝ ո՛վ ժայռ խորհրդաւոր, ժայռ՝ որոյ վրայ կը կենայ մրրկաց Հրամանատուն, ուր լուսինն եւ աստղունք ծովը իջնալուն եւ ծովէն ելլալուն կը հանգչին զովասուն, ուր Արուսեակն իր քողը կը ձգէ, եւ արեգակն իր պատմութեան կ'արկանէ իրիկուն եւ առաւօտուն»⁵⁷:

Առասպելական բանարվեստի հետնախորքում, ինչպես տեսնում ենք, բնության պարբերական երեւոյթների պատկերումն է՝ արշալույսի եւ մայրամուտի, ձմռան եւ գարնան հերթափոխի նկարագրությունը: Անկախ կրոնական պատկերացումներից՝ բնապատկերների այս բույլը պահպանվում էր ժողովրդի հիշողության ծալքերում եւ ծառայում որպէս տոմարական-ժամանակային ցուցիչների պաշար:

Այստեղ տեղին է նորից հիշել Ուրբաթայրք մատուռը: Եթե ընդունենք Ե. Լալայանի կարծիքը, Ուրբաթայրքը պիտի գտնվեր Վերին Վարագա վանքից քիչ հարավ: Խ. Լեւոնյանը համամիտ է. «Նոյն սահմանները

⁵⁵ Գ. ՍՐՎԱՆԶՏՅԱՆՅ, նշ. աշխ., էջ 76–77:

⁵⁶ Հ. ԱՃԵՄԵԱՆ, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսութեան, Առաջին փունջ, Մթ. էջմիածին, 1917, էջ 98–99:

⁵⁷ Գ. ՍՐՎԱՆԶՏՅԱՆՅ, նշ. աշխ., էջ 380:

տեղ մ՛ալ կայ որ կը կոչուի «Ուրբաթ այրք», հաւանաբար երբէմն լինելով Աստղկան մեհեան մը, որ ապա Թօթիկեան մենակեցներուն ճգնարան դարձաւ քրիստոնէական շրջանին»⁵⁸։ Սակայն տեր Թողիկից շատ առաջ այդ տեղը, որ լեռան խորշերից մեկն էր, Հռիփսիմյանց կույսերի ընկերներից երկու քահանաների բնակավայրն էր, որտեղ նրանք «ի յուրբաթէ յուրբաթ մատուցանէին զսրբութեամբ պատարագն, եւ բաշխէին արժանաւորապէս սուրբ կանանցն զմարմին եւ զարինն Տեառն»⁵⁹։ Այսինքն՝ Ուրբաթայրքը ոչ թէ Աստղիկի մեհյանի տեղում էր՝ Աստղնաբերդ գագաթին, այլ քարանձավում եւ ուներ սեղան, որի վրա պատարագ էր մատուցվում։ Ուրբաթայրքի այդ ավանդույթը սրբորեն պահվում էր Վանաբերդաքաղաքի Սբ. Նշան-էջմիածին վանքում, որտեղ պահվում էր թուրքերից ազատագրված մասունքը. յուրաքանչյուր ուրբաթ այստեղ պատարագ էր մատուցվում, որին մասնակցում էին գլխավորապէս կանայք, ընդ որում՝ ոչ միայն հայ, այլեւ ասորի եւ նույնիսկ թուրք։ Ի տարբերություն Վերին Վարագի՝ այս եկեղեցու ուխտագնացության օրերն էին խաչվերացը եւ աշնանային Վարագա խաչը⁶⁰։


Այսպիսով՝ երկնային լույսի երեւալու առաջին վայրն Աստղիկ դիցուհու երբեմնի մեհյանն էր, որտեղ ուխտավորներն այցելում էին մայիսին, եւ այդ ուխտագնացությունից պահպանվում էր Վերին Վարագա վանքի կառուցումից հետո դեռ շատ երկար ժամանակներ։

Շարունակությունը՝ հաջորդիվ

⁵⁸ Խ. ԼԵՒՈՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 155։

⁵⁹ «Մովսէսի Խորենացույ Մատենագրութիւնք», էջ 302։

⁶⁰ Գ. ՇԷՐԵՆՅ, Սրբավայրեր, էջ 20–21։



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈՁԻՉՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1830–1831 ԹԹ.¹

Ուղեգրություններն ու հուշագրություններն ունեն կարելոր աղբյուրագիտական նշանակություն պատմական այս կամ այն ժամանակաշրջանն ուսումնասիրելու համար: Դրանք պատմաբաններն օգտագործում են պատմական իրադարձությունների լուսաբանման, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնելու, պատմական առանձին դրվագների շուրջ ճշգրտումներ, լրացումներ կատարելու նպատակով: Ուղեգրություններն ու հուշագրություններն ունեն մի առանձնահատկություն. դրանք հաճախ աչքի են ընկնում իրենց կանխակալությամբ: Սակայն այդ գործերը քննական հետազոտության ենթարկելու դեպքում դրանք կարող են ծառայել իբրեւ պատմության ուսումնասիրության անփոխարինելի սկզբնաղբյուրներ:

ԺԹ. դարի ողջ ընթացքում եւրոպացի եւ ամերիկացի տասնյակ ճանապարհորդներ, առեւտրականներ, քարոզիչ եւ պետական ու ռազմական գործիչներ այցելել են պատմական Հայաստանի տարբեր բնակավայրեր, որոնք այդ շրջանում գտնվում էին Օսմանյան, Պարսկական կամ Ռուսական կայսրությունների կազմում: Վերջիններս իրենց հուշագրություններում եւ ճանապարհորդական նոթերում կարելոր տեղեկություններ են հաղորդում հայերի, նրանց սոցիալ-տնտեսական վիճակի, կենցաղի, սովորույթների, զբաղմունքի եւ զանազան այլ հարցերի վերաբերյալ:

1830–1831 թվականներին ամերիկացի բողոքական երկու քարոզիչներ՝ էլի Սմիթը (Eli Smith) եւ Հարիսոն Գրեյ Օթիս Դուալթը (Harrison Gray Otis Dwight), ճամփորդում են Հայաստանում եւ կատարում ուսումնասիրու-

¹* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: Ստացվել է՝ 28.11.2023, գրախոսվել է՝ 13.12.2023: էլ. հասցե՝ hovhannisyanedgar@yahoo.com:

թյուններ, որոնք հետագայում հրատարակվում են: Այդ աշխատությունը, որին նվիրված է սույն հոդվածը, պարունակում է հետաքրքրական տեղեկություններ ամերիկացի բողոքական քարոզիչների եւ հայերի առաջին շփումների մասին: Այն կարելու աղբյուր է Հայաստանի ԺԹ. դարի առաջին տասնամյակների պատմության մի շարք հարցերի ուսումնասիրման համար:

* * *

Բողոքականությունը հայության շրջանում հիմնականում տարածվել է ամերիկյան քարոզիչների միջոցով, եւ արդեն ԺԹ. դարում վերջերին հայ բողոքականների թվաքանակը հատկապես Արեւմտյան Հայաստանի տարածքում զգալիորեն աճում է: Առաջին բողոքական քարոզիչները մերձավորարեւելյան տարածաշրջանում հայտնվել են դեռեւս ԺԴ. դարում²: Սակայն նրանց աշխույժ եւ մշտական գործունեության մեկնարկն սկիզբ է առնում ԺԹ. դարի առաջին տասնամյակներից³: Մերձավոր Արեւելքում քարոզչական շարժումը հիմնականում համակարգում էր «Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը» (կամ ուղղակի՝ «Ամերիկյան խորհուրդ»), որն ստեղծվել էր 1810 թ. Բոստոնում⁴: 1829 թ. այդ կառույցը կայացնում է հատուկ որոշում⁵ Օսմանյան կայսրության հայերի շրջանում առաքելություն հաստատելու վերաբերյալ: 1830 թ. ԱՄՆ-ի եւ Օսմանյան կայսրության միջեւ պաշտոնական հարաբերությունների հաստատումն զգալիորեն նպաստեց կայսրության տարածքում ամերիկացի քարոզիչների գործունեության ծավալմանը⁶: Անգլիացի սպաներից մեկը, որը 1830-ական թթ. կեսերին ճամփորդություն է կատարել Հայաստանում, իր հուշերում գրում է, որ թեեւ Արեւելքում իր ծառայության ընթացքում տարբեր ազգերի շատ քարոզիչների է հանդիպել, բայց ամերիկացիները լավագույնս են համապատասխանում այդ դժվարին գործին

² Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը եւ արեւմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.), Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 56–62:

³ Անդ, էջ 54–63, տես նաեւ CHARLES C. CREEGAN, Pioneer Missionaries of the Church, New York, 1903:

⁴ ՏՆՍ WILLIAM E. STRONG, the story of the American board: The Pilgrim Press, Boston, 1910, էջ 6:

⁵ ՏՆՍ VAHAN H. TOOTIKIAN, The genesis of Armenian Evangelism, Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. ԺԴ, Պէյրուիթ, 1994, էջ 174–175:

⁶ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, նշ.աշխ., էջ 51–52:

եւ իրենց պարտականությունները կատարում են այդ առաքելությանը համապատասխան⁷: Ամերիկացի քարոզիչները կարեւոր դերակատարում ունեցան նաեւ ԱՄՆ – Օսմանյան կայսրություն միջպետական հարաբերությունների զարգացման գործում⁸:

Ամերիկացի քարոզիչների առաջին շփումները հայերի հետ տեղի են ունեցել դեռեւս 1820-ական թթ. սկզբին: Սակայն նրանք որեւէ համակարգված եւ խորքային պատկերացումներ չունեին բուն Հայաստանում ապրող հայերի վիճակի վերաբերյալ: Քարոզիչների առաջին այցերի նպատակը տեղում ծանոթանալն էր տիրող իրավիճակին եւ իրենց գաղափարները հայության շրջանում տարածելուն միտված հնարավորությունների որոնումը: Էլի Սմիթի եւ Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի ուղեւորությունն ամերիկացի քարոզիչների եւ հայերի ու Հայաստանում ապրող շատ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ նման շփումների առաջին օրինակն է: Այդ մասին փաստում են նաեւ հեղինակներն իրենց ուղեգրության մեջ: Վերջիններս վկայում են, որ տեղացիներն իրենց հանդիպումների ժամանակ, որպես կանոն, անգամ չգիտեին, թե ովքեր են ամերիկացիները, տեղի թուրքերը, ինչպես նաեւ մյուս ազգությունների շատ ներկայացուցիչներ նույնիսկ չէին լսել Ամերիկայի եւ ընդհանրապես Արեւմտյան կիսագնդի գոյության մասին: Քանի որ քարոզիչները խոսել են անգլերեն լեզվով, նրանց հաճախ համարել են անգլիացիներ, երբեմն նաեւ՝ ֆրանսիացիներ, անգամ՝ ռուսներ⁹: Այդ իմաստով Տաթևի վանք այցելության ժամանակ քարոզիչներին հաճելիորեն զարմացնում է այն հանգամանքը, որ հայ հոգեւորականներից մեկը ոչ միայն գիտեր ամերիկացիների մասին, այլեւ Ամերիկայի վերաբերյալ որոշ մանրամասների էր տիրապետում:

Հայ հոգեւորականների հետ քարոզիչների հանդիպումները ցույց են տալիս, որ Հայաստանում իրազեկված չէին նաեւ բողոքականների, նրանց դավանանքի առանձնահատկությունների մասին: Բողոքականներին հաճախ շփոթում էին կաթոլիկ քարոզիչների հետ:

⁷ Տե՛ս RICHARD WILBRAHAM, *Travels in the Trans-Caucasian Provinces of Russia: And Along the Southern Shore of the Lakes of Van and Urumiah, in the Autumn and Winter of 1837*, London, 1839, էջ 373:

⁸ Տե՛ս GRABILL, JOSEPH L, *Protestant diplomacy and the Near East; missionary influence on American policy, 1810–1927*, Minneapolis, University of Minnesota Press, 1971, էջ 35–58:

⁹ Տե՛ս ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, *Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, 1834*, George Wightman, London, էջ 69–70:

Սկզբնական շրջանում, որպես քարոզչական գործունեության թիրախ, դիտարկվում էին մահմեդականները եւ հրեաները, սակայն աստիճանաբար բողոքական քարոզիչները հասկացան, որ այդ միջավայրերում հաջողություններ արձանագրելու հնարավորությունները քիչ են կամ գրեթե չկան, ուստի աստիճանաբար սկսեցին քարոզչական գործունեություն իրականացնել Օսմանյան կայսրության քրիստոնյաների շրջանում: Շուտով բողոքական քարոզիչների առաքելությունն իր գործունեությունը կենտրոնացրեց հայերի վրա¹⁰: Այդ մասին վկայում են ոչ միայն բողոքական քարոզիչները, այլեւ ուրիշ ժամանակակիցներ¹¹: Պատճառներից մեկն այն էր, որ Օսմանյան կայսրությունում խստորեն արգելվում էր մահմեդականների շրջանում որեւէ այլ կրոնական քարոզչություն կատարելը: Կովկասյան մահմեդականների շրջանում քարոզիչների գործունեությունը նույնպես խիստ անարգյունավետ գտնվեց: Դրա ապացույցներից է Շուշիի քարոզիչների գործունեությունը. քարոզիչներն սկզբնական շրջանում, բացի հայերից, փորձում էին քարոզչություն իրականացնել նաեւ տեղի մահմեդականների շրջանում:

1831 թ. «Ամերիկյան խորհրդի» որոշմամբ Արեւելքի քրիստոնեական եկեղեցիների հետեւորդների շրջանում գործունեություն իրականացնելու նպատակով սկսեցին հիմնվել քարոզչական կայաններ: Օսմանյան կայսրության հայերի շրջանում քարոզչական գործունեություն իրականացնելու նպատակով նման կայան հիմնվեց Կոստանդնուպոլսում: Դրանով սկսվեց ամերիկացի բողոքական քարոզիչների եւ Օսմանյան կայսրության հայերի առնչությունների գործուն շրջանը:

Բողոքականության աճող ազդեցության պայմաններում արդեն 1846 թ. հուլիսի 1-ին Կ. Պոլսի Բերա թաղամասում 40 հայ ավետարանականներ հիմնադրում են Հայ Ավետարանական եկեղեցին¹²: Չորս տարի անց՝ 1850 թ. նոյեմբերի 27-ին, սուլթան Աբդուլ Մեջիդը հատուկ ֆերմանով այն ճանաչեց որպես առանձին կրոնական համայնք՝ «միլլեթ», որով սկիզբ առավ հայ ավետարանականների պաշտոնական գործունեությունը:

¹⁰ Ա. ԿՐԻԱԿՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 70:

¹¹ Տե՛ս ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, նշ. աշխ., էջ 198, տե՛ս նաեւ RICHARD WILBRAHAM, նշ. աշխ., էջ 388—389:

¹² ՎԱՀԱՆ ԹՈՒԹԻԿԵԱՆ, Նոր յայտնութիւններ Հայաստանեայց ավետարանական եկեղեցիին հիմնադրութեան եւ հիմնադիր անդամներուն մասին, Հայկազեան հայագիտական հանդես, 1998, ԺԼ., էջ 253—259:

նը¹³: Նշենք, որ Արեւելյան Հայաստանում ավետարանական առաջին շարժումն սկզբնավորվել էր դեռևս 1823 թ. Շուշիում Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» գործունեությամբ¹⁴: Վերջիններիս շուրջ 15 տարվա աշխատանքի արդյունքում Շուշիում ձեւավորվեց հայ ավետարանական փոքրաթիվ համայնք:

* * *

«Ամերիկյան խորհուրդը» 1819 թվականից սկսում է քարոզչական տարբեր առաքելություններ ուղարկել Մերձավոր Արեւելք՝ բողոքականության տարածման հնարավորություններն ուսումնասիրելու, ինչպես նաեւ տեղում գործող արեւելյան քրիստոնեական եկեղեցիները հետազոտելու նպատակով¹⁵: Այցելությունների արդյունքները, որպես կանոն, հրատարակվում էին: Դրանք պարունակում էին կարեւոր տեղեկություններ տարածաշրջանում ապրող ժողովուրդների ոչ միայն հոգեւոր-կրոնական կյանքի, այլ նաեւ սոցիալ-տնտեսական վիճակի, սովորությունների, կրթական-մշակութային եւ բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Քարոզիչների եւ տարբեր ճանապարհորդների ուղեգրություններն ու հուշերը ԱՄՆ-ում լույս են տեսել նաեւ «The Modern Traveller» խորագիրը կրող շարքով:

Սկզբնական շրջանում ամերիկացի քարոզիչները մեծ մասամբ գործում էին Օսմանյան կայսրության մայրաքաղաքում եւ ծովափնյա խոշոր քաղաքներում: Սակայն ժամանակի ընթացքում «Ամերիկյան խորհուրդը» խնդիր դրեց թափանցել երկրի խորքերը՝ այդ տարածքներում ապրող քրիստոնյա ժողովուրդներին անմիջապես ծանոթանալու եւ ուսումնասիրելու նպատակով: «Ամերիկյան խորհուրդի» Prudential Committee-ին 1830 թ. հունվարի 19-ին հրահանգում է նախաձեռնել քարոզչական ճամփորդություն եւ կատարել համապատասխան հետազոտություններ բուն Հայաստանի տարածքում¹⁶: Այդ առաքելությունը պետք է կազմակերպեր Մալթայի քարոզչական կայանը: Առաջին ամերիկացի քարոզիչները, որոնք

¹³ Տե՛ս LEON ARPEE, A Century of Armenian Protestantism 1846–1946, 1946, New York, էջ 36–37:

¹⁴ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ, Ռ. ԼԵՒՈՆՅԱՆ, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան–Կովկաս), Երեւան, 1999, էջ 81–88:

¹⁵ Տե՛ս ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, նշ. աշխ., նախաբան:

¹⁶ Տե՛ս Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean

հայերին ուսումնասիրելու նպատակով ստանձնեցին ճանապարհորդել ողջ Հայաստանով, ինչպես արդեն նշվեց, ամերիկացի քարոզիչներ էլի Սմիթն (1801–1857 թթ.) ու Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթն (1803–1862 թթ.) էին: Նշենք, որ ամերիկացի քարոզիչներից առաջ Արեւմտյան Հայաստան՝ մասնավորապես Կարս, Բայազետ, էրզրում այցելել էին Շուշիում տեղակայված շվեյցարացի քարոզիչները՝ վերապատվելի Զարեմբայի (Zaremba) գլխավորությամբ¹⁷: Բողոքական առաջին քարոզիչների գործունեությանն անդրադարձել են Ղեւոնդ Ալիշանը եւ Մաղաքիա արք. Օրմանյանը¹⁸:

էլի Սմիթը քարոզիչ գիտնական էր, որն աշխատել է Մալթայում եւ Բեյրութում, ազատ տիրապետել է արաբերենին, որոշ չափով նաեւ՝ թուրքերենին: Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթը համարվում է Օսմանյան կայսրության ժողովրդական առաքելության հիմնադիրներից եւ «հայկական առաքելության հայրը»: Վերջինս իր կյանքի 30 տարիները նվիրել է Օսմանյան կայսրության ժողովրդական գաղափարների տարածմանն ու բողոքական համայնքի կազմավորմանը¹⁹:

Նրանք իրենց ուղեւորությունն սկսում են 1830 թ. մարտի 17-ին Մալթա կղզուց: Մարտի 26-ին քարոզիչները հասնում են Զմյուռնիա, որտեղից մեկնարկում է նրանց երկար ճանապարհորդությունը ողջ Հայաստանի տարածքով²⁰: Քարոզիչներն ունեին տեղացի ուղեկցողներ: Ի դեպ՝ նրանց թարգմանիչը հայ էր: Ամբողջ ուղեւորության ընթացքում քարոզիչներն անցնում են շուրջ 2408 մղոն տարածություն: Ուղեւորությունն սկսելով Զմյուռնիայից՝ մտնում են Կոստանդնուպոլիս, որտեղից Փոքր Ասիայի տարածքով ճանապարհովում են դեպի Թոխատ, էրզրում, Կարս, այնուհետեւ հատելով ոռոս-թուրքական սահմանը՝ հասնում են Գյումրի, որտեղից էլ՝ Թիֆլիս: Քարոզիչները Թիֆլիսից դեպի հյուսիս չեն շարունակում ճանապարհը եւ կրկին վերադառնում են Հայաստան՝ ուղղություն վերցնելով դեպի Շուշի: Խրամ գետի վրայի հայտնի Կարմիր կամուրջն անցնելուց

Christians of Oormiah and Salmas, in 2 vols., Boston: Crocker and Brewstar, New York: Jonathan Leavitt, 1833, Preface, էջ V:

¹⁷ ՏՆՍ ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, նշ. աշխ., էջ 72:

¹⁸ Ղ. ԱԼԻՇԱՆ, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 23: ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, հտ. Գ., 2541:

¹⁹ ՏՆՍ LEON ARPEE, A Century of Armenian Protestantism 1846–1946, New York, 1946, էջ 49–50:

²⁰ ՏՆՍ ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, նշ. աշխ., էջ 1–2:

հետո նշում են, որ կրկին մուտք են գործել Հայաստան²¹: Շուշիից անցնելով դեպի Սյունիք՝ քարոզիչները գալիս են Նախիջևան, ապա Երեւան, Էջմիածին, որից հետո ուղղութիւն են վերցնում դեպի Պարսկաստան՝ Խոյ, Թավրիզ, Ուրմիա, ապա հատելով պարսկա-թուրքական սահմանը՝ հասնում են Բայազետ, այնուհետեւ՝ կրկին Էրզրում, որտեղից ուղեւորվում են Տրապիզոն: Այստեղ, ավարտելով իրենց ուղեւորութիւնը, 1831 թ. մայիսի 14-ին նաւ են նստում եւ տասն օր անց հասնում Կ. Պոլիս: Պոլսում մի քանի շաբաթ անցկացնելուց հետո քարոզիչները վերադառնում են Մալթա: Քարոզիչների ճամփորդութիւնը տեւում է 15 եւ կես ամիս²²:

Բացի խոշոր քաղաքներից՝ քարոզիչներն այցելում են նաեւ հայաբնակ բազմաթիւ գյուղեր: Փաստորեն՝ երկու բողոքական քարոզիչներն իրենց ուղեկցող խմբով լինում են երեք կայսրութիւնների՝ Օսմանյան, Ռուսական եւ Պարսկական, կազմում գտնվող հայկական հիմնական բնակավայրերում:

1833 թ. ամերիկացի քարոզիչների՝ Հայաստանում կատարած ճամփորդութեան արդյունքում կատարած ուսումնասիրութիւնները երկու հատորով հրատարակվում են ԱՄՆ-ում²³, իսկ մեկ տարի անց՝ մեկ ամբողջական հատորով՝ Լոնդոնում²⁴: Ամերիկացի քարոզիչների ճամփորդական ուսումնասիրութիւններն այդ հրատարակութիւններում ներկայացված են 24 նամակ-զեկուցագրերով:

Քարոզիչներն իրենց նամակներն առաքել են «Ամերիկյան խորհրդի» քարտուղարներից մեկին՝ վերապատվելի Ռուֆուս Անդերսոնին (Rufus Anderson), որի միջոցով էլ դրանք ուղարկվել են վերադաս մարմիններին²⁵: Քարոզիչներին տրված հրահանգների համաձայն՝ Հայաստանում ճանապարհորդող երկու քարոզիչներից յուրաքանչյուրը պետք է առանձին գրի առնէր տեսածն ու ներկայացներ սեփական կարծիքը: Դա

²¹ Անդ, էջ 164:

²² Անդ, էջ 459–460:

²³ *See* Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, in 2 vols., Boston: Crocker and Brewster, New York: Jonathan Leavitt, 1833:

²⁴ *See* ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, 1834, London:

²⁵ Անդ, Preface, էջ IX:

արվում էր հետագայում սխալներից եւ բացթողումներից խուսափելու համար: Բացի այդ՝ նրանցից յուրաքանչյուրը ներկայացրել է առանձին զեկուցագիր: Հետագայում երկուսի ներկայացրած զեկույցների հիման վրա պատրաստվել է հրատարակությունը²⁶:

Թեեւ զեկուցագրերը կազմվել են երկու քարոզիչների օրագրային դիտարկումների հիման վրա, սակայն աշխատանքի շարադրանքից պարզ է դառնում, որ այն հիմնականում պատրաստել է էլի Սմիթը: Իսկ Հարիսոն Դուալթը Հայաստան կատարած իր ուղեւորությունից մոտ երկու տասնամյակ անց սեփական հիշողություններն ու հայերի շրջանում կատարած հետազոտություննասիրություններն ամփոփում է երկու տարբեր աշխատություններում, որոնք նույնպես ուշագրավ աղբյուրներ են հայոց պատմության մի շարք հարցերի՝ հատկապես հայության շրջանում բողոքականության տարածման պատմության ուսումնասիրման համար²⁷: Դուալթի տրամադրած տեղեկությունները հետագայում հիմք են դարձել ամերիկացի այլ հեղինակների՝ Հայոց Եկեղեցուն նվիրված տարբեր աշխատությունների համար²⁸:

Աշխատության մեջ ընդգրկված 24 զեկուցագրերը պարունակում են բազմաթիվ հետաքրքիր եւ արժեքավոր տեղեկություններ այդ ժամանակաշրջանում հայության վիճակի, թվաքանակի, սովորույթների, Հայոց Եկեղեցու եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Բացի այդ՝ թե՛ ամերիկյան եւ թե՛ անգլիական հրատարակություններն ունեն ընդարձակ ներածություն, որտեղ ժամանակի աղբյուրագիտական եւ պատմագիտական նյութի հիման վրա ներկայացվում են հայոց պատմության հիմնական իրադարձությունները, ինչպես նաեւ՝ Հայկական լեռնաշխարհն ու Հայաստանի պատմաշխարհագրական միջավայրը: Նշենք, որ ամերիկյան եւ անգլիական հրատարակությունների ներածական մասերը բովանդակային առումով որոշակի տարբերություններ ունեն: Անգլիական հրատարա-

²⁶ Անդ, Preface, էջ VII–VIII:

²⁷ Տե՛ս HARRISON GRAY OTIS DWIGHT, Christianity Revived in the East, Or, A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey, Baker and Scribner, 1850, HARRISON GRAY OTIS DWIGHT, Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church, London, J. Nisbe, 1854:

²⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս «Հայոց Եկեղեցու մասին» (փոխադրությունը՝ Ա. Գ. Մադոյանի), «Էջմիածին», 2018, է., էջ 31–46: Քարոզիչների ի Հայս կատարած այցերի կապակցությամբ տե՛ս նաեւ «Էջմիածին», 2018, ԺԱ. 83–99-ԺԲ. 16–32, նաեւ «Էջմիածին», 2020, ԺԲ., 64–70:

կուլթյան ներածության մեջ Հայաստանը համարվում է «սրբազան աշխարհագրության» երկիր («Armenia is a country belonging to sacred geography»)²⁹: Հեղինակները ներածությանը կից տեղադրել են նաեւ բառարան, որտեղ ընթերցողներին ներկայացնում են տարածաշրջանում կիրառվող բազմաթիվ եզրույթների բացատրություններ: Կան տեղեկություններ նաեւ տարածաշրջանում կիրառվող չափման ու դրամական միավորների վերաբերյալ: Հեղինակներն արել են հնարավոր ամեն ինչ՝ նյութն ընթերցողին հասկանալի դարձնելու համար:

Էլի Սմիթը հրատարակության նախաբանում նշում է, որ իրենք աշխատել են տալ հնարավորինս ճշմարիտ տեղեկություններ՝ հաճախ նույն փաստի կամ տեղեկության տարբեր աղբյուրները համադրելով: Աշխատության մեջ քարոզիչներն օգտագործում են նաեւ պատմական ուրիշ աղբյուրներ եւ իրենցից առաջ տարածաշրջան այցելած եւրոպացի ճանապարհորդների աշխատություններ եւ ուղեգրություններ: Հավաքված տեղեկությունների համար հիմք են հանդիսացել ոչ միայն այն ամենը, ինչին իրենք ականատես են դարձել, այլեւ տարբեր անձանց հետ ունեցած խոսակցություններն ու զրույցները: Կարելի է նաեւ, որ այս կամ այն տվյալը հայտնելիս հեղինակները հիմնականում մատնանշում են՝ նյութի մասին իրենք ընթերցել են, անձամբ ականատես են եղել, թե՛ այդ մասին լսել են որեւէ մեկից: Պետք է նշել, որ ուղեգրության էջերում երբեմն տեղ են գտել ոչ ամբողջապես ճիշտ տեղեկություններ, պատմական սխալ փաստեր, անհատական մեկնաբանություններ:

Ինչպես հաղորդում է Էլի Սմիթը, հավաքված տեղեկությունները ճամփորդությունից հետո Մալթայում ճշգրտվել են, Սմիթի բնորոշմամբ, հայկական եկեղեցական հարցերի լավագույն գիտակ Դիոնիսիոս Եպիսկոպոսի հետ, որը նաեւ բազմաթիվ նոր տեղեկություններ է տրամադրել: Այնուամենայնիվ Սմիթը չի բացառում այն, որ ոչ ճիշտ որոշ տեղեկություններ կարող են սպրդած լինել իրենց ուսումնասիրություններում: Վերջինս հատկապես մտահոգիչ է համարում բնակչության թվի հետ կապված տեղեկությունները, քանի որ հնարավոր չի եղել հայտնաբերել կանոնավոր մարդահամարի տվյալներ, իսկ հիմնական տվյալները հավաքագրվել են

²⁹ Տե՛ս ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, *Missionary Researches in Armenia...*, նախաբան, էջ XIII:

բանավոր հարցումների միջոցով³⁰։ Քարոզիչներին՝ Շուշիում գտնվելու ընթացքում տեղեկություններ հավաքելու հարցում նրանց մեծ չափով օգտակար է եղել տեղի բողոքական առաքելության ղեկավար վերապատվելի Դիտրիխը (Dittrich)³¹։

Հատուկ ստեղծվում եւ գրքի մեջ ներառվում է նաեւ Հայաստանի քարտեզ, քանի որ, հեղինակների վկայությամբ, հնարավոր չի եղել գտնել մի քարտեզ, որտեղ պատկերված լիներ այդ ժամանակաշրջանում երեք կայսրությունների միջեւ բաժանված Հայաստանը։ Վերջիններիս բնորոշմամբ՝ ժամանակի քարտեզագիրների համար Հայաստանը «terra incognita»³² էր։

* * *

Ինչպես արդեն նշեցինք, ամերիկացի քարոզիչների գլխավոր նպատակը Հայաստանում ուսումնասիրություններ կատարելն էր։ Հայաստան հասնելու համար վերջիններս, ճանապարհվելով Կոստանդնուպոլսից, ցամաքային ճանապարհով անցնում են Փոքր Ասիայի ողջ տարածքով։

Քարոզիչները Թոխատ՝ պատմական Եւդոկիա մտնելուց հետո համարում են, որ արդեն Փոքր Հայքում են եւ, իրենց խոսքերով, պատրաստվում են հաղորդել ավելի մանրամասն տեղեկություններ³³։ Մատնանշենք մի կարեւոր հանգամանք. քարոզիչներն իրենց զեկուցագրերում մշտապես փորձում են օգտագործել Հայաստանի տարբեր բնակավայրերի, նահանգների, գավառների, աշխարհագրական վայրերի պատմական անվանումները՝ երբեմն միաժամանակ հիշելով դրանց փոփոխված օտար տարբերակները։

Ամերիկացի քարոզիչների զեկուցագրերում հսկայական տեղ է հատկացված բնակչության կենցաղի, ապրելակերպի, սովորույթների, ավանդույթների նկարագրությանը, քրիստոնյաների եւ մահմեդականների միջեւ հարաբերություններին։ Վերջիններս հաճախ մանրամասն նկարագրում են մարդկանց տները, պաշտամունքային կառույցները, եկեղեցիները, բերդերը եւ այլն։ Երբ համեմատում ենք հայերի տների նկարագրությունները, պարզ է դառնում, որ գյուղական վայրերում հայկական տները Քսենոփո-

³⁰ *See* Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia..., Preface, էջ VI–VII:

³¹ Անդ, Preface, էջ VI:

³² Անդ, Preface, էջ IX:

³³ *See* ELI SMITH, HARRISON GRAY OTIS DWIGHT, նշ. աշխ., էջ 42:

նի նկարագրած ժամանակներից գրեթե չէին փոփոխվել: Մարդիկ հաճախ ապրում էին իրենց կենդանիների հետ նույն հարկի տակ³⁴: Հաճախ նկարագրում են հազարաշեն տանիքները, հայկական թոնիրը, լավաշ թխելը: Նկարագրում են նաեւ աթարի պատրաստումն ու օգտագործումը, որը Հայաստանի անտառագուրկ վայրերում հիմնական վառելիքի միջոցն էր³⁵: Քարոզիչները, Արաքսի հովտում տեսնելով գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող պայմանները, արհեստական ոռոգման համակարգերի անհրաժեշտությունը եւ գյուղացիների դժվար կյանքը, գրում են, որ ոչ մի վայրի համար ավելի տեղին չի հնչում այն միտքը, թե մարդը «հացը վաստակում է սեփական քրտինքով»³⁶: Ամերիկացիները տեղեկություններ են հաղորդում այս կամ այն տարածաշրջանի եղանակի, ջերմաստիճանի, բնակլիմայական պայմանների, ինչպես նաեւ՝ բնակիչների զբաղմունքի, ստացված բերքի, դրա տեսակների, մշակաբույսերի, կենդանական աշխարհի մասին եւ այլն:

Արցախում եւ Սյունիքում գտնված ժամանակ նրանք անդրադառնում են հայկական ընտանեկան սովորույթներին, ամուսնության հետ կապված ավանդույթներին, ընտանիքում կանանց դերին եւ մի շարք այլ հարցերի³⁷: Քարոզիչները Ղարաբաղից Տաթեւ գնալու ճանապարհին գիշերում են Տեղ գյուղի մեկիքի տանը: Այդ կապակցությամբ խոսելով հայկական ազնվականական դասի մասին՝ կարճ անդրադարձ են կատարում իշխանական տներին եւ մեկիքներին, նշելով, որ նրանք հիմա չունեն նախկին փառքն ու հզորությունը, ինչպես անցյալում, բայց նրանց թիվը բավականին մեծ է: Ցավոք, քարոզիչները չեն հիշատակում որեւէ մեկիքի անուն, անգամ Տեղ գյուղի այն մեկիքի անունը, որի տանը գիշերել են³⁸:

Որպես կանոն՝ ամերիկացի քարոզիչները փորձել են իրենց այցելած բնակավայրերի վերաբերյալ հայտնել հնարավորինս ճիշտ տեղեկություններ նաեւ բնակչության էթնիկ կազմի եւ թվի վերաբերյալ: Փոքր Ասիայի տարածքով անցնելու ընթացքում նրանք հաճախ են հանդիպում բնակավայրերի, որտեղ հայերը բնակչության զգալի մասն էին կազմում: Բուն Հայաստանի տարածքում արդեն հայաբնակ բնակավայրերի թիվը մեծանում է, թեեւ հաճախ են հանդիպում կիսով չափ հայերով բնակեցված

³⁴ Անդ, էջ 56, 57 եւ այլն:

³⁵ Անդ, էջ 60:

³⁶ Անդ, էջ 270:

³⁷ Անդ, էջ 248–249 եւ այլն:

³⁸ Անդ, էջ 224–225:

կամ ամբողջությամբ այլազգիներով բնակեցված բնակավայրեր: Թեեւ աշխատանքի նախաբանում նշվում է, որ իրենց հաղորդած՝ բնակչության թվի վերաբերյալ վիճակագրական տվյալներին պետք է որոշակի զգուշությամբ վերաբերվել, այնուամենայնիվ քարոզիչների բերած տվյալները Հայաստանի տարբեր բնակավայրերի էթնիկ կազմի եւ բնակչության թվի վերաբերյալ³⁹ կարող են հանդիսանալ կարեւոր աղբյուր տվյալ ժամանակաշրջանի ժողովրդագրական պատկերի ուսումնասիրման համար: Այդ տեղեկություններից պարզ է դառնում, որ, չնայած օտար ներթափանցումներին, Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր շարունակում էին ամբողջությամբ մնալ հայաբնակ, կամ հայերը կազմում էին մեծամասնություն: Նրանց հաղորդումների համաձայն՝ տվյալ ժամանակաշրջանում հայահոծ էին նաեւ Փոքր Ասիայի եւ Վրաստանի բազմաթիվ բնակավայրեր:

Ամերիկացի քարոզիչները հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաեւ Հայաստանի տարածքում բնակվող ծագումնաբանական եւ կրոնական տարբեր խմբերի՝ թուրքերի, քրդերի, հույների, եզդիների, հրեաների, վրացիների, ասորիների, կովկասյան թաթարների⁴⁰ վերաբերյալ: Օրինակ՝ աշխատանքի ութերորդ գլուխը հիմնականում վերաբերում է Վրաստանին, վրացիներին ու կովկասյան մյուս ժողովուրդներին, երկու ամբողջական գլուխ՝ 20-րդը եւ 21-րդը՝ Ատրպատականում՝ Սալմաստում եւ Ուրմիայի շրջանում ապրող ասորիներին եւ նրանց դավանական տարբեր ուղղությունների՝ նեստորականների, քաղկեդոնականների ներկայացմանը⁴¹: Ուղեգիրները բացառիկ հետաքրքիր եւ մանրակրկիտ տեղեկություններ են հայտնում ասորիների՝ հատկապես նեստորականների, նրանց պատմական անցյալի, դավանանքի ու դրա առանձնահատկությունների, կրոնական հաստատությունների, հոգեւորականների, ծեսերի, սովորությունների, կենցաղի, թվաքանակի վերաբերյալ:

Զեկուցագրերից մեկում ամերիկացի բողոքականներն առաջարկում են հետագա քարոզչական առաքելությունն սկսել հենց նեստորականների շրջանում: Դա հիմնավորվում էր նախ նրանով, որ Թավրիզում գտնվում էր անգլիական հյուպատոսություն, որը կարող էր տարբեր հարցերով աջակցել իրենց, եւ հետո՝ քարոզիչները ենթադրում էին, որ

³⁹ Անդ, էջ 2, 5, 36, 37, 42, 43, 44, 47, 50, 55, 79, 90, 119, 138, 272–274, 358, 415 եւ այլն:

⁴⁰ Անդ, էջ 100, 119, 144–159, 261–262, 357, 452–456 եւ այլն:


⁴¹ Անդ, էջ 351–412:

գահաժառանգ Աբաս Միրզան, որի նստավայրը Թավրիզ քաղաքն էր, եւս կաջակցի իր ենթակա քրիստոնյաների շրջանում քարոզչական գործունեութիւն ծավալելու հարցում: Իսկ մահմեդականների շրջանում քարոզչական գործունեութիւնը դիտարկվում էր որպէս երկրորդ ուղղութիւն⁴²: Ճամփորդութեան վերջում, երբ ամերիկացի քարոզիչները ժամանում են Տրապիզոն, եզրակացնում են, որ լավ տարբերակ կարող է լինել այդ քաղաքում քարոզչական կայանի հիմնումը՝ հուլներին, ինչպէս նաեւ հայերի շրջանում բողոքականութիւն տարածելու նպատակով: Նրանք համարում են, որ վաղ թե ուշ էրզրումը կրկին կդառնա հայերով բնակեցված հիմնական կենտրոն, եւ Տրապիզոնի քարոզչական կայանը միջնորդի դեր կկատարի բուն Հայաստանի տարածքներ թափանցելու, ինչպէս նաեւ Արեւելյան Հայաստանի քարոզիչների հետ կապ պահպանելու համար⁴³:

Շարունակութիւնը՝ հաջորդիվ

⁴² Անդ, էջ 410–411:

⁴³ Անդ, էջ 458:



ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ»՝ ԿՈՍԿՈՒՄԻ ՉԿԱՅԱՑԱԾ ՆԱԽԱԳԻԾ՝

ՆԱԽԱԲԱՆ

Պատմության ընթացքում մեծ թիվ են կազմում կրոնի, եկեղեցական կառույցների նկատմամբ պետական իշխանության գործադրած բռնությունները: Սակայն նորագույն շրջանում ծավալով եւ հասցրած վնասակարության աստիճանով առանձնանում է ԽՍՀՄ-ում հակակրոնական պայքարը 1920–1930-ական թվականներին:

Խորհրդային հակակրոնական պայքարի առաջամարտիկը «Մարտնչող անաստվածների միություն» կոչվող կառույցն էր: Մինչ այժմ ՀԽՍՀ-ում այդ կառույցի գործունեությունն ամբողջական ուսումնասիրության չի ենթարկվել ինչպես պատմագիտական, այնպես էլ քաղաքագիտական տեսանկյունից՝ ձեւավորման նախադրյալների, դրդապատճառների, զարգացման փուլերի, կազմակերպչական կառույցի, սոցիալական կազմի, անդամների ներուժի, գաղափարախոսական հիմնադրույթների, հրատարակչական եւ քարոզչական գործունեության առումներով²: Մինչդեռ դրա անհրաժեշտությունն ու արդիականությունն ակնհայտ են:

Նշենք, որ բուն Ռուսաստանում նույնպես սույն նյութին անդրադարձել է մեկ ուսումնասիրող³:

Նյութը հարկավոր է դիտարկել պետական հակակրոնական քաղաքականության, պետության եւ կրոնական կառույցների փոխհարաբերությունների համապատկերում:

Հայտնի է, որ ՀԱԵ-ի (ինչպես նաեւ՝ Ռուս Ուղղափառ եւ քրիստոնեական ու ոչ-քրիստոնեական այլ եկեղեցիների եւ հավատամքային կա-

¹* Ստացվել է՝ 24.08.2023, գրախոսվել է՝ 30.08.2023: Էլ. հասցե՝ avag.harutyunyan@yandex.com:

² Եզակի աշխատանքը տես է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Մարտնչող անաստվածների միության գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թթ., «Էջմիածին», 2014, Ա., էջ 100–107:

³ Ску Русская Православная Церковь в советское время (1917–1991). Москва, 1995, էջ 46–156. С. ПОКРОВСКАЯ, Союз воинствующих безбожников СССР: организация и деятельность 1925–1947. Автореферат диссертации кандидата исторических наук, Москва, 2007:

ռուլցյանների) նկատմամբ պետության վերաբերմունքն ի սկզբանե թշնամական էր: Իսկ պատճառը պարզ էր. եկեղեցին կոմունիստական իշխանություններն ընկալում էին որպես նախկին՝ ցարական- դաշնակցական համակարգի գոյությունն ամրապնդող քաղաքական հենարաններից մեկը, որը տիրապետելով հսկայական գույքի ու դրամական միջոցների եւ առնվազն ողջ հանրապետությունում տեղաբաշխված կառույցների՝ կարող էր իբր հակառակվել նոր իշխանության հաստատմանը: Այդ պատճառով ՀԱԵ-ի դեմ պայքարն ստացավ համալիր ու համակարգված քաղաքական բնույթ՝ եկեղեցական գույքի բռնագրավումից մինչեւ հոգեւորականների ձերբակալություններ եւ գնդակահարություններ, ինչպես նաեւ վանական կառույցների փակում կամ քանդում:

ՄԵՌԵԼԱԾԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ

ԽՍՀՄ «Մարտնչող անաստվածների միությունը» հիմնադրվել էր «Անաստված» թերթի (1922–1935, 1938–1941) շուրջ 1924 թ. օգոստոսին Մոսկվայում: 1925 թ. գումարվել էր առաջին⁴, 1929 թ.՝ երկրորդ համագումարը⁵: Անփոփոխ ղեկավարը հին բոլշևիկ Նմեյսյան Յարոսլավսկին էր⁶: Արդեն 1941 թ. այս կառույցն ուներ 3,5 մլն. անդամ, 96 հազար բջիջ: Նշանաբանը՝ «Պայքարը կրոնի դեմ պայքար է սոցիալիզմի համար»: ԽՍՀՄ «Մարտնչող անաստվածների միությունն» ուներ «Անաստված» հրատարակչություն, տարբեր տարիներին ռուսերեն հրատարակել է «Անաստված» թերթը, «Անաստված», «Հակակրոնական», «Մարտնչող աթեիզմ», «Աթեիստ», «Գյուղական անաստված», «Անաստվածը հաստոցի մոտ», «Անաստվածը հանուն մշակութային հեղափոխության» ամսագրերը⁷: Իսկ ԽՍՀՄ ազգային լեզուներով հրատարակվել են ընդհա-

⁴ *Слѣ* Устав Союза безбожников СССР. М., 1925:

⁵ *Կանոնադրություն ԽՍՀՄ Մարտնչող անաստվածների միության, Երեւան, 1928, Թիֆլիս, 1930*: Стенографический отчет Второго Всесоюзного съезда Союза воинствующих безбожников СССР Москва, 1930:

⁶ *Слѣ* Е. Ярославский, 10 лет на антирелигиозном фронте, Москва, 1927. Против религии и церкви. Т. 1–4., Москва, 1932–1935. Коммунизм и религия, Москва, 1936. Библия для верующих и неверующих, Москва, 1977:

⁷ *Слѣ* Воинствующее безбожие в СССР за 15 лет (1917–1932), Москва, 1932. XV лет Союза воинствующих безбожников СССР, Москва, 1940. Б. Коновалов, Проблемы теории и практики атеизма в СССР в 1920–1930-х гг. Автореферат диссертации кандидата философских наук, Москва, 1968. Ա. ԼՈՒԿԱՉԵՆԿԻ, *Կրոնի դեմ պայքարելու հերթական խնդիրները եւ ՄԱՄ միջազգային*

նուր առմամբ տասնհինգ անուն թերթ եւ ամսագիր: 1947 թ. միությունը լուծարվել է, գործառույթները փոխանցվել են նորաստեղծ՝ քաղաքական եւ գիտական գիտելիքների տարածմամբ զբաղվող «Գիտելիք» ընկերությանը:

Հայաստանում, ի տարբերություն Ռուսաստանի, մարտնչող անաստվածների շարժումը ձեւավորվեց ու կայացավ առավել ավելի ուշ շրջանում: Այսպես՝ միայն 1927 թ. ՀԿ(բ)Կ ԿԿ կից ստեղծվեց եկեղեցական եւ հակակրոնական հարցերով մշտական հանձնաժողով⁸: Վերջապես, 1928 թ. մարտին ՀԿ(բ)Կ ԿԿ ագիտարող բաժնին կից հակակրոնական հանձնաժողովը որոշեց ստեղծել «Մարտնչող անաստվածների միություն»⁹: 1928 թ. հոկտեմբերի 30-ին Հայաստանի «Մարտնչող անաստվածների միության» հիմնադիր համագումարը (հիսունութ պատգամավոր (հիսունչորս հայ, մեկ ռուս, երկու թյուրք, մեկ հույն) 8000 անաստվածից) խնդիր առաջադրեց խորացնել գաղափարական պայքարն աղանդավորների դեմ, որոնք ձգտում են ազդեցության տակ առնել առաջին հերթին երիտասարդությանը: Անհրաժեշտ համարվեց ստեղծել «անաստվածների բջիջներ», աստվածամերժ աշխատակիցների ստեղծման ու վերապատրաստման, դաստիարակության համար պայքար մղել, կազմակերպել «անաստված» կոլտնտեսություններ, տարաբնույթ այլ հիմնարկներ¹⁰:

«Հակակրոնական պրոպագանդի նշանակությունն իդեոլոգիական պայքարի ճակատում» գեկույցում Հայաստանի կոմկուսի ղեկավար Ա. Խանջյանը շեշտեց. «Հայաստանում կրոնի հենց ներկա նույնիսկ թույլ վիճակը խոչընդոտ է, որպեսզի ամբողջ բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը լծվեն սոցիալիստական շինարարության: Կրոնը մեզանում դեռ շարունակում է թունավորել աշխատավորության դասակարգային գիտակցությունը: Անաստվածների միության առաջին հրամայական պահանջն այն է, որ կազմակերպությունը չդառնա ինքնամփոփ կամ մեկուսացած մի ընկերություն, պետք է լինի մասսայական

աշխատանքը, Երեւան, 1932: ԽՍՀՄ ՄԱՄ-ի քաղաքային եւ շրջանային խորհուրդների կանոնադրություն, Երեւան, 1938:

⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 28, թ. 8:

⁹ Հ. ՔՐՈՅԱՆ, ՀԿ(բ)Կ պայքարը աշխատավորության աթեիստական դաստիարակության համար, ԼՀԳ, 1974, թ. 11, էջ 3–12:

¹⁰ «Անաստված», 1928, թ. 9–10, էջ 1–2:

կազմակերպություն: Պետք է հավասարապես պայքարի թե հին եւ թե «նոր» կոչված եկեղեցիների դեմ, որոնք սկզբունքորեն որեւէ տարբերություն ունենալ չեն կարող մեր պայքարի համար»¹¹:

Միության նախաձեռնող հանձնաժողովի նախագահ Կարո Ղազարյանի տվյալներով իբր կար 400 բջիջ (8000 անդամ), «Անաստված» ամսագրի տպաքանակը 5000 էր: Ընտրվեց միության կենտրոնական խորհրդի նախագահություն, նախագահ՝ Մինաս Սարգսյան, անդամներ՝ Կ. Ղազարյան, Հ. Պետրոսյան, Մ. Գրիգորյան, Գ. Տոնյան, Ս. Մկրտչյան, Կ. Մկրտչյան: Ամսագրի խմբագիր հաստատվեց Պետիկ Թորոսյանը¹²: Միության նախագահ Մինաս Սարգսյանը, որպես դրվատանքի խոսք, ինքնակենսագրականում շեշտում էր. «1903 թ.-ից իմ ընտանիքում տեղի չի ունեցել ոչ մի կրոնական ծիսակատարություն, եւ մինչեւ օրս ոչ մի աստված մեզ չի պատժել այդ «հանցանքի» համար»¹³:

Միության ստեղծումը հատուկ կարեւորեց ժամանակի առաջատար կուսակցական պատմաբան Կ. Ղազարյանը¹⁴: Իսկ խորհրդային գործիչ Զ. Աշրաֆյանը մասնավորապես շեշտում էր հետեւյալը. ««Անաստված» միությունը պետք է դնել արժանի, բայց դեռեւս չարժանացած բարձրության վրա: Գլխավորը — պետք է հրաժարվել այն մտքից, թե «Անաստվածը» միակն է, որ պետք է զբաղվի դասակարգային պայքարով հակակրոնական ֆրոնտում: Այդ նա չի կարող կատարել առանց կուսակցական, կոմերիտական եւ արհմիութենական կազմակերպությունների ամենամոտիկ եւ սերտ ղեկավարության տեղերում»¹⁵:

Համագումարն առաջադրեց ընդունել հակակրոնական պայքարի հետեւյալ կարգախոսները որպես ուղեցույց. «Կրոնի դեմ պայքարը կուլտուրական հեղափոխության անհրաժեշտ պայմանն է: Հանուն սոցիալիստական նոր հասարակության՝ առանց կրոնի, տերտերի եւ հարբեցող տոների», «Հակահեղափոխական կուսակցությունները օգտագործում են

¹¹ Անաստվածների միության առաջին համագումարը, «Խորհրդային Հայաստան», 1928, նոյեմբերի 1:

¹² «Խորհրդային Հայաստան», 1928, նոյեմբերի 2: «Անաստված», 1928, թ. 9–10, էջ 26–29:

¹³ «Անաստված» ամսագիր, 1928, թ. 11–12, էջ 19:

¹⁴ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ, Պայքար ընդդեմ հետադեմ, կրոնաբարոյական իդեալիզմի, հանուն գիտական, մարտնչող մատերիալիզմի, «Լենինյան ուղի», 1929, թ. 3, էջ 72–78: Նաեւ տես Մայիսի մեկը եւ մեր անելիքները, «Անաստված», 1929, թ. 3, էջ 4–6:

¹⁵ Զ. ԱՇՐԱՖՅԱՆ, Ինչպես չպետք է աշխատել հակակրոնական ֆրոնտում, «Լենինյան ուղի», 1929, թ. 6, էջ 63:

կրոնը, եկեղեցին, աշխատավոր մասսաների հեղափոխականությունը թմրեցնելու համար, էլ ավելի ուժեղացնենք պայքարը հակախորհրդային կուսակցությունների, եկեղեցու, կրոնի դեմ, նրանց միասնական ճակատը խորտակելու համար», «Կրոնը եւ ալկոհոլը կուլտուրական հեղափոխության թշնամիներն են: Քրիստոսի ծննդյան առասպելը կապիտալիստների կողմից աշխատավորների շահագործման գործիքն է», «Հակակրոնական մամուլը հակակրոնական պրոպագանդի ամենահզոր միջոցն է»¹⁶: Իսկ բանաձեւում շեշտվում էր. «Ուժեղացնել հոգեւորականների, զանազան աղանդների ղեկավարների, եկեղեցական կազմակերպությունների դեմ պայքարը, որի հաջողության գրավականներն են. ա. խորացնել եւ կազմակերպչորեն ամրապնդել հակակրոնական կազմակերպությունները, բ. տարածել լայն մասսաների մեջ, գ. ուժեղացնել կապը, դ. բոլոր անաստվածներն ինքնակրթվեն, գրականության տարածում, ե. մամուլում լուսաբանում»¹⁷:

Սակայն անգամ մեկ տարի անց նշվում էին առկա բացթողումները եւ թերացումները: ՀԿ(բ)Կ ԿԿ ագիտարույթ բաժինը 1929 թ. դեկտեմբերի 6-ին հակակրոնական աշխատանքների ուժեղացման մասին շրջաբերականում մասնավորապես նշում էր. «Անաստվածների միությունը» կուսակցական, ԼԿԵՄ, պրոֆ կազմակերպությունները լուրջ ուշադրություն չեն դարձնում, հրամայական անհրաժեշտություն է ամեն կերպ աջակցել այդ կազմակերպության ամրացմանը: Հակակրոնական ագիտացիայի հիմնական եւ տիրող, բայց միանգամայն սխալ ձեւն է պայքարը տերտերների դեմ, եկեղեցիների մասսայական փակումը, տեղ-տեղ բռնի, վարչական միջոցների աջակցությամբ: Նման վարչական կոպիտ մեթոդներն ավելի ուժեղացնում են կրոնական զգացումները եւ թուլացնում հեղափոխական օրինականությունը: Կրոնի դեմ պայքարը պետք է ընդունել մի երկարատեւ պրոցես եւ այն էլ կոմունիստական դաստիարակման միակ ուղիով: Կրոնի դեմ պայքարի բնագավառում պետք է հրաժարվել մի անգամ ընդմիշտ երկու կարծիքից, որ հակակրոնական աշխատանքը մասսաներին զուտ բնագիտական իմացություններ տալու աշխատանք է, եւ որ նա չեզոք մի գործ է եւ իր մեջ չունի քաղաքական բնույթ»¹⁸:

¹⁶ «Անաստված», 1928, թ. 11–12, էջեր 9, 10, 15, 23:

¹⁷ «Անաստված», 1928, թ. 11–12, էջ 30–32:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 18, թթ. 44–46:

Հայաստանի «Մարտնչող անաստվածների միությունը» 1928 թ. վերջին պաշտոնապես ուներ 10 000 անդամ, 1929 թ.՝ 13 000, 1930 թ.՝ 40 000¹⁹: Անդամների քանակը թեպետ հետագայում տասնյակ հազարներով աճեց, սակայն իրականում այդ թվերը միայն թղթի վրա էին գրվում:

Միության գործունեության արդյունքում վարչահրամայական բռնաճնշումների հետեւանքով հոգեւոր ծառայությունից հրաժարվեցին եւ միությունն անդամակցեցին մի շարք քահանաներ, Լոռի-Փամբակի գավառի Քյուլլուշա գյուղի քահանա Սուքիաս Տեր-Սուքիասյանը, Նալբանդ գյուղի տիրացու Ավետիս Սանթրյանը, Զանգեզուրի գավառի Հայկավան գյուղի քահանա Կ. Կարապետյանը, Ն. Ղամբարլու գյուղի քահանա Աբրահամ Մամաջանյանը, Դիլիջանի գավառի Սեւար գյուղի քահանա Ղեւոնդ Ղալումյանը, Դարալագյազի գավառի Հերվեններ գյուղի քահանա Սիմոն Ղամբարյանը, Փաշալու գյուղի տիրացու Զաքար Ստեփանյանը, Լոռիի գավառի Համամլուի շրջանի Թափանլու գյուղի քահանա Նիկողոս Սարգսյանը, Մարտունու վ. Ադիյամանի քահանա Մաթեոս Բարսեղյանը²⁰: Նրանց հրաժարականները լայնորեն օգտագործվում էին քարոզչական նպատակով: Հիշատակենք մի քանի օրինակ. «Հրաժարվում եմ քահանայությունից — Սուքիաս Տեր-Սուքիասյան, Փամբակի Քյուլլուշա գյուղից: Այսօր այլեւս չեմ կարող շրջել ու գործել այդ գարշելի սեւագույն փարաջի տակ եւ խաբել խեղճ գյուղացիությանը: Այսօր բացահայտ դուրս եմ գալիս հայտարարելով, որ կրոնն ու եկեղեցին ոչ այլ ինչ են, եթե ոչ մասսաներին խաբելու, կեղեքելու եւ բթացնելու միջոց: Ես, այդ հասկանալով ու գիտակցելով, հրաժարվում եմ կղերականների համբարությունից եւ կրոնից: Այդ անելուց հետո մտնում եմ մեր գավառակի Անաստվածներուն խմբակի մեջ եւ տանելու եմ հակակրոնական պրոպագանդա: Ապա կոչ եմ անում բոլոր նրանց, որոնք մի անգամ գիտակցաբար թե անգիտակցաբար ընկել են իմ վիճակի մեջ, դառել «տեր հայր», հիմա «ի խորոց սրտից» ընդունում են կրոնի կեղծիք ու ստություն լինելը, կրոնի վնասակար լինելը, կղերականության անպիտան ու թալանչի դերը, հետեւեն ինձ ու հրաժարվելով — հրաժարվեն իրենց իբր թե «սուրբ» կոչումից»: Նալբանդ գյուղի տիրացու Ավետիս Սանդրոսյանի նամակը: Չնայած իմ չքավոր

¹⁹ «Անաստված», 1930, թ. 18, էջ 7:

²⁰ «Անաստված», 1928, թ. 7–8, էջ 21, թ. 9–10, էջ 21, 1929, թ. 1–2, էջ 20–21, 1935, թ. 10:

ու աննախանձելի վիճակին, մինչև խորհրդայնացումը չէի գիտակցում, որ եկեղեցին ստորոնթյունների եւ կեղծիքների բուն է: Խորհրդային իշխանության օրոք, երբ բացվեց ու պարզաբանվեց շատ մութը բան մեզ համար, ես հասկացա եկեղեցու վտանգավոր լինելը մեզ համար: Սրանով հայտնում եմ, որ այսուհետեւ ոչ միայն տիրացություն չեմ անելու, այլ եւ չեմ հաճախելու եկեղեցի»²¹:

Հատկանշական է, որ «Մարտնչող անաստվածների միության» կենտրոնական խորհրդի նախագահները եւ «Անաստված» պարբերականների խմբագիրները պարբերաբար փոփոխվում էին: Օրինակ՝ 1934 թ. հուլիսի 28-ին ՀԿ(Բ)Կ ԿԿ Բյուրոն խորհրդի նախագահ Ե. Խոջամիրյանի փոխարեն հաստատեց Լեւոն Վարդունուն²², իսկ 1935 թ. փետրվարի 18-ին, հակակրոնական աշխատանքի վիճակը գնահատելով «ծայրահեղ անբավարար» եւ հաշվի առնելով «խորհրդի տարիներ շարունակ փաստացի անգործունակ» լինելը, Վարդունու (մնաց «Անաստված» ամսագրի խմբագիր) փոխարեն նախագահ հաստատվեց Ս. Շահվերդովան²³, որին 1936 թ. փետրվարի 20-ին փոխարինեց Պ. Պետրոսյանը²⁴, 1938 թ. հունիսի 23-ին՝ Ա. Օգանեզովը²⁵, 1940 թ. մարտի 10-ին՝ Ս. Գինոսյանը²⁶: Հավելենք, որ միության ղեկավար կազմի մեծ մասը կուսակցական աշխատակիցների հետ 1937–1938 թթ. ենթարկվեցին բռնաճնշումների:

Անկայուն էր վիճակը նաեւ համագումարների հրավիրման պարագայում: Սկզբնապես որոշվեց այն գումարել 1935 թ. մայիսի վերջին, ապա՝ 1938 թ. փետրվարի 15-ին²⁷, հետո՝ 1938 թ. հուլիսի 25-ին²⁸:

Հակակրոնական պայքարի մոլուցքն այնքան էր սրվել, որ 1931 թ. օգոստոսին Երեւանի Սբ. Լուսավորիչ եկեղեցին հանձնվել էր միությանը՝ հակակրոնական թանգարանի վերածելու համար²⁹, սակայն «ձեռներեց»

²¹ «Անաստված», 1928, թ. 7–8, էջ 21:

²² ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 24, թ. 103: Տես նաեւ ՀԱԱ, ֆ. 950, ց. 1, գ. 25:

²³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 11, թ. 85:

²⁴ ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 20, թ. 74:

²⁵ ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 32, թ. 153:

²⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 42, թ. 94:

²⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 53, թ. 178:

²⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 37, թ. 90:

²⁹ ՄԱՆԿՈՒՆԻ, Հակակրոնական թանգարան Երեւանում, «Անաստված», 1931, թ. 11–12, էջ 7:

անաստվածները երեք տարվա ընթացքում թանգարանի փոխարեն եկեղեցում ստեղծել էին... կինոթատրոն եւ բուֆետ, որտեղ զբաղված էին գարեջրի եկամտաբեր վաճառքով³⁰:

ՀԿ(Բ)Կ ԿԿ բյուրոն առնվազն տարին մեկ անգամ պարտագիր կարգով քննարկում էր միության կադրային, աշխատանքային, կազմակերպչաբարոզչական գործունեությունը եւ մշտապես խիստ քննադատում այդ ամենի անբավարար լինելը: Օրինակ՝ 1936 թ. ապրիլի 16-ին միությունը մեղադրվեց այն բանի համար, որ դեռեւս որոշ շրջաններում անգամ խորհուրդներ չեն ստեղծվել, նույնիսկ վերջնական հաշվառված չեն միության անդամները, թույլ է կապը դպրոցների, կուլտուր-լուսավորչական հիմնարկությունների եւ հանրապետական մամուլի հետ, զգալի է որակյալ գիտական կադրերի բացակայությունը դասախոսական աշխատանքների համար³¹: Նույն խնդիրները ՀԿ(Բ)Կ ԿԿ բյուրոն նշեց նաեւ 1937 թ. դեկտեմբերի 21-ին՝ հավելելով անհրաժեշտ կադրերի պատրաստման եւ վերապատրաստման համար դասընթացների կազմակերպման հրատապ անհրաժեշտությունը³²:

Ելնելով տարիներ շարունակ ձգձգվող անգործունակության իրավիճակից՝ ՀԿ(Բ)Կ ԿԿ բյուրոն 1938 թ. մարտի 27-ին ընդունեց «Հայաստանի Մարտնչող Անաստվածների Միության աշխատանքի եւ հակակրոնական քարոզչական վիճակի մասին» հատուկ որոշում, որով հաստատվեց միջոցառումների մանրամասն ծրագիր: Այդտեղ փաստագրվում էր հետեւյալը. «Հակակրոնական քարոզչությունը, որպես կուսակցական քարոզչության կարեւորագույն բաղկացուցիչ մաս, մինչ այժմ Հայաստանում ծավալվել է ծայրահեղ անբավարար: ՄԱՄ Կենտրոնական խորհուրդը չի հաղթահարել իր վրա դրված խնդիրները – հավատացյալների շրջանում հակակրոնական քարոզչության լայնորեն ծավալում, այդ աշխատանքում չի ներգրավել գիտական աշխատողների կադրերին, ուսուցիչներին, բժիշկներին, ագրոնոմներին, կուսակցա-կոմերիտական ագիտատորներին ու քարոզիչների կադրերի: Հայաստանի ՄԱՄ ԿԿ վատ է ղեկավարել սկզբնական կազմակերպություններին եւ ՄԱՄ շրջանային խորհուրդներին եւ չի ապահովել ՄԱՄ Համահայկական կոնֆերանսի

³⁰ «Անաստված», 1934, թ. 1, էջ 7–8:

³¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 35, թ. 93:

³² ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 53, թ. 178:

նախապատրաստումը եւ անցկացումը: ՄԱՄ ղեկավար կազմում ներթափանցել են ժողովրդի թշնամիներ, որոնք հասել են ՄԱՄ տապալմանը եւ լիկվիդացիային: Հակակրոնական քարոզչությունից մի կողմ են կանգնած կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունների քարոզիչները եւ ժողովրդական կրթության մարմինները: Ինչպես կենտրոնական, այնպես եւ շրջանային պարբերական մամուլը չեն լուսաբանում հակակրոնական քարոզչության հարցերը եւ չեն մերկացնում եկեղեցականների ու աղանդավորների թշնամական աշխատանքի կոնկրետ փաստերը»³³: Անցյալի նույն ցուցումները կրկնելուց զատ՝ կառավարության եւ Երեւանի քաղաքային իշխանություններին հրահանգվեց միությանն ապահովել նյութական բազայով եւ համապատասխան շենքով: Այսինքն՝ միության ստեղծումից նույնիսկ տասը տարի անց այն զուրկ էր նման առաջնահերթ անհրաժեշտ պարագաներից:

Մարտնչող անաստվածները բավականին «բեղուն» հրատարակչական գործունեություն էին ծավալել³⁴, քարոզչական ասպարեզում ձգտում էին ընդգրկել պետական կառավարման համակարգի³⁵ եւ հանրության գրեթե բոլոր հատվածներին³⁶՝ օգտագործելով անգամ թատերգական գործերը³⁷:

Այսուհանդերձ՝ 1943 թ. նոյեմբերի 10-ին ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոն որոշեց ՀԽՍՀ ԺԿԽ-ին կից ստեղծել ՀԱԵ գործերով խորհուրդ³⁸:

Շարունակությունը՝ հաջորդիվ

³³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 28, թթ. 133, 142–143:

³⁴ Օրինակ տե՛ս Ե. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ, Աստվածաշունչը հավատացյալների ու անհավատաների համար: Ծննդոց գիրք, Երեւան, 1925: Պ. ՎԼԱՍՅԵՆԿՈ, Աստված կա՞րողո՞ք, Երեւան, 1926: Գ. ՊԼԵԽԱՆՈՎ, Հողվածներ կրոնի մասին, Երեւան, 1929: Ա. ԼՈՒՆԱԶԱՐՍԿԻ, Կրոնի պատմության ներածություն, Երեւան, 1931: Հակակրոնական ժողովածու, Երեւան, 1938:

³⁵ Հակակրոնական ձեռնարկ անաստված Կարմիր բանակայինի համար, Երեւան, 1930: Լ. ԻԳՆԱՏԵՒ, Անաստված կոլխոզներ, Ռոստով, 1931: Ե. ՕԼՅՈՒՏԻՆ, Կոլխոզային շարժումը եւ պայքարը կրոնի դեմ, Ռոստով, 1931:

³⁶ Ի. ԵԼՎԻՆ, Եկեղեցին եւ աշխատավոր կինը սահմանի մյուս կողմում, Երեւան, 1932: Ա. ՍՄԻՐՆՈՎ, Հակակրոնական դաստիարակությունը պիոներական կոլեկտիվում, Երեւան, 1932: Մ. ՊԱԼՅԱՎՈՎԱ, Երիտասարդության կրոնական կազմակերպությունները, Երեւան, 1932: Կ. ԲԵՐԿՈՎԱ, Հակակրոնական դավադիրները ընտանիքում, Երեւան, 1930:

³⁷ Ի. ԼԵԲԵԳԵՒ, Անաստվածներ, Երեւան, 1928: Ա. ՄԻՋԻՆ, Կրակենք, ումբակոծենք աստծուն, Թիֆլիս, 1923: Վ. ԹԱԹԻՎՅԱՆ, Կոլխոզի հաղթանակը, Երեւան, 1930: Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ, Թիֆլիս, 1930:

³⁸ ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 37, թ. 105:



«ՍԱՍՆԱ ԾՈՒՆԵՐ» ԷՊՈՍԸ՝ ԻՐՐԵԻ ԱՐԵԻԱՊԱՇՏԱԿԱՆ ԴԻՅԱՊԱՏՈՒՄ

«Սասնա ծռեր» դյուցազներգությունը, իբրեւ դիցաբանական խորհրդանիշների համակարգ, սկզբնավորվել է ընդհանուր ենթագիտակցական մտածողության շրջանում, երբ երկիրն ու երկինքն անբաժան էին: Այս է պատճառը, որ դիցապատումի հետնախորքում թաքնված է տիեզերագիտական, աստղագիտական դիցաբանությունը:

Դիցապատումը հյուսվել է տարբեր դարաշրջաններում, սակայն նրա հիմքում ընդհանուր ենթագիտակցական մտածողության ծնունդ դիտարկվող խորհրդանիշների համակարգն է, որի շնորհիվ աշխարհը (նաեւ երկինքը) արտացոլվում է ամբողջական եւ հարաժամանակյա:

Դիցապատումի ճյուղերում նկատելի է խորհրդանիշների միեւնոյն համակարգը, որից ծնունդ առած աշխարհաճանաչման առանցքում տոհմի գաղափարն է:

Դյուցազներգությունը ձեւավորվել է ըստ հավատամքային համակարգի, ինչը «Սասնա ծռեր»-ի պարագայում արեւապաշտությունն է:

«Դյուցազներգությունը պատմում է աստվածների, ոգիների, իրենց ծագմամբ աստվածների հետ կապված հերոսների, նախնիների, աշխարհի ստեղծմանը ուղղակի եւ անուղղակի մասնակիցների, աշխարհի բնական եւ մշակութային տարրերի մասին»,—գրում է Ն. Մելետինսկին²:

Հերոսը եւ տոհմը պատկերվում են որպես պաշտամունքի կենդանի կամ բույս հանդիսացող նախահոր հավատալիքների շրջանակում:

^{1*} Ստացվել է՝ 20.11.2023, գրախոսվել է՝ 5.12.2023:

էլ. հասցե՝ usatenn@rambler.ru:

² Ску Е. Мелетинский, «Происхождение героического эпоса», Москва, 2004, էջ 15:

Բախումն ընթանում է տոհմի եւ հակառակ տոհմի, հերոսների եւ խթոնիկ ուժերի միջեւ: Պատմական ժամանակը տարրալուծվում է առասպելական ժամանակի մեջ:

Առասպելականը կլանում է պատմական դարաշրջանները: Ամեն ինչ ենթարկվում է առասպելականի տրամաբանությանը: Մեկ տոհմի եւ նրան հակադիր տոհմի մեջ խտացվում են պատմական դարաշրջանների հակադրությունները: Խթոնիկ ուժերի դեմ պայքարը հետագայում իմաստավորվում է որպես թշնամիների դեմ պայքար (առասպելականի եւ պատմականի կապը):

Խորհրդանշանային տիպաբանությունը, ըստ Մելետինսկու, հերոսների կենսագրությունը բաժանում է հետեւյալ բաղադրիչ օղակների՝ հրաշալի ծնունդ, անվանադրություն, հեքիաթային ձիու սանձահարում, հերոսական հարսնախոսություն:

Դյուցազնավեպի առաջացման պատմական դպրոցի ներկայացուցիչների այն պնդումները, թե պատմական դեպքերն ու դեմքերն են ընկած էպոսի պատումի հիմքում եւ վերջում միայն «օգնության են գալիս» առասպելական իրադարձությունները եւ հերոսները, չեն համապատասխանում իրականությանը: Բոլոր դեպքերում դիցապատումը հավատարիմ է մնում առասպելական դիպաշարային եւ խորհրդանշանային պատմողական կաղապարներին:

Դիցապատումը խոսքային եւ երգային կոթող է: Այն երգել են քրմերը՝ պաշտամունքային հիմների նմանությամբ:

Դիցաբանության ծիսական դպրոցի ներկայացուցիչ Ռեզլանը դյուցազնավեպում, առասպելում տեսնում է միայն ծիսական տարրեր, ինչպես նաեւ աստծու եւ հերոսի նույնականությունը:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպի չորս ճյուղերի հերոսներն աստվածներ են: «Եթե անհետացող կրոնների աստվածները չեն մեռնում, վերափոխվում են ժողովրդական ստեղծագործության հերոսների... մնում են նրանց փոխարինող միջերը»,— գրում է Ժ. Դյումեզիլը³:

«Սասնա ծռեր» դիցապատումում աստվածները վերափոխվել են հերոսների, սակայն դավանապաշտությունը, որն արեւապաշտությունն է, մնացել է անփոփոխ: Դիցապատումն ամբողջությամբ արելի առասպելի պատում է: Թերեւս ակնհայտ է Միթրայի հետ Մեծ եւ Փոքր Մհերների կա-

³ Ску Дж. Дюмезиль, Осетинский эпос и мифология, Москва, 1976, էջ 50:

պը, որը նկատել է Գարեգին Սրվանձտյանը: Միթրան հայկական դիցաբանությանն է անցել Միհր, Մհեր տարբերակներով: Նա Ավեստայում արեւի աստվածն է: «Մեծ Մհերի եւ Փոքր Մհերի ճյուղերի հիմքում ընկած են հին հայկական եւ հնդիրանական երկնային լույսի եւ Արեգակի աստված Միհրի (Միթրա) առասպելաբանական թեմայի բազադրիչները՝ զուգորդված ժայռում փակված հերոսների տեղական հնագույն առասպելին»⁴:

Բացի Մեծ եւ Փոքր Մհերներից՝ «Սասնա ծռեր»-ի առաջին եւ երրորդ ճյուղերի հերոսները եւս արեւի առասպելի անձնավորում են: Սա մեզ մղում է դուցազնավեպի ծննդյան ակունքները որոնելու արեւի պաշտամունքի եւ հատկապես միթրայականության դարաշրջաններում:

Միթրան կապված է արեւին եւ ջրին: «Սասնա ծռեր»-ում տիեզերքի արարման նախապայմանն արեւի եւ ջրի միասնությունն է: Զրից են ծնվել առաջին ճյուղի հերոսներ Սանասարն ու Բազդասարը՝ երկվորյակ աստված-եղբայրները: Ըստ առասպելների՝ կյանքն առաջացել է սկզբնական ջրերից: «Ռիգվեդա»-ում ջուրը գոյության կրողն է: Սանասարն իր ուժը, ձին եւ զենքը դուրս է բերում ծովի հատակից: Դավիթը հզորանում է՝ Կաթնաղբյուրի ջուրը խմելով եւ այդ ջրում լողանալով: Զրային հրաշալի աղբյուրի թեման բնորոշ է թե՛ հայկական եւ թե՛ վրացական դիցապատումներին: Նարտական դուցազնավեպում սերնդի նախամայրը Զերասանն է՝ ջրային թագավորության տիրոջ դուստրը: Ուրիզմազն ու Խամիցը մանկությունն անցկացնում են ծովում՝ մայրական գյուղում:

Արեւը, ըստ հայկական հավատալիքների, ելնում է Վանա լճից: Վեդայական կրակի աստված Ագնին թաքնվում է ջրերում: Զրի պաշտամունքի խորհուրդ ունի նրա ամին Սասնա բերդի կառուցումը: Զրի եւ կրակի դաշինքի հիմքում նրանց մաքրագործող զորությունն է:

«Սասնա ծռեր» դիցապատումը Սասունը ներկայացնում է արեւով (հրով) եւ ջրով մաքրագործված երկիր, սրբագործված աշխարհ:

«Սասնա ծռեր»-ի առաջին ճյուղն արձագանքում է աշխարհաստեղծման կարգերին ու օրենքներին: Նրա հիմքում երկվորյակների առասպելն է: «Ոչ մի տեղ երկվորյակ աստվածների պաշտամունքն այնպիսի զարգացման չի հասել եւ այն աստիճանի չի տարածվել, որքան հնդեւրոպական ժողովուրդների մեջ»,— գրում է Լ. Շտերնբերգը⁵:

⁴ ՀՍՀ, հտ. 10, էջ 197:

⁵ Л. ШТЕРНБЕРГ, Первобытная религия в свете этнографии, Ленинград, 1936, էջ 74:

Կարելի է ենթադրել, որ առասպելական երկվորյակների կենդանի օրինակը Մասիսի գագաթներն են, որոնցից առաջացել են դիցապատումի առաջին ճյուղի հերոսների անունները՝ Սանասար եւ Բաղդասար (Սան-ա-սար եւ Բաղդ-ա-սար, սան-սուրբ եւ բաղդ-հատած): Արտագաղթելով Հայկական լեռնաշխարհից՝ հնդեւրոպական խմբերը տարածել են երկվորյակների առասպելը: Երկվորյակներ են Որմիզդը եւ Ահրիմանը (Իրան), Միտրան եւ Վարունան (Ռիգվեդա), Ռոմուլը եւ Ռեմը (Հռոմ), Խուրին եւ Շերին (խուրիական), Նակուլան եւ Սախադեւան (Հնդկաստան), Վալիգորը եւ Վիլվիգուբը (սլավոն.), Ապոլլոնը եւ Արտեմիսը (հուն.), Բալդուրը եւ Գեդուրը (գերմ.), Յանուսը եւ Յանան (հին իտալ.) եւ այլն:

Ի. Դյակոնովը⁶ երկվորյակների բազմությունը համարում է հակադիր մտածողության հետեւանք:

Ժ. Դյումեզիլը «Առասպել եւ դիցապատում» աշխատության մեջ նշում է, որ երկվորյակների պաշտամունքը լայն տեղ է գրավել հին ժողովուրդների կրոններում: Դիցաբանները խնդիր են դնում երկվորյակ աստվածների հարցը լուծել արեւային առասպելի կամ ընդհանրապես երկնային երեւույթների շրջանակում: Հենց այս ուղեգծում պետք է դիտարկել մեր դյուցազներգության առաջին ճյուղը: Երկվորյակ եղբայրների մեջ մեկը գերակա դիրքում է («Սասնա ծռեր»-ում՝ Սանասարը), որն արեւ-լուսին հակադրության մեջ մարմնավորում է արեւը: Ս. Տոլստոյը, հանձինս երկվորյակների, տեսնում է երկու պաշտամունքային նախնիների վերաբերյալ պատկերացումները, որոնք փոխարինում են մայրիշխանության տոհմաբանական առասպելին:

Այժմ փորձենք ներկայացնել Սասուն տեղանվան նշանակությունը:

Սասունը լեռնային երկիր է, ինչը նշանակում է, որ այն աստվածների երկիր է: Հնդկական դիցաբանության մեջ Շիվին բնակվում է լեռներում եւ անտառներում:

Սասուն անվան բացատրությունը թերեւս կարելի է կապել կորեական սասու բառի հետ, որ նշանակում է չորս սուրբ կենդանի, ոգի, որոնք աշխարհի պահապաններն են: Սասունը բարձրագույն է եւ կարող է դիտվել որպես ոգիների միջոցով աշխարհի կողմերը հսկող: Հիշատակված բառարանում հանդիպում է սանսին բառը՝ լեռների ոգի նշանակությամբ:

⁶ И. Дяконов, Архаические мифы Востока и Запада, Москва, 1990, էջ 152:

Տեղանունների հեռավոր փոխառությունները բացառել չի կարելի: Մարութա սարի անունը փոխառություն է հնդկական դիցաբանությունից, որտեղ այն քամու, բքի, ամպրոպի ու կայծակի աստվածությունն է:

Էպոսի ճյուղերի շորս թիվը պետք է նշանակի, որ յուրաքանչյուրի հսկողության տակ է աշխարհի մեկ կողմը (ճյուղի հերոսի գործունեության մասին): «Սասնա ծռեր» դիցապատումն արեւապաշտական համակարգ է՝ արեւի առասպելը մարմնավորող շորս ճյուղերի դից-հերոսներով:

Սանասարը երկվորյակների առասպելում արեւ-լուսին հակադրության առաջին կողմն է (արեւ): Նրա՝ որպես արեւի հերոսի ճանաչմանը կօգնի համեմատությունը նարտական դիցապատումի հերոս Սոգիրիկոյի հետ: Սոգիրիկոն արեւային հերոս է, որն իր հարսնացուին որոնում է երկաթե ամրոցում: Սանասարն իր հարսնացուին որոնում է Պղնձե քաղաքում՝ (մի դեպքում երկաթե, մյուս դեպքում՝ պղնձե): Սոգիրիկոյի՝ երկաթե ամրոցում ապրող հարսնացուն արեւի դուստր է: Պղնձե քաղաքում ապրող Դեղձունը զուգահեռաբար արեւի դուստր է: «Պղնձե»-ն հենց արեւի (արեւագույն) քաղաքն է: Դեղձուն անունը արեւագույն է նշանակում: «Քառասուն ճյուղ ծամ»-ը արեւի շողերի առատությունն է վկայում: Դեղձունը երկնային կրակի մարմնավորումն է: Հիշենք, որ հայկական դիցաբանության մեջ կրակ-կին է Ծովինարը, չնայած նրա անունը կապված է ծովին: Նա ամպրոպի ոգին է, կայծակի եւ արշալույսի մարմնավորումը: Ծովինարն արեւի եւ կայծակի աստվածուհին է, ամպրոպի ժամանակ կրակե ձիու վրա է (մայրիշխանության ժամանակների Վահագն է): Կրակի հատկանիշները, ինչպես տեսնում ենք, Ծովինարից անցնում են Դեղձունին:

Անցնենք Մեծ Մհերի ճյուղին:

Միհրը եւ Մհերը, ինչպես վերելում նշեցինք, առաջացել են Միթրա անունից: Միհրը հայոց երկնային լույսի եւ արեգակի աստվածն է՝ Արամազդի որդին: Մեծ եւ Փոքր Մհերների ճյուղերը վկայում են, որ մեր դուցազնավեպի ստեղծման դարաշրջաններից մեկը Միհրի պաշտամունքի դարաշրջանն է:

Լ. Դհարը «Մահաբհարաթան» գնահատում է որպես արեւային առասպելի համակարգ: Նույնը մեզ համար «Սասնա ծռեր» դուցազնավեպն է:

Արեւի պաշտամունքը, ըստ մասնագետների, առավել տարածված է հնդեւրոպական ժողովուրդների դիցաբանության մեջ: Հայաստանում արեւի պաշտամունքի վկաներն են արեւի տաճարներն ու սյուները (Նեմրուծի, Քարահունջի եւ այլն): Արեւին նվիրված ծիսակատարությունները

սրբագործում են աշխարհը, կյանքը: Կրոնական արարողություններով մաքրագործումը կատարվում է նաեւ ջրով (առաջինն օգտագործվել է կրակը): Սասնա հերոսները սրբագործված մարդիկ են: Սրբագործված է երկիր Նաիրին՝ հրի եւ ջրի երկիր:

Մեծ Մհերի ճյուղում իրադարձությունների մեջ առանձնանում են առյուծի դեմ կռիվը եւ ուշ տարիքում զավակ ունենալը:

Դիցաբանության մեջ առյուծն արեւի անձնավորումն է: Սակայն մեծ Մհերն սպանում է առյուծին, որը փակել էր հացի ճանապարհը, եւ ստանում «առյուծաձեւ» մականունը (առյուծը պալատների, թագերի, դամբարանների, դարպասների պահապանն է):

Մեծ Մհերը նման է աստվածաշնչյան Սամսոնին, որը պատռում է առյուծի երախը: Մեծ Մհերի առյուծաձեւ որակումը նշանակում է արեւն անձնավորող, աստվածային, արեւային լիցքերի կրող եւ ոչ առյուծ ձեւող կամ առյուծի ձեւ ունեցող, առյուծանման, ինչպես մինչեւ այժմ մեկնաբանվել է: Արեւ-արքայի Նեմրուծի սրբավայրում թագավորության զինանշանի վրա առյուծն է: Զրադաշտական կրոնում առյուծը դիտվել է հարության եւ սրբազան կրակի խորհրդանիշ:

Մեծ Մհերը զավակ է ունենում Աստծու հետ կապած պայմանով, որից հետո ինքն ու կինը հեռանում են կյանքից: Սա հրաշագործ ծննդյան առասպելական արձագանքն է:

Ամիրանին եւս ծեր ծնողների զավակ է:

Դիցապատումի ամենաընդարձակ ճյուղը Դավթինն է:

Դավթին արեւամանուկ է: Նա փոքր հասակում կռվում է արեւի շողերի դեմ (արեւամանուկը երեք օրվա անհաջող որսից հետո որոշում է սպանել արեւին):

Նրա զենքը թուր կեծակին է: Միթրան եւս սուր է կրում:

Նարտական դյուցազնավեպում Բատրազին անվանում են աստված-սուր, ինչը կարելի է ասել Դավթի մասին: Վահագնից շատ բան է փոխանցվել Դավթին: Դավթին մանուկ ժամանակ թրծում են կրակի վրա, ինչի խորհուրդն անմահության ձեռքբերումն է: Հունական դիցաբանության մեջ Աքիլլեսի մայրն է գիշերները որդուն թրծում կրակի վրա:

Միթրայի գաղտնածիսություններին նվիրված արարողությունների ընթացքում անց էին կացնում փորձություններ կրակի միջոցով:

Մեկ ընդհանրացում՝ հայկական դյուցազնավեպում առկա բոլոր կենդանիները՝ ձի, ցուլ, առյուծ, առնշուփյուն ունեն արեւի առասպելի հետ:

Այսպես՝ ձիերը զուգորդվում են արեւի եւ աստվածների հետ: Թեւավոր ձին արեւի եւ հոգեւորի խորհրդանիշն է: Զին զուգորդվում է բքի, կրակի, հոսող ջրի, ալիքների տարերային ուժի հետ: Զիերը տանում են արեւի սկավառակը: Հաճախ փոխադրամիջոցը, որում ընթանում է արեւը, ձգում են ոսկե կամ սպիտակ ձիերը:

Յուլը կենտրոնական տեղ է գրավում Միթրայի պաշտամունքում: Միթրան կրում է սուր եւ ընթանում է Աֆրոդիտեի ցուլի վրա: Ծիսական տոների ընթացքում արեւի աստված Միթրայի պատվին ցուլ էին զոհում: Յուլն աստվածային զորութեան խորհրդանշան է՝ կապված արեւի, լուսնի, քամու, երկնքի աստվածների հետ: Հստ դիցաբանների՝ ցուլը ներկայացնում է արեւն ու լուսինը, հողն ու երկինքը, մայրիշխանությունը եւ հայրիշխանությունը, մահն ու վերածնունդը:

Արեւի սկավառակն առաջ են տանում նաեւ առյուծները: Եգիպտական արեւի աստվածը նստած է առյուծի վրա: Հռոմում կային Միթրայի քանդակներ՝ առյուծի դեմքով: Միթրան, առյուծի տեսք ստանալով, հարձակվում է ցուլի վրա՝ որսալով նրա առջեւի թաթերը: Եգիպտոսում պատժող աստվածուհի Սեկիմետը պատկերված է առյուծի տեսքով՝ խորհրդանշելով արեւի այրող շոգը: Առյուծն աստվածային, արեւային լիցքերի կրողն է՝ թագավորական իշխանության խորհրդանիշ: Այն արեւն անձնավորող հիմնական կերպարանքն է:

Արեւի լույսի պաշտամունքը «Սասնա ծռեր»-ի գաղափարական գլխավոր հանգույցն է: Արեւի լույսը տիեզերական կարգի եւ արդարության խորհրդանիշն է: Միհրը սպանում է տիեզերական քառսը ներկայացնող ցլին, Մեծ Մհերը՝ մահաբեր սեւ ցլին:

Ընդհանուր ենթագիտակցությամբ ծնունդ առած խորհրդանիշների համակարգը, որի վրա հիմնված է դյուցազնավեպը, բոլոր ուժերի դեմ պայքարն ամբողջացնում է որպես թշնամիների դեմ պայքար:

Ընդհանուր ենթագիտակցական խորհրդանիշների համակարգի վրա հիմնված դյուցազնավեպի առանձնահատկությունն է չար ուժերի դեմ պայքարը ներկայացնել պատմական գունավորումով, պատմական դեպքերի տիպական անդրադարձերով: Առասպելականը եւ պատմականը մշտապես միահյուսված են, որը դյուցազնավեպի առանցքն է:

Ընդհանուր անգիտակցականն է հիմք դրել հետագա ձեւավորում ստացած ազգային ոգուն, որն ամբողջական ձեւավորում է գտել դյուցազնավեպում: Այստեղ ցեղային մտածողությունը հաստատում է իր

վերջնական սահմանները, որոնք հետագայում դառնում են ազգային մտածողության ատաղձը:

Դյուցազնավեպն ազգային ոգու եւ մտածողության համապարփակ դրսևորումն է: Մեր արեւապաշտական դիցապատումն արտահայտում է մեր ցեղային ուժի զորությունը: Դյուցազնավեպն իր ընդհանուր ենթագիտակցական խորհրդանշանային համակարգով սկզբնավորել է մեր ցեղային, ապա եւ ազգային ոգու ճարտարապետությունը: Նման խորհրդանշանային դաշտում ձին նախնի է՝ կռվի ծրագիր կազմող: Քուռկիկ Զալալին մեր դյուցազնավեպում գործող հերոս է: Ձենով Հովանն ամպրոպի աստված է, ինչը հաստատում է նրա ձայնը: Դավթի խորհրդատու պառավ կինը երբեմնի հողի աստվածուհին է: Նա եղել է նաեւ կրակի պահապանը:

Դյուցազնավեպը մարդկության ապագայի նախագիծն է՝ ձևավորված տոհմատիրության շրջանում:

«Սասնա ծռեր»-ի վերջին ճյուղը Փոքր Մհերի ճյուղն է, որտեղ ավելի տեսանելի է հերոսի՝ նախկինում արեւի աստված լինելու հանգամանքը: Թափառող Փոքր Մհերն անձնավորում է արեւը, որը, հանգիստ առնելով, կրկին դուրս է գալիս ճամփորդելու: Սա անհետացող եւ վերադարձող արեւային աստվածության օրվա բոլորաշրջանն է: Հեռացումն ու վերադարձը օրվա տեւողությունից կարող են ավելի երկարաձգվել: Փոքր Մհերի՝ Ժայռի մեջ փակվելը արեւի երկար ժամանակով հեռանալն է՝ պայմանավորված աշխարհի վերափոխմամբ: Փոքր Մհերն աշխարհի բարեփոխման, բարեշրջման առասպելի կրողն է:

Մհերի դուռ քարայրում պահվում է անշեջ ճրագը, ինչն արեւի խորհրդանիշն է:

Վեդաներից հայտնի են Վիշնուի՝ որպես արեւի տարբերակի, թափառումները: Թափառող հերոսի պատմությունը Զ. Քեմպբելը հանգեցնում է իրադարձությունների հետեւյալ շղթային. տանից հեռացում, գերբնական օգնության ստացում, գաղտնիքին իրազեկման փորձություններ, կախարդական ուժին տիրանալ եւ վերադարձ: «Ողիսական»-ը, «Ռամայանա»-ն, «Գիլգամեշ»-ը խմբավորվում են որպես որոնումների ստեղծագործություններ, որոնց դիպաշարի առանցքում թափառումներն են, կորած ընկերոջ, հարսնացուի, տան որոնումը: Փոքր Մհերը որոնում է հորը: Զճանաչելով միմյանց՝ նրանք կռվում են: Սա դիցավեպերում տարածված ծիսական-առասպելական թեմա է: Հունական դիցաբանության մեջ կռվող

կողմեր են հայր աստվածն ու զավակները: Փոքր Մհերը լուծում է Դավթի սպանության վրեժը: Ամիրանիի քաջագործությունը հոր վրեժի լուծումն է:

«Սասնա ծռեր»-ի առասպելական բովանդակության շերտերը բազմազան են՝ կապված արեւի պաշտամունքի հետ: Արեւի առասպելը դիցապատումում ամենալայն բացահայտում է ստանում Փոքր Մհերի կերպարում: Նա ժառանգել է Միթրայի բնորոշ գծերը, որոնցից է երկրորդ գալուստը աշխարհ, երբ այն ազատվելու է չար ոգիներից ու մահից, ստեղծվելու է երկրային երանելի թագավորություն: Աշխարհը պետք է հրով մաքրագործվի ու նորոգվի: Փոքր Մհերն իր ձիով ապաստանում է քարայրում, որտեղ ծնվել է Միթրան: Քարայրը սրբավայրի խորհուրդ է ստացել: Արեւի աստվածուհի Ամարերասուն (Ճապոնիա) թաքնվում է քարայրում:

Մհերին ծնողների ձայնն է հուշել մեկուսացման վայրը, եւ այնտեղ է նրան ուղեկցել ազուավը, որի համար վայրն անվանվել է Ազուավաքար: Միթրայականության մեջ ազուավը համարվել է կրակը պաշտպանող սրբազան թռչուն: Պատահական չէ, որ Ազուավաքարում կա մշտավառ ճրագ: Հայտնի է, որ ազուավը Հյուսիսային Ամերիկայի որոշ ժողովուրդների առասպելներում կենտրոնական տեղ է գրավում նախ եւ առաջ որպես նախնի եւ կախարդ, ապա՝ ծայրագույն հոգեւոր պետ, որից սկիզբ են առել մարդիկ: Հյուսիսային Ամերիկայում ազուավը հանդես է գալիս ցեղի նախահոր, կրոնական պաշտամունքի առարկա դարձած, կախարդական գործություն ունեցող թռչունի դերում: Կորյակների բանահյուսության մեջ ազուավը նախահայր է, ցեղային նախնի, առաջնորդ, ցեղապետ: Ազուավը երկարակեցություն է պարգևելու: Առասպելներ են շրջանառվում ազուավի «հերոսական» մանկության եւ թափառումների վերաբերյալ: Ազուավաքարը (ազուավը) իր դիցաբանական դերերով Փոքր Մհերին կապում է նախահոր, պաշտամունքային նախնու, ցեղի առաջնորդի հետ: Թափառումների առասպելը բնորոշ է նաեւ Փոքր Մհերին:

Այսպիսով՝ Մհերը աշխարհ դուրս գալուց առաջ պետք է դարձ կատարի դեպի աշխարհի նախնական, ստեղծարար շրջանը՝ վերականգնելու արդարությունը: Միայն այս պայմանով Փոքր Մհերը մեկուսացումից դուրս կգա (արեւը կմտնի իր մեծ պտտաշրջանը):

Ազուավը չուկոտական դիցաբանության մեջ լույսի նվաճողն է:

Փոքր Մհերը մարդկանց լույս բերողն է եւ լույսի պահապանը: Նրա քարայրում վառվում է հավիտենական ճրագը, որը խորհրդանշում է ոգի,

ճշմարտություն, խելք, կյանք, որոնք զուգորդվում են լույսի հետ: Ճրագն օգտագործում էին բարի ոգիներին կանչելու համար:

Ազոավն արեւի խորհրդանիշն է, Ապոլլոնի եւ Աֆինա աստվածուհու լրաբերը: Զինաստանում արեւի խորհրդանշանը կարմիր սկավառակն է՝ երեքոտանի ազոավի պատկերով, ինչը մատնանշում է օրվա ընթացքում արեւի երեք դիրքերը՝ արեւածագ, գագաթնակետ, արեւամուտ: Եգիպտոսի արեւի աստվածներից Կերպին ծագող արեւն է, Գորը՝ ցերեկվա, Ռան՝ բարձրակետի, Օսիրիսը՝ մայր մտնող:

Հայկական դիցապատումում Սանասարը եւ Բաղդասարը արեւածագի արեւն են, Մեծ Մհերն ու Դավիթը՝ բարձրակետի արեւը, իսկ Փոքր Մհերը մայրամուտի արեւն է:

Փոքր Մհերի քարայրը տիեզերքի պատկերն է: Նրա ներսում տիեզերական տարերքների եւ կողմերի խորհրդանիշներն են: Տիեզերքը քարանձավի հետ էին համեմատում պլութագորականները եւ Պլատոնը:

Թափառողի առասպելն առաջինն է, եւ դյուցազնավեպում Փոքր Մհերի ճյուղը կարող էր լինել առաջինը:

Սակայն Փոքր Մհերի ճյուղը վերջինն է, որպեսզի, կրկնելով Միթրայի երկրորդ գալստյան առասպելը, մատնանշվի տիեզերական կարգի վերականգնման ուղին:

Եւ վերջում՝ Փոքր Մհերի (եւ Մասիսի ստորոտում Արտավազդի) փակվելը անգիր (բանավոր), (առասպելի) դարաշրջանների ավարտ է նշանակում:

Դիցավեպն ավետում է իր դարաշրջանի ավարտը (որպես բանավոր ստեղծագործություն), միաժամանակ գրավոր՝ քրիստոնեական դարաշրջանի սկիզբը, որի խորհրդանշային համակարգն իրեն զգալ է տալիս հենց դիցավեպում՝ միավորելով Միթրայի, ապա եւ Քրիստոսի երկրորդ գալստյան համամարդկային սպասումը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Դիցավեպ, Միթրա, Միհր, Մհեր, առյուծաձեւ:


РЕЗЮМЕ

Эпос «Сасна Црер» — это солнцепоклонническая система, герои которого являются воплощением солнечного мира. Действие эпоса в основном происходило в эпоху культа Митры. Два его героя, Большой и Малый Мгер, генеалогически связаны с богом Митрой. Идеалы Малого Мгера, выходящего из пещеры, восходят к идеологии, связанной со вторым пришествием Митры. Защита огня и воды начинается с первой ветви, в основе которой лежит миф о близнецах. Санасар и Багдасар — восходящее солнце, Большой Мгер и Давид — высшая точка, Малый Мгер — заходящее солнце. Герой последней ветви эпоса уединяется в Агравакаре (Вороний Камень). Ворон — символ солнца в мифологии. Это тотем — прародитель племени. Значит Малый Мгер, после выхода из пещеры, должен перейти в первозданный период мира.

SUMMARY

The “Daredevils of Sassoun” epic is a system of sun worship, the heroes of which are the embodiment of the sun myth. The epic was primarily created during the epoch of the cult of Mithras. Its two heroes — Lion (Great) Mher and Little Mher are in genealogical associations with the god Mithra. Ideals (visions) of Little Mher’s getting out of a crag (rock) were derived from the ideology associated with the second coming of Mithra. The worship of fire and water originates from the first branch, the basis of which is the Legend of the Twins. Sanasar and Baghdasar symbolize the ascending sun, Lion Mher and David — the zenith, and Little Mher - the descending sun. The hero of the last branch of the epic secludes himself in the Raven’s Rock (Agravakar). The Raven is the symbol of the sun in mythology. It is the totem, the progenitor of the tribe. Hence, before coming out, Little Mher shall return to the pre-creation period of the world.





Doi: 10.56737/2953-7843-2024.01-153

ՅՈՒՑԱԿ ՎԱԵՐԱԳՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻԷԱՆԻ¹

Վնժխտելի իրողություն է, որ գիտութեան շատ ոլորտների՝ յատկապէս հայագիտութեան տարբեր ճիւղերի զարգացման գործում ձեռագրերից ոչ պակաս կարեւոր նշանակություն ունեն արխիւային փաստաթղթերը՝ իբրեւ զանազան հետազոտութիւնների ապացուցողական հիմքեր, տեսական հիմնաւորումների փաստական ստուգութիւնը հաստատող վկայութիւններ: Վաւերագրերի ոչ պատշաճ, առանց գիտական սկզբունքների կատարուած ցուցակագրութիւնները որոշակի դժուարութիւններ են ստեղծում ուսումնասիրողների համար, մեծ չափով բարդացնում նրանց աշխատանքը: Ահա այսպիսի խնդիրների են առնչուում հետազոտողները, երբ անհրաժեշտութիւն է առաջանում, օրինակ, ուսումնասիրել Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանի արխիւի կաթողիկոսական դիւանում պահուող մեծաքանակ ձեռագիր վաւերագրերը՝ ամենատարբեր գրութիւններ, ինչպիսիք են նամակներ, կոնդակներ, հրամանագրեր, հրովարտակներ, օրհնութեան գրեր, համախօսականներ, հաւաստագրեր, վճիռներ, երդմնագրեր, հաշուեմատեաններ, նուիրակութեան մատեաններ, բանադրանքի, դաշնագրութեան, միախառնական, առք ու վաճառքի թղթեր, հաւատարմագրեր, կտակներ, հարցման գրեր, հարկ ու ծախսի մատեաններ, զեկուցագրեր, խնդրագրեր, տեղեկագրեր, կալուածագրեր, գոյքացուցակներ, պարտամուրհակներ եւ այլն: Ի տարբերութիւն ձեռագրացուցակների՝ վաւերագրերի ցուցակներ՝ կազմուած գիտական ընդունուած հիմունքների պահպանումով, հրապարակի վրայ գրեթէ չկան, եւ դա մեր լուրջ բացթողումներից է:

¹* Ստացուել է՝ 10.01.2024, գրախօսուել է՝ 18.01.2024:
Էլ. հասցէ՝ asa-saryan@yandex.com, lidateloian1975@gmail.com:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը, այդ բացը լրացնելուն հետամուտ լինելով, նորերս լոյս է ընծայել Մաշտոցի անուան Մատենադարանի արխիվի կաթողիկոսական դիւանի ցուցակի Ա. հատորը²:

Ստուարածաւալ այս հատորի տպագրութիւնն իրականացուել է «Մարգիս Գաբրիէլեան» հիմնադրամի հովանաւորութեամբ: Ցուցակը հրատարակուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական խորհրդի եւ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ: Այն ամփոփում է 413 վաւերագրի նկարագրութիւն: Գրախօսուող հատորի խմբագիրն է Մաշտոցեան Մատենադարանի արխիւի եւ արխիւագիտութեան բաժնի վարիչ, պատմական գիտութիւնների թեկնածու Արմէն Մալխասեանը, որը նաեւ հաշուառել, մշակել ու նկարագրել է սոյն հատորում հրատարակուած 333 միաւոր վաւերագիր, հեղինակել է ներածութիւնը եւ կազմել է ցանկերը: Ներկայ հատորում զետեղուած վաւերագրերից 53 միաւորի հաշուառումը, մշակումը եւ նկարագրութիւնը կատարել է Նաիրա Մարտիրոսեանը, 19-ինը՝ Անահիտ Ասատրեանը, եւ 8-ինը՝ Լուսիկ Ստեփանեանը:

Յայտնի փաստ է, որ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերի հաւաքածուի հիմքը կազմում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի նախկին գրատան հաւաքածուն: Նոյնը վերաբերում է Մատենադարանի արխիւի հաւաքածուին: Մատենադարանի՝ 509 հազարից աւելի փաստաթղթեր պարունակող արխիւի մաս կազմող կաթողիկոսական դիւանում պահուող վաւերագրերի ընդհանուր քանակը ստոյգ յայտնի չէ. կաթողիկոսական դիւանում առկայ միայն հայերէն հաւաքածուի վաւերաթղթերի քանակի վերաբերեալ ներածութեան մէջ նշում է երեք տարբեր տուեալ՝ 35 761 (ըստ Լ. Խաչիկեանի³ հաղորդման), 36 456 (Մատենադարանի արխիւի «Ցուցակ ցուցակաց»-ի տուեալներով) եւ 42 123 (արխիւի նախկին վարիչ Ա. Ադամեանի⁴ տեղեկութիւնների համաձայն): Ներկայ հրատարա-

² Ցուցակ կաթողիկոսական դիւանի Մաշտոցի անուան Մատենադարանի արխիւի, հտ. Ա., վաւերագիրք 1—413 (թղթապանակ 1—7), կազմ.՝ Ա. ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ն. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ա. ԱՍԱՏՐԵԱՆ, Լ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, խմբ.՝ Ա. ՄԱԼԽԱՍԵԱՆ, Սբ. Էջմիածին, 2023, 1060 սիւնակ, 532 էջ (այսուհետ սոյն հատորին յղումները տե՛ս շարադրանքում կամ տողատակերում՝ փակագծերի մէջ նշուած միայն համապատասխան սիւնակը):

³ Լ. ԽԱՉԻԿԵԱՆ, Մատենադարանը անցեալում եւ խորհրդային իշխանութեան տարիներին, «Բանբեր Մատենադարանի», 1958, հտ. 4, էջ 18:

⁴ Ա. ԱԴԱՄԵԱՆ, Մատենադարան հիմնարկի արխիւային ֆոնդերը (անտիպ), Երեւան, 1978, էջ 3: Ինչպէս երեւում է ներածութեան հետագայ շարադրանքից, խմբագիրն առաւել արժանահաւատ է համարում հենց Ա. Ադամեանի բերած տուեալը՝ նշելով, որ կաթողիկոսական դիւանի արխիւային հաւաքածուն «տեղադրուած է 1—262 թղթապանակներում,

կութեամբ նախ եւ առաջ վերջնականօրէն կյստակեցուի վաւերագրերի ճշգրիտ քանակի հարցը: Սակայն, պարզ է, որ ամենեւին դա չէ հատորը կազմողների հիմնական նպատակադրումը. ներկայ հատորով սկսում է կաթողիկոսական դիւանում գտնուող շուրջ 40 հազար վաւերագրերի հրատարակման անչափ կարեւոր գործը, որի անհրաժեշտութիւնը մեր գիտական հանրութիւնը շատ վաղուց էր զգում: «Ներկայ հրատարակուող բազմահատորեակի միջոցով,— կարգում ենք ներածութիւնում,— գիտական շրջանառութեան մէջ կդրուեն ամբողջական ու մանրամասն տեղեկութիւններ» (սիւնակ 5): Բանն այն է, որ թեպէտ տեւական ժամանակ է, ինչ կազմուած է Մատենադարանի՝ կաթողիկոսական դիւանի վաւերագրերի մեքենագրուած կարճառօտ ցուցակը, այն ամբողջութեամբ չի բաւարարում նրանից օգտուողների պահանջմունքները, քանի որ առկայ են բազմաթիւ թերի տեղիներ, որ վերաբերում են ինչպէս փաստաթղթերի նկարագրութիւններին, այնպէս էլ ընդհանուր ցուցակներում հանդիպող կրկնութիւններին: Այսպէս, օրինակ, նոյնն են կաթողիկոսական դիւանի թղթապանակ հմր. 2-ի թիւ 14ա⁵ եւ թղթապանակ հմր. 257-ի թիւ 6 վաւերագրերը: Խօսքն ամբողջապէս նոյնական մի փաստաթղթի մասին է՝ վերոնշեալ մեքենագիր ցուցակում նկարագրուած տարբեր համարների տակ: Այս դէպքում տարբերութիւնները վերաբերում են միայն վաւերագրի նկարագրութիւններին: Բերենք նոյն ցուցակում հաշուառուած թղթպ. հմր. 2-ի թիւ 14ա վաւերագրի նկարագրութիւնը. «Նոր Կալկաթայի հայերի շնորհաւորական նամակը Սիմէոն կաթողիկոսին, նրա կաթողիկոսական գահ բարձրանալու առթիւ: 1764 թ. 10 փետրուար, Կալկաթայ, մեծ. 47,5 X 32»: Թղթպ. հմր. 257-ի թիւ 6 վաւերագիրը նոյն ցուցակում աւելի մանրամասն է նկարագրուած. «Կալկաթայի մի խումբ հայերի գրութիւնը «նորապսակ» կաթողիկոսին՝ նախ իրենց հնազանդութիւնն ու ուրախութիւնն են յայտնում նրան, յետոյ գրում են, որ Յակոբ կաթողիկոսի հրամանով Կալկաթայ եւ Զուղա է եկել Յովհաննէս վարդապետը որպէս էջմիածնի նուիրակ, որը բերել է մեռն եւ բաժանել եկեղեցիների վրայ: 10/2—1764 թ., Կալկաթայ, մեծ. 41,8 X 33»: Ընդ որում՝ երկու փաստաթղթերն էլ (իրականում՝ մէկը) նշուած մեքենագիր ցուցակում ներ-

պարունակում է 42123 միաւոր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1441—1975 թթ.» (սիւնակ 32):

⁵ Ներկայ հատորում սոյն նամակը (կազմողները խորագրել են «Գրութիւն») թուագրուած է 88 համարով (սիւնակ 221—222):

կայացում են «բնագիր, ձեռագիր» նշումով: Նմանօրինակ եւ այլ կարգի անճշտութիւնները կարող են հետեւանք լինել այն բանի, որ հաւանաբար ցուցակը կազմուել է տարբեր ժամանակներում, տարբեր մարդկանց կողմից, նոր ստացուած փաստաթղթերը մուտքագրելուց առաջ անհրաժեշտ ձեւով չեն ստուգուել եւ ցուցակագրելիս չեն համեմատուել արդեն իսկ ցուցակում առկայ նիւթերի հետ: Մատենադարանի արխիւային նիւթերի նկարագրութիւններում առկայ թերութիւնները, ցուցակների կազմման գործում նկատուող ոչ համակարգուած մօտեցումը Ա. Մալխասեանը բացատրում է հետեւեալով. «Քանի որ Մատենադարանն ամբողջ աշխարհում յայտնի է որպէս ձեռագրերի խոշոր կենտրոն, այդ իսկ պատճառով արխիւային նիւթերի ուսումնասիրութիւնն անհրաժեշտ ծաւալներով չի իրականացուել: Դրանից բացի, երկար ժամանակ տիրել է այն մտայնութիւնը, որ վերադաս մարմինների կարգադրութեամբ արխիւային այս նիւթերը մի գեղեցիկ օր կյանձնուեն մէկ այլ հաստատութեան...» (սիւնակ 5): Ինչեւէ, ներկայ հրատարակութեամբ եւ ակնկալուող մօտաւորապէս մէկ տասնեակ հատորներով կլրացուեն կամ նուազագոյնի կհասցուեն նաեւ բոլոր հնարաւոր վրիպումները եւ սխալաշատ տուեալները, որ կարելի է գտնել նախորդ շրջանի ցուցակագրողների աշխատանքներում:

Հատորը բացում է ծաւալուն ներածութեամբ (5—48 սիւնակներ): Այստեղ հեղինակը բաւական մանրամասնօրէն անդրադառնում է «Մատենադարանի արխիւի գոյացման պատմութեան ընդհանուր ուրուագծերին», ինչն առանձին մեծ ուսումնասիրութեան նիւթ է: Առաջաբանում, մեր կարծիքով, առաւելաբար հարկ էր կենտրոնանալ մասնաւորապէս կաթողիկոսական դիւանի մաս կազմող վաւերագիր նիւթերի արխիւի ստեղծման պատմութեան լուսաբանման վրայ, քանի որ հատորը (հրատարակուելիք միւս հատորների հետ) վերաբերում է միայն հայրապետական դիւանում առկայ փաստաթղթերի նկարագրութեանը: Սակայն պէտք է ասել, որ դրանից բոլորովին չի նսեմանում աշխատութեան արժէքը:

Ներածութեան մէջ հանգամանալից ներկայացում են նաեւ այն սկզբունքները, որոնցով առաջնորդուել են կազմողները բազմահատոր սոյն ցուցակը կազմելիս: Հիմնական սկզբունքը՝ վաւերագրերը հաշուառուել, մշակուել եւ նկարագրուել են՝ հիմք ընդունելով ձեռագրացուցակների կազմութեան համար սահմանուած չափանիշները. «Այստեղ վաւերագիրը հաւասարեցուած է ձեռագիր մատեանին՝ զանազանուելով իրեն բնորոշ առանձնայատկութիւններով» (սիւնակ 5): «Հետեւապէս,— շարունակում է

խմբագիրը,— ներկայ հրատարակուող ցուցակի համար լաւագոյնը եւ օրինակելին Մաշտոցի անուան Մատենադարանի հայերէն ձեռագրերի Մայր ցուցակ կոթողային աշխատութեան կիրառած հարցակարգն է⁶» (սիւնակ 40): Իհարկէ, պայմանաւորուած վաւերագրերի իւրայատուկ կողմերով, ձեռագրերի նկարագրութեան հարցակարգի կէտերն աւելացուել են՝ 30-ից հասցուելով 38-ի: Գաղտնիք չէ, որ «ձեռագրացուցակների համար տարողութեան (հզօրութեան) չափանիշ հանդիսացող հանգամանքներից մէկը⁷», եթէ ոչ ամենակարեւորը, հենց «հարցակարգի հարստութիւնն» է: Դրանով եւս գրախօսուող ցուցակը շատ կարելոր առաւելութիւն է ստանում:

Ներածութիւնում Ա. Մալխասեանը տուել է նաեւ հատորում յաճախ գործածուող մի շարք բառերի կրճատումներն ու յապաւումները, անդրադարձել է շարադրանքում կիրառուած կէտադրութեանը, ներկայացրել ցուցակում օգտագործուող պայմանական նշանները (սիւնակ 45—47):

Գրախօսուող հատորի արժանիքների շարքում աւելորդ չենք համարում առանձնացնել նաեւ զանազան ցանկերը՝ զետեղուած գրքի վերջում (սիւնակ 885—1056): Այդ ցանկերի միայն քանակի (15) արձանագրումը լաւագոյնս խօսում է հատորի մէկ այլ էական արժանաւորութեան մասին: Գիտական բարձր բարեխղճութեամբ կազմուած այդ ցանկերը կօզնեն գիտութեան համապատասխան բնագաւառները ներկայացնող մասնագէտներին դիւրինութեամբ գտնելու իրենց ուսումնասիրած նիւթին առնչուող փաստաթղթերը:

Մաշտոցի անուան Մատենադարանի արխիւի կաթողիկոսական դիւանի ցուցակի սոյն հրատարակութիւնը մեծ եւ կարեւոր մի ձեռնարկ է, որը հաստատապէս իր անգնահատելի նպաստը կբերի հայագիտութեան ամենատարբեր բաժինների զարգացմանը:

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ


Բանասիրական գիտ. թեկնածու

ԼԻԴԱ ԹԵԼՈՅԵԱՆ

⁶ Յիշուած Մայր ցուցակի կազմողներն իրենց հերթին նախորդ շրջանի ձեռագրացուցակներից «լաւագոյնն ու օրինակելին» են համարել Յ. Տաշեանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895) աշխատութիւնը, որը «հայ ձեռագրացուցակաստեղծման բարձրակէտն է» (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Երեւան, 1984, էջ ԽԲ.—ԽԳ.):

⁷ Նոյն տեղում, էջ ԽԲ.:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



**Տ. ԱՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՇԻՐՎԱՆԵԱՆ**

(23.07.1934–3.01.2024)

Յունուարի 3-ին, կեանքի 89-րդ տարում ի Տէր հանգաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նուիրեալ սպասատւ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաւեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանութիւնը սգում են հոգեւոյս Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեանի մահը եւ աղօթում նրա հոգու հանգստութեան համար:



Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Գերաշնորհ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեանը (աւագանի անունով՝ Արմենակ) ծնուել է 1934 թ. յուլիսի 23-ին Հայֆայում (Պաղեստին, այժմեան Իսրայէլի տարածք): Նախնական կրթութիւնը ստացել է Հայֆայի Սուրբ Եղիա նախակրթական դպրոցում, ապա՝ Լիբանանի Բուրջ Համուդի Սրբոց Քառասուն Մանկանց վարժարանում:

1952–1957 թթ. ուսանել է Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան Սրբոց Ժառանգաւորաց վարժարանում, որն աւարտելուց յետոյ ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ անդամագրուելով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեանը:

1954 թ. ստացել է սարկաւագական աստիճան՝ ձեռամբ Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տէրտէրեանի:

1957 թ. ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի:

1957 թ. նշանակուել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի փոխտեսուչ եւ դասախօս:

1958 թ. նշանակուել է Ամմանի (Յորդանան) Ս. Թադէոս հայկական եկեղեցու հոգեւոր հովիւ եւ տեղի Հեթումեան հայկական դպրոցի տնօրէն:

1964 թ. արժանացել է մասնաւոր վարդապետութեան չորս աստիճանների՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարեանի:

1964 թ. ուսանել է Դարեմի (Անգլիա) համալսարանի աստուածաբանութեան բաժնում՝ ստանալով աստուածաբանութեան բակալաւրի աստիճան:

1964—1966 թթ. ուսանել է Փարիզի կաթողիկ համալսարանում:

1966 թ. նշանակուել է Լոս Անջելեսի (ԱՄՆ) Ս. Յակոբ հայկական եկեղեցու հոգեւոր հովիւ:

1972 թ. ստացել է ծայրագոյն վարդապետութեան աստիճան՝ ձեռամբ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի:

1972—1974 թթ. եղել է դասախօս, փոխտեսուչ, ապա՝ տեսուչ Ս. Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի:

1974 թ. ձեռնադրուել է եպիսկոպոս՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1975—1979 թթ. եղել է Կանադայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ:

1979—1980 թթ. պաշտօնավարել է որպէս Կալկաթայի հայկական ճեմարանի տեսուչ:

1998—1999 թթ. եղել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի տեսուչ:

2006 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով արժանացել է արքութեան պատուի:

2012 թ. եղել է Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան պատրիարքական տեղապահ:

2013 թ. պաշտօնավարել է որպէս Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան էկոմենիկ եւ արտաքին յարաբերութիւնների բաժնի տնօրէն եւ պատրիարքութեան մամլոյ խօսնակ:

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по поводу праздника Рождества нашего Господа Иисуса Христа и Богоявления.	5
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю Дня Вооруженных сил	9

ПРОПОВЕДИ

Проповедь ПРОТОАРХИМАНДРИТА ШАГЕ АНАНЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	11
Проповедь ЕПИСКОПА ВРТАНЕСЯНА АБРААМЯНА , произнесенная во время Святой Рождественской Св. Литургии Сочельника в монастыре Св. Гаяне.	15
Проповедь АРХИМАНДРИТА МАТТЕОСА ПОГОСЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	19
Проповедь ЕПИСКОПА МУШЕГА БАБАЯНА , произнесенная в монастыре Св. Гаяне во время соборования архиепископа Ариса Ширваняна	22
Проповедь ИЕРЕЯ АЙКАЗУНА СААКЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне.	24
Проповедь ПРОТОИЕРЕЯ ХОРЕНА КИРАКОСЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	30
Проповедь АРХИМАНДРИТА МОВСЕСА САРКИСЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	34

РЕЛИГИОВЕДЕНИЕ

- ПРОТОАРХИМАНДРИТ ШАГЕ АНАНЯН** — Hebraica veritas vs. Graeca veritas: вопрос боговдохновенности библейского текста согласно церковным отцам и архимандритам первых трех веков христианства. 37
- СВ. ГРИГОРИЙ БОГОСЛОВ (НАЗИАНЗИН)** — Слово 28, о богословии второе 56
- КАТОЛИКОС СИМЕОН ЕРЕВАНЦИ** — Возвращенный долг 70

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- МАРИАМ МАРГАРЯН, ГАРИК ПОГОСЯН** — Армянская Апостольская Святая Церковь и проблемы всеобщего преобразования правления 90
- ЛИЛИТ СИМОНЯН** — Блаженный Тодик и столпы небесного света 105
- ЭДГАР ОГАНИСЯН** — Первое путешествие американских протестантских миссионеров в Армению и их исследования в 1830—1831 гг. 120
- АВАГ АРУТЮНЯН** — «Союз воинствующих безбожников» — провалившийся проект компартии 133

СООБЩЕНИЯ

- НОРАЙР КАЗАРЯН** — Эпос «Сасна црер» как солнцепоклоннический миф. . . 142

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- АСАТУР САРЯН, ЛИДА ТЕЛОЯН** — Список документов патриаршего архива 153

НЕКРОЛОГ

- Архиепископ Арис Ширванян. 158



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the feast of Nativity and Theophany of our Lord Jesus Christ 5

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the Army Day 9

SERMONS

Sermon delivered by **PROTO-ARCHIMANDRITE SHAHE ANANYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 11

Sermon delivered by **BISHOP VRTANES ABRAHAMYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery on the Eve of the Nativity 15

Sermon delivered by **ARCHIMANDRITE MATTHEOS POGHOSYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 19

Sermon delivered by **BISHOP MUSHEGH BABAYAN** during the last unction of Archbishop Aris Shirvanian at St. Gayane Monastery 22

Sermon delivered by **FR. HAYKAZUN SAHAKYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 24

Sermon delivered by **ARCHPRIEST KHOREN KIRAKOSYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 30

Sermon delivered by **ARCHIMANDRITE MOVSES SARGSYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 34

RELIGIOUS STUDIES

PROTO-ARCHIMANDRITE SHAHE ANANYAN — Hebraica veritas vs. Graeca veritas — the issue of divine inspiration of the biblical text according to the fathers and teachers of the early Church (I–III cc.)	37
ST GREGORY THE THEOLOGIAN (OF NAZIANZUS) — Oration 28: The Second Theological Oration	56
CATHOLICOS SIMEON OF YEREVAN — Debt repayment	70

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

MARIAM MARGARYAN, GARIK POGHOSYAN — Armenian Apostolic Holy Church and the problems of transformation of global governance.	90
LILIT SIMONYAN — Blessed Fr. Todik and the pillars of heavenly light	105
EDGAR HOVANNISYAN — The first trip and studies of American Protestant preachers in Armenia in 1830–1831	120
AVAG HARUTYUNYAN — “Union of Fighting Atheists”: a failed project of the communist party	133

ESSAYS

NORAYR GHAZARYAN — “Daredevils of Sassoun” epic as a myth of sun worship	142
--	-----

LITERARY REVIEW

ASATUR SARYAN, LIDA TELOYAN — List of documents of the Catholicos’ archive	153
--	-----

OBITUARY

Archbishop Aris Shirvanian	158
--------------------------------------	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

- Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** պատգամը
մեր Տեր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնության
տոնի առիթով 5
- Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** ուղերձը
Բանակի օրույ առիթով 9

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

- Տ. ՇԱՀԷ Ծ. ՎՐԴ. ԱՆԱՆԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 11
- Տ. ՎՐԹԱՆԷՍ ԵՊՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Ծննդեան Ճրագալոյցի Ս. Պատարագին. 15
- Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ՊՕՂՈՍԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 19
- Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊՍ ԲԱԲԱՅԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
Տ. Արիս արք. Ծիրվանեանի վերջին օծման ժամանակ. 22
- Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԲՀՆՅ. ՍԱՀԱԿԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում մատուցուած Ս. Պատարագին 24
- Տ. ԽՈՐԷՆ ԱԷ. ԲՀՆՅ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում մատուցուած Ս. Պատարագին 30
- Տ. ՄՈՎՍԷՍ ՎՐԴ. ՍԱՐԳՍԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 34

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- Տ. ՇԱՀԷ Ծ. ՎՐԴ. ԱՆԱՆԵԱՆ** — Hebraica veritas vs. Graeca veritas
Աստուածաշնչի բնագրային ներշնչականության հարցը՝ ըստ Ա.—Գ. դարերի
եկեղեցական ուսուցիչների ու հայրերի 37

Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ (ՆԱԶԻԱՆՉԱՑԻ) — Ճառ ԻԸ.

Աստուածաբանության մասին, երկրորդ 56

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ — Պարտավճար 70*ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ***ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԳԱՐԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ — Հայաստանեայց**Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ համընդհանուր կառավարման
կերպափոխման հիմնախնդիրները 90**ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆԵԱՆ —** Երանելի տէր Թողիկը եւ երկնային լոյսի սիւները . . . 105**ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ —** Ամերիկացի բողոքական քարոզիչներիառաջին ճամփորդութիւնը եւ ուսումնասիրութիւնները Հայաստանում
1830—1831 թթ. 120**ԱԵԳՉ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ —** «Մարտնչող անաստուածների միութիւնը»՝

կոմկուսի չկայացած նախագիծ 133

*ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ***ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐԵԱՆ —** «Սասնայ ծռեր» էպոսը՝ իբրեւ արեւապաշտական

դիցապատում 142

*ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ***ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐԵԱՆ, ԼԻԴԱ ԹԵԼՈՅԵԱՆ —** Յուցակ վաւերագրաց

կաթողիկոսական դիւանի 153

*ՄԱՀԱԳՐԱԿԱՆ***Տ. Արիս արք. Ծիրվանեան 158**

- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ալզերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեղորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Ադանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոտանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՑՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէճ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829—4243
eISSN 2953—7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քնյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 20.02.2024 թ.



ԵԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ